

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Յարուցեալ Քրիստոս մեզի հետ՝  
մինչեւ աշխարհի վախճանը ..... 109

### ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ  
(Turning to God)..... 113

### ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն  
Մատթեոս Աւետարանի (2.11-23)..... 118

### ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԵՅՃԵԱՆ — Ձգեցէ՛ք որ անոնք Քրիստոսի երթան ..... 129

### ՊԱՏՄԱ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին..... 133

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԵՉԵԱՆ — Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի գանձարանին մէջ ..... 137

### ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՅԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան  
նորարարութիւնը ..... 144

### ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Աղօթալից անուշաբոյր խունկը  
սրբութեան ձգտող մեր կեանքին մէջ ..... 155

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ..... 159

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ ..... 161

### ՀՈԿՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

\* \* \* — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս  
Յունաստանի Հայոց թեմէն ներս ..... 165

\* \* \* — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս  
Կիպրոսի Հայոց թեմէն ներս ..... 189

<b>ՀԱՅ ԴԱՏ</b> .....	203
<b>ՏՕՆԱԿԱՆ</b> .....	204
<b>Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Համազգային համախմբում՝</b> այլ ընտրանք չկայ.....	217
<b>ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ</b> .....	223
<b>ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ</b> .....	230
<b>ԴՊՐԵՎԱՆՔ</b> .....	232
<b>ՍՓԻՌՔԻ ՏԱՐԻ</b>	
ԴՈԿՏ. ՎԱԶՐԻԿ ԲԱԶԻԼ — Սփիւռքից դեպի սփռում ու վերադարձ .....	243
<b>ԹԵՄԱԿԱՆ</b> .....	252
<b>Հ.Ե.Հ.Ո.Մ.</b> .....	253
<b>ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ</b> .....	257
<b>«ՆԱՐԵԿԱՑԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ</b> .....	258
<b>ԼՈՒԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ</b> .....	259
<b>ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ</b> .....	263



ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԿՄՍԱԿԻՐ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ՄԵԾԻ ՏԱՆԻ ԿԻԼԿԻՈՅ

ՂԲ. ՏԱՐԻ 2023

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

ԹԻԻ 3-4

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

### ՅԱՐՈՒՑԵԱԼ ՔՐԻՍՏՈՍ ՄԵԶԻ ՀԵՏ՝ ՄԻՆՉԵԻ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԸ

Աւետարանը կը պատմէ թէ Քրիստոս յարութիւն առնելէ ետք Գալիլիոյ մէջ աշակերտներուն երեւցաւ ու անոնց սրբազան առաքելութիւն մը յանձնեց՝ աշխարհ բերած իր արժեքները ու ճշմարտութիւնները քարոզելու եւ մարդիկ իրեն հետեւորդ դարձնելու, միաժամանակ վստահեցնելով, թէ **«միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը»** (Մտ 28.20):

Յարուցեալ Քրիստոս խոստացաւ իրեն հաւատացողներուն հետ ըլլալ մինչեւ աշխարհիս վերջը, այլ խօսքով՝ մինչեւ իր երկրորդ գալուստը: Արդ, Յարուցեալ Քրիստոս անցեալ չէ, այլ ներկայ: Ան միշտ մեզի հետ է:

Յարուցեալ Քրիստոս մեզի հետ է՝ **խաւարին մէջ կորսուած մարդուն լոյսը դառնալով**: Իր երկրաւոր առաքելութեան սկիզբը Քրիստոս յայտա-

րարեց. **«Ես որպես լոյս եկայ աշխարհ, որպեսզի ով որ ինձի հաւատայ՝ խաւարի մէջ չմնայ»** (Յհ 12.46): Աստուծոյ մարդեղացեալ Որդին մեզ խաւարէն երկնային լոյսին առաջնորդեց եւ իր լոյսով շաղախեց մարդկային կեանքը ու մենք դարձանք **«լոյսի որդիներ»** (Ա.Թս 5.5) եւ **«աշխարհի լոյսը»** (Մտ 5.14):

Յարուցեալ Բրիստոս մեզի հետ է՝ **կեանքի փոթորիկին մէջ մնացած մարդուն յոյս ներշնչելով**: Դժուարութեան մատնուած մարդուն Բրիստոս ըսաւ՝ մի՛ վախնար, միայն հաւատայ: Բրիստոսի յոյսով զօրացած առաքեալներ կարելորութեամբ շեշտեցին հաւատքով շաղախուած յոյսի հրամայականը քրիստոնեայի կեանքին մէջ: Բրիստոսի հետեւորդներուն ուղղած իրենց հովուական թուղթերուն մէջ անոնք յիշեցուցին, որ **«մեր յոյսը դրած ենք կենդանի Աստուծոյ վրայ»** (Ա.Տմ 4.10), որովհետեւ **«այս յոյսով էր որ փրկուեցանք»** (Հռ 8.24), եւ հետեւաբար, **«անխախտ պահենք այն յոյսը»** (Եբր 10.23), որ **«երբեք ամօթով չի ձգեր»** (Յհ 5.5):

Յարուցեալ Բրիստոս մեզի հետ է՝ **մարդուն յաւիտենական կեանք խոստանալով**: Չմոռնանք Բրիստոսի խոստումը. ով որ իմ խօսքերս լսէ եւ հաւատայ ինձի ու ետեւէս գայ, յաւիտեան կեանք պիտի ունենայ: Արդ, ով որ կը հաւատայ Բրիստոսի **«արդէն իսկ մահէն կեանքի անցած է»** (Յհ 5.24): Պօղոս առաքեալ իր կեանքի օրինակով կը վկայէ, թէ յաւիտենական կեանքը **«ձրի պարգեւ»** է Աստուծոյ կողմէ Բրիստոսի ճամբով տրուած մարդուն (Հռ 6.23): Հետեւաբար, Բրիստոսի հետեւողը կոչուած է իր հաւատքի կեանքով եւ բարի գործերով ամուր կառչելու յաւիտենական կեանքին:

Յարուցեալ Բրիստոս մեզի հետ է՝ **մահուան վրայ տարած յաղթանակով**: Մեղքը, չարը, ապականութիւնը, սատանան ու մահը իրենց տիրապետութիւնը հաստատած էին մարդկային կեանքին վրայ, հեռացնելով մարդը Աստուծմէ, երկիրը՝ երկինքէն: Աստուծոյ Որդին իր մահով մահը յաղթեց եւ մահուան իշխանութիւնը քանդեց: Բրիստոսի յարութեամբ մարդը վերամարդացաւ, Աստուծոյ որդեգիրը դարձաւ եւ յաւիտենական կեանքի շնորհքին արժանացաւ:

Յարուցեալ Բրիստոս մեզի հետ է՝ **մարդուն առջեւ փրկութեան ճամբան բանալով**: Եթէ կ'ուզես փրկուիլ, հետեւէ ինձի՝ պատգամեց Բրիստոս: Առաքեալներ շարունակ յիշեցուցին քրիստոնեայ հաւատացեալներուն, թէ՛ միայն Բրիստոսով կրնանք փրկուիլ, որովհետեւ ան աշխարհ եկաւ մարդու փրկութեան համար, եւ թէ Բրիստոս է միակ Փրկիչը աշխարհի:

Իր ուսուցումներուն, առակներուն ու հրաշքներուն ճամբով Աստուծոյ Որդին յաճախ յիշեցուց իր հետեւորդներուն՝ **«Եթէ կը սիրէք զիս՝ պիտի գործադրէք իմ պատուիրաններս»** (Յհ 14.15) եւ խոստացաւ թէ **«որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի»** (Յհ 14.18):

Սիրելի՛ հայրորդիներ, մկրտութեամբ Աստուծոյ Միածին Որդին, մեր փրկիչը դաւանելու կոչուած ըլլալով կ'անդրադառնա՞նք արդեօք, թէ յարուցեալ Զրիստոս խոստացած է մեզի հետ ըլլալ, մեզ որք չձգել, եւ դարձեալ գալ, այն սպասումով, որ հաւատարմութեամբ հետեւինք իրեն՝ անսալով իր ուսուցումներուն եւ գործադրելով իր պատուիրանները: Ա՛յս է քրիստոնեայ մարդուն կոչումը:

Արդ, իր հրաշափառ յարութեամբ Զրիստոս չհեռացաւ այս աշխարհէն: Յարուցեալ Զրիստոս մեզի հետ է, աշխարհին յայտնած ճշմարտութիւններով, պարզած արժեքներով, իր Աւետարանով: Արդեօք մենք յարուցեալ Զրիստոսին հե՞տ ենք, կ'ապրի՞նք իր ներկայութիւնը մեր կեանքին մէջ, կը քալե՞նք իր ցոյց տուած ճամբէն, կը դաւանի՞նք մեզի փոխանցած իր արժեքներն ու ճշմարտութիւնները, որպէս ուղեցոյց մեր կեանքին ու գործին: Զրիստոսի յարութեան նշումը յիշեցում մըն է, որ Զրիստոս մեզի հետ է՝

- կեանքի փոթորիկներուն մէջ, որպէս մեր փրկութեան լաստը:
- կեանքի խաւարին մէջ, որպէս մեր երկնային լոյսը:
- կեանքի դժուարութիւններուն մէջ, որպէս մեր կենդանի յոյսը:
- կեանքի մոլոր ճամբաներուն մէջ, որպէս մեր ճշմարիտ ճամբան:

Յարուցեալ Զրիստոս մեզի հետ է մինչեւ աշխարհի վախճանը: Ան խոստացաւ դարձեալ գալ՝ դատելու մեզ, մեր ապրած կեանքին ու կատարած գործերուն համար: Պատրա՞ստ ենք ընդունելու Զրիստոսը, որպէս մեր Տէրը ու փրկիչը:

Սիրելի՛ գաւակներ Հայ ժողովուրդի, մեր կեանքի դաժան թէ ուրախ պահերուն, միշտ ըլլանք՝ իր խաչով ու յարութեամբ մեզի կեանք շնորհած մեր Փրկչին հետ, հետեւինք իրեն՝ վերանորոգ հաւատքով ու յոյսով սպասելով իր երկրորդ գալուստը:

\*

\* \*

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնին առիթով, եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով եկեղեցաշէն իրագործումներով երկար գահակալութիւն: Կ'ողջունենք նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Սահակ Արք. Մաշալեանը, իրենց մաղթելով բեղմնաւոր ծառայութիւն Հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Հայրապետական Օրհնութեամբ ու Հայրական սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, Հոգեւոր Դասը, Ազգ. Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր հաւատացեալ ժողովուրդը: Կ'աղօթենք առ Աստուած, որ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Հայաստանն ու Արցախը եւ մեր ազգին սիրելի զաւակները, որպէսզի կարենանք, Յարուցեալ Փրկչին յաղթանակով հզօրացած, վերանորոգել մեր կեանքը եւ դիմագրաւել ներկայ ժամանակներու բազմազան մարտահրաւերները:

***Քրիստոս յարեալ ի մեռելոց,***

***Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:***



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

## ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Զորեֆշաբթի, 20 Մայիս 2020

Հանրային քաղաքականությունները, քաղաքական գործողություններն ու տնտեսական ռազմավարությունները՝ ազգային թէ միջազգային մակարդակներու վրայ, ընդհանրապէս ներդաշնակ չեն հիմնական բարոյական արժէքներուն եւ սկզբունքներուն հետ: Բազմաթիւ տազնապներ, զորս մարդկություններ կը դիմակալէ, յառաջ կու գան հաստատություններու եւ ընկերություններու կառավարման մէջ բարոյական սկզբունքներու պակասէն: Ես համաձայն եմ Տալայ Լամայի հետ, որ աշխարհի տազնապներուն արմատները կը գտնէ բարոյագիտութեան պակասին մէջ (տե՛ս *Beyond Religions*, 2012, Լոնտոն, էջեր 81-82): Թէնզին Կիյաթցո, Թիպէթեան Պուտտական վանականներու 14-րդ Տալայ Լաման, իր կեանքը ընծայաբերած է յօգուտ բարոյագիտական հարցերու, միջ-կրօնական երկխօսութեան, ոչ-բռնութեան եւ կենսոլորտի բարեփոխման: Անդրադառնալով համաճարակին, ան կը շեշտէ առաջնորդող հիմնական բարոյական արժէքներու առանցքային դերը ժողովուրդներու կեանքին մէջ:

Բոլոր կրօններուն կողմէ քարոզուող հասարակաց բարոյական արժէքները խթան պէտք է հանդիսանան միջ-կրօնական երկխօսութեան, յատկապէս համաճարակի այս օրերուն: Համաշխարհային Եկեղեցիներու Խորհուրդի 8-րդ համաժողովին (1998), որպէս Ատենապետի իմ ներկայացուցած տեղեկագրիս մէջ, մատնանշեցի որ միայն համաշխարհային բարոյական ուղեգիծ մը կրնայ ընկերությունները առաջնորդել «սոսկ գոյութենական վիճակէն դէպի իմաստալից համակեցութիւն, առճակատումէ՝ դէպի հաշտութիւն, եւ բարոյական արժէքներու այլասերումէ՝ դէպի կեանքի որակի վերականգնում» (տե՛ս *In Search of Ecumenical Vision*, 2000, Անթիլիաս, էջ 279):

Համաշխարհային բարոյագիտական այս կառույցը պէտք է հիմնուած ըլլայ բոլոր կրօնական համայնքները միացնող հասարակաց արժէքներու վրայ: Ան պէտք է յարգէ արժեչափերու, համոզումներու եւ փորձառություններու

տարբերությունները: Բարոյագիտական կառույցի մշակումն ու իրականացումը հաստատ հիմերու վրայ դնելու համար, պէտք է կրօնական իշխանություններուն սատար կանգնին քաղաքական, տնտեսական, ակադեմիական հաստատություններու ներկայացուցիչները եւ մամուլը: Ես կը հաւատամ, որ հասարակաց բարոյագիտական արժէքները մեծապէս պիտի նպաստեն կառուցելու եւ հաստատ հիմերու վրայ դնելու բազմակարծիք ընկերությունները, պիտի բարեկարգեն ազգերու յարաբերությունները՝ թէ՛ իրարու եւ թէ՛ ստեղծագործութեան հետ, եւ պիտի օգնեն՝ հասարակաց հարցերը ազդու կերպով դիմակալելու: Հասարակաց հարցերը պէտք է ներառնեն բնապահպանական խնդիրներ եւ հակամարտութեանց լուծումները՝ բարոյագիտական հասարակաց սկզբունքներէ մեկնած: Համաշխարհային բարոյագիտությունը կրնայ նաեւ վերաշեշտել Մարդկային Իրաւունքներու Համաշխարհային Յայտարարութեան առաջնահերթ կարեւորությունը:

Նման ծրագիր մը մեկնարկուած էր Համաշխարհային Կրօններու Գերագոյն Ատեանին կողմէ 1993-ին, որուն անդրանիկ յայտարարութեան մէջ կը կարդանք, որ համաշխարհային բարոյագիտություն մը հիմնուած է հետեւեալ հինգ «որդեգրուած եւ անփոփոխելի հրահանգներուն» վրայ. «յանձնառություն՝ ոչ-բռնություն մշակոյթի մը եւ յարգանք՝ կեանքին նկատմամբ, համերաշխություն եւ արդար տնտեսական կարգ, հանդուրժողություն եւ ճշմարտացիութեան կեանք մը, այրերու եւ կիներու հաւասար իրաւունքներ եւ ընկերակցություն անոնց միջեւ, երկրի կայունություն եւ հոգատարություն» (տե՛ս “Towards a Global Ethic: An Initial Declaration”, <https://www.global-ethic.com>, pp. 9-20): Կարգ մը աշխատանքներ կատարուեցան, սակայն այս կարեւոր նախաձեռնությունը չշարունակուեցաւ: Զուիցեբիացի Կաթոլիկ վարդապետ եւ հանրածանօթ աստուածաբան Hans Küng բանալի դերակատարություն ունեցաւ այս ծրագրի նախաձեռնութեան եւ յայտարարութեան սեւագրի պատրաստութեան մէջ. ան յետոյ դարձաւ նախագահը Համաշխարհային Բարոյագիտութեան Հիմնարկութեան: 1999-ի Յունիսին, Գերմանիոյ Շթուլկարթ քաղաքին մէջ, առիթը ունեցաւ հանդիպելու Küng-ին, եւ համաշխարհային բարոյագիտութեան մասին մեր տեսակէտները բաժնելու:

Միջ-կրօնական երկխօսությունները քննարկումներուն մէջ կարեւոր տեղ գրաւեցին աշխարհայնութեան, նիւթապաշտութեան, համայնավարութեան, դրամատիրութեան եւ ցեղապաշտութեան ունեցած ազդեցությունները՝ կրօններու հաւատալիքներուն եւ ուսուցումներուն վրայ: Համաշխարհայնացումին զուգահեռ, սպառողականությունը, յաղթանակի հետամտությունը եւ մարդակեդրոնությունը, այլ երեւելի եւ աներեւոյթ «թիւն»ներու հետ, կը խեղաթիւրեն բարոյագիտական արժէքները, կ'ապականեն հաստատությունները, կը քանդեն ընկերությունները, կը շեղեն երիտասարդությունը, եւ մարդկությունը կ'առաջնորդեն դէպի անորոշ ապագայ: Հետեւաբար, միջ-կրօնական յարաբերու-



թեան, երկխօսութեան եւ համագործակցութեան մէջ առաջնահերթ կարեւորութիւն պէտք է տրուի հասարակաց բարոյագիտական արժէքներու զարգացման եւ ձեւաւորման՝ համաշխարհային բարոյագիտութեան շրջագծէն ներս:

### Հինգշաբթի, 21 Մայիս 2020

Համաճարակը անակնկալի մատնեց աշխարհը: Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութիւնը՝ իր պատասխանատուութենէն մղուած, փորձեց յանձն առնել պատշաճ լուծում մը գտնելու պարտականութիւնը: Սակայն, վիրուսի չափազանց արագ տարածումը, անոր մասին համապարփակ գիտութեան եւ լուրջ հետազոտութիւններու պակասը, ինչպէս նաեւ բոլոր մակարդակներու վրայ շահ հետապնդելու մարմաջը շփոթ ստեղծեց, եւ պատճառ դարձաւ անհամապատասխան **արդիւնքի՝** թէ՛ ազգային եւ թէ՛ միջազգային մակարդակի վրայ: Աւելին՝

1.- Ան ի յայտ բերաւ նման վիրուսային տագնապ մը դիմակալելու լուրջ պատրաստութեան պակասը: Շատ մը երկիրներ, եթէ ոչ բոլորը, կը տառապին բժշկագիտական պահեստի, հիւանդանոցներու եւ բժշկական անձնակազմի պակասէն: Տագնապի այս օրերուն շարժական հիւանդանոցներ կը կառուցուին եւ սրահներ ու մարզական կեդրոնները շտապ օգնութեան կեդրոններու կը վերածուին:

2.- Ի յայտ եկաւ, որ առողջապահական վերահսկողութեան կազմակերպումը եւ նախազգուշական քայլերը, անբաւարար են՝ նոյնիսկ բժշկագիտական մարզէն ներս յառաջացած եւ տնտեսապէս հարուստ երկիրներու մէջ: Կարգ մը քաղաքական ղեկավարներ, իրենց անտարբերութեան ու գոռոզութեան պատճառով անտեսեցին մասնագէտ բժիշկներու որոշումներն ու խորհուրդները, բան մը, որ առաւել եւս սրեց ինքնին վտանգաւոր եւ անորոշ կացութիւնը:

3.- Պարզեց կեանքեր փրկելու եւ ապրուստի միջոցներ ապահովելու յատուկ ռազմավարութեան պակասը: Ազգեր զիրար հակասող ռազմավարութիւններ եւ մօտեցումներ որդեգրեցին, եւ չկրցան զարգացնել յստակ եւ հասարակաց աշխատանքային ծրագիր մը: Այս անհամապատասխան քայլերը եւ պատուաստի մը չգոյութիւնը ահաւոր հետեւանքներու պատճառ դարձան: Աւելին, անոնք թոյլ տուին, որ վիրուսի աճման նպաստող միջավայրերը զարգանան, ինչ որ դիւրացուց անոր արագ տարածումը: Բազմաթիւ երկիրներ չկարողացան ճիշդ ժամանակին գործնական եւ ազդու քայլերու դիմել:

Եթէ բժշկական ու քաղաքական միջոցառումները շատ դանդաղ էին եւ յաճախ՝ հակասական, հոգեւոր ընդառաջումը, սակայն, ինքնաբոլի էր: Բոլոր կրօնները, անյապաղ, համացանցի ճամբով զգուշացուցին իրենց հաւատաց-

եալները, որ իրենց տուները մնան, հեռու մնան կրօնական կեդրոններէ, հետեւին բժշկական եւ պետական իշխանութեանց ցուցմունքներուն, եւ ամէն բանէ առաջ՝ աղօթեն:

Վերջապէս, համաճարակին կապուած այն միջոցառումները, որոնք որդեգրուեցան կառավարութիւններու, պատասխանատու մարմիններու եւ դեղորայքի ընկերութիւններու կողմէ, լուրջ հարցականներ կը յարուցեն: Հօր ազգեր հսկայական գումարներ կը ծախսեն իրենք զիրենք պատրաստելու համար հաւանական պատերազմներու, նոյնիսկ՝ անջրպետային կամ հիւլէական պատերազմներու: Ինչո՞ւ պատրաստուած չէին նման մահացու վիրուսի մը դէմ դնելու, որ ի յայտ եկաւ էյտծի եւ սարսի վարակումներէն կարճ ժամանակ մը ետք միայն: Այս եւ նման հարցեր հարցականի տակ կը դնեն դեկավար մարդոց արժեշտին ու վստահելիութիւնը, եւ ազգերու, միջազգային ընտանիքի, ընկերակցութեանց եւ դաշնութեանց առաջնահերթութիւններուն քննադատական հետապնդումն ու առարկայական գնահատումը կը պահանջեն:

## Ուրբաթ, 22 Մայիս 2020

Համաճարակը ցնցեց ընկերութեան հիմերը, սպառնալով մարդկութեան գոյատեւման: Յարդ, նոյնիսկ մասնագէտ բժիշկներ չեն գիտեր, թէ որքան ժամանակ պէտք է յաղթահարելու քորոնա վիրուսը: Մինչ այս պայքարը կը շարունակուի, կը խորհիմ, թէ ազգեր կոշուած են քննական մօտեցումով գնահատելու այս տագնապին մէջ իրենց ապրած փորձառութիւններն ու անկէ քաղուած դասերը: Առ այդ, կ'առաջարկեմ կարեւորութեամբ նկատի ունենալ հետեւեալ կէտերը.՝

– Մարդկութիւնը վճռական պայքար կը մղէ հօր թշնամիի մը դէմ: Պայքար մը, որ միայն գիտութեան, ճարտարարուեստի եւ կրօնի ներդաշնակ եւ համակարգ ճիգերով կարելի կ'ըլլայ իրագործել:

Համաճարակը յստակօրէն ցոյց տուաւ, որ կ'ապրինք բաժանուած եւ աննպատակ աշխարհի մը մէջ:

– Քորոնա վիրուսի սրընթաց տարածումը ի յայտ բերաւ հանրային առողջապահական համակարգին թերութիւնները, նոյնիսկ բժշկագիտական մարզէն ներս յառաջդիմած ու զարգացած երկիրներու մէջ:

– Կարգ մը երկիրներու կողմէ Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան տուած յանձնարարութիւններուն անտեսումը, պատճառ դարձաւ որ կազմակերպ եւ հետեւողական աշխատանք չտարուի:

– Բժշկագիտութիւնը ձախողեցաւ հակակշռել կանխարգելիչ հետազօտութիւն կատարելու ծրագիր մը մշակել՝ կլիմայական փոփոխութեան հետեւանքով յառաջացած նոր վիրուսատեսակներու դէմ պայքարելու համար:

Այս եւ նման գործունէութիւններ ու ձախորդութիւններ առարկայական գնահատումով հաշուետուութեան կ'ենթարկուին քաղաքացիներու եւ կառավարական եւ միջազգային կազմակերպութիւններու կողմէ: Աւելին, պէտք է անոնք երկարաժամ ռազմավարական դրոյթ մը հաստատեն, որով կարելի ըլլայ ահազանգ հնչեցնել շնախատեսուած տագնապներու պարագային եւ պաշտպանել հանրութեան կեանքն ու առողջութիւնը: Վերջապէս, կառավարութիւններ պէտք է ներդրում կատարեն առաջին հերթին ստեղծագործութեան եւ մարդկային կեանքի որակը բարձրացնելու ու ապահովութիւնը պաշտպանելու համար, փոխանակ հսկայ գումարներ վատնելու իրենց ռազմական մարզը զարգացնելու:

Այս բոլորէն վեր՝ համաճարակը ի յայտ բերաւ մեր թերի կողմերը եւ խոնարհութեան դաս մը տուաւ մեզի: Ան պարզեց մարդոց ունեցած սերտ կապակցութիւնը իրարու եւ բնութեան հետ: Տագնապները առիթներ են դիմակալելու ծանր իրողութիւններն ու ճշմարտութիւնը: Անոնք զգաստութեան կոչեր են: Անոնք նաեւ նոր առիթներ կ'ընծայեն: Մենք պէտք է օգտուինք համաճարակի ժխտական հետեւանքներէն եւ դասեր քաղենք անկէ՝ սրբագրելու մեր սխալներն ու թերութիւնները: Համաշխարհային ընկերութիւնը հարկ է լրջօրէն նկատի առնէ կեանքին սպառնացող համաճարակէն քաղուած դասերը եւ ըստ այնմ ուղղէ աշխարհի ապագայ ընթացքը:

Անգլերէնէ թարգմանեց՝  
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 11)



ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ
--------------

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (2.11-23)

«Ապա բացին իրենց արկղերը եւ Յիսուսի ընծայեցին իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս» (Մտ 2.11):

1) «Բացին իրենց արկղերը»: Եթէ իրենց արկղերը չբանային՝ պիտի չկարենային Յիսուսի ընծայել ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Մենք եւս, եթէ չբանանք մեր սրտի արկղը՝ չենք կրնար սէր ընծայել Յիսուսին: Եթէ չբանանք մեր հոգիի արկղը՝ չենք կրնար փառաբանութիւն ընծայել Յիսուսին: Եթէ չբանանք մեր մտքի արկղը՝ չենք կրնար վստահութիւն ընծայել Յիսուսին:

2) «Երկրպագեցին ...ընծայեցին»: Երկրպագութենէն ետք՝ ընծաներ տուին Տիրոջ: Մոգերը սորվեցուցին մեզի, թէ ճշմարիտ երկրպագութեան պէտք է ընկերանայ նաեւ նուիրատուութիւնը: Երկրպագութիւն մը, որուն չ'ընկերանար նուիրատուութիւնը՝ սո՛ւտ երկրպագութիւն է: «Անկեղծ եւ իսկական բարեպաշտութիւնը՝ կարօտութեան մէջ եղող ուրբերուն եւ այրիներուն այցելու եւ օգնական ըլլալն է, եւ աշխարհի մէջ ապրելով հանդերձ՝ ինքզինք անարատ պահելը» (Յկ 1.27): Յայտարարել թէ Ողորմածին երկրպագուններէն ենք, չողորմիլ ողորմութեան կարօտ մարդոց՝ մեզ կը դասէ սուտ երկրպագուններու շարքին:

3) Մոգերը երկրպագեցին Յիսուսին, եւ անկէ ե՛տք միայն ընծաներ տուին անոր: Այլ խօսքով, նախ իրենք զիրենք ընծայեցին Աստուծոյ, եւ անկէ ե՛տք միայն իրենց նուէրները մատուցանեցին: Ոեւէ բան Աստուծոյ տալէ առաջ՝ նախ մեր սի՛րտը պէտք է անոր տանք (Առ 23.26): Մեր նուիրածը Տիրոջ ոեւէ իմաստ չունի, եթէ երբեք մեր անձերը չենք նուիրած իրեն: Տէրը մեզմէ ծառայութիւն ընդունելէ առաջ, կ'ուզէ նախ մե՛զ ընդունիլ իբրեւ ծառայ:

4) Մոգերը «Յիսուսի ընծայեցին իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս»: Մեկնելով մոգերուն բերած երեք տեսակի ընծաներէն, մեկնիչներ կ'ըսեն թէ անոնք երեք հոգի էին. բայց վստահաբար անոնց ընկերացող զինուորներ ու ծառաներ կային, քանի անոնք իշխաններ էին:

5) Մատթէոս մոգերուն անունները չի յիշեր, բայց աւանդութիւնը զանոնք

կը յիշէ՝ Մելքոն, Գասպար եւ Պաղտասար անուններով: Համաձայն Ոսկերե-  
րան Հայրապետին, Սուրբ Հոգիին գալուստէն ու առաքեալներուն դասին վրայ  
հանգչելէն ետք, Թովմաս առաքեալ գնաց ասոնց գաւառները եւ մկրտեց երե-  
քը, եւ զանոնք քարոզութեան մէջ ընկեր դարձուց իրեն:

6) «Ոսկի, կնդրուկ եւ զմուռ»:

ա) Ոսկի: Յիսուսի ժամանակ, թագաւորներուն նուէր իբրեւ ոսկի կը տար-  
ուէր: Երբ Սաբայի թագուհին այցելութիւն տուաւ Սողոմոնին՝ մեծ չափով  
ոսկի տարաւ անոր (Գ.Թգ 10.10: Բ.Մն 9.1): Մոգերը ոսկի ընծայելով Յիսուս  
մանուկին, անոր թագաւոր ըլլալը ծանուցած եղան: Եւ շմոռնանք, որ երբ  
Երուսաղէմ եկան փնտռելու Յիսուս մանուկը, զայն թագաւոր կոչեցին (Մտ  
2.2): Հարցում.- Մենք ոսկի տուա՞ծ ենք Յիսուսին. այլ խօսքով՝ ընդունած ու  
ճանչցա՞ծ ենք զինք իբրեւ թագաւոր, մե՛ր թագաւորը, մեր կեանքի՛ն ու  
սրտի՛ն թագաւորը:

բ) Կնդրուկ: Կնդրուկը քահանայապետներուն ու քահանաներուն կ'ընծայ-  
ուէր ու անոնց կողմէ կը գործածուէր: Քահանաները միջնորդներ էին Աստու-  
ծոյ եւ մարդոց միջեւ, եւ իրենք էին որ կենդանական զոհերու մատուցումով  
քաւութիւն կ'ընէին ժողովուրդի մեղքերուն համար: Մոգերուն կողմէ Յիսուսի  
կնդրուկ ընծայելը, կը բացայայտէ թէ Յիսուս աշխարհ եկաւ որպէսզի դառնար  
Աստուծոյ ու մեր միջեւ՝ մեր մեղքերու քաւիչ եւ մեր փրկութեան միջնորդ Քա-  
հանայապետը: Հարցում.- Մենք կնդրուկ տուա՞ծ ենք Յիսուսին, այլ խօսքով՝  
ճանչցա՞ծ ենք անոր Քահանայապետական պաշտօնը, եւ ընդունա՞ծ ենք զինք  
մեր մեղքերու քաւիչ Քահանայապետը իբրեւ, մեր փրկութեան միջնորդը իբրեւ:

գ) Զմուռս: (Խէժի տեսակ մը): Հրեաներ զմուռսը կը գործածէին իրենց  
մեռելներուն մարմինները զմուռելու համար: Մոգերը Յիսուս մանուկին զմուռս  
տալով, յայտնած եղան աշխարհին, թէ Յիսուս ծնած էր մեռնելու համար  
մարդոց փրկութեան համար: Հարցում.- Մենք զմուռս տուա՞ծ ենք Յիսուսին,  
այլ խօսքով՝ ընդունա՞ծ ենք անոր մահը մեր փրկութեան համար:

7) Անցեալին կնդրուկը կը մատուցուէր Աստուծոյ, զմուռսը՝ մարդուն, իսկ  
ոսկին՝ թագաւորին: Այս առումով, մոգերը Յիսուսին մատուցած իրենց ըն-  
ծաներով՝ դաւանած եղան անոր աստուածային եւ մարդկային բնութիւնը,  
ինչպէս նաեւ՝ անոր թագաւոր ըլլալը (Լիոն Պապ):

8) Բերուած նուէրները պիտի դիւրացնէին Մարիամի ու Յովսէփի ճամ-  
բորդութիւնը դէպի Եգիպտոս, եւ անոնց կեցութիւնը այդտեղ: Տէրը մեր ալ  
կարիքները կը հոգայ եթէ Յովսէփի ու Մարիամի նման հնազանդ ըլլանք իրեն:

9) Կարելի է նաեւ հոգեւոր մեկնութեան մը լոյսին տակ դիտել «ոսկի,  
կնդրուկ եւ զմուռ» բառերը.

ա) Կրնանք ըսել, որ ոսկին կը ներկայացնէ ինչ որ թանկագին է մեզի

համար մեր կեանքին մէջ. այս առումով, ոսկի նուիրել Տիրոջ, կը նշանակէ նուիրել անոր ինչ որ թանկագին է մեզի համար, ինչ որ սուղ ու անփոխարինելի կը նկատենք: Արդարեւ, մեր կեանքին ամենէն թանկագինը՝ ամենէն թանկագինին պէտք է նուիրել: Եթէ Ամենակարողը ինքն է մեր ոսկին ու թանկագին արծաթը (Յոբ 22.25), պէտք է նուիրենք իրեն մեր ամենէն թանկագին բաները, եւ առաջին հերթին՝ մեր կեանքը, մեր սիրտն ու սրտի սէրը, մեր հոգին ու հոգիի ապրումները, մեր ժամանակը:

բ) Խոնկն ու խնկարկութիւնը Աստուծոյ կ'ընծայուէր անցեալին, եւ ատիկա տեղի կ'ունենար աղօթքի միջոցաւ: Դաւիթ կ'ըսէ. «Թող իմ աղօթքս խուճկի պէս սեպուի քու առջեւ» (Սղ 141.2): Խոնկ մատուցանել Քրիստոսի կը նշանակէ՝ աղօթք մատուցանել մեր Աստուծոյն, փառաբանութեամբ լեցուն աղօթք: Մենք ամենօրեայ դրովեամբ խոնկ կը մատուցանենք մեր Տիրոջ ու Աստուծոյն, այլ խօսքով՝ ամէն օր աղօթքով ժամանակ կ'անցնենք Տիրոջ հետ:

գ) Նկատի ունենալով որ զմուռսը անցեալին կը գործածուէր մեռելներուն մարմինները զմուռելու համար, կրնանք հաստատապէս ըսել, թէ զմուռսը կը ներկայացնէ մարդու մեռած մարմինը. խօսքը անշուշտ իր հոգին աւանդած մարմինին մասին չէ, այլ այն մարմինին մասին՝ որուն մէջ մեռած են ցանկութիւնները, աշխարհիկ փափաքները, մեղքի իշխանութիւնը: Մենք զմուռս նուիրած ենք Տիրոջ. այլ խօսքով, մեռցուցած ենք մեր մարմիններուն մէջ՝ մարմնաւորը, եւ իբրեւ մաքուր տաճարներ մենք մեզ նուիրած ենք Տիրոջ: Զմուռսը, հետեւաբար, կը ներկայացնէ աշխարհին համար մեռած ու աշխարհը իրեն համար մեռցուցած մարդը:

«Յետոյ ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը, առանց Հերովդէսի հանդիպելու, ինչպէս որ Աստուած երազի մը մէջ հրահանգեց իրենց» (Մտ 2.12):

1) Մոգերը չվերադարձան իրենց երկիրը այն ճամբով ուրկէ եկան, այլ «ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը»: Հաւատացեալին առջեւ միշտ ալ բաց դռներ ու ճամբաներ պիտի ըլլան, բայց եթէ ան իր ուշադրութիւնը կեդրոնացնէ իր առջեւ փակուած ճամբաներուն վրայ, պիտի չկարենայ տեսնել այն ճամբան որ Տէրը բացած է իր առջեւ: Տիրոջ կողմէ մեր առջեւ դրուած բաց ճամբաները տեսնելու համար՝ պէտք է հոգիի բաց աչքեր ունենալ:

2) Եթէ Աստուած երազով մը չպատուիրէր մոգերուն չերթալ Հերովդէսի քով, անոնք պիտի երթային: Ծիշող է որ անոնք իմաստուն մարդիկ էին, բայց միաժամանակ անկեղծ ու պարզ մարդիկ էին: Իբրեւ Քրիստոսի հետեւորդներ, մենք պէտք է ըլլանք անկեղծ ու պարզ, բայց պէտք է ըլլանք նաեւ արթուն, որպէսզի աշխարհը չխաբէ մեզ:

3) Աստուած թոյլ չտուաւ որ մոգերը Հերովդէսի քով երթալու կործանարար քայլը առնեն: Անոնք որոնք հաւատարմութեամբ եւ մաքուր սրտով կը

հետեւին Աստուծոյ՝ Աստուած թոյլ պիտի չտայ որ կործանարար քայլեր առնեն, այլ միշտ պիտի զգուշացնէ զանոնք:

4) Հերովդէս ուզեց սպաննել Յիսուսը, բայց չկրցաւ զայն տեսնել: Անոնք որոնք իրենց մեղքերով կը «սպաննեն» Յիսուսը՝ արժանի պիտի չդառնան տեսնելու զայն: Եթէ Հերովդէս սպաննեց իր կինը՝ «Մարիամնէ»ն, եւ իր երկու որդիները՝ Աղեքսանդրն ու Արիստոբոլոսը, ան ի՞նչպէս կրնար գթալ մանուկ Յիսուսին:

5) Մոգերը առանց գիտնալու գացին Հերովդէսի քով, Տիրոջ հրեշտակը սակայն անոնց պատուիրեց չվերադառնալ անոր մօտ: Երբ բան մը ընենք առանց գիտնալու, Տէրը կ'ողորմի ու մեզ կ'առաջնորդէ դէպի ճիշդ ճամբան:

6) «Աստուած երազի մը մէջ հրահանգեց» մոգերուն չվերադառնալ Հերովդէսի մօտ: Աստուած այսօր ալ կրնայ խօսիլ մեր հետ երազներու միջոցաւ, եւ սակայն, Աստուծոյ կամքը գիտնալու համար երազներու ապաւինիլը՝ մեր հաւատքին մէջ անչափահաս ըլլալու նշան է, մինչդեռ Աստուածաշունչին եւ աղօթքին միջոցաւ Աստուծոյ ձայնը լսելը՝ իր հաւատքին մէջ աճած մարդու գործ է: Աստուած կ'ուզէ որ աճինք մեր հաւատքին մէջ: Ինչպէս մանուկը կը կորսուի ամբոխին մէջ, այնպէս ալ, իր հաւատքին մէջ մանուկ եղողը կը կորսուի աշխարհի ամբոխներուն մէջ: Մեզմէ իւրաքանչիւրին սրտի կանչը պէտք է ըլլայ. «Տէ՛ր, աւելցո՛ւր մեր հաւատքը» (ՂԿ 17.5):

«Երբ մոգերը Բեթլեհէմէն մեկնեցան, Տիրոջ հրեշտակը Յովսէփի երեցաւ երազի մը մէջ եւ ըսաւ. "Ե՛լ, ա՛ն մանուկն ու անոր մայրը եւ փախիւր Եգիպտոս. հո՛ն մնա մինչեւ որ ըսեմ քեզի, որովհետեւ Հերովդէս կը փնտռէ մանուկը զայն սպաննելու համար"» (Մտ 2.13):

1) Տիրոջ հրեշտակը Յովսէփին հետ խօսեցաւ երազի միջոցաւ, մինչդեռ Մարիամի հետ՝ ուղղակիօրէն (ՂԿ 1.26-27), եւ սա ցոյց կու տայ թէ Մարիամ շատ աւելի հասուն էր հոգեւոր գետնի վրայ քան Յովսէփ: Յովսէփին համար գործածուած «արդար» բառը (Մտ 1.19) կապուած էր Օրէնքին հանդէպ իր ցուցաբերած հնազանդութեան, մինչդեռ Մարիամին արդարութիւնը արդիւնքն էր իր զօրեղ հաւատքին ու սիրոյն որ ան ունէր Աստուծոյ հանդէպ:

2) Եթէ Աստուծոյ ծրագիրը ըլլար որ Յիսուսի ծնունդէն ետք Յովսէփ ու Մարիամ ընտանիք կազմէին ու զաւակներ բերէին, այդ պարագային, հրեշտակը պէտք էր Յովսէփին ըսէր՝ «Ե՛լ, ա՛ն մանուկն ու քո կինը» եւ ո՛չ թէ՝ «Ե՛լ, ա՛ն մանուկն ու անոր մայրը»: Յովհան Ոսկեբերան դիտել կու տայ, թէ հրեշտակը «կինը» ըսելու փոխարէն՝ «անոր մայրը» կ'ըսէ, եւ սա կը պարզէ, թէ Մարիամ կապուած էր մանուկ Յիսուսին եւ ո՛չ թէ Յովսէփին:

3) Երբ Հերովդէս ուզեց սպաննել Յիսուսը, հրեշտակը անոր պատուիրեց Եգիպտոս փախիլ: Երբ մարդիկ փորձեն սպաննել մեզ Քրիստոսի հետեւորդները ըլլալնու համար՝ պատրաստ ըլլանք. գուցէ Տէրը պատուիրէ մեզի թողուլ մեր շրջանը եւ ուրիշ շրջան երթալ. «Երբ հալածեն ձեզ քաղաքի մը մէջ, ուրիշ քաղաք մը փախէ՛ք, եւ եթէ հոնկէ ալ հալածեն՝ փախէ՛ք այլ քաղաք մը» (Մտ 10.23): Աստուծոյ կամքն է որ հալածանքի դիմաց փախինք եթէ առիթը ունինք փախելու, իսկ եթէ առիթը չունինք՝ հաստատ կենանք մեր հաւատքին մէջ եւ մեր կեանքը զոհեց Անոր համար որ իր կեանքը զոհեց մեզի համար:

4) «Փախիւր Եգիպտոս»: Մոգերը հեթանոս աշխարհէն եկան Յիսուս մանուկին մօտ, իսկ հիմա Յիսուս մանուկը ինք անոնց մօտ պիտի երթայ: Ով որ փափաք ունի Յիսուսի մօտ գալու՝ անպայման որ Յիսուս իր մօտ պիտի գայ:

5) «Հոն մնա մինչեւ որ ըսեմ քեզի»: Աստուած ոչ միայն որոշեց Յովսէփին երթալիք երկիրը, այլեւ՝ որոշեց թէ որքան ժամանակ հոն պիտի մնայ՝ «մինչեւ Հերովդէսի մահը» (Մտ 2.15): Ինքզինք Աստուծոյ ծառայ նկատողը, ինք չէ որ պէտք է ճշդէ իր առաքելութեան տեղն ու ժամանակը, այլ՝ Աստուած:

6) Յիսուս եկած էր յաւիտենական մահէն ազատելու Հերովդէսը, իսկ Հերովդէս նախանձի պատճառով զինք սպաննելու մասին կը խորհէր: Նախանձը մարդս կ'առաջնորդէ սպանութեան: Նախանձի պատճառով էր որ Կայէն սպաննեց Աբելը: Նախանձի պատճառով էր որ Յովսէփին եղբայրները փորձեցին զինք սպաննել, Սաուղ փորձեց Դաւիթը սպաննել, Համանը փորձեց Մուրթքէն սպաննել: Եթէ կը նախանձիս եղբօրդ կամ քրոջդ՝ մարդասպան կը համարուիս: Մարդասպանութիւնը ուրիշին արիւնը թափելը չէ միայն: Ուրիշը ատելն ալ մարդասպանութիւն է. «Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է» (Ա.Յճ 3.15): Դուն չե՞ս ատեր այն մարդը որուն կը նախանձիս, եւ մտքիդ մէջ ամէն օր մահ չե՞ս ցանկար իրեն համար, եւ սա քեզ մարդասպան չի՞ դարձներ:

7) Յովսէփ չէր գիտեր որ վտանգ կար Յիսուս մանուկին համար. հրեշտակը յայտնեց իրեն այս մասին եւ ազատութեան ճամբայ ցոյց տուաւ անոր: Մենք կրնանք շտեմնել մեզի սպասող վտանգները, բայց Տէրը կը տեսնէ զանոնք, եւ անոնցմէ ազատելու ճամբայ ցոյց կու տայ մեզի:

8) Յիսուսի փախիլը կամ փախցուիլը Եգիպտոս, իր մարդկային բնութիւնը ցոյց կու տայ: Յովհան Ոսկեբերան կ'ըսէ. «Եթէ իր մանկութենէն հրաշքներ կատարէր՝ մարդ պիտի չնկատուէր»:

9) Յիսուս իբրեւ ներկայացուցիչը մարդկութեան, իր փախելովը սորվեցուց մեզի, թէ պէտք չէ չարիքին չարիքով դիմադրել: Ոսկեբերան կ'ըսէ. «Կրակը կրակով չի մարիր, այլ՝ ջուրով»:



«Յովսէփ արթնցաւ, գիշերով առաւ մանուկն ու անոր մայրը եւ գնաց Եգիպտոս, ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը: Այս ձեռով իրականացաւ Տիրոջ խօսքը, Ովսիա մարգարէի բերնով ըսուած. "Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս"» (Մտ 2.14-15):

1) *Յովսէփ չսպասեց մինչեւ լուսաբաց, այլ «գիշերով առաւ մանուկն ու անոր մայրը եւ գնաց Եգիպտոս», որովհետեւ այս էր պատուէրը հրեշտակին՝ «ե՛լ», այսինքն՝ հիմա՛ ել: Հաւատացեալը երբ Աստուծոյ հրահանգ առնէ՝ պէտք է անմիջապէս զայն գործադրէ:*

2) *Եգիպտոսի երկիրը իր յատուկ տեղը ունէր Իսրայէլի ժողովուրդին յիշողութեան մէջ, որովհետեւ հո՛ն էր որ Իսրայէլացիները անցուցին իրենց ստրկութեան տարիները, հո՛ն էր որ շարձարուեցան, եւ հո՛ն էր որ Ք.Ա. 16-րդ դարուն, Թուֆմոս Գ. թագաւորը հրահանգ պիտի տար սպաննել ծնած տղաները (Նլ 1.15-16): Յիսուս մանուկը հոն տարուեցաւ, կարծէք ըսելու համար իր ժողովուրդին թէ ինք չէ մոռցած իրենց քաջած նեղութիւնները: Արդարեւ, Յիսուս չի մոռնար երկրի վրայ իր փառքին համար մեր կրած նեղութիւնները:*

3) *Գաբրիէլ հրեշտակին պատուէրը հաւատքի փորձաքար մըն էր Յովսէփին ու Մարիամին համար: Անոնք կրնային մտածել. «Եթէ այս մանուկը Փրկիչն է, ան ի՞նչպէս չի կրնար իմօգիմօք եւ մեզ փրկել Հերովդէսի ձեռքէն», բայց չմտածեցին: Արդարեւ, նեղութիւնները փորձաքարեր են հաւատացեալին համար: Անոնք հանդէս կը բերեն մեր ճշմարիտ կամ կեղծ հաւատացեալ ըլլալը:*

4) *Մարիամ ու Յովսէփ փրկելու համար Յիսուս մանուկին կեանքը, պատրաստ էին յանձն առնել ամէն նեղութիւն: Մենք Յիսուսը պահելու համար մեր սրտին մէջ, պատրաստ ենք սիրով տանելու ամէն նեղութիւն:*

5) *Յիսուս մանուկը տարուեցաւ Եգիպտոս, որպէսզի իրականանար Ովսիայի միջոցաւ ըսուած խօսքը. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս», եւ նաեւ որպէսզի իրականանար Աստուծոյ խոստումը՝ թէ պիտի օրհնէ Եգիպտոսը. «Օրհնեալ ըլլայ իմ ժողովուրդս՝ Եգիպտոս» (Նս 19.25):*

6) *«Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»: Այս մարգարէութիւնը առաջին անգամ իրականացաւ երբ Աստուած իր «որդին» ու իր «անդրանիկը»՝ Իսրայէլի ժողովուրդը դուրս բերաւ Եգիպտոսէն (Նլ 4.22-23): Երկրորդ անգամ իրականացաւ երբ Աստուած իր Որդին կանչել տուաւ Եգիպտոսէն: Իսկ երրորդ անգամ պիտի իրականանայ երբ Տէրը երկրորդ անգամ յայտնուի ու եգիպտացած այս աշխարհէն հաւաքէ իր ժողովուրդը:*

7) *Հերովդէս հալածեց Յիսուսը, եւ Յիսուս հեռացուեցաւ իրմէ: Եթէ մեր մեղքերով հալածենք Յիսուսը՝ ան կը հեռանայ մեզմէ:*

8) Ըստ Յովհան Ոսկեբերանի, Եգիպտոսն ու Բաբելոնը չարիքով լեցուն երկիրներ էին, եւ ուստի՝ կը ներկայացնէին այն ատենուան շար աշխարհը. Յիսուս մանուկին Եգիպտոս երթալը, հետեւաբար, ցոյց կու տայ, թէ Յիսուս թէպէտ Հրէաստանի մէջ ծնաւ, եւ սակայն ամբողջ հեթանոս աշխարհին փրկութեան համար ծնաւ:

«Իսկ Հերովդէս, երբ տեսաւ որ մոզերը զինք խաղի բերին, սաստիկ զայրացաւ եւ մարդիկ դրկեց, որպէսզի սպաննեն Բեթլեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները, որոնք երկու տարեկան եւ կամ աւելի փոքր էին, նկատի առնելով Յիսուսի ծննդեան ժամանակը, որ ստուգած էր մոզերէն» (Մտ 2.16):

1) Երբեմն մարդիկ կը հարցնեն.- Ինչո՞ւ համար Աստուած թոյլ տուաւ որ մանուկները իր պատճառով կոտորուին: Այսպիսիներուն կարճ պատասխան կու տանք.- Մանուկներուն կոտորածին պատճառը ո՛չ թէ Քրիստոսը եղաւ, այլ Հերովդէսի դիւային ցասումը, կ'ըսէ Ներսէս Շնորհալի Հայրապետ: Մանուկները կոտորուեցան մանուկ Յիսուսին համար եւ ո՛չ թէ անոր պատճառով. պատճառը Հերովդէսի դիւային ցասումն էր: Փորձութիւն մը որուն կը հանդիպինք Սատանային դրդումով՝ չվերագրենք Աստուծոյ կամքին:

2) Երկինքի մէջ մեծ պատիւի արժանացան կոտորուած մանուկները, որովհետեւ անոնք իրենց կեանքով պահեցին կեանքը Անոր՝ որ աշխարհ եկած էր իր կեանքը տալու մեր փրկութեան համար: Մենք պատրաստ ենք մեր կեանքով պատգամելու ու հռչակելու մեր Տիրոջ կեանքը: Պատրաստ ենք զոհողութիւններ յանձն առնելու Անոր համար որ զոհուեցաւ մեր փրկութեան համար:

3) Հերովդէսի համար Մեսիային ծնունդը սպառնալիք մըն էր իր գահին, «ես»ին, փառքին ու հանգիստին: Ամէն փառասէր անձ, Յիսուսի ներկայութիւնը սպառնալիք կը նկատէ իրեն համար: Ո՞ր փառասէր անձը մեզ պիտի սիրէ եթէ յայտարարենք՝ «միայն Աստուած փառքի արժանի է»: Ո՞ր գահասէր մարդը պիտի հաճի մեզի եթէ յայտարարենք՝ «Աստուած է միակ զահակալը երկինքի ու երկրի»: Աշխարհի հանգիստը սիրող ո՞ր մարդը պիտի հանդուրժէ մեզ, եթէ յայտարարենք թէ այս աշխարհի հանգիստը վաղանցուկ եւ ունայն է:

4) Ամէն կասկածէ վեր է որ Հերովդէս գիտցաւ որ ծնեալ մանուկը ակընկալուած եւ սպասուած Մեսիան էր, նոյնինքն Քրիստոսը՝ Փրկիչը աշխարհի: Բայց ինչ փոյթ, իրեն համար ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէր անոր ծնունդը եւ ծննդեան նպատակը: Առաջին բանը որուն մասին մտածեց Հերովդէս, իր թագաւորական գահն էր: Նորածին թագաւորի մը գոյութիւնը իրեն համար շատ լուրջ սպառնալիք մըն էր: Ան թագաւոր ըլլալով չհանդուրժեց ուրիշ թագաւորի մը գոյութեան մասին լսել: Իր «ես»ը, իր աթոռը, իր փառքը, իր

հաճոյքները, իր հանգիստը ապահովելու համար, ան պատրաստ էր սպանելու կեանքի աղբիւրը՝ Քրիստոսը: Հերովդէս մրցակից նկատեց ծնեալ մանուկ Յիսուսը: Այո, «ես»ը ամէն մարդ եւ ամէն բան իրեն մրցակից կը նկատէ եւ կը փորձէ զանոնք մէջտեղէն վերցնել: Երբեմն մեր «ես»ին բարձրացման համար կ'աշխատինք ուրիշին «ես»ը ճզմել: Չենք հանդուրժեր ուրիշ «ես»ի մը որ մեր «ես»ին վրայ կրնայ շուք ձգել: «Ես»ը չի հանդուրժեր նոյն պաշտօնը, նոյն դիրքը, նոյն կարողութիւնը, նոյն իրաւասութիւնը ունեցող ներկայութիւն մը: Յաղթենք մեր «ես»ին եւ մենք յաղթած կ'ըլլանք ողջ աշխարհին:

«Այսպէս իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը Երեմիա մարգարէին բերնով կ'ըսէ. "Գոյժ մը լսուեցաւ Ռամայի մէջ, ողբ, հեծեծամբ եւ լացուկոծ դառնագին. Ռաֆէլ իր զաւակներուն համար կու լար եւ մխիթարուիլ չէր ուզեր, քանի այլեւս անոնք չկային"» (Մա 2.17-18):

1) Երեմիա մարգարէն այս խօսքը կ'արձանագրէ Ռաքէլի մահէն շուրջ 1100 տարի ետք: Ան կ'ըսէ, թէ Ռաքէլ կու լար իր զաւակներուն համար եւ «մխիթարուիլ չէր ուզեր, որովհետեւ անոնք չկային» (Եր 31.15): Ռաքէլ մայրն էր Յովսէփի (Ծն 30.22-24) եւ Բենիամինի (Ծն 35.16-18): Ան ինչպէս կրնար լալ ու ողբալ իր զաւակներուն համար, երբ ինք մահացաւ անոնցմէ առաջ: Խօսքը անշուշտ մարգարէական իմաստ ունի: Ռաքէլ լացաւ երբ իր որդիին՝ Բենիամինի սերունդին գերի տարուիլը տեսաւ: Ե՛րբ տեղի ունեցաւ ասիկա: Իսրայէլի թագաւորութիւնը որ սկսած էր Ք.Ա. 1050-ին, երկուքի բաժնուեցաւ 930-ին: Մէկ մասը կոչուեցաւ «Յուդայի թագաւորութիւն» (ճանչցուած նաեւ «Հարաւի թագաւորութիւն» անունով), մայրաքաղաք ունենալով Երուսաղէմը, որուն կազմին մէջ կ'իյնային Յուդայի եւ Բենիամինի ցեղերը: Իսկ երկրորդ մասը կոչուեցաւ «Իսրայէլի թագաւորութիւն» (ճանչցուած նաեւ «Հիւսիսի թագաւորութիւն» անունով), մայրաքաղաք ունենալով Սամարիան, որուն կազմին մէջ կ'իյնային Իսրայէլի միւս տասը ցեղերը: Բաբելոնի թագաւորը՝ Նաբուգոդոնոսոր, կործանեց Յուդայի թագաւորութիւնը Ք.Ա. 587-ին: Անոր դահճապետը՝ Նաբուզարդան, կործանել էր Երուսաղէմը, անոր բնակիչները գերի տարաւ Ռամա (Եր 40.1): Հոս էր որ Ռաքէլ լացաւ, երբ տեսաւ իր որդիին՝ Բենիամինի սերունդին եւ իր ազգի զաւակներուն կոտորածն ու գերեվարութիւնը: Իսկ թէ ինչո՞ւ կը հաստատուի որ Ռաքէլ Ռամայի մէջ լացաւ եւ հոն էր որ լսուեցաւ «ողբ, հեծեծամբ եւ լացուկոծ դառնագին», պատճառն այն է, որ Ռաքէլ Ռամայի մէջ թաղուած էր (Եր 31.15): Ծն 35.19-ին մէջ կը կարդանք, թէ «Ռաֆէլ մեռաւ ու թաղուեցաւ Եփրատի ճամբան, որ Բեթլեհէմ է»: Եփրատի եւ Բեթլեհէմ նոյն քաղաքին տրուած երկու անուններ են: Ծննդոցի գիրքը չ'ըսեր թէ Ռաքէլ թաղուեցաւ Եփրատի մէջ, այլ՝ «Եփրատի ճամբան», իսկ այս բացատրութեամբ կը հասկցուի Ռաման, որովհետեւ անիկա կը գտնուէր դէպի Եփրատի տանող ճամբուն վրայ:

2) Երեմիա մարգարէին այս խօսքը երկրորդ անգամ իրականացաւ, երբ Հերովդէս կոտորել տուաւ Բեթլեհէմի եւ անոր շրջակայքի մանուկները: Մանուկներուն կոտորածը Բեթլեհէմէն սկսաւ եւ հասաւ մինչեւ Ռամա: Երկու այս քաղաքներն ալ Յուդայի թագաւորութեան մաս կը կազմէին: Ռաման Յուդայի ցեղին կը պատկանէր, իսկ Բեթլեհէմը՝ Բենիամինի ցեղին: Այս երկու քաղաքները հեռու չէին իրարմէ. անոնցմէ մէկուն մէջ երբ ողբ ու կոծ ըլլար՝ անոր արձագանգները միւսին ալ կը հասնէին:

3) Ռաբէլ կը ներկայանայ իբրեւ լացող մայր, որովհետեւ ան դարձաւ նշանակ Իսրայէլի ողբացող մայրերուն, որոնք լացին իրենց ժողովուրդին գերութեան համար: Այսօր մեր ազգը նաեւ պէտք ունի Ռաբէլներու, այլ խօսքով՝ լացողներու ու ողբացողներու, որովհետեւ մեր հայրենիքն ու մեր ազգի կեանքը վերածուած է Ռամայի, եւ որովհետեւ ազգովին կը գտնուինք մեղքի գերութեան մէջ:

«Հերովդէսի մահէն ետք, ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ Յովսէփի երեցաւ երազի մը մէջ եւ ըսաւ. "Ե՛ր, ա՛ն մանուկն ու անոր մայրը եւ վերադարձիւ Իսրայէլի երկիրը, որովհետեւ մանուկը սպաննել ուզողները մեռան"» (Մտ 2.19-20):

1) Կարգ մը պատմագիրներ կ'ըսեն թէ Բեթլեհէմի ու անոր շրջակայքի մանուկներուն կոտորածէն երեք ամիս ետք Հերովդէս մահացաւ: Հրեայ պատմիչ՝ Յովսէփոս, կը վկայէ թէ Հերովդէս սարսափելի ու անտանելի տանջանքներու ենթարկուեցաւ իր մահէն առաջ, յօդատապի հիւանդութիւնը իր ներսիդին կրա՛կ դարձաւ եւ զինք ահաւորապէս տանջեց: Շատ գարշելի հոտ սկսաւ անկէ դուրս գալ, այնքա՛ն գարշելի՝ որ մէկը չէր կրնար մօտենալ իրեն:

2) Տիրոջ հրեշտակը պատուէր տուաւ Յովսէփին որ առնէ մանուկն ու անոր մայրը եւ Եգիպտոս երթայ, եւ պատուէր տուաւ անոր որ առնէ մանուկն ու անոր մայրը եւ Իսրայէլ վերադառնայ: Սա ցոյց կու տայ, թէ Աստուած ինքն է որ կ'առաջնորդէ իր Որդիին հետեւորդները այս աշխարհին մէջ: Ճշմարիտ հաւատացեալը Աստուծոյ պատուէրով եւ Աստուծոյ պատուէրին համաձայն պէտք է շարժի, ինչպէս ըրաւ Յովսէփ ինք:

3) Տիրոջ հրեշտակը Յովսէփին կը պատուիրէ որ վերադառնայ Իսրայէլ «որովհետեւ մանուկը սպաննել ուզողները մեռան»: Հերովդէս ուզեց սպաննել Յիսուս մանուկը, բայց ի՛նք մեռաւ: Մահ է բաժինը բոլոր անոնց՝ որոնք կը հալածեն Անմահը:

4) Տիրոջ հրեշտակը ի՛նք որոշեց անոնց փախելուն ու վերադարձին ժամանակը. արդարեւ, Տէրը ի՛նք պէտք է որոշէ մեր գործին ժամանակը: Երբ գործ մը Տիրոջ ճշգրտ ժամանակին չընենք՝ ակնկալուած արդիւնքը չի տար, եւ

կամ բնաւ արդիւնք չի տար, որովհետեւ, գործը «իր ժամանակին իր պտուղը պիտի տայ» (Մղ 1.3):

«Յովսէփ ելաւ, առաւ մանուկն ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը: Սակայն երբ լսեց որ Արֆեղայոսը թագաւորած է Հրէաստանի վրայ՝ իր հօրը Հերովդէսի տեղ, հոն երթալու վախցաւ: Փոխարէնը, երազի մը մէջ իրեն հրամայուածին համաձայն՝ գնաց Գալիլեայի կողմերը եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի իրականանայ ինչ որ Տէրը կ'ըսէ մարգարէներուն միջոցաւ, թէ Նազովրեցի պիտի կոչուի» (Մտ 2.21-23):

1) Յովսէփի երազին մէջ լսելէ ետք հրեշտակին պատուէրը, առանց ուշացումի առաւ մանուկն ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլ: Հաւատացեալը պէտք է առանց տատամսելու ու տնտնալու կատարէ Աստուծոյ կամքը:

2) Յիսուս պէտք էր Իսրայէլ դարձուէր, որովհետեւ ինք եկած էր առաջին հերթին ծառայելու «Իսրայէլի կորսուած ոչխարներուն» (Մտ 10.6): Մեր ծառայութեան դաշտը Տէրը ինք պէտք է որոշէ: Այսօր հովիւներ կը սիրեն ու կը նախընտրեն ծառայել հոն ուր դրամ կայ. ճշմարիտ հովիւր, սակայն, կը սիրէ ու կը նախընտրէ ծառայել հոն ուր Աստուած ինք կը կամենայ, - աղքատներուն, լքուածներուն, անտեսուածներուն, մոռցուածներուն, տառապեալներուն:

3) Յովսէփի մտածեց Հրէաստան երթալ եւ հոն բնակիլ, բայց վախցաւ երբ լսեց որ «Արֆեղայոսը թագաւորած է Հրէաստանի վրայ՝ իր հօրը Հերովդէսի տեղ»: Աստուած վերցուց Հերովդէսը բայց թողուց Արքեղայոսը: Աստուած կրնայ թեթեւցնել փորձութեան սաստկութիւնը, բայց զանհիկա ամբողջութեամբ չի վերցըներ:

4) Յովսէփի մարդկօրէն մտածեց Հրէաստան երթալը լաւագոյնը պիտի ըլլար, բայց ահա Տիրոջ հրեշտակը վերստին յայտնուեցաւ իրեն ու հրամայեց որ Գալիլեայի կողմերը երթայ: Յովսէփի գնաց ու բնակեցաւ Գալիլեայի Նազարէթ քաղաքին մէջ: Ինչ որ մարդկօրէն մեզի ճիշդ կը թուի՝ Աստուծոյ համար կրնայ ճիշդ չըլլալ (Առ 14.12):

5) Մատթէոս կ'ըսէ թէ Յովսէփ ու Մարիամ մանուկ Յիսուսին հետ բնակեցան «Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի իրականանայ ինչ որ Տէրը կ'ըսէ մարգարէներուն միջոցաւ, թէ Նազովրեցի պիտի կոչուի»: Այս խօսքը չկայ Հին Կտակարանին մէջ. նոյնիսկ Նազարէթ անունը հոն չկայ: 8-րդ դարու հեղինակ՝ Ստեփանոս Սիւնեցիին դիտել կու տայ, թէ «Նազովրեցի» բառը մեկնաբանուած է որպէս «սուրբ», իսկ Հին Կտակարանեան հասկացողութեամբ «սուրբ» կը նշանակէ «զատուած եւ Աստուծոյ ծառայութեան յատկացուած»: Այս իմաստով, Յիսուսի համար «Նազովրեցի պիտի կոչուի» խօսքով կը հասկնանք, որ

ան «սո՛ւրբ պիտի ըլլայ», այսինքն՝ իր մարդեղութեան օրերուն, զատուած եւ Աստուծոյ ծառայութեան ու կամքին կատարման նուիրուած պիտի ըլլայ (Եբր 10.5-7)<sup>1</sup>:

6) Այլ մեկնիչներ կ'ըսեն, թէ «Նազովրեցի» բառին արմատը Եբրայերէն «Նըզիր» բառն է որ կը նշանակէ «ուխտաւոր»: Սամփսոնի համար գործածուած է Եբրայերէն նըզիր=ուխտաւոր բառը (Գտ 13.5): Այս իմաստով, Յիսուս ինքն է իսկական Նըզիրը կամ Նազովրեցին, Աստուծոյ մե՛ծ ուխտաւորը, փրկութեան Նո՛ր Ուխտի միջնորդն ու կնքիչը (Ղկ 22.20: Եբր 7.22, 8.6, 9.15):

7) Յիսուս Նազարէթի մէջ շնաւ, բայց «Նազովրեցի» անունով ճանչցուեցաւ (Մտ 26.71: Մր 10.47, 14.67, 16.6, Գրծ 2.22), որովհետեւ Նազարէթի մէջ ապրեցաւ, ինչ որ «բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ» բառերը ցոյց կու տան: Ղուկաս կը վկայէ, թէ Յիսուս Նազարէթի մէջ «մեծցաւ, զօրացաւ եւ իմաստութեամբ լեցուեցաւ» (Ղկ 2.39-40, տե՛ս նաեւ՝ 4.16):

8) Ոչ միայն Քրիստոս, այլ նաեւ առաջին քրիստոնէաները ճանչցուեցան «Նազովրեցիներ» անունով: Ըսինք, թէ «Նազովրեցի» կը նշանակէ՝ «սուրբ» եւ «ուխտաւոր»: Ինքզինք Քրիստոսի հետեւորդ նկատող ամէն անձ պէտք է Նազովրեցի ըլլայ, այլ խօսքով՝ սուրբ ուխտաւոր մը:

9) Մեկնիչ մը կ'ըսէ, թէ «Նազարէթ» անունը իր ծագումը առած է Եբրայերէն՝ «Նաթգար» բառէն, որ կը նշանակէ՝ «ընծիւղ, շառաւիղ»: Յիսուս կոչուած է՝ ընծիւղ, շառաւիղ (Ես 11.1: Եր 33.15):

10) Ամբողջ Գալիլեան Հրեաներուն կողմէ անտեսուած ու անարգուած շրջան մըն էր: Աստուծոյ կամքն էր որ Յովսէփ եւ մանուկ Յիսուսն ու անոր մայրը բնակէին Գալիլեայի Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի սորվեցնէր Հրեաներուն թէ իրենց կողմէ անտեսուած շրջանէն էր որ պիտի գար Ամենատես Աստուածը:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 4)

<sup>1</sup> Յիսուսի համար գործածուած «Նազովրեցի» կոչումին կապուած յաւելեալ բացատրութեան համար տե՛ս Յի 18.5-ի բացատրութիւնը, թիւ 2 եւ 3:

## ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ

### ՉԳԵՅԷ՛Ք ՈՐ ԱՆՈՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԹԱՆ

Յաճախ նկատելի է, որ ծնողներ Սուրբ և Անմահ Պատարագի արարողութեան, եկեղեցույ խորհուրդներուն և այլ հոգեպարար արարողութեանց ընթացքին, իրենց մանուկներուն կ'արգիլեն խօսիլ, ճչալ և անհանդարտ նստիլ եկեղեցույ մէջ: Շատեր իրենց մանուկները լռեցնելու միտումով, կ'ըսեն. «Ձայն մի՛ հաներ, հիմա Աստուած պապան կը պատժէ» կամ «Հիմա քահանան կը պատժէ», իսկ ուրիշներ իրենց մանուկները դուրս կը բերեն եկեղեցիէն, «կացութիւն փրկելու» միտումով: Աւելին, երբեմն յոռեգոյն պարագային, ծնողներ յուսալքուելով, իրենց մանուկները առնելով տուն կը վերադառնան:

Սոյն յօդուածով կ'ուզեմ անդրադառնալ հիմնական երեք անհրաժեշտ զգացական կարիքներու, որոնք կը նպաստեն մարդ անհատին մէջ մանկուց սէր, կապուածութիւն և պատկանելիութիւն կազմաւորելու իր եկեղեցի-տան հանդէպ:

**Այդ զգացական կարիքներն են՝ ա) վստահութիւնը, բ) հանգստութիւնը և գ) ընդունումը ըլլալու զգացումը:**

Վստահաբար վերեւ յիշուած երեւոյթը նոր չէ, սակայն նկատելի է, որ անիկա սկսած է ընդհանրանալ: Արդեօք Աստուածաշունչը ի՞նչ կ'ըսէ այս ուղղութեամբ. Մատթէոսի աւետարանին 19.13-15 համարներուն մէջ կը կարդանք, թէ ծնողներ իրենց մանուկները Յիսուսի կը բերէին, որպէսզի Ան իր աստուածային ձեռքը անոնց վրայ դնելով՝ օրհնէ զանոնք: Առաքեալները, մեր այսօրուան ծնողներուն նման, կարծելով որ մանուկներուն ներկայութիւնը զՔրիստոս կը նեղացնէ, կը սաստեն զանոնք ու անոնց ծնողները (Մտ 19.13), որ այդպէս վերաբերելով Տիրոջ առաքելութեան «կ'օժանդակեն»: Սակայն, մեր բոլորին Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, կը յանդիմանէ առաքեալները, ըսելով. «Ձգեցէ՛ք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է երկինքի արքայութիւնը» (Մտ 19.14): Աստուածորդին կը կատարէ ծնողներուն խնդրանքը և իր աստուածային օրհնաբեր աջը կը դնէ մանուկներուն գլխուն (Մտ 19.15):

Ծնողներ պետք է գիտակցին, թե ինչպես որ եկեղեցին մեր բոլորին տունն է, այնպես ալ անհկա մանուկներուն տունն է: Եթէ մանուկները տան մէջ կու լան, կը ճշան, կը վազեն եւ կը խօսին, ինչո՞ւ նաեւ թոյլ չտանք, որ այդ մէկը երբեմն ընեն իրենց եկեղեցի-տան շրջափակին մէջ: Մանուկները նոր կը ծանօթանան մեր աշխարհին եւ այդ իսկ պատճառով, անոնք կ'ուզեն ամէն ինչ շօշափելով սորվիլ ու փորձելով ծանօթանալ: Եթէ այդ մէկը արտօնելի է տան մէջ, ուրեմն նաեւ պետք է թոյլատրելի ըլլայ երբեմն եկեղեցի-տան մէջ: Ճիշդ է որ մանուկներուն պետք է բացատրել եկեղեցւոյ վերաբերող վարուելակերպային պատշաճութիւնները, ուղղել զանոնք, զգաստացնել եւ խրատել, բայց այդ մէկը պետք է կատարուի գուրգուրալից եւ մեղմ կերպով՝ առանց վախցնելու կամ սարսափ առթելու: Մանուկներուն իրաւունքն է ճանչնալ եկեղեցւոյ իւրաքանչիւր տարրը: Ուրեմն, ձգեցէ՛ք որ անոնք Քրիստոսի երթան, արգելք մի՛ ըլլաք անոնց:

Էրիք Էրիքսըն (1902-1994) գերմանացի-ամերիկացի անուանի մանկավարժը աշխարհին յայտնեց, թէ մարդ արարածը ի մասնաւորի իր կեանքի 0-8 տարիներու ընթացքին, կ'ունենայ զգացական հանգրուանական կարիքներ (emotional need), որոնք պետք է բաւարարուին իր շրջապատին եւ մանաւանդ ծնողքին կողմէ: Ըստ Էրիքսընին, ծնողքը իր 0-2 տարեկան մանուկին մէջ զինք շրջապատող աշխարհին նկատմամբ պետք է վստահութեան հիմքը դնէ եւ ամրապնդէ: Ան կը բացատրէ, թէ եթէ մանուկի մը ծնողքը այդ տարիներուն իրեն վստահութիւն ներշնչէ, ապա ան յետագային կրնայ ապահով զգալ ինքզինք՝ զինք շրջապատող աշխարհին մէջ: Զինք շրջապատող աշխարհը ըսելով, կը հասկնանք այն ամէն ինչը, որ անմիջական կապ ունի մանուկին հետ: Այս իմաստով, եկեղեցին ալ մանուկին անմիջական աշխարհին մաս կը կազմէ եւ պետք է կազմէ: Եթէ ծնողներ կարենան իրենց զաւակներուն մէջ, մանկուց, եկեղեցւոյ նկատմամբ վստահութեան եւ անվախ հարազատութեան սերմը ցանել, ատիկա պիտի մնայ մանուկներուն մէջ իրենց կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքին: Գիտենք, թէ մանուկը ոեւէ անձի քով երթալու համար, նախ պետք է վստահի անոր. նոյնպէս ալ, եթէ մանուկը այդ տարիներուն վստահութիւն գտնէ եկեղեցի-տան մէջ, ան կրնայ ամենայն հանգըստութեամբ թէ՛ այսօր եւ թէ՛ ապագային Քրիստոսի երթալ: Թերեւս, մանկութենէն ի վեր, եկեղեցւոյ նկատմամբ վստահութեան պակասն ու անոր կապուած «պարտադրուած» վախն է, որ այսօր մեր երիտասարդները հեռու կը պահէ իրենց հոգեւոր տունէն՝ եկեղեցիէն: Ինչպէս նշեցինք, ըստ Էրիքսընին, 0-2 տարեկան մանուկին մօտ վստահութեան զգացումի կազմաւորումը որոշիչ դեր կ'ունենայ ապագային: Այսինքն, եթէ պատահի, որ մանուկը այդ տարիներուն եկեղեցւոյ նկատմամբ անվստահութիւն, վախ, շփոթ եւ անհանգըստութիւն զգայ, ապագային վերապահ կեցուածք կ'որդեգրէ եւ կը տատամսի եկեղեցի յաճախելու: Ուրեմն, ձգեցէ՛ք որ անոնք Քրիստոսի երթան,



արգելք մի՛ ըլլաք անոնց՝ առանց ծայրայեղ վախի զգացում եւ չափազանց-ուած զգուշաւորութիւն ստեղծելու անոնց մօտ:

### **Վստահութեան կը հետեւի հանգստութիւնը:**

Մանուկներուն պէտք է զգացնել, թէ եկեղեցին հանգստութիւն պարգեւող վայր մըն է: Հանգստութիւն ներշնչելու համար, նախքան մանուկին եկեղեցի-տուն երթալը, ծնողներ պէտք չէ յարատեւօրէն կրկնեն. «Ձայն չհանես եկեղեցոյ մէջ», «Բարի կեցի՛ր», «Աղօթի ժամանակ բան մը չուզես ինձմէ, քանի որ Աստուած պապան կը նեղուի», եւ նման այլ սպառնալից խօսքեր: Այսպիսի խօսքերով մանուկներուն մէջ վախ կամ վանողական զգացում կը յառաջաց-նենք եկեղեցոյ նկատմամբ, որովհետեւ անոնց յիշողութեան մէջ կ'արձա-նագրուի, թէ եկեղեցին վայր մըն է, ուր ամէն մարդ միա՛յն պէտք է կաշկան-դուած վիճակի մէջ ըլլայ, քարացած մնայ, ինքզինք անձայն պահէ, եւ այլն: Պահ մը մտածենք այս մասին: Արդեօք աւելի լաւ պիտի չըլլա՞յ եթէ մանուկը եկեղեցի առաջնորդելէ առաջ դրական խօսքեր ըսուին անոր, օրինակ՝ «Այսօր Յիսուս պապային քով պիտի երթանք», «Յիսուս պապային հետ խօսէ՛ (աղօթէ՛) եւ քու ուզածներդ անոր քով», «Երբ որ եկեղեցի մտնենք, բարի լոյս քով Աստուած պապային»...: Եթէ այդպիսի դրական խօսքերով մանուկները եկեղեցի տա-նինք, անոնք ուրախութեամբ պիտի երթան իրենց եկեղեցի-տունը եւ հան-գիստ զգան հոն:

Հարկ է տան մէջ ալ նոյն մօտեցումները ունենալ Տիրոջ նկատմամբ: Եթէ տան մէջ, մեր մանուկներուն աղօթքի, շարականներու եւ սրբութիւններու հանդէպ մօտիկութիւն-հանգստութիւն զգալ սորվեցնենք, անոնք երջանիկ պիտի ըլլան, երբ հաւաքական աղօթքներու եւ հոգեւոր երգերու մասնակցին: Եւ առաւել, մանուկները վստահաբար չեն կրնար չափահասներու նման երկար ժամերով եկեղեցի մնալ: Անոնք կրնան ծարաւնալ, անօթենալ եւ այլ կարիքներ ունենալ կամ նոյնիսկ ուզեն դուրս ելլել: Երբ այսպիսի կացու-թիւններու հանդիպինք, կարիքը չկայ մանուկին թելադրել, որ սպասէ մինչեւ արարողութիւնը աւարտի: Եթէ այդպէս ընենք, անոնց յիշողութեան մէջ պի-տի արձանագրուի, թէ եկեղեցին անհանգիստ վայր մըն է, ուր իրենց կարիք-ները նկատի չեն առնուիր եւ դժուար պայմաններ կը պարտադրուին իրենց: Այսպիսի պարագաներու, պէտք է մանուկներուն կարիքները հոգանք՝ քանի մը վայրկեան եկեղեցիէն դուրս բերելով: Եթէ կարենանք ասիկա իրագործել, մանուկները այլեւս անհանգստութիւն պիտի չզգան, երբ եկեղեցի-տունը մտնեն, որովհետեւ պիտի անդրադառնան, որ անիկա հաճելի վայր մըն է, իրենց հարազատ տո՛ւնն է եւ տնեցիի հոգեբանութեամբ ամենայն հանգըս-տութեամբ պիտի մտնեն հոն: Ուրեմն, ձգեցէ՛ք որ անոնք Քրիստոսի երթան, արգելք մի՛ ըլլաք անոնց:

**Վստահութեան եւ հանգստութեան կը միանայ ընդունուած ըլլալու զգացումը:**

Մանուկները պէտք է զգան, որ իրենք եկեղեցի-տան մէջ ընդունուած են, առանց որեւէ խտրութեան: Երբ մանուկը Քրիստոսի պատկերը տեսնելով «Յիսուսը» բացագանչէ, ծնողներ պէտք է խստօրէն յանդիմանեն զինք իր բարձր ձայնին համար: Երբ ուզէ իր մոմը մոմակալին մէջ դնել, պէտք է թոյլ տան որ առանձին կատարէ զայն՝ առանց կտրուկ միջամտութեան: Ծնողներ պէտք է թոյլ տան, որ մանուկը վազէ եկեղեցւոյ շրջափակին մէջ, ջուր խմէ եկեղեցւոյ շրջափակի ծորակէն կամ աղբիւրէն, ծանօթանայ շրջափակին մէջ գտնուող խաչքարին, յիշատակարաններուն կամ ազգային բնոյթ ունեցող կոթողներուն, որպէսզի ան առիթ ունենայ գեղեցիկ յիշատակներ կազմելու. մանուկը պէտք է զգայ, որ ինք «եկեղեցի» կոչուած վայրին անբաժանելի մէկ մասնիկն է, որ ինք իր հարազատ տան մէջ է, այդ վայրը նաեւ իրեն՝ կը պատկանի եւ ինք այդ տան հարազատ մէկ անդամն է: Ուրեմն, ձգեցէ՛ք որ անոնք Քրիստոսի երթան, արգելք մի՛ ըլլաք անոնց:

Առ ի եզրակացութիւն, մանկավարժական սկզբունքներու համաձայն, մարդկային կեանքի 0-8 տարիներուն ընթացքին է, որ կը կազմաւորուին մարդուն նկարագրի առանցքային բաժինները եւ հոգեկան առողջութեան գրաւականները: Եթէ այս շրջանին յաջողինք մեր զաւակները եկեղեցւոյ նկատմամբ խոր վստահութեամբ օժտել, զիրենք հարազատութեան զգացումներով զինել, եկեղեցին իրենց իբրեւ հանգստութիւն պարգեւող վայր մը ներկայացնել եւ եկեղեցւոյ մէջ ընդունուած ըլլալու իրականութիւնը ապրեցընել անոնց մօտ, մենք ապագային պիտի ունենանք այնպիսի՝ եկեղեցասէր սերունդ մը, որուն համար Կիրակին եւ ազգային-եկեղեցական տօներուն նշման օրերը պիտի ըլլան Աստուծոյ հետ հանդիպելու օրեր, հոգեւոր խաղաղութիւն վայելելու օրեր եւ իրեն՝ պատկանող տեղը՝ եկեղեցի-տունը երթալու օրեր:

Ուրեմն, ձգեցէ՛ք որ անոնք Քրիստոսի երթան, արգելք մի՛ ըլլաք անոնց:

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՀՃԵԱՆ

## ՊԱՏՄԱ\_ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

### 90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

#### Տ. ԱՐՏԱԻԱԶԴ ԱՐՔ. ՍԻՐՍԵԵԱՆ

Ծնած է Ակն (Պատմական Հայաստան), 1889-ին: Աւագանի անունն է Տիգրան: Նախնական ուսումը ստացած է նախ Գատըքէոյի Արամեան եւ ապա Կեդրոնական Վարժարաններուն (Պոլիս) մէջ: Տակաւին ուսանող Կեդրոնականի, սկսած է իր աշխատակցութիւնը բերել Արեւելք օրաթերթին եւ Փունջ ու Ծաղիկ Մանկան շաբաթաթերթերուն: Աւարտելէ ետք Կեդրոնականը, հրատարակած է գրական շաբաթաթերթ մը, որ հազիւ երկու զարուններ բոլորած, հրատարակիչը 1909-ին հրաւիրուած է իբրեւ ներքին մնայուն դաստիարակ-ուսուցիչ Կարապետեան Վարժարանին: Տարի մը ետք, այս անգամ հրաւեր ստացած է էսկիշեհիրէն, որպէս տեսուչ իր ծառայութիւնը բերելու տեղւոյն Ազգ. Վարժարանին, ուր մնացած է երեք տարի: Բանիբուն աշխատող մը ըլլալով, ան շուտով բացած է իր սեփական Գիշերօթիկ Վարժարանը, միաժամանակ աշխատակցելով Իզմիրի Աշխատանք եւ Պոլսոյ Ժամանակ ու Նոր լուր օրաթերթերուն, յօդուածները ստորագրելով Սօսի ծածկանունով:

Ապրիլեան Եղեռնէն մազապուրծ ազատած գաղութներէն, սրտաճմրիկ նամակներ կը տեղային Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, ամէն կողմէ հոգեւորականի պահանջք կար, կարենալ հոգալու համար ժողովուրդին կրօնական կարիքները:

Հոգեկան ներքին գրգիռ մը, ներքին կոշում մը Տիգրան Սիրմէեանը մղած է ներկայանալու Ազգ. Պատրիարքարան եւ իր պատրաստակամութիւնը յայտնելու Կուսակրօն Քահանայութեան: 1918-ին Գատըքէոյի Հայոց Եկեղեցւոյ մէջ Կուսակրօն եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Գնել Եպիսկոպոս Գալեմքեարեանի, եւ վերակոշուած՝ Տ. Արտաւազդ Արեղայ:

Քառասնօրեայ ծոմապահութեան շրջանը հազիւ աւարտած, մեկնած է Գոնիա, որպէս Առաջնորդ, հովուելու 30,000 հաշուող շրջանի հայութիւնը:

1920-ի քեմալական շարժումին, որպէս անբաղձալի տարր, աքսորուած է էրզրում: Աքսորի շրջանին Արտաւազդ Վարդապետ իրեն բախտակից ունեցած է յոյն մետրոպոլիտ մը, որուն հետ իր մտերմութիւնը սփոփանք դարձած է: Մետրոպոլիտը հիացած անոր հոգեկան արիութեան վրայ, մխիթարուած է, թէ ինչպէ՛ս աքսորի մէջ իսկ, ան կրօնական իր պարտականութիւնները կը կատարէր իր անձին եւ Կարսէն բերուած 6000 հայ զինուորներուն եւ 4000 հայ գործաւոր զինուորներուն (ամէլէ թապուրի) համար:

էրզրումի տեղացի հայերէն ոչ ոք մնացած էր. բոլորն ալ տեղահանուած եւ քշուած էին Անատոլիի խորերը, եւ իսկական քաջութիւն էր կրօնական յանձանձումները ստանձնել գերեվարեալ հայութեան եւ հայ ամէլէ թապուրիին: Բանտին մուտք ու խոնար անկիւններն իսկ, կարծես պահ մը կը լուսաւորուէին ու կը ջերմանային հայուն «Տէր ողորմեա»ով, եւ Տէրը կ'իջնէր ու կ'այցելէր աքսորական իր հոգեւորականներուն՝ գօտեպնդելու համար զանոնք:

1922-ին ներման արժանանալով Պոլիս վերադարձած է, ուր երկու տարի պաշտօնավարած է որպէս ուսուցիչ-քարոզիչ ու խմբագիր Պատրիարքարանի պաշտօնաթերթ Հայ Խօսնակ ամսագրին:

1924-ի վերջերը Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ ընտրուած է եւ պաշտօնը ստանձնած՝ 1925-ի Յունուարին:

Հալէպահայութիւնը շատ բան կը պարտի Մթրան էլ էրմէնին, ինչպէս սովոր էին կոչել տեղացի քրիստոնեայ եւ այլազգ արաբները: Պետական պաշտօնատուներ պատկառանքով կը բացուէին անոր առջեւ: Հայուն անունը, շնորհիւ իրեն, բարձր կը հնչէր ամէնուրեք: Հալէպի Մուհաֆըզն (Նահանգապետ) ու Քրանսական հոգատար իշխանութեան եւ այլ պետութիւններու ներկայացուցիչներ անոր մէջ կը տեսնէին դպրութեան հետեւող բարձր անձնաւորութիւն, որուն հետ կարելի էր յարաբերիլ եւ զաղափարներու փոխանակութիւն ունենալ:

Շուտով կառուցուած են նորանոր եկեղեցիներ, բացուած են վարժարաններ, եւ ամբողջ թեմը՝ կազմակերպուած:

Ի վարձատրութիւն իր բոլորանուէր ծառայութեանց եւ գրական վաստակին, 1929-ին Սահակ Բ. Կաթողիկոս Եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում շնորհած է իրեն, Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, օծակից ունենալով Խաղ Մ. Վարդապետ Աջապահեանը:

Իսկ 1933-ին, Սահակ Բ. Կաթողիկոսի եւ իր Աթոռակցին՝ Բաբգէն Ա.-ի Սրբատառ Կոնդակով ստացած է Արքութեան պատիւ եւ տիտղոս:

Արտաւազդ Արք. Սիրմէեան 16 տարի նուիրումով եւ ձեռնհասութեամբ վարած է Բերիոյ Թեմի առաջնորդութիւնը՝ իր ետին ձգելով քաղցր յիշատակներ եւ բարի անուն մը: 1939-ին հրաժարած է Բերիոյ Թեմի Առաջնորդական իր պաշտօնէն եւ փոխադրուած՝ Պէյրութ:

Նոյն տարեշրջանին Արտաւազգ Արք. Սիւրմէեան Առաջնորդ ընտրուած է Ֆրանսայի եւ Պելճիքայի հայոց, սակայն Համաշխարհային Բ. պատերազմին պատճառով չէ կրցած իր նոր պաշտօնատեղին մեկնիլ, մնացած է Պէյրութ եւ իր ժամանակը լեցուցած է գրական աշխատանքներ կատարելով:

1942-ին, Լիբանանի Ազգ. Իշխանութեան դիմումին վրայ, օրուան Կաթողիկոսական Տեղապահ Եղիշէ Արք. Կարոյեանի տնօրինումով Լիբանանի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ նշանակուած է:

Լիբանանի ազգային կեանքը այն օրերուն պառակտեալ վիճակ մը կը ներկայացնէր: Իր նշանակումովը խաղաղած են կիրքերը, կազմակերպուած է թեմը, եւ ազգային գործերը ստացած են բնականոն ընթացք: Զարկ տուած է կրօնական արարողութեանց անթերի կատարման, նշանակուած են եկեղեցիներու քարոզիչներ, ուր բանին կենաց քարոզութեամբ մխիթարուած է հաւատացեալ հօտը:

1945-ին, մեկնած է Ս. Էջմիածին, որպէս պատգամաւոր Լիբանանի Հայոց Թեմին, մասնակցելու Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, որ ընտրուելէն եւ Սրբալոյս Միւռոնի օծումը ստանալէն ետք, զինք Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ նշանակած է:

Իր նոր պաշտօնատեղին մեկնած է 1946-ին, հինգ տարուան դժուար եւ տառապալից կեանք մը ունենալէ ետք՝ իր մահկանացուն կնքած է Փարիզի մէջ:

Վերջին Օծման եւ Թաղման արարողութիւնները կատարուած են մեծ շուքով, 15 Հոկտ. 1952-ին. Թաղման արարողութեանց ներկայ գտնուած են զանազան կազմակերպութեանց կողքին Ֆրանսացի բարձրաստիճան անձնաւորութիւններ՝ մատուցելու համար իրենց վերջին յարգանքը հայ մեծ հոգեւորականին ու գրչութեան դպիրին:

Թաղման եւ Վերջին Օծման հոգեւոյզ արարողութեանց հանդիսապետած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Տեղապահ Խաղ Արք. Աջապահեան:

Հոգեւոյս Սրբազանին հեղինակած գիրքերն ու ուսումնասիրութիւններն են.

– Տաթև կրօնական բանասիրական գրական եւ յուշագրական Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ. հատորները, 1925-1930, Հալէպ:

– Նկարագիր Օշին Թագաւորի Ձեռագիր ժամագիրքին 1319 թ., Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցոյ Ձեռագիրներէն, Անթիլիաս, 1933:

– Ցուցակ հայերէն Ձեռագրաց Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցոյ եւ մասնաւորաց, Երուսաղէմ, 1935:

– Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի, Հալէպ, 1936:

– Հողագործութիւնը Հին Երրայեցոց մէջ, Հալէպ, 1937:

- Ընտանեկան դաստիարակությունը մեր տուններին ներս, Հալէպ, 1937:
- Ոսուցիչներս, 1949, Մարսէլ (Ֆրանսա):
- Պորտո Հանրի Մեծ Դաստիարակ մը՝ Պրն. Տը Լակարտ, Անթիլիաս, 1937:
- Բաղասի բերդը, Հալէպ, 1937:
- Հալէպ, 1938:
- Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի եւ Բաբգէն Աթոռակից Կիլիկեցի, Անթիլիաս, 1938:
- Բալմիր, Ս. Գրային երկիրներու սուրիական ֆաղաֆներ, Հալէպ, 1939:
- Աֆաաքի ժամանակակից Սամարիան, Երուսաղէմ, 1941:
- Դէպի Հայաստան (Յուշեր եւ Խոհեր), Պէյրութ, 1946:
- Թշուառի զգացումներով, Փարիզ, 1947:
- Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Ս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի, Վենետիկ, 1948:
- Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Երոպայի մասնաւոր հաւաքածոներու, Փարիզ, 1950:
- Պատմութիւն Հալէպի Հայոց Ա. Հատոր, Հալէպ, 2002:
- Նկարագիր Քառասնից Մանկանց եւ Ս. Աստուածածին եկեղեցիներու սրբանկարներուն, Հալէպ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 12)




## Ս. ՊԱՐՍԱՄԱՅ ՃԳՆԱԲՈՐԻՆ ՄԱՍՈՒՆՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԳԱՆՁԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի փափաքներէն մէկը եղած էր, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր գանձերը հարստացնել նոր մասնատուի-աջերով, անոնցմով վերանորոգելու հայ ժողովուրդի հոգեւոր կապուածութիւնը սուրբերուն հետ եւ շարունակելու համար Կիլիկեան աւանդը: Այս գեղեցիկ երազին իբրեւ առաջին քայլ, Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ, «Կիլիկիա» Թանգարանի հոգեւոր գանձերէն՝ Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը ունեցաւ իր մասնատուփը՝ գեղեցիկ աջի կերպարանքով, որպէսզի բարեպաշտ հաւատացեալներ վայելեն սուրբին օրհնութիւնը:

Այս երազին իրականացումին համար, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմի Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ գաղութէն Ռաֆֆի Խաչատուրեան ազնիւ անձնաւորութիւնը ստանձնեց այս ծրագիրին ամբողջական ծախսերը: 2021-ին, ծրագիրը մեկնարկեցաւ, աշխատանքը վստահելով երիտասարդ արուեստագէտ եւ վարպետ ոսկերիչ Մինաս Յոբալեանին, որ հակառակ բոլոր դժուարութիւններուն աշխատանքը յաջողութեամբ պսակեց:

Աշխատանքի ձեռնարկումէն մէկ տարի անց՝ 2022-ին, Աւագ Հինգշաբթի օր, ոսկերիչ Մինաս Յոբալեան եւ իր աշխատակիցները, այցելեցին Վեհափառ Հայրապետին եւ հոգեւոր նշանակութիւն ունեցող այդ օրուան առիթով, նորակերտ արծաթեայ աջէ մասնատուփը յանձնեցին Վեհափառին: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատանքով ողջունեց արուեստագէտ ոսկերիչը եւ իր աշխատակիցները, որոնք հակառակ Լիբանանի մէջ տիրող ծանր տագնապին, յաջողեցան բժախնդիր աշխատանքով այսպիսի գեղեցիկ ծրագիր մը իրականացնել:



Ասորի ուղղափառ Պատրիարքութեան 353-րդ ձեռագրին մէջ պատկերուած Ս. Պարսամայ ճգնաւորին սրբանկարը:

Այս ուսումնասիրությունում, պիտի փորձենք վերլուծական մոտեցումով վեր առնել սուրբին եւ մասունքին պատմականն ու արժէքը, որպէսզի ընթերցողները աւելի մօտէն ծանօթանան դարերէ ի վեր պահպանուած մասունքին եւ անոր պատմական տուեալներուն:

## ՀԱԿԻՐՃ ՆԵՐԱԾԱԿԱՆ՝ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Սուրբերու մասունքները իրենց օրհնութեամբ եւ հրաշքներով մեծ դեր ունեցած են ժողովուրդներու հաւատքի կեանքին մէջ եւ այդ իսկ պատճառով համապատասխան յարգանք եւ մեծարում գտած են անոնց կողմէ: Սուրբերու բարեխօսութեան կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, որոնք յաճախ կատարուած են անոնց մասունքներուն միջոցաւ: Սակայն, հոգեւոր այս ներգործումներու կողքին, մասունքները նաեւ կը ներկայացնեն պատմական արժէք եւ վաւերագրական փաստ:

Հայ Եկեղեցւոյ իրականութեան մէջ, մասունքները նաեւ հոգեւոր կամ Եկեղեցական իշխանութեան եւ արժանապատուութեան խորհրդանիշներ դարձած են: Օրինակ, Եօթներորդ դարուն, Քրիստոսի խաչափայտի գերեվարումը պարսիկներու կողմէ, ցոյց կու տայ Քրիստոնէական կրօնքի դէմ նուաստացման արարք մը: Անոր վերադարձը դէպի Քրիստոնէայ աշխարհ դարձած է տաղաւար տօն մը, որ ծանօթ է Խաչվերաց անունով եւ որ մինչեւ այսօր կը տօնուի Քրիստոնէայ եկեղեցիներուն կողմէ: Նոյն հասկացողութիւնը զարգացած է Հայ Եկեղեցւոյ մօտ, յատկապէս Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջին (մասունքը) հանդէպ, որ եզակի յարգանք եւ մեծարանք կը վայելէ հայ ժողովուրդի կողմէ: Ան եկեղեցական իշխանութեան համար այնքան հզօր խորհրդանիշ դարձած է, որ նոյնիսկ տարբեր առիթներով կորսուած կամ գողցուած է, եկեղեցական իշխանութիւն մը տկարացնելու միտումով:

## ԿԻԼԻԿԻՈՅ ԱՋԵՐԸ

Կիլիկիոյ պատմութեան մէջ կը տեսնենք, թէ ինչպէս աջերն ու մասունքները ո՛չ միայն եկեղեցական այլ նաեւ ազգային առումով հեղինակութիւն կը ստանան: Այդ հեղինակութիւնը կ'արտացոլայ ձեռագիրներու, բանաստեղծութիւններու եւ յատկապէս կոնդակներու մէջ: Սոյն յիշատակագրութիւններուն մէջ չորս աջերու յիշատակութիւնը յաճախ կրկնուած կը տեսնենք տարբեր առիթներով: Յիշատակուածները երեք աջեր են եւ չորրորդը՝ «Թաթ», որ կ'ակնարկէ Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքին: Օրինակ, Եփրեմ Ա. Աջապահեանի (1771-1784) «Վիպագրութիւն» անունով ոտանաւորին մէջ կը գտնենք Ս. Պարսամայ ճգնաւորի մասունքին մասին ակնարկութիւն մը, որ ստորեւ կը ներկայացնեմ.



«...Ի դաստակիս աստուածամերձ,  
 Զոյգ ընդ սորա իցեն հանդերձ,  
 Ստակասպֆն արկցեն աստ հերձ.  
 Այլ հաւաստեալ դաւոցեն անկեղծ:

Սեղբեստրոս սուրբ հայրապետ,  
 Նիկողայոս ընդ այն անհետ.  
 Սուրբն Պարսամ Վայելչակերտ,  
 Զոյգ են աստեն դաստակացն շերտ:»<sup>1</sup>

Ս. Պարսամայ ճգնաւորի աջի կարեւորութիւնը կը նկատենք, մանաւանդ, երբ Աջապահեան կաթողիկոսներու կոնդակի աւարտին, ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչի, Ս. Սեղբեստրոս եւ Ս. Նիկողայոս Հայրապետներու անունները կը յիշուին, իբրեւ հոգեւոր եւ եկեղեցական իշխանութիւն, նոյնպէս կը յիշուի Ս. Պարսամայ ճգնաւորին անունը: Թէեւ, մինչեւ Կիրակոս Բ. Աջապահեան կաթողիկոս, սուրբի անուններով չեն յիշուիր, այլ պարզապէս՝ «սրբոց չորից աջերաց» ձեւով, որուն մէջ բնականաբար նաեւ նկատի կ'առնուի Ս. Պարսամայ ճգնաւորի աջը. սակայն, աւելի ուշ ժամանակներուն, սուրբերուն ուղղակի անուններն ալ կը գրուին աջերու յիշատակութեան ժամանակ: Կը մէջբերեմ օրինակ մը, Կիրակոս Բ. Աջապահեան կաթողիկոսի կոնդակէն.



Կիրակոս Ա. Աջապահեան  
 Կաթողիկոս, Պարսամայ ճգնաւորին  
 մատունքը բռնած (Միւռոնի Կաթսայի  
 վրայ դրուած):

«Գրեցաւ օրհնութեան եւ շնորհակալութեան կոնդակս 1857 Մարտի 25 ֆսան եւ հինգն, ի հայրապետական գերագահ Մայր Սրբոյ Աթոռն Մեծին Կիլիկիոյ, ընդ հովանեալ չորից աստուածամերձ Սուրբ Աջաց, Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի Հայաստանեայց Հայրապետի Սրբոյ Սեղբեստրոսի Հոովմայ Հայրապետի, Սրբոյ Յակոբայ Մծբնայ Հայրապետի եւ Սրբոյ Պարսամայ ճգնաւորի, եւ եօթանասուն եւ եօթն հազար սրբոց արեամբ նահատակեալ Մարտիրոսաց նշխարացն, որք կան ի պահպանութիւն եւ ի մշտնջենաւոր փառատուրթիւն Ազգիս Հայոց»<sup>2</sup>:

<sup>1</sup> Կաթողիկոս, Բարգէն Ա., «Կիլիկիոյ Կաթողիկոսաց Պատմութիւն», Անթիլիաս, 1990, էջ 511:

<sup>2</sup> Ի տարբերութիւն այլ կոնդակներու, Սուրբ Նիկողայոս Հայրապետի աջին փոխարէն յիշուած է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի մատունքը: Այս մէկը ինքնին հարցականներու դուռ մը կը բանայ, թէ արդեօք Ս. Յակոբի աջ մը գոյութիւն ունեցած է Միսի մէջ, եւ հիմա չկայ, եւ այլ հարցումներ: «Կիլիկիոյ Կաթողիկոսաց Պատմութիւն», էջ 665-666:

Այս մէկը ցոյց կու տայ, թէ Ս. Պարսամայ ճգնաւորին աջը նոյնքան կարեւոր նկատուած է որքան միւս աջերը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին, Սուրբ Սեղբեստրոսին եւ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին (երբեմն այս մասունքին փոխարէն առաւելաբար յիշուած է Ս. Նիկողայոս Հայրապետին աջը): Այլ խօսքով, եօթանասունեօթը հազար մասունքներուն մէջ, այս շորս աջերը յիշատակելի կը նկատուին եւ անոնցմով օրուան կաթողիկոսը իր իշխանութեան հեղինակութիւնը կ'ուզէ արտացոլացնել: Ահաւասիկ, այս կարեւորագոյն աջերէն, Ս. Պարսամայ ճգնաւորին աջը եւս կը յիշուի, սակայն անիկա երբեք չէ ունեցած իր արծաթեայ աջակերպ մասնատուփը: Արդեօք ո՞վ է Ս. Պարսամ ճգնաւորը, որուն մասունքը այսպիսի կարեւորութեամբ կը յիշուի կոնդակներուն մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջին կողքին:

## Ս. ՊԱՐՍԱՄ ՃԳՆԱՎՈՐԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆ

Ս. Պարսամ անունով ճգնաւոր մը չէ ճանչցուած եւ չէ ընդհանրացած հայկական եկեղեցական շրջանակներէն ներս, այնպէս, ինչպէս Ս. Գէորգը, Ս. Յակոբը, Ս. Սարգիսը եւ այլ սուրբեր: Հաւանաբար, ան ներկայ է առաւելաբար Ասորի եկեղեցոյ մէջ, որովհետեւ Ս. Պարսամ ճգնաւորը ազգութեամբ եղած է ասորի, եւ իր անունով նաեւ եկեղեցիներ ու վանքեր կառուցուած են Սամոսատի, Սիսի եւ այլ քաղաքներու մէջ:

Այս մասունքին հիմնական հարցը կը կայանայ հոն, թէ տուեալ մասունքը որ Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքն է, որովհետեւ ասիկա զգալիօրէն շփոթ յառաջացուցած է թէ՛ ասորի եւ թէ՛ հայ ուսումնասէրներու մօտ:

Այսպէս, Դոկտ. Տիգրան Գույումճեան, երբ կը ներկայացնէ Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքն ու մասնատուփը, որ «Կիլիկիա» թանգարանի մէջ կը պահպանուի, կը յիշէ երեք Պարսամներ՝ առանց որեւէ հաստատում կատարելու, թէ ո՞ր Ս. Պարսամի մասունքն է տուեալ մասունքը: Մասնատուփին վրայ որեւէ յստակացնող կամ ինքնութիւն հաստատող արձանագրութիւն չկայ: Դոկտ. Գույումճեան առաջին հերթին կը յիշէ Ս. Պարսամ մը, որ Մծբնի Եպիսկոպոսը եղած է Ե. Դարուն եւ վախճանած է 489 թուականին, որուն մասին նաեւ կը նշէ, թէ նեստորական եղած է. իսկ Հայ Եկեղեցին, ինչպէս նաեւ Ասորի Ուղղափառ Եկեղեցին, կը մերժէ ընդունիլ նեստորական սուրբ մը:<sup>3</sup> Երկրորդ Ս. Պարսամը, որ դոկտ. Գույումճեան կը նշէ, հականեստորա-

<sup>3</sup> 2000 թուականին, Հէլի մէջ կազմակերպուած ցուցահանդէսին, որուն նաեւ կը մասնակցի «Կիլիկիա» Թանգարանը իր կարգ մը պատմական արժէք ներկայացնող գանձերով, կը տպուի գաթալով մը, եւ կը ներկայացուի սոյն մասունքը, իբրեւ Մծբնի եպիսկոպոս Պարսամի մասունքը: Բնականաբար, ոչ մէկ տուեալ կապացուցէ, թէ սոյն մասունքը Մծբնի նեստորական Պարսամի մասունքն է:

կան մը եղած է եւ դատապարտուած է Քաղկեդոնի Ժողովին կողմէ, որովհետեւ հակառակած է Նեստորին եւ անոր վարդապետութեան: Պէտք է աւելցընել այստեղ, որ նշեալ Պարսամը իր հականեստորական ըլլալուն պատճառով նաեւ մեղադրուած է Արեւմուտքին կողմէ իբրեւ Եւտիքեան վարդապետութեան հետեւորդ ու քարոզիչ: Ասորի Ուղղափառ Եկեղեցին կը մերժէ այս կարծիքը եւ ընդհակառակը՝ զայն իբրեւ տօնելի սուրբ կ'ընդգրկէ իր օրացոյցին մէջ: Ի վերջոյ, կը նշուի երրորդ եպիսկոպոս մը, որ Եդեսիոյ երրորդ եպիսկոպոսը եղած է, որուն մասին կը գտնենք Թորգոմ Պատրիարք Գուշակեանի «Սուրբք եւ Տօնք» գիրքին մէջ, Ղեւոնդ Վրդ. Սամուրեանի պատրաստած Տոմարին մէջ եւ Միքայէլ Չամչեանի «Պատմութիւն Հայոց» գիրքի Բ. Հատորին մէջ:

Չամչեան խօսելէ ետք երեք Պարսամներու մասին, կը բացատրէ, թէ շփոթ մը յառաջացած է Ասորոց մօտ արշմանարիք Պարսամին եւ Եդեսիոյ եպիսկոպոս Պարսամին միջեւ, որոնց վարքերն անգամ իրար հետ շփոթուած են: Չամչեան կ'ըսէ. «այս շփոթութեան հետեւանքով, երկու Պարսամներն ալ ներառնուած են Յայսմաւուրքին մէջ<sup>4</sup>, որոնցմէ Եդեսիոյ եպիսկոպոս Ս. Պարսամը տօնելի կը նկատուի Հայ Եկեղեցոյ մէջ՝ Ս. Անտոն, Ս. Տրիփոն եւ Ս. Ոնոփրիոս ճգնաւորներու հետ, Յունուար 18-ին, իսկ Մծբինի արշմանարիքը՝ յիշատակելի<sup>5</sup>: Ս. Պարսամ արշմանարիքը յիշատակելի մնացած է, շատ հաւանաբար այն պատճառով, որովհետեւ Արեւմուտքի կողմէ իբրեւ Եւտիքեան վարդապետութեան քարոզիչ նկատուած է»:<sup>6</sup>

Երկու Պարսամներու շփոթութեան պատճառը կը կայանայ երկու տարբեր, սակայն իրար մօտիկ հնչեղութիւն ունեցող անուններու մէջ. այսպէս, երրորդ դարու Եդեսիոյ եպիսկոպոսին անունն ճշգրիտ տառադարձութիւնը Պար-Սամիա՝ է (ܒܪܫܝܡܝܘܨ, Barsimeus), որ ասորերէն կը նշանակէ «կոյրի զաւակ», որովհետեւ շատ հաւանաբար անոր հայրը կոյր եղած է, իսկ Ե. Դարու Մծբինի եպիսկոպոսին անունը՝ Պար-Սամուա (ܒܪܫܝܡܘܘܬܐ, Baršaumâ) է, որ ասորերէն կը նշանակէ «ծոմապահութեան զաւակ», որովհետեւ ան իր կեանքը ամբողջութեամբ ծոմ պահելով եւ ճգնութեամբ անցուցած է: Այս երկու տարբեր անունները հայերէնի մէջ տառադարձուած են իբրեւ Ս. Պարսամ, որ ինքնաբերաբար շփոթի դուռ կը բանայ: Փաստօրէն, Կիրակոս Արեւելցիի

<sup>4</sup> Չամչեան, Միքայէլ, «Պատմութիւն Հայոց», Հատոր Բ., Վենետիկ, 1785:

<sup>5</sup> Յիշատակելի սուրբ կը նկատուին, անոնք, որոնք Յայսմաւուրքին մէջ յիշատակուած են, սակայն օրացոյցին մէջ չեն նշուած՝ տօնուելու համար:

<sup>6</sup> Եւտիքեան վարդապետութիւնը նգովուած եւ մերժուած է Հայ Եկեղեցոյ կողմէ, որովհետեւ կը հաւատար, թէ Յիսուս ունէր միայն աստուածային բնութիւն, առանց որեւէ մարդկային բնութեան, այդ իսկ պատճառով նաեւ կոչուած է «Միաբնակ» (Monophysite): Օրմանեան, Մաղաքիա Արք., «Ազգապատում», Ա. Հատոր, Անթիլիաս, 2001, էջ 490-515:

խմբագրութեամբ պատրաստուած Յայսմաւուրքին մէջ, Եղեսիոյ եպիսկոպոսին անունը յիշուած է «սրբոյն Բարսիմեայ եպիսկոպոս Եղեսեա, որ է Ուռհայ»<sup>7</sup>, յիշատակուած է «Քաղոց ԻԱ եւ ի Դեկտեմբեր Թ» օրուան տակ, իսկ Մծբինի ճգնաւորը՝ «Պարսամաւի սքանչելագործ ճգնաւորի», որ յիշատակուած է «Արաց ԻԵ եւ Փետրուարի Ա» օրուան տակ<sup>8</sup>: Հետեւաբար, Եղեսիոյ եպիսկոպոսին անունը հայերէնի մէջ պէտք է նշուի իբրեւ Ս. Պարսիմէոս, իսկ Մծբինինը՝ Ս. Պարսուամա կամ Ս. Պարսամ: Առաւել, Մծբինի եւ Սամոսատի Ս. Պարսամներու միջեւ եւս շփոթ յառաջացած է, որովհետեւ երկուքը նոյն ժամանակաշրջանին ապրած, նոյնանուն սուրբեր եղած են եւ երբեմն նոյնացած: Սակայն, Մծբինի Պարսամը քաղկեդոնական եւ նեստորական եղած է եւ նգովուած է Ուղղափառ Ասորի եկեղեցւոյ կողմէ:

Հիմնուելով Յայսմաւուրքին մէջ արձանագրուած Ս. Պարսամայ ճգնաւորին կեանքին եւ «Ս. Պարսամ Ասորի Սուրբին Կեանքը» անունով գտնուած ձեռագիրին վրայ, ամէնէն հաւանականը կը թուի, որ այս մասունքը կրնայ պատկանիլ այն Ս. Պարսամ ճգնաւորին, որ Ե. Դարուն ծնած եւ ապրած Սամոսատցի Պարսամն է: Թէեւ ան իբրեւ Եւտիքեան դաւանութեան ջատագով ամբաստանուած է քաղկեդոնական եկեղեցիներուն կողմէ, սակայն ապացուցուած է թէ ան ընդհակառակն՝ հակադրած է նեստորին եւ Եւտիքէսին ուսուցումներուն:<sup>9</sup>

Հետեւեալ պատճառները կրնան հիմք ծառայել վերոնշեալ հաւանականութեան, ըստ որուն մասունքը կը պատկանի Սամոսատցի Ս. Պարսամայ ճգնաւորին. Ա) Յայսմաւուրքին մէջ յիշուած է անոր վարքը եւ ատիկա կը համապատասխանէ նոյն այն սուրբին պատմութեան, որ արձանագրուած է վերեւ յիշուած ձեռագիրին մէջ: Բ) Թէ՛ այս երկու աղբիւրներուն եւ թէ՛ քրիստոնեայ անձնաւորութիւններու կենսագրականները ներկայացնող համայնագիտարաններուն մէջ կը տեսնենք, թէ սոյն սուրբը իր կեանքին ըն-

<sup>7</sup> Ձեռագիր թիւ 1, «Յայսմաւուրք», խմբ. Կիրակոս Արեւելցւոյ, Միս, Ճոխաթ, Չորայ Վանք, ԶԾԹ-ԶԿ (1310-1311), 262ա-4բ: Դանիէլեան, Անուշաւան Վարդապետ, «Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», Լիբանան, Անթիլիաս, 1984, էջ 13:

<sup>8</sup> Անդ՝ 375բ-6բ, էջ 19:

<sup>9</sup> Պէտք է այստեղ նշել, թէ Չամչեան եւս զինք կը ներկայացնէ իբրեւ Եւտիքեան դաւանութեան ջատագով, հետեւեալ բառերով. «Մինն է Պարսամ միայնակեաց եւ արշիմանտրիտ Սամոսատցի՝ ջատագով եւ ձեռնտու Եւտիքեայ արշիմանտրիտայ՝ այր խոովայոյզ»: Շատ հաւանական է, որ Չամչեան ազգուած էր արեւմտեան հեղինակներէ, որոնք Սամոսատցի Պարսամն ալ Եւտիքեան կը նկատէին: Չամչեան Միքայէլ, «Պատմութիւն Հայոց», Հատոր Բ., Վենետիկ, 1785: <https://digilib.aua.am/book/1467/1768/13514/Պատմութիւն%20Հայոց%2520ի%20սկզբան%20աշխարհի%20մինչեւ%20ցամ%20Տեանն%201784.%20Հատոր%20Բ>

Թացքին առնչուած եղած է հայ ժողովուրդին հետ: Գ) Միքայէլ Ասորի Պատրիարք կը պատմէ, թէ 1400-ական թուականներուն, քաղքկեղոնական յոյներ կը շարախօսեն Ասորի եկեղեցականներուն մասին, նշելով, որ անոնք ունին Ս. Պարսամայ ճգնաւորին աջը (մասունքը), որ չորրորդ տիեզերական ժողովով նզովուած է: Կը ծաղրեն այն իրականութիւնը, որ սոյն մասունքով հրաշքներ եւ բժշկութիւններ տեղի կ'ունենան: Այս իրականութենէն կը հետեւցընենք, որ քաղքկեղոնականները հերձուածող կը նկատէին Ս. Պարսամը, եւ անոր աջը կը պահպանուէր ասորիներուն մօտ եւ եւտիքեան կամ քաղքեղոնական ամբաստանութիւնները ճիշդ չեն: Դ) Եթէ ան նեստորական, եւտիքեան եւ կամ քաղքկեղոնական սուրբ մը ըլլար, նոյնիսկ եթէ անորոշութիւն մը ըլլար անոր ինքնութեան մասին, բնականաբար Հայ Եկեղեցին պիտի չպահէր կամ չմեծարէր անոր մասունքը:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՉԵԱՆ

(Շար. 1)



ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

## ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ\*

### ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՒՍՍՈՒՆՔԸ

#### ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ինչպէս նշուեցաւ, Կանտ իր Առաքինութեան ուսմունքը ճոխացուցած է բազմաթիւ բարոյագատական ու գործնական օրինակներով, զորս կոչած է գերմ.՝ Kasuistik (անգլ.՝ Casuistry): Այդ օրինակները, որոշ լուսաբանութիւն կը սփռեն ամբողջ նիւթին վրայ եւ ընդհանրապէս կը ներկայանան որպէս յաւելեալ հարցադրումներ:

Վերոյիշեալ հարցադրումները, որոնք տարբեր քննարկումներու եւ վիճաբանութիւններու առիթ տուած են եւ մինչեւ այսօր ալ կու տան, Կանտի կողմէ, սակայն, անպատասխան կը մնան:

Որպէս նմոյշ կը ներկայացնեմ հետեւեալ վեց օրինակները.-

#### 1. Ինքնապահպանումի օրինակը<sup>1</sup>

Կանտ, մարդու ինքնիրեն հանդէպ ունեցած կատարեալ պարտաւորութիւններէն կը նկատէ՝ ինքնապահպանումը (գերմ.՝ Selbsterhaltung, անգլ.՝ Self-preservation) կամ իր անձի պահպանումը, որով արգիլուած կը համարուի որեւէ ինքնասպանութիւն կամ անձնասպանութիւն (գերմ.՝ Selbstmord, անգլ.՝ Suicide):

Հայրենիքի պաշտպանութեան կամ ազատագրութեան համար ինքնազոհութիւնը արդեօք, այս իմաստով, ինքնասպանութիւն կը նկատուի: Կամ արդեօք արդարացի՞ է, երբ երկրի մը թագաւորը (կամ ղեկավարը) պատերազմը պարտուելէ ետք ինքզինք թունաւորէ, որպէսզի թշնամիին չյանձնուի:

\* Աիւթը, մեծ մասամբ քաղուած եւ յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, Հոկտեմբեր 2021:

<sup>1</sup> Կանտի «ինքնապահպանումի օրինակը» տե՛ս Mds – Tugendlehre էջ A 74

## 2. Մոլուխիւններէ ձերբազատման օրինակը<sup>2</sup>

Մարդու ինքնիրեն հանդէպ ունեցած կատարեալ պարտաւորութիւններէն է նաեւ զանազան մոլութիւններէ ձերբազատումը, ինչպէս օրինակ ձերբազատումը՝ հարբեցողութենէն (գերմ.՝ Trunkenheit, անգլ.՝ Drunkenness), թմրամոլութենէն (գերմ.՝ Drogenabhängigkeit, անգլ.՝ Drug Addiction) եւ որկրամոլութենէն (գերմ.՝ Völlerei, անգլ.՝ Gluttony): Եթէ նկատի առնենք գինին կամ նմանօրինակ ալքոհոլային խմիչք մը, որ սովորութիւն է ընկերութեան մէջ օգտագործել, քաջ գիտնալով՝ հարբեցողութեան վտանգը, արդեօք ինչպէ՞ս կարելի է չափաւորել զայն:

## 3. Ըշմարտացիութեան օրինակը<sup>3</sup>

Ընդհանրապէս ճիշդ ու ճշմարիտ է, ինչ որ անպայմանօրէն կը հակասէ սխալին կամ սուտին: Կանտ ճշմարտութիւն հասկացութեան կողքին, աւելի կը շեշտաւորէ ճշմարտացիութիւնը, որ ստախօսութեան հակառակն է:

Կանտի համաձայն, մարդու ինքնիրեն եւ ուրիշներու հանդէպ ունեցած կատարեալ պարտաւորութիւններէն է՝ ճշմարտացիութիւնը, որով արգիլուած կը համարուի որեւէ ինքնախաբէութիւն կամ ստախօսութիւն: Արդեօք կարելի՞ է քաղաքավարութենէն մղուած ստելը, երբ Կանտի ժամանակ դեռ սովորութիւն էր նամակի մը սկիզբը՝ շուայ վերադիրներով սկսիլը եւ վերջաւորութեան՝ «Ձեր խոնարհ ծառան» ստորագրելը, կամ արդեօք կարելի՞ է պարզապէս մարդասիրութենէ մղուած ստելը, օրինակ կեանք մը փրկելու համար:

Կանտի համաձայն, մարդ բնական հակում մը ունի ստախօս հանդէպ եւ կը բնորոշէ զայն որպէս՝ մարդկային բնութեան մէջ գտնուող մէկ «վատ արատ»: Կանտ, ստախօսութիւնը մարդկային արժանապատուութեան արհամարհանքը կը նկատէ, որովհետեւ սուտասանը նախ կ'արհամարհէ իր անձի արժանապատուութիւնը, ինքնախաբէութեամբ, երբ կը ստէ՝ հակադրելով իր մտածումներուն, ապա կ'արհամարհէ ուրիշներու արժանապատուութիւնը՝ ստախօսութեամբ:

## 4. Ժլատութենէն ձերբազատման օրինակը<sup>4</sup>

Մարդու ինքնիրեն հանդէպ ունեցած կատարեալ պարտաւորութիւններէն է նաեւ, ժլատութենէն (որպէս մոլութիւն) ձերբազատումը, երբ ժլատութեամբ (կծծիութեամբ) մարդ ինքզինք կը զրկէ՝ բարեկեցիկ կեանք մը ունենալէ: Եթէ ընչաքաղցութեան, ազահութեան կամ շահասիրութեան նպատակներով, խնայողութիւն ընեմ եւ ինքզինքս զրկեմ, արդեօք այս խնայասիրութիւնն ալ

<sup>2</sup> Կանտի «մոլութիւններէ ձերբազատման օրինակը» տե՛ս MdS – Tugendlehre էջ A 82

<sup>3</sup> Կանտի «ճշմարտացիութեան օրինակը» տե՛ս MdS – Tugendlehre էջ A 88

<sup>4</sup> Կանտի «ժլատութենէն ձերբազատման օրինակը» տե՛ս MdS – Tugendlehre էջ A 91

մոլութիւն կը նկատուի: Այլ խօսքով, արդեօք խնայասիրութիւնը առաքինութիւն մըն է:

### 5. Արժանապատուութեան պահպանման օրինակը<sup>5</sup>

Մարդու արժանապատուութիւնը, բարոյական, ներքին ու յարգանք վայելող դրական յատկանիշ մըն է, որով կը բնորոշուի մարդու ինքնորոշումը, ինքնագնահատումը ու ընկերային արժէքները: Կանտ, մարդու արժանապատուութիւնը կը հիմնաւորէ բանականութեամբ: Մարդը որպէս բարոյական ու բանական էակ, իր նմաններէն յարգանքի իրաւունքը կը ստանայ. միաժամանակ՝ ան կը պարտաւորուի իր նմանները յարգել:

Կանտի համաձայն, մարդու ինքնիրեն հանդէպ ունեցած կատարեալ պարտաւորութիւններէն է նաեւ, **արժանապատուութեան** (գերմ.՝ Würde, անգլ.՝ Dignity) եւ **բարոյական ինքնարժեւորման** (գերմ.՝ Selbstbewertung, անգլ.՝ Self-evaluation) **պահպանումը**, որով արգիլուած կը համարուին որեւէ ստրկամտութիւն եւ ստորաքարշուցիւն (քծնութիւն):

Արդեօք բարոյական ինքնարժեւորման գնահատականը ինքնին դժուար հարց մը չէ՞, երբ կարելի է ինքնարժեւորումով՝ ինքզինք գերգնահատել կամ ինքզինք թերգնահատել: Գերգնահատանքի պարագային, կարելի է իշնալ կարգ մը մոլութիւններու գիրկը, ինչպէս՝ գոռոզութեան, ամբարտաւանութեան եւ մեծամտութեան իսկ ինքնարժեւորման թերգնահատանքով՝ դառնալ ստրկամիտ ու ստորաքարշ:

Այստեղ պէտք է նաեւ նկատի ունենանք Կանտի ժամանակուան ազնուականութեան ընդհանրապէս բացասական դերը: Կանտ բոլորովին հակառակ էր ազնուական դասակարգին եւ անոր առնչուած յոռի սովորութիւններուն:

### 6. Մարդասիրութեան օրինակը<sup>6</sup>

Մարդասիրութիւնը, բարոյական այլասիրութեան (գերմ.՝ Altruismus անգլ.՝ Altruism) լաւագոյն օրինակներէն մէկն է:

Կանտի համաձայն, մարդու ուրիշներու հանդէպ ունեցած պարտաւորութիւններէն կը նկատուի ուրիշներու հանդէպ **մարդասիրութիւնը** (գերմ.՝ Philanthropie, անգլ.՝ Philanthropy), որ կը բացայայտուի ուրիշներու հանդէպ՝ **բարեգործութեամբ** եւ ուրիշներու կողմէ կատարուած օժանդակութեան համար՝ **երախտապարտութեամբ**:

Եթէ **մարդասիրութենէ մղեալ բարեգործութիւնը** սիրոյ (մարդասիրական) նշան մըն է, սակայն **երախտապարտութիւնը** փոխադարձ սիրոյ նշան մը չէ,

<sup>5</sup> Կանտի «արժանապատուութեան պահպանման օրինակը» տե՛ս MdS – Tugendlehre էջ A 97

<sup>6</sup> Կանտի «մարդասիրութեան օրինակը» տե՛ս MdS – Tugendlehre էջ A 126 եւ A 132



այլ՝ լոկ յարգանքի արտայայտութիւն մը: Այստեղ, արդեօք անհաւասարութիւն մը չի՞ նկատուիր բարեգործին (օժանդակող անձին) եւ երախտապարտին (օժանդակեալ անձին) միջեւ: Երբեմն, այս անհաւասարութիւնը, պատճառ չի՞ դառնար, որ մարդիկ ապերախտ կամ անտարբեր գտնուին:

## ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԶԵՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Հակառակ Իմմանուէլ Կանտի բարոյագիտութեան տեսութեան ունեցած փիլիսոփայական բարձր արժէքին, կարելի է հաստատել, որ ան ամէնօրեայ գործնական դաշտի վրայ որոշ դժուարութիւններու կը հանդիպի: Այս իմաստով Կանտի **անպայմանական հրամայականը** (Categorical Imperative) եւ **բարոյական օրէնքը** (Moral Law), իրենց հրապարակումէն սկսեալ, տեղի տուած են դրական ու բացասական բազմաթիւ քննադատութիւններու:

Կանտի բարոյագիտութեան տեսութիւնը, աւելի կամ նուազ չափով, քննադատած են՝ Կանտի ժամանակակից փիլիսոփաներն ու մտաւորականները, ինչպէս նաեւ իրմէ ետք եկողները:

Յիշենք անոնցմէ կարեւորագոյնները.՝ գերման փիլիսոփաներ՝ **Հեգել** (Georg Wilhelm Friedrich Hegel), **Շոպենհաուեր** (Arthur Schopenhauer), **Շելէր** (Max Scheler), **Հարտման** (Nicolai Hartmann), **Եոնաս** (Hans Jonas), **Հաբերմաս** (Jürgen Habermas), **Հէօրստէր** (Norbert Hoerster), ինչպէս նաեւ **ամերիկացի ժամանակակից բարոյախօս փիլիսոփայ՝ Մ. Ջ. Սինգէր** (Marcus George Singer):

### ➤ Գ. Վ. Ֆ. Հեգել<sup>7</sup>

Հեգել, որ Կանտի ժամանակակիցը եղած է, կը քննադատէ Կանտի բարոյական սկզբունքի **ձեւական** (Formal) ըլլալը, որով, ինչպէս նշեցինք, անկախ կացութենէ եւ զանազան հանգամանքներէ, ան մի՛շտ կը գործէ եւ մի՛շտ ուժի մէջ կը մնայ: Այս իմաստով, Հեգել կը մէջբերէ **սեփականութեան իրաւունքի օրինակը**, որ ըստ անհատի հետաքրքրութեան կրնայ գոյութիւն ունենալ կամ չունենալ:

\* **Նիւթը**, մեծ մասամբ քաղուած է յօդուածաշարքի վերածուած է հեղինակին 2021 Հոկտեմբերին լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս: Այս թիւով վերջ կը գտնէ յօդուածաշարքը, որ ունեցաւ 7 շարունակութիւններ:

<sup>7</sup> **Հեգել** (Georg Wilhelm Friedrich Hegel, 1770–1831 թ.) – Գերման նշանաւոր փիլիսոփայ: Գերմանական զաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան յայտնի ներկայացուցիչ: Գլխաւոր երկը կը նկատուի՝ "Phänomenologie des Geistes" (1807 թ., «Ոգիի երեւութաբանութիւն», անգլ.՝ "Phenomenology of Spirit"):

Այնուհետև, Հեգելի համաձայն, թէ՛ բարոյականությունը, իր բարիին իմաստով եւ թէ՛ չարը անհատի բանականութեան արդիւնքն են:

### ➤ Ա. ՇՈՊԵՆՀԱՈՒՐ<sup>8</sup>

Շոպենհաուր, որ ինքզինք Կանտի աշակերտը եւ հետեւորդը կը նկատէր, կը քննադատէ Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումը, զայն անբաւարար նկատելով: Ան կը քննադատէ նաեւ Կանտի հրամայական ձեւը, զայն նմանցընելով աստուածաբանական բարոյագիտութեան տասնաբանեայ պատուիրաններուն, որոնք սակայն բարձր հեղինակութենէ մը (Աստուած) կը բխին, բան մը որ կը բացակայի Կանտի տեսութեան մէջ. (ինչպէս գիտենք, Կանտի համաձայն, հրամայականը առնչուած է բանականութեան):

Այնուհետև Շոպենհաուր կը քննադատէ նաեւ Կանտի անպայմանական հրամայականը (Categorical Imperative), որ ան առնչուած է միայն բանականութեան եւ Կանտ երբեք նկատի չէ առած մարդկային փորձառութիւնը (Experience) եւ զգացումները (Feelings):

Շոպենհաուրի մշակած բարոյագիտութիւնը, **Զգացումի բարոյագիտութիւն** (գերմ.՝ Gefühlsethik) մըն է, հիմք ունենալով կարեկցութիւնը (գերմ.՝ Mitleid, անգլ.՝ Compassion), որու միջոցով կը յաղթահարուի անձնասիրութիւնը (Egoism) եւ երեւան կ'ելլէ՝ ալլասիրութիւնը (Altruism): Այստեղ, Զգացումի բարոյագիտութեան այս տեսութեան մանրամասնութիւնները չենք յիշեր:

### ➤ Մ. ՇԵԼԷՐ<sup>9</sup> ԵՒ Ն. ՀԱՐՏՄԱՆ<sup>10</sup>

Գերման փիլիսոփաներ Շելեր եւ Հարտման համախոհներ են Կանտի քննադատութեան ոլորտին մէջ: Անոնք կը քննադատեն Կանտի բարոյագիտութեան ձեւական (Formal) ըլլալու հանգամանքը եւ բոլորովին կը մերժեն

<sup>8</sup> **Շոպենհաուր** (Arthur Schopenhauer, 1788–1860 թ.) – Գերման նշանաւոր բարոյագէտ-փիլիսոփայ: Գերմանական գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ «Աշխարհը, որպէս կամք եւ պատկերացում» ("Die Welt als Wille und Vorstellung", 1819 թ., անգլ.՝ "The World as Will and Representation") եւ "Die beiden Grundprobleme der Ethik: Ueber die Freiheit des menschlichen Willens, Ueber das Fundament der Moral" (1841 թ.):

<sup>9</sup> **Շելեր** (Max Scheler, 1874–1928 թ.) – Գերման ընկերաբան-փիլիսոփայ: Երեւութաբանութիւն (Phenomenology) եւ Մարդաբանութիւն (Anthropology) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Der Formalismus in der Ethik und die materiale Wertethik" (1913 թ.):

<sup>10</sup> **Հարտման** (Nicolai Hartmann, 1882–1950 թ.) – Գերման բարոյագէտ-փիլիսոփայ. սկիզբնական շրջանին՝ հետեւող Նոր-կանտական (Neo-Kantianism) շարժումի, Մարբուրգեան դպրոցի: Քննադատական իրապաշտութիւն (Critical Realism) եւ Նիւթական արժեքի բարոյագիտութիւն (Material Value-Ethics) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Ethik" (1925 թ., «Բարոյագիտութիւն»):

անոր անպայմանական հրամայականը (Categorical Imperative), ի նպաստ իրենց՝ Նիւթական արժէքի բարոյագիտութեան (գերմ.՝ Materiale Wertethik, անգլ.՝ Material Value-Ethics), որ երեւութաբանական հիմք ունի:

Շելէրի եւ Հարտմանի համաձայն վարմունքի մը բարոյական «լաւն ու բարի»ն կը կայանայ անոր առարկայական արժէք մը, որպէս նպատակ ունենալուն մէջ: Այստեղ, կարելի չէ աւելի մանրամասնել բարոյագիտութեան այս տեսութիւնը, որուն գլխաւոր ներկայացուցիչներն են՝ Շելէր եւ Հարտման:

Շելէր Երեւութաբանութեան (Phenomenology) հետեւորդ մըն էր, սակայն իր կեանքի ու միտքի երկրորդ հանգրուանին ան բոլորովին նուիրուած էր փիլիսոփայական մարդաբանութեան (Philosophical Anthropology): Բարոյագիտական իր գլխաւոր երկը կը նկատուի 1913 թուականին հրատարակուած՝ «Զեւապաշտութիւնը բարոյագիտութեան մէջ եւ նիւթական արժէքի բարոյագիտութիւնը» (գերմ. բնագիր՝ "Der Formalismus in der Ethik und die materiale Wertethik", անգլ.՝ "Formalism in Ethics and Non-Formal Ethics of Values"):

Հարտման Նոր-կանտականութեան Մարբուրգեան դպրոցի հետեւորդ մըն էր, որմէ հեռանալէն ետք կ'որդեգրէ Հիմնական էաբանութեան (Fundamental Ontology) փիլիսոփայական ուղղութիւնը, կեցութեան եւ ճանաչողութեան հանդէպ աւելի առարկայական-իրապաշտական դիրքաւորումով: Ասոր կողքին, ան կը միանայ Շելէրի երեւութաբանական հիմք ունեցող՝ Նիւթական արժէքի բարոյագիտութեան: 1925 թուականին հրատարակուած՝ «Բարոյագիտութիւն» (գերմ. բնագիր՝ "Ethik", անգլ.՝ "Ethics") երկը կը նկատուի բարոյագիտական միտքի իր գլուխ-գործոցը:

## ➤ Հ. ԵՈՆԱՍ<sup>11</sup>

Եոնաս, հետեւելով Կանտի անպայմանական հրամայականին, նոր բանաձեւ մը գտնէ: Իր «Պատասխանատուութեան սկզբունքը» (գերմ. բնագիր՝ "Das Prinzip Verantwortung", 1979 թ., անգլ.՝ "The Imperative of Responsibility") գլխաւոր երկին մէջ, Եոնաս կը փորձէ նոր բարոյագիտութիւն մը ներկայացնել, մեր տեքնիկական արդի քաղաքակրթութեան համար: Եոնասի բանաձեւն է. –

«Վարուէ՛ այնպէս, որ վարմունքներուդ ազդեցութիւնները տանելի ըլլան, աշխարհի վրայ մարդկութեան տեսականութեան համար»:

<sup>11</sup> Եոնաս (Hans Jonas, 1903 – 1993 թ.) – Գերման բարոյագէտ-փիլիսոփայ. ներկայացուցիչ՝ Բնապահպանութեան բարոյագիտութեան: Բարոյագիտութեան առնչուած իր գլխաւոր երկն է՝ «Պատասխանատուութեան սկզբունքը – բարոյագիտական փորձ մը տեխնոլոգիական քաղաքակրթութեան համար», բնագիր՝ "Das Prinzip Verantwortung - Versuch einer Ethik für die technologische Zivilisation" (1979 թ.):

Այլ խօսքով, անպայմանական հրամայական մը, որով անհատը ապագայ սերունդներուն հանդէպ պատասխանատուութիւն կը ստանձնէ, որ իր տարբեր վարմունքներով չխորտակէ, այլեւ պահպանէ մարդկութեան կայունութիւնն ու տեւականութիւնը:

Ի տարբերութիւն Կանտի Պարտագիտական բարոյագիտութեան, Եոնասի մօտ սակայն, կը գերակշռէ Հետեւականութիւն մը (Consequentialism), որովհետեւ ան, իր բանաձեւով, հետեւանք մը կամ նպատակ մը կը հետապնդէ:

### ➤ Յ. ՀԱՔԵՐՄԱՍ<sup>12</sup>

Հաբերմաս կը քննադատէ Կանտի անպայմանական հրամայականը, իր՝ «Բարոյական գիտակցութիւնը եւ հաղորդակցական վարմունքը» (1983 թ., գերմ. բնագիր՝ "Moralbewusstsein und kommunikatives Handeln") երկին մէջ:

Հաբերմասի համաձայն, Կանտի բարոյագիտութեան հիմք կը ծառայէ՝ անհատի անձնական կանոնը (Maxim) եւ այս առնչութեամբ ան փոփոխութիւն մը կ'առաջարկէ, որ գերման փիլիսոփայ Ապելի (Karl-Otto Apel, 1922 – 2017 թ.) եւ իր նոր տեսութիւնն է՝ «Քննախօսութեան բարոյագիտութիւն»ը (գերմ.՝ Diskursethik, անգլ.՝ Discourse Ethics): Հաբերմասի համաձայն, փոխանակ անհատը, որ պիտի ուզէ՝ իր անձնական կանոնը (Maxim) ընդհանուր բարոյական օրէնք դարձնել, ան հարկ է, որ այդ անձնական կանոնը (Maxim) քննախօսական կազմին ներկայացնէ եւ քննախօսական կանոններու միջոցով, բոլոր մասնակիցներուն կողմէ եւ անոնց համաձայնութեամբ հաստատուի ու որպէս բարոյական օրէնք ընդհանրացուի:

### ➤ Ն. ՀԷՕՐՍԵՐ<sup>13</sup>

Հէօրստէր, որ Գերմանիոյ մէջ ժամանակակից բարոյագէտ մըն է, կը քննադատէ Կանտի անպայմանական հրամայականը, իր «Բարոյագիտութիւն եւ շահագրգռութիւն» (2003 թ., գերմ. բնագիր՝ "Ethik und Interesse") երկին մէջ:

<sup>12</sup> **Հաբերմաս** (Jürgen Habermas, \*1929 թ.) – Գերման ժամանակակից ընկերաբան-փիլիսոփայ: Սկզբնական շրջանին՝ անդամ «Ֆրանկֆուրտի դպրոց»ին: Քննախօսական տեսութիւն ընկերային-փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Քննախօսութեան բարոյագիտութիւն (Discourse Ethics) տեսութեան հիմնադիրներէն (գերման փիլիսոփայ Ապելի հետ): Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ "Moralbewusstsein und kommunikatives Handeln" (1983 թ., «Բարոյական գիտակցութիւն եւ հաղորդակցական վերաբերմունք») եւ "Erläuterungen zur Diskursethik" (1991 թ., «Քննախօսութեան բացատրութիւններ»):

<sup>13</sup> **Հէօրստէր** (Norbert Hoerster, \*1937 թ.) – Գերման ժամանակակից բարոյագէտ-փիլիսոփայ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ "Utilitaristische Ethik und Verallgemeinerung" (1971 թ., «Օգտապաշտական բարոյագիտութիւն եւ ընդհանրացում»), "Recht und Moral" (1986 թ., «Իրաւունք եւ Բարոյականութիւն»), "Ethik und Interesse" (2003 թ., «Բարոյագիտութիւն եւ Շահագրգռութիւն»):

Հէօրստէրի համաձայն,- առաջին՝ կարելի չէ անհատի մը անձնական կանոնը (մաքսիմ), ընդհանրացնել, որովհետեւ ան շատերու համար անընդունելի կրնայ ըլլալ. եւ երկրորդ՝ բարոյական վարմունքի համար անհրաժեշտ նկատուող **այլասիրութիւնը** (Altruism) հաւասարապէս առկայ չէ բոլոր մարդոց մօտ, որոնք զանազան շահագրգռութիւններ կրնան ունենալ:

### ➤ Մ. Ջ. ՍԻՆԳԷՐ<sup>14</sup>

Սինգէր, իր «**Ընդհանրացումը բարոյագիտութեան մէջ**» (1961 թ., անգլ. բնագիր՝ "Generalization in Ethics") երկին մէջ, կը քննադատէ Կանտի բարոյական խստապահանջ դիրքը՝ անպայմանական հրամայականի առնչութեամբ:

Սինգէր, խօսուին օրինակով մը կը ներկայացնէ երկու ընդունուած անձնական կանոններ (մաքսիմներ).- նախ «ստախօսութեան» օրինակը ապա «մարդկային կեանքի փրկութեան» հարցը: Այժմ, եթէ երկուքը համընկնին, ո՞ր անձնական կանոնը (մաքսիմը) պէտք է ընտրել կամ այդ երկուքէն ո՞ր մէկուն պէտք է նախապատուութիւն տալ: Նման պարագայի մը առջեւ, Կանտ պատասխան չի հայթայթեր: Իսկ Սինգէրի համաձայն, անհատը կրնայ առանց դժուարութեան վերոյիշեալ երկու անձնական կանոնները (մաքսիմները) միատեղել ու Կանտի հետեւութեամբ նոր անձնական կանոն (մաքսիմ) մը կազմել, հետեւեալ բանաձեւով.-

«ի պահանջել հարկին, կարելի է ստել, մարդկային կեանք մը փրկելու համար ու այդ անհատը կարենայ ցանկալ, որ իր անձնական կանոնը (մաքսիմը) ընդհանուր բարոյական օրէնք դառնայ»:

### ԾԱՅՐԱՅԵՂ ԲԱՐՈՅԱՔԻՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Ուղղակի Կանտի բարոյագիտութիւնը քննադատող վերոյիշեալ փիլիսոփաներու կողքին կան նաեւ կարգ մը փիլիսոփաներ, որոնք բարոյականութեան քննադատութիւնը կը հասցնեն իր բացասական ծայրայեղ վիճակին եւ բոլորովին կը մերժեն բարոյական կանոններն ու արժէքները եւ նոյնիսկ կը զգուշացնեն բարոյականութենէն:

Ծայրայեղ բարոյաքննադատներ կարելի է նկատել Ֆրանսացի բարոյախօս գրող **Ֆ. Լա Ռոշֆուկօ** (La Rochefoucauld) եւ գերման ընկերաբան – փիլիսոփաներ՝ **Ն. Լուման** (Niklas Luhmann) ու **Ա. Գելէն** (Arnold Gehlen):

<sup>14</sup> Սինգէր (Marcus George Singer, 1926–2016 թ.) – Ամերիկացի ժամանակակից բարոյագէտ-փիլիսոփայ: Բարոյագիտութեան արնշուած գլխաւոր երկն է՝ "Generalization in Ethics" (1961 թ., «Ընդհանրացումը Բարոյագիտութեան մէջ»):

**Լա Ռոշֆուկո**<sup>15</sup>, իր բարոյաքննադատությունը կը ներկայացնէ իր գլխաւոր երկին մէջ. – «Մաքսիմներ եւ բարոյախօսական խորհրդածութիւններ» (Ֆրնս. բնագիր՝ "Maximes et Réflexions morales", 1665 թ.): Ծայրայեղական Լա Ռոշֆուկոյի համաձայն, ընդունուած բոլոր առաքինութիւնները, իրականութեան մէջ, քողարկուած մոլութիւններ են:

**Լուման**<sup>16</sup> եւ **Գելէն**<sup>17</sup>, նկատի ունին բարոյական զանազան տեսակէտներու միջեւ յառաջանալիք, բռնութեան ատակ վէճերու ծագումը կամ անոնց սրումը: Լուման, աւելի յառաջ երթալով, ոչ միայն բարոյականութիւնը խընդրայարոյց կը նկատէ, այլ նաեւ՝ անօգուտ: Իսկ բարոյագիտութիւնը կը դատապարտէ, որովհետեւ ան չի բացայայտէր բարոյականութեան անօգուտ ըլլալը: **Գելէն**, իր «Բարոյականութիւն եւ գերբարոյականութիւն» (գերմ. բնագիր՝ "Moral und Hypermoral", 1969 թ.) երկին մէջ, խստիւ կը զգուշացնէ գերակշիռ բարոյականութենէն: Որպէս քննադատութիւն, հարկ է յիշել, որ Ն. Լումանի եւ Ա. Գելէնի մատնանշած սուր բանավէճի այս հակումը, սակայն, բարոյագիտութենէն աւելի յատուկ է ծայրայեղական դիրքաւորում ունեցող կարգ մը կրօններու ու ցեղերու կամ ծայրայեղական ազգայնամոլ պետութիւններու: Ասոր կողքին, ընկերաբարոյական առաքինութիւն նկատուող **հանդուրժողականութիւնը** (գերմ.՝ Toleranz, անգլ.՝ Toleration) իր կարգին, կու գայ մեղմել կամ նոյնիսկ չքացնել այդ բանավէճերը, մանաւանդ երբ հարցը տեղի կ'ունենայ իրաւական պետութեան մը սահմաններէն ներս:

Փիլիսոփայութեան ոլորտէն ներս, որպէս բարոյականութեան սրամիտ քննադատ, **հանրածանօթ անուն մըն է նաեւ գերման լեզուաբան-փիլիսոփայ Ֆ. Նիցշէ**<sup>18</sup> (Friedrich Nietzsche): Նիցշէի հիմնական բարոյաքննադատութիւնը կարելի է բաժնել երկու գլխաւոր եղանակներու. –

<sup>15</sup> **Լա Ռոշֆուկո** (François de La Rochefoucauld, 1613–1680 թ.) – Ֆրանսացի գրող եւ բարոյախօս-փիլիսոփայ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Réflexions ou Sentences et maximes morales" (1664 թ. «Ստորումներ կամ նախադասութիւններ եւ բարոյական մաքսիմներ»):

<sup>16</sup> **Լուման** (Niklas Luhmann, 1917–1998 թ.) – Գերման ընկերաբան-փիլիսոփայ, ներկայացուցիչ «Քննադատական Տեսութիւն» (Critical Theory) փիլիսոփայական ուղղութեան: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Die Moral der Gesellschaft" (2008, «Հասարակութեան բարոյագիտութիւնը»):

<sup>17</sup> **Գելէն** (Arnold Gehlen, 1904–1976 թ.) – Գերման ընկերաբան-փիլիսոփայ: Մարդաբանութիւն (Anthropology) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Moral und Hypermoral" (1969 թ., «Բարոյականութիւն եւ Գերբարոյականութիւն»):

<sup>18</sup> **Նիցշէ** (Friedrich Nietzsche, 1844–1900 թ.) – Գերման նշանաւոր լեզուաբան-փիլիսոփայ: Գաղափարապաշտութիւն (Idealism) եւ Կեանքի փիլիսոփայութիւն ուղղութեանց իրաւատուկ ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են. – "Morgenröte. Gedanken über die moralischen Vorurteile" (1881, «Արշալոյս. մտքեր բարոյական նա-

- առաջինը՝ «բարոյականութեան նպատակի դիմակազերծումն» է, յայտնաբերելով անոնց ետին թաքնուած նպատակներու իսկական արժէքը եւ

- երկրորդը՝ «վերաժելորում՝ բոլոր արժէքներու» գաղափարը, որ արժէքային նոր հիմքի վրայ յառաջացած արժէքներու փոփոխութիւնը կամ վերաժելորումն է:

Նիցշէ նաեւ փիլիսոփայական ուղի նկատուող **Ոչնչապաշտութեան** (գերմ.՝ Nihilismus, անգլ.՝ Nihilism) գլխաւոր ներկայացուցիչն է: Ոչնչապաշտութեան մասին անգամ մը անդրադարձած ենք, երբ կը քննարկէինք Կանտի բարոյագիտութեան հիմնաւորման հարցերը:

*Ոչնչապաշտութեան համաձայն.-*

#### • **Չկա՛յ բարոյականութիւն,**

որովհետեւ բարոյական արժէքները չունին գործող անպայմանական կիրառութիւն, այլ անոնք միայն որոշ պարագաներու համար օգտակար կամ անօգուտ են: Սակայն բարոյական ու դրական արժէքներու արժեզրկմամբ ապա անոնց վերաժելորումով պէտք է յառաջանան նոր արժէքներ ու մանաւանդ **գերմարդը** (գերմ.՝ "Übermensch", լատ.՝ "homo superior"):

#### • **Չկա՛յ ճշմարտութիւն,**

որովհետեւ մեզի համար չկան բացարձակ յատկութիւններ ու «ինքնին իր»ը (գերմ.՝ "Ding an sich", անգլ.՝ "Thing in itself"). իսկ առարկայական ճշմարտութիւնները, իր ամբողջութեան մէջ, ճանաչելի չեն:

#### • **Չկա՛յ կեանքի իմաստ ու նպատակ,**

որովհետեւ անվախճան պատմութիւնը, իր «յաւերժական վերադարձ»ով, բոլորովին անիմաստ ու աննպատակ է: Սակայն «յաւերժական վերադարձ»ով հաւանական կը դառնայ Նիցշէի **գերմարդու** ("Übermensch") յառաջացումը, որ պիտի ունենայ՝ **Կամք առ իշխանութիւն** (գերմ.՝ "Wille zur Macht", անգլ.՝ "Will to Power"):

#### • **Չկա՛յ Աստուած ու չկայ վերադաս յաւիտենական ատեան ու հեղինակութիւն,**

որու հետեւանքով՝ մարդ բոլորովին լքուած է ինքն իր վիճակին: Նիցշէ, իր երկերուն մէջ, քանի մը տեղ կը կրկնէ «Աստուած մեռած է» արտայայ-

---

խապաշարումներուն մասին»), "Jenseits von Gut und Böse" (1886, «Բարիէն ու չարէն անդին»), "Zur Genealogie der Moral" (1887, «Բարոյականութեան ծննդաբանութեան շուրջ») եւ իր գլուխ-գործոցը նկատուող "Also sprach Zarathustra" (1883 – 1885, «Այսպէս խօսեցաւ Զրադաշտը»):

տուժիւնը, արդարեւ ոչնչապաշտական ու հակակրօնական ծայրայեղ դիրքաւորում մը, ուր եւս գերմարդու յառաջացման գաղափարը կ'արտացոլայ:

Նիցշէ, իր իւրայատուկ եղանակով, կը քննադատէ բարոյականութիւնը եւ ընկերութեան մէջ տիրող բարոյական արժէքները, նպատակ ունենալով արժէքներու վերարժեւորում մը, որ պիտի հաստատուի նոր հիմքերու վրայ, որ կամքի ազատութիւնն է, Նիցշէի բառերով՝ «Կամք առ իշխանութիւն»ը: Փոխան դիմակագերծուած անդենական արժէքներու, Նիցշէ յառաջ կը մղէ աստենական արդարացումը: Այլ խօսքով, փոխան ստրուկի յատուկ բարիի ու չարի բարոյականութեան, Նիցշէ յառաջ կը մղէ տիրոջ յատուկ բարիի ու վատի բարոյականութիւն մը, ուր բարին կը ներկայանայ որպէս զօրաւոր, երեւելի ու գերադաս, իսկ վատը՝ որպէս տկար ու արհամարհելի:

Կանտի հանճարեղ փիլիսոփայական միտքն ու անոր որակաւոր երկերը բարձր կը գնահատուին. իսկ իրեն եւ իր գործերուն հանդէպ, նոյնիսկ, շատերու կողմէ՝ պատկառանք կը տածուին. այսուհանդերձ պէտք է հաստատել, որ նաեւ շա՛տ – շատեր մեծ դժուարութիւն ունին ըմբռնելու Կանտի գրականութիւնը, բան մը, որ Կանտի մահէն ետք, աւելի քան 200 տարիներէ ի վեր, տեղի տուած է բազմաթիւ քննարկումներու, վերլուծումներու ու քննադատութիւններու, որոնցմով կարելի է գրադարաններ լեցնել:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱԵԱՆ

Գերմանիա

(Շար. 8)





ԳՐԱԽՕՍԱԿԱՆ
------------

## ԱՂՕԹԱԼԻՑ ԱՆՈՒՇԱԲՈՅՐ ԽՈՒՆԿՐ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՁԳՏՈՂ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Հայ քրիստոնեան երբ Հայ եկեղեցիէն դուրս կ'ելլէ, իր ամենօրեայ կեանքը իմաստաւորելու համար բազմաթիւ հոգեւոր-ազգային ապրումներ կը տանի իր հետ: Աստուծոյ երկուքը համամարդկային եւ տիրական են. Աղօթք եւ Սրբութիւն, որոնք մեր սիրտէն կը բարձրանան Աստուծոյ եւ որպէս աստուածատուր օրհնութիւն ու շնորհ, խորհրդաւոր ետդարձով, մեր սիրտը կը լեցնեն՝ մտածումով, խօսքով եւ գործով Աստուած փառաբանելու եւ աստուածահաճոյ կեանք ապրելու համար:

Վերոյիշեալ մտածումները առաւել շեշտակիութեամբ կ'ընդգծուին Մեծ պահքի ապաշխարութեան, ինքնասրբագրութեան եւ հոգեւոր վերականգնումի այս շրջանին, երբ 2022-ին լոյս տեսած երկու գիրքեր հոգեւոր սնունդ կը հայթայթեն այս օրերուն՝ դէպի Աստուած եւ ապա վերադարձ դէպի աստուածաստեղծ աշխարհ ու մարդ ճանապարհորդութեանս:

«Աղօթքս խունկի նման թող բարձրանայ Քեզի» (հաւաքեց, թարգմանեց եւ կազմեց Նիկոլ Սալխանեան) եւ «Սրբապատկեր. լոսութիւնդ խօսեցաւ սրտիս» (հեղինակեց Ռուզան Սալխանեան) հատորներուն հետ մտերմութիւնս աւելի կը խորացնէ անոնց հեղինակներուն հետ քրիստոսատիպ բարեկամութիւնս (Հմմտ Յճ 15.9-17) եւ կը մղէ զիս այս երկու հատորները ընթերցողներուն ուշադրութեան յանձնելու:

«Աղօթքս խունկի նման թող բարձրանայ Քեզի» հատորը **աղօթական կեանքի քաղցրութիւնը բերող խնկաման մըն է՝** զանազան պահերու ընթացքին եւ կարիքներու դիմաց ու հոգեվիճակներու մէջ, - թուեմ մի քանի հատը՝ առաւօտեան, սուրբ հաղորդութեան մօտենալէ առաջ եւ յետոյ, Աստուծոյ խօսքը ընթերցելէ առաջ, բարեխօսական, ընտանեկան, ներքին եւ ֆիզիքական բժշկութեան, մահացու հիւանդութեան, հոգեվարքի, ննջեցեալի, դիւային կապանքներէ ազատագրման, բանտարկեալներու, - աղօթքով Աստուծոյ բացուելու եւ ապա իրմով զօրացած մեր քրիստոնէական կենցաղավարութիւնը շարունակելու համար: Գիրքը ունի նաեւ «Յիշատակուած սուրբերու վարքերը», «Յիսուսի աղօթքը - գործնական ուղեցոյց մը» եւ «Օգտագործուած աղբիւր-

ներ եւ յաւելեալ ընթերցման համար» բաժիններ: Իսկ գիրքը կը բացուի «Ներածութիւն եւ օգտագործման ուղեցոյց» մուտքով, որ ինքզինք կը բացայայտէ արդէն:


Այս գիրքը իւրաքանչիւր հայ քրիստոնեայի «Տէ՛ր, մեզի աղօթել սորվեցաւ» (Ղկ 11.1) խնդրանքին օժանդակող ձեռնարկ մըն է՝ «Տէրունական աղօթք»-ին եւ Հայ եկեղեցւոյ աղօթքներուն ու շարականներուն կողքին, որոնք ե՛ւ առանձնաբար ե՛ւ հաւաքաբար կ'աղօթենք կամ պէտք է աղօթենք ամէն օր:

«Ներածութիւն եւ օգտագործման ուղեցոյց»-ին մէջ կը կարդանք, թէ այս հատորը սուրբերու աղօթքներէն հաւաքածոյ մըն է, որովհետեւ «երբ մենք սուրբերուն աղօթքով եւ անո՛նց հետ կ'աղօթենք, անոնք ալ կ'աղօթեն մեզի հետ եւ մեզի համար, եւ կը սկսինք միանալ ո՛չ միայն անոնց աղօթքին, այլեւ հետզհետէ փոխակերպուիլ՝ անոնց հետ մտերմութեամբ եւ նմանութեամբ» (էջ 19):

«Սրբապատկեր. լուսինդ խօսեցաւ սրտիս» հատորը մեր ֆիզիքական աչքերով սրբապատկերներուն նայելով հոգիի աչքերով զանոնք վայելելու եւ մեր սիրտին մէջ աղօթքով անոնց մշտախօս լուսինը լսելու կը հրաւիրէ մեզ: Գիրքին «Նախաբանի փոխարէն»-ը այս փորձառութիւնը կը պատմէ, երբ հեղինակը Օգոստոս 2017-էն ի վեր լուս սրբապատկերին ձայնը կը փնտռէ եւ վերջապէս կը գտնէ, եւ այս մասին հետեւեալը կը գրէ. «Սրբապատկերները կրօնական թեմաներով պարզ նկարներ կամ դիմանկարներ չեն, այլ՝ հոգեւոր սուրբ պատկերներ, իրենց յատուկ աստուածաբանութեամբ: Անոնք ոչ թէ գծուած, այլ գրուած են՝ լոյսով, գոյներու, խորհրդանշաններու, տարբեր պատկերներու իւրօրինակ եւ խորհրդաւոր լեզուով, որոնք հաւատաւոր ժողովուրդին կ'ընծայեն օգնութեան միջոց մը՝ առաւել խորանալու աղօթքի եւ աստուածապաշտութեան կեանքին մէջ» (էջ 9):

Գիրքը աղօթք եւ սրբապատկեր առնչութիւնը կը բացատրէ՝ լուսինը, խորհրդածութիւնը, խօսիլը, լսելը, արտաքին ու ներքին անապատէն անցնիլը ապրելով, ապա մեզ սրբապատկերին դուռէն ներս մտցնելով՝ քրիստոնէական արուեստի ու գեղեցկութեան վայելումին մասնակից կը դարձնէ, պատկերագրողին դերակատարութիւնը եւս մասնաւորելով:





Ան ունի նաեւ պատմական խորք, երբ սրբապատկերի զարգացումի պատմութիւնը, պատկերամարտութիւնն ու պատկերայարգութիւնը եւ Արեւելեան եկեղեցւոյ ու Բարեկարգութեան ժամանակաշրջանի սրբապատկերի ըմբռնողութեան կ'անդրադառնայ:

Գիրքը սրբապատկերը կարգալու կերպը եւ գոյնի խորհրդաբանութիւնը բացատրելէն ետք, կը թեւակոխէ քրիստոնէային կողմէ սրբապատկերը ապրելու հանգրուանը, երբ կը խօսի Յիսուս Քրիստոսի, Սուրբ Երրորդութեան, Աստուածամօր, սուրբերու ու եկեղեցւոյ սրբակեաց հայրերու, հրեշտակներու ու հրեշտակապետներու եւ Քրիստոսի երկրորդ գալուստի ու ահեղ դատաստանի սրբապատկերներուն մասին: Ապա, գիրքը կը վերադառնայ աղօթքին՝ «Աղօթել սրբապատկերի օգնութեամբ» գլուխով, եւ կ'աւարտի՝ «Ի՞նչ դեր եւ նշանակութիւն կարող է ունենալ սրբապատկերն այսօր» գլուխով:

Այս երկու գիրքերը իրարու զօդուած են եւ իրար կ'ամբողջացնեն, ո՛չ թէ որովհետեւ գրուած են տէր եւ տիկին Նիկոյ եւ Ռուզան Սալխանեանին կողմէ, - թէեւ կրնամ երեւակայել երկուքին ալ համատեղ աղօթքն ու ջանքը այս գիրքերու երկնումի ընթացքին, - այլ՝ ինքնին աղօթք եւ սրբութիւն իրար կը լրացնեն, ինչպէս Ռուզան իր գիրքին մէջ կ'ըսէ՝ կարծէք Նիկոյին գիրքին ակնարկելով. «Քրիստոնէական ապրելակերպի էական մասը աղօթքն ու պաշտամունքն է, մեր սիրոյ հաղորդակցութիւնը՝ Երկնաւոր Հօր հետ, անոր Որդիին՝ մարմնացած եւ տեսանելի դարձած Յիսուս Քրիստոսի միջոցաւ եւ Սուրբ Հոգիին շնորհքով» (էջ 9), եւ Նիկոյ իր գիրքով կ'արձագանգէ՝ կարծէք Ռուզանին գիրքը ի մտի ունենալով. «Աղօթագիրքը հարուստ է սրբապատկերներով: ... Սրբապատկերները կ'օժանդակեն մեզի աղօթքի պահերուն՝ օժտելով զանոնք առաւել կեդրոնացումով, հոգեւոր լուսաբանումով ու ներշնչումով» (էջ 23):

Այս տարի Ս. Ներսէս Շնորհալի Կաթողիկոսի (1102-1173) վախճանումին 850-ամեակը ըլլալով, ցոյց տալու համար աղօթքին եւ սրբութեան փոշիով չծածկուող այժմէականութիւնը՝ այս երկու գիրքերուն պատգամը կը խտացնեն մ Շնորհալիի հոգեղինած Խաղաղական ժամերգութենէն մէջբերուած հետեւեալ տողերուն մէջ.

Այս տարի Ս. Ներսէս Շնորհալի Կաթողիկոսի (1102-1173) վախճանումին 850-ամեակը ըլլալով, ցոյց տալու համար աղօթքին եւ սրբութեան փոշիով չծածկուող այժմէականութիւնը՝ այս երկու գիրքերուն պատգամը կը խտացնեն մ Շնորհալիի հոգեղինած Խաղաղական ժամերգութենէն մէջբերուած հետեւեալ տողերուն մէջ.

«Թովմաս առաքելային հետ գոչելով՝ **Տէր եւ Աստուած** կը դաւանինք Քեզ» (Հմմտ Յճ 20,24-29):

«Մենք Աստուծոյ պիտի պիտի վստահինք, եւ ինք սրբարան պիտի ըլլայ մեզի, որովհետեւ Աստուած ինք մեզի հետ է»:

«Ո՛վ Փրկիչ, մեղքի ծանրութենէն թեթեւցուր մեր հոգիները, եւ զօրացուր մեզ, որպէսզի կամաւորաբար կրենք պատուիրաններուդ քաղցր լուծը, աղաչանքովը սուրբ **Աստուածածինին եւ բոլոր արդարներուն**»:

«Անարատ ծնողիդ **պատկերը** միջնորդ կը ձգենք Քու առջեւդ, անոխակա՛լ Տէր. երբ Հօրը փառքով գաս խաչիդ թշնամին դատելու, ներէ մեր յանցանքները՝ Քու **կոյս մօրդ բարեխօսութեամբ**»:

«Ո՛վ Տէր, մեզ արժանի ըրէ մշտնջենաւոր հանգիստին, բոլոր սուրբերուն հետ, որպէսզի անցաւոր այս կեանքին մէջ Քեզմով առաջնորդուինք, եւ հասնինք երկնային յաւիտենական թագաւորութեանդ, որ աշխարհի սկիզբէն իսկ պատրաստեցիր Քու սուրբերուդ համար»:

Անշուշտ, Շնորհալի այս տողերը գրաբար գրած է. ես զանոնք աշխարհաբար արձանագրեցի քաղելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հրատարակած «Ժամագիրք Արեւագալի եւ Հսկումի» հատորէն:

Նիկոլն ու Ռուզանը ասկէ առաջ քրիստոնէական հոգեւոր կրթանքը քաջալերող ուրիշ գիրքեր ալ գրած էին եւ վստահ եմ, որ դեռ պիտի գրեն: Այդ գիրքերն ու «Աղօթքս խումկի նման թող բարձրանայ Քեզի» եւ «Սրբապատկեր լուսփունդ իօսեցաւ սրտիս» գիրքերը իրենց արժէքաւոր բովանդակութեան եւ ընտիր հրատարակութեան հետ՝ ժողովրդական մակարդակի վրայ **հոգեւոր գրականութեան բացը** գոցելու Հայ Եկեղեցւոյ առաքելութեան սատար կը հանդիսանան:

Մեր **հոգին զինելու եւ քրիստոնէական կեանքը ապրելու** հասարակաց մարտահրաւէրին դիմաց, գնահատանքս կը յայտնեմ այս երկու գիրքերու հեղինակներուն, խմբագրողներուն ու հրատարակիչին՝ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան: Կը հրաւիրեմ ընթերցասէր հայորդիները զանոնք կարդալով, անոնց լոյս ընծայումը իմաստաւորելու եւ Ս. Ներսէս Շնորհալիի բարեխօսութեան դիմելով, իր բառերով կ'ըսեմ. «Ո՛վ Աստուած, պահպանող Քու աջդ ամէն ժամանակ հովանի դարձուր մեր վրայ, որպէսզի օր ու գիշեր Քեզի փառք տանք»:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՆՄԷՋԵԱՆ


**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

**«ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿԱԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ»  
(ԺԲ. Հատոր)  
(Սրբոց Կանոններ եւ Շարականներ)**

Հրամանաւ եւ օրհնութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կաթողիկոսարանի տպարանէն լոյս տեսաւ «Ձայնագրեալ Շարական Հայաստանեայց Եկեղեցոյ» շարքին ԺԲ. հատորը (երեք մասերով), խմբագրութեամբ՝ Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեանին եւ համակարգչային պատրաստութեամբ՝ Սարգիս Սրկ. Յովհաննէսեանին: Այս հատորը կը բովանդակէ սուրբերուն նուիրուած բոլոր կանոններն ու շարականները՝ հետեւելով Ձայնքաղ Շարականի բովանդակութեան շարքին:

ԺԲ. հատորին Ա. մասը կ'ընդգրկէ հետեւեալ կանոնները.- Աստուածամօր առնչուած, Անապատական Անտոնի, Թէոդոս եւ Տրդատ Թագաւորներուն, Դաւիթ մարգարէին եւ Յակոբ առաքեալին, Ս. Ստեփանոսին, Պօղոս եւ Պետրոս առաքեալներուն, Որոտման սուրբ որդիներուն՝ Յակոբ առաքեալին եւ Յովհաննու աւետարանիչին, ընդհանուր եւ տասներկու առաքեալներուն, Քրիստոսի 72 աշակերտներուն, Յովնան մարգարէին, Ս. Սարգիս զօրավարին, Ս. Թէոդորոս զօրավարին, Երուսաղէմի Ս. Կիւրեղ հայրապետին, Երուսաղէմի Ս. Յովհաննէս հայրապետին, Սրբոց Քառասնից Մանկանց եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայրապետին:

ԺԲ. հատորին Բ. մասը բաժնուած է երկու մասերու. առաջինին մէջ կը գտնենք Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին յաջորդող շաբթուան վեց օրերը՝ իբրեւ ամբողջացում Շարականոցի բոլոր շարականներուն, եւ Յովհաննէս Մկրտիչի գլխատման յիշատակին կանոնը: Ապա, Ապրիլեան նահատակներու նուիրուած կանոնը, որ առաջին անգամ ըլլալով կը ներառուի Շարակ-



նոցին մէջ, պաշտօնապէս ընդունուելէ ետք Հայ եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Ժողովին կողմէ, Յեղասպանութեան զոհերու հաւաքական սրբադասումէն ետք: Այս մասին մէջ կը գտնուին նաեւ հետեւեալ կանոնները.- Յովհաննէս Մկրտիչի, Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Գրիգոր Լուսաւորչի որդիներուն եւ թոռներուն, Մեծն Ներսէս հայրապետին, Ս. Իսահակ հայրապետին, Սրբուհի Սանդուխտին, Սուրբ մարգարէներուն, Սուրբ նախահայրերուն եւ Սուրբ թարգմանիչներուն:

Վերջապէս, ԺԲ. հատորին Գ. բաժինը կը բովանդակէ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետին, Բեթղէհէմի մանուկներուն, Սուրբ հրեշտակապետներուն եւ երկնային համայն զօրքին, Սուրբ հայրապետներուն, Ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարի գիւտին, Ամենայն սրբոց, Սրբոց Վարդանանց, Սրբոց Ղեւոնդեանց, Ս. Իգնատիոս հայրապետին, Ս. Յովհաննու Ոսկեբերանի, Ս. Գրիգոր Աստուածաբանին, Ս. Նիկողայոս հայրապետին եւ այլ սուրբերու:

Շարականներու այս ձայնագրութիւնը կատարուած է «հետեւելով մեր տրամադրութեան տակ ունեցած ասանդութիւններուն եւ մասնագէտ ու եկեղեցական երաժշտութեան լաւատեղեակ երաժիշտներու ձայնագրութեան, միաժամանակ՝ պահելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ասանդական երգեցողութիւնը»:

Նշենք, որ ԺԲ. հատորի Ա. մասի մեկենասութիւնը ստանձնած է Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմը, երկրորդինը՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմը, իսկ երրորդինը՝ Գանատայի Թեմէն Կարօ եւ Լենա Պոսթաճեան ամուլը, ի յիշատակ իրենց մօր՝ Ազատուհի Դաւիթեան-Պոսթաճեանին:

Այսպիսով, ԺԲ. հատորին հրատարակութեամբ վերջ կը գտնէ 40 տարի առաջ հոգելոյս Զարեհ եւ Օշական Սրբազան Հայրերու նախաձեռնած Հայ եկեղեցւոյ շարականները ամբողջութեամբ երոպական ձայնագրութեամբ արձանագրելու ծրագիրը:





**ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ**

**ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒԱԾ  
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ**

Լիբանանի նախագահական թեկնածուության եւ ընտրությունները անյապաղ կերպով կատարելուն շուրջ խորհրդակցությունները շարունակուեցան Մարտ ամսուան ընթացքին: Այս գծով, Նորին Ս. Օծուինն ու Մարոնիթ Եկեղեցւոյ Պետ՝ Ռայի Պատրիարքը ունեցան փոխադարձ այցելութիւններ, ինչպէս նաեւ՝ Հայրապետին այցելութիւններ տուաւ Ռայի Պատրիարքին ներկայացուցիչ՝ Փօլ Սայյահ Արքեպիսկոպոսը՝ Նորին Սրբութիւնը իրազեկ դարձնելու աշխատանքներուն մասին եւ լսելու անոր թելադրութիւնները: Հանդիպումներուն ներկայ եղաւ Հայկական Երեսփոխանական Պլոթի ներկայացուցիչ՝ Երեսփոխան Յակոբ Բագրատունի:

Յայտնենք, որ շուրջ երկու ամիս առաջ, Ռայի Պատրիարք այցելած էր Անթիլիասի Մայրավանք եւ խորհրդակցություններ ունեցած էր յիշեալ հարցին շուրջ: Ապա, Անթիլիասի ու Պէրթէի միջեւ կապերը շարունակուած էին նախագահական շուտափոյթ ընտրութեան նպատակին գծով:



Առ այդ, Հինգշաբթի, 9 Մարտ 2023-ի առաւօտուն, Փօլ Սայյահ Արքեպիսկոպոսը այցելեց Հայրապետին ու զինք տեղեակ պահեց վերջին օրերուն տեղի ունեցած զարգացումներուն մասին: Որոշուեցաւ այս գծով խորհրդակցութիւնները շարունակել:



Դարձեալ, Երեքշաբթի, 21 Մարտ 2023-ի երեկոյեան, Սայյահ Արքեպիսկոպոսը այցելեց Կաթողիկոսարան եւ յանուն Պատրիարքին, Հայրապետին հետ խորհրդակցեցաւ Լիբանանի Նախագահական ընտրութեան հետ աղերս ունեցող աշխատանքներուն մասին: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը Սայյահ Արքեպիսկոպոսին փոխանցեց իր տեսակետները՝ շեշտելով կարելի փութով Նախագահ ընտրելու հրամայականը, որ ընդունելի ըլլայ Լիբանանի քրիստոնէայ ու իսլամ համայնքներուն կողմէ:

Յաջորդ օր, Չորեքշաբթի, 22 Մարտին, Մարոնիթ Եկեղեցւոյ կեդրոնատեղի Պէրբէի մէջ հանդիպում մը կայացաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Ռայի Պատրիարքին միջեւ՝ ներկայութեամբ երեսփոխան Յակոբ Բագրատունիի եւ Փօլ Սայյահ Արքեպիսկոպոսին: Հանդիպման միակ նիւթը Լիբանանի Նախագահական ընտրութիւնն էր:





## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ ՄԻՔԱԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Հինգշաբթի, 23 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեցին Լիբանանի Հանրապետության Վարչապետի պաշտոնակատար Նեժիպ Միքաթիի ներկայացուցիչներ՝ Պուրոս Ասաբերն ու Չիատ Միքաթին: Պուրոս Ասաբեր եղած է Ֆրանսայի ու Արաբական Լիկայի մօտ Լիբանանի դեսպան եւ այժմ Վարչապետի պաշտոնակատարին դիւանագիտական հարցերու խորհրդականն է, իսկ Չիատ Միքաթի վարչապետարանէն ներս ծրագիրներու գրասենեակի պատասխանատուն է:



Վարչապետի պաշտոնակատարին ներկայացուցիչները եկած էին Վեհափառ Հայրապետին հետ խորհրդակցելու Լիբանանի ներքին կացութեան առնչուած կարգ մը հարցերու շուրջ, յատկապէս Հանրապետութեան Նախագահի ընտրութեան:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԼԻՔԱՆԱՆԵԱՆ «ԱԶԱՏ ՀՈՍԱՆՔ»  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ԺԸՊՐԱՆ ՊԱՍԻԼԸ**

Երեքշաբթի, 28 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանեան «Ազատ Հոսանք» կուսակցութեան Ղեկավար՝ Ժըպարան Պասիլը, կուսակցութեան պատկանող երկու պետական



Երեսփոխաններու հետ միասին: Հանդիպման ներկայ էր նաեւ Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի: Քննարկումները առաւելաբար կեդրոնացան Լիբանանի սախագահական ընտրութեան վրայ:



**ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ**

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԹԷՆՔԻ ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ  
Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ**

Շաբաթ, 11 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, հովուապետական այցելութեամբ ժամանեց Աթէնք եւ օդակայանին մէջ արժանացաւ պաշտօնական ընդունելութեան:

Նորին Ս. Օծութեան դիմաւորելու եկած էին Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Յունաստանի մօտ Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոս՝ Տիգրան Վարդանեան եւ Լիբանանի Դեսպան՝ Ղատի Ալ-Խուրի, Յունաստանի Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ Արքեպիսկոպոսին ներկայացուցիչը, Յունաստանի Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Գերշ. Յովսէփ Ծ. Վրդ. Պէզազեան, Յունաստանի Հայ Աւետարանական համայնքի Պետ՝ Վերապատուելի Վիգէն Զոլաքեան, Ազգային Վարչութեան Ատենապետ՝ Թազուր Յովակիմեան, Թեմին մէջ ծառայող միաբան, քահանայ հայրեր ու ազգայիններ:



Օղակայանին մէջ տեղի ունեցած ընդունելութենէն անմիջապէս ետք, պետութեան կողմէ տրամադրուած ինքնաշարժով, Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը մեկնեցան Ազգային Առաջնորդարան, ուր դիմաւորուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մուտքին՝ «Հրաշափառ»ի երգեցողութեամբ: Հայրապետը թափօրով առաջնորդուելէ ետք Ս. Խորան՝ կատարեց կանոնական աղօթք:

Ողջոյնի խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը եւ յայտնեց, որ Վեհափառ Հայրապետին Յունաստանի Հայոց Թեմ այցելութիւնը յատուկ խանդավառութիւն եւ տօնական մթնոլորտ ստեղծեց Թեմէն ներս: Ան բարի գալուստի խօսքին մէջ բազմաբեղուն ծառայութեամբ լեցուն երկար տարիներ մաղթեց Նորին Սրբութեան եւ ապա հրաւիրեց Հայրապետը՝ պատգամը փոխանցելու հաւատացեալ ժողովուրդին:

Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոս իր ուրախութիւնը յայտնեց Յունաստանի Հայոց Թեմէն ներս գտնուելուն առիթով՝ ընդգծելով, որ հովուապետական այցելութեան հիմնական նպատակը ժողովուրդին հետ ըլլալ է, անոր ցաւերը լսել ու դիմագրաւած դժուարութիւնները ճանչնալ է: Ան իր խօսքին մէջ յատուկ կերպով շեշտեց Թեմին վերակազմակերպման անյետաձգելի հրամայականը: «Անցնող երկու տարիները հռչակեցին «Սփիւռֆի Տարի»: Սփիւռֆի մեր կեանքէն ներս թեմերը կարելոր դեր ունին: Ուր որ գաղութ հաստատուած է՝ հոն եկեղեցիներ ցաւ կառուցուած են, եւ եկեղեցիներուն շուրջ՝ թեմական կառոյցներ գործած են: Հետեւաբար, Մեր այս տարուան հովուապետական այցելութիւններու ընթացքին պիտի խօսինք Սփիւռֆի մեր կեանքը վերակազմակերպելու ու վերակենսունակացնելու մասին: Ո՛չ միայն պիտի խօսինք, այլ ծրագրումի գործընթացներ պիտի հաստատենք», ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Պաշտօնական ընդունելութենէն ետք, Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, Հայրապետը մտերմիկ հանդիպումներ ունեցաւ հոգեւորականաց դասուն, Առաջնորդարանի անձնակազմին եւ ազգայիններուն հետ:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵՌՆԱՐԿ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Նոյն գիշերը, «Լէոնտիօ» սրահին մէջ, Յունաստանի Հայոց Թեմին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին: Յայտագրին, Յունաստանի Թեսաղոնիկէ եւ Գոմոթինի շրջաններէն Աթէնք համախմբուած երիտասարդներ, հրամցուցին ազգային երգերէ կտորներ ու ներկայացուցին հայ մշակութային ժառանգութենէն պարեր:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց «Ազատ Օր» թերթի խմբագրապետ՝ Քերոբ Էքիզեան: Ան իր խօսքը կեդրոնացուց Վեհափառ Հայրապետի





տին 1996 թուականին Յունաստան կատարած հովուապետական անդրանիկ այցելութեան ընթացքին արտասանած խօսքին վրայ, ուր Նորին Ս. Օծութիւնը կոչ կ'ուղղէր սփիւռքահայութեան՝ վերակազմակերպելու ու վերականգնելու հայ գաղութները: Էքիզեան անդրադառնալով Հայրապետին 2022 եւ 2023 թուականները Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն նուիրելուն՝ ըսաւ, որ ան իր գահակալութեան առաջին իսկ օրերէն, ուր որ գտնուեցաւ, Անթիլիասի Մայրավանքի սրբազան խորանէն մինչեւ Հայաստանի ամէնէն պաշտօնական բեմերը, ահագան-

գեց ու խօսեցաւ Սփիւռքի մասին՝ մանաւանդ արտասանելով «Հայրենիք կը պարպուի, Սփիւռք կը մաշի» ծանրակշիռ խօսքը, որուն հրատապութիւնը կը շարունակէ յատկանշել հայ կեանքը իր ամբողջութեամբ: Ան լուսարձակի տակ բերաւ Վեհափառ Հայրապետին միջ-եկեղեցական նպաստը, եւ յառաջիկայ օրերուն Նորին Սրբութեան ունենալիք միջ-եկեղեցական հանդիպումները նկատեց իբրեւ պերճախօս վկայութիւն՝ անոր միջ-եկեղեցական հանգամանքին: Էքիզեան իր խօսքին մէջ նաեւ յիշեց, թէ Վեհափառ Հայրապետը ո՛չ միայն համազգային ղեկավար դէմք մըն է, այլեւ միջազգային հեղինակութիւն է: Ան իր խօսքի աւարտին յիշեց Յունաստանի հայ գաղութին բերած նպաստը հայ կեանքէն ներս:


Ապա, խօսք առաւ Ազգային Վարչութեան Ատենապետ՝ Թագլոր Յովակիմեան, որուն խօսքին առանցքը կազմեց գաղութը գործօն մասնակցութեամբ վերակազմակերպելու ու վերականգնելու հրամայականը:

Գեղարուեստական յայտագիրէն ետք, Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան խօսք առնելով՝ ընդգծեց Վեհափառ Հայրապետին 28-ամեայ ծառայութիւնը: Ան Նորին Ս. Օծութիւնը ներկայացուց իբրեւ հայ կեանքի տիրտաններէն մէկը եւ Հայ եկեղեցույ մեծ հայրապետներուն արժանատի յաջորդը: Ապա, Առաջնորդ Սրբազան



Հայրը, յանուն Յունաստանի Հայոց Թեմին, իբրև ախոյեանութեան խորհրդրդանշան, Հայրապետին նուիրեց ձիթենեաց ոսկեզօծ պսակ մը:

Արդարեւ, ընդառաջելով Յունաստանի Հայոց Թեմի փափաքին, Վեհափառ Հայրապետը «Կիլիկեան Ասպետ» շքանշանով պարգևատրեց Ստեփան Մաթէոսեանն ու Մաննիկ Աշըրեանը եւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ Արա Մանկոյեանն ու Տիրուհի Գալֆայեան-Ղալիլէանը՝ հայ մշակոյթին մէջ ու գաղութի կեանքէն ներս անոնց տարիներու ունեցած ծառայական վաստակին համար: Իր հայրական խօսքին մէջ, Նորին Արքեպիսկոպոստը, վեր առնելով հայ մշակոյթը, անոր բարոյական սկզբունքներն ու ազգային արժէքները, կարեւորութեամբ շեշտեց զանոնք ո՛չ միայն պահելու, այլեւ ապրելու ու զարգացնելու հրամայականը: Վեհափառ Հայրապետը ըսաւ, թէ մշակոյթը հայ ժողովուրդի կեանքէն ներս սովորական երեւոյթ մը չէ: Առանց հայ մշակոյթին՝ հայ ազգը պատմութեան փոթորիկներուն մէջ պիտի կորսուէր: Սակայն մեր մշակոյթին շնորհիւ մնացինք կանգուն դժուարութիւններուն եւ տագնապներուն մէջ՝ նոյնիսկ ջարդերէն ետք: Վեհափառ Հայրապետը անդրադառնալով հայ արժէքներուն, ըսաւ. «Մշակոյթ, բարոյական սկզբունքներ եւ հոգեւոր արժէքներ, մեզի համար դարձան անբաժանելի մէկ ամբողջութիւն: Հոգեւորը մեր կեանքին մէջ հայացաւ. հայը իր հոգիով ու աւանդութեամբ՝ քրիստոնէական նկարագիր ստացաւ. բարոյականը՝ մեր մշակութային ու ազգային տեսլականին, ձգտումներուն, իդէալներուն եւ տագնապներուն էութիւնը դարձաւ: Եւ մենք այս արժէքներով մեր ինքնութիւնը կերտեցինք»: Ան իր խօսքին մէջ բարձր գնահատեց ձեռնարկը ճոխացնող յունահայ երիտասարդութիւնը:



**Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ**

Կիրակի, 12 Մարտ 2023-ի առաւօտեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հանդիսապետեց Գոթինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին: Հայրապետը դիմաւորուեցաւ հաւատացեալներու հոծ բազմութեան կողմէ, որոնք եկած էին լսելու անոր պատգամը եւ ստանալու հայրական ու հայրապետական օրհնութիւնը: Վեհափառ Հայրապետը իր պատգամին սկիզբը բարձր գնահատանքով ողջունեց Յունաստանի Հայոց



*Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանի, ինչպէս նաեւ Հոգեւոր դասուն, Ազգային Վարչութեան եւ հայ կեանքէն ներս գործող բոլոր կազմակերպութիւններուն խանդավառ ու բեղուն ծառայութիւնը:*

*Նորին Արքութիւնը իր պատգամին բնաբան ընտրած էր Յովհաննու Աւետարանին հետեւեալ տողերը. «Ես եմ աշխարհի լոյսը: Ով որ ինձի կը հետեւի, խաւարին մէջ պիտի չճալէ, այլ պիտի ունենայ այն լոյսը, որ կեանքին կ'առաջնորդէ» (ՅՃ 8.12): Նորին Ա. Օծութիւնը ըսաւ, թէ լոյսը ստեղծուած է Աստուծոյ կողմէ, ինչպէս Ծննդոց գիրքին մէջ կը կարդանք: Տիեզերքի ստեղծագործութեան առաջին օրը Աստուած ըսաւ. «Թող լոյս ըլլայ», եւ լոյս եղաւ: Ուստի, լոյսը Աստուածային յայտնութեան ու ստեղծագործութեան առաջին ու էական երեւոյթներէն մէկն է: Լոյսն է, որ տիեզերքի այլ տարրերուն իմաստ ու նպատակ կու տայ: Հայրապետը բացատրելով լոյսին քրիստոնէական հասկացողութիւնը, հաստատեց, որ լոյսը եւ խաւարը չեն կրնար գոյակցիլ: Լոյսը ստեղծուած է Աստուծոյ կողմէ, անոր գոյաւորման աղբիւրը Աստուած է: Խաւարը լոյսին բացակայութիւնն է: Հետեւաբար, ուր լոյս չկայ, հոն խաւարը կը տիրէ: Շարունակելով իր պատգամը՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Լոյսը սոսկ ֆիզիքական երեւոյթ մը չէ, անիկա հումանիշ է Աստուծոյ ներկայութեան: Աստուած ո՛չ միայն ստեղծիչն է լոյսին, այլ նաեւ անոր ներկայութիւնն է. լոյսին իմաստ ու նպատակ տուողը Աստուած ինքն է: Երբ լոյսը բացակայ է, հոն կը տիրէ խաւարը, այլ խօսքով՝ ուր Աստուած բացակայ է, հոն կը տիրէ չարիք: Հին Կտակարանի պատմութիւնը ցոյց կու տայ, թէ մարդը հեռացաւ լոյսէն, այլ խօսքով՝ Աստուծմէ՝ ընտրելով խաւարը եւ չա-*

րը: Ուստի, ուր խաւար կը տիրէ, հոն նաեւ չարը կը տիրէ: Ահա այս կացութեան դիմաց լոյսի աղբիւրը՝ Աստուած, Իր Միածին Որդին դրկեց, որպէսզի դառնայ խաւարին մէջ մնացած աշխարհին լոյսը: Քրիստոս Ի՛նքն է նշմարիտ լոյսը աշխարհին: Անոր առաքելութիւնը խաւարին դիմաց լոյս տարածել, մարդկային կեանքը լոյսով լեցնել էր: Աւետարանները յստակ կերպով կը պարզեն, թէ Քրիստոս Իր կեանքով ու հրաշքներով ցոյց տուաւ մարդուն լոյսի նամբան: Լոյսի նամբան կեանքի ու փրկութեան նամբան է, եւ Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած անձը պէտք է քալէ այդ նամբէն»:



*Ապա, Վեհափառ Հայրապետը անդրադառնալով մեր ազգի դիմագրաւած դժուարութիւններուն, ըսաւ. «Պատմութեան ընթացքին յանախ խաւարը փորձեց տիրապետող ներկայութիւն դառնալ մեր կեանքէն ներս, սակայն, Քրիստոսի լոյս ներկայութեամբ, մենք կրցանք խաւարը վանել մեր կեանքէն, յաղթել խաւարին տիրապետութեան եւ մեր կեանքը Քրիստոս-լոյսով պայծառակերպել: Ներկայ ժամանակներուն խաւարը տարբեր կերպերով ու անուններով դարձեալ շրջապատած է հայ կեանքը ամէն տեղ՝ Արցախէն սկսեալ, Հայաստան եւ Սփիւռք: Որպէս երկնային լոյսը ընդունած առաջին ժողովուրդ, մենք կոչուած ենք այդ լոյսով գինուած յաղթահարել ամէն տեսակ խաւարային մտածումներ, մտեցումներ ու ծրագիրներ, որոնք կը փորձեն մեր ժողովուրդը պահել խաւարին մէջ: Մենք լոյսի՝ ազգ ենք, լուսապա՛շտ ազգ ենք, լուսաւորիչներ ծնած եւ աշխարհին լոյս սփռած ազգ ենք: Այս հաւատքով ու գիտակցութեամբ պէտք է ապրինք՝ մեր կեանքը շաղախելով լոյս-Քրիստոսով»:*



Նորին Ս. Օծութեան պատգամին վերջին բաժինին կեդրոնական մտածումն էր Սփիւռքի վերակազմակերպումն ու հայ երիտասարդութիւնը: Արդ, Վեհափառ Հայրապետը, խօսելով իր հովուապետական այցելութեան առանցքային նպատակին մասին, յիշեցուց, որ 2022 ու 2023 տարիները հոշակած էր «Սփիւռքի Տարի» եւ այս ծիրին մէջ անդրադարձած՝ Սփիւռքի վերակազմակերպման ու վերակենսունականացման հրամայականին: «Այս ուղղութեամբ, մեր թեմերու վերակազմակերպումը առանցքային կարեւորութիւն ունի: Մեր հովուապետական այցելութեան ընթացքին կարեւորութեամբ պիտի անդրադառնանք Յունաստանի Հայոց Թեմի վերակազմակերպման ծրագրին եւ Թեմի հոգեւոր թե՛ աշխարհական պատասխանատուներուն հետ միասին պիտի մտածենք, թէ ի՛նչ ձեւով կրնանք թեմական կառոյցները ու անոնց աշխատանքը վերատեսութեան ու վերակազմակերպման ենթարկել՝ ա՛յնպիսի մօտեցումով, որ անոնց գործունէութիւնը համապատասխանէ մեր ներկայ կեանքի պայմաններուն ու կարիքներուն: Վերակազմակերպման մեր աշխատանքին հիմնական նպատակը երիտասարդութիւնը մեր եկեղեցւոյ շուրջ համախմբելն է: Այս ուղղութեամբ յատուկ ծրագիրներ հարկ է որ պատրաստուին եւ Ազգային Առաջնորդարանին եւ ծուխերուն կողմէ համադրուած կերպով իրականացուին՝ երիտասարդներուն մասնակցութեամբ: Դժբախտ երեւոյթ մըն է, որ կը դիմագրաւէ հայութիւնը, ամէն տեղ: Այսօր երիտասարդութիւնը հետզհետէ կը հեռանայ մեր հաւաքական կեանքէն: Հնամաշ ու գմուսուած մօտեցումներով ու կեցուածքներով աւելի պիտի հեռացնենք երիտասարդութիւնը թե՛ ազգային եւ թե՛ եկեղեցական կեանքէն: Հետեւաբար, պէտք է երկխօսութիւն ստեղծել երիտասարդութեան հետ ու վստահիլ անոնց՝ փոխանակ զանոնք հեռու պահելու մեր կառոյցներէն ու ընդհանրապէս մեր հաւաքական կեանքէն», ըսաւ Նորին Սրբութիւնը:

Ս. եւ Անմահ Պատարագէն ետք, եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ ծաղկեալ փիլոնի տուշութիւն, Թեմին մէջ ծառայող երկու քահանայ հայրերուն՝ Արժ. Տ. Պարետ Քհնյ. Խաչերեանին եւ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Շահինեանին: Ապա, Հայրապետը, իբրեւ գնահատանք Թեմէն ներս կատարուած ծառայութեան, Առաջնորդական Փոխանորդ եւ Գոմոթիինի շրջանի Հոգեւոր Հովիւ՝ Գերպ. Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտըճեանին նուիրեց լանջախաչ: Յիշեալ արարողութիւններէն ետք, տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն եւ աջահամբույր, որուն յաջորդեց պաշտօնական ճաշկերոյթ՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Ճաշկերոյթին ներկայ էին թեմական ու համայնքային պատասխանատու մարմինները:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿՐ ՆԱԽԱԳԱՀԷ  
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ  
ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ**

Կիրակի յետմիջօրէին, Գոքինիոյ «Ջաւարեան» կեդրոնի սրահին մէջ, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, գումարուեցաւ Սփիւռքի վերակազմակերպման գործընթացքը քննարկող ժողով մը՝ մասնակցութեամբ Յունաստանի Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխաններուն, գաղութին մէջ գործող միութիւններուն եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

Ժողովին բացումը կատարեց Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, որ առաջին հերթին ընթերցեց Վեհափառ Հայրապետին 2022 տարուան «Սփիւռքի Տարի» հռչակագրէն Սփիւռքի ներկայ վիճակը բնորոշող, դիմագրաւած դժուարութիւնները լուսարձակի տակ առնող եւ վերակազմակերպման ընթացքին գործօն ու ներդաշնակ աշխատանք կատարել թելադրող հատուածները: Ապա, լայն շրջագծով ներկայացուց ներկայ տարուան հռչակագիրը:



Վեհափառ Հայրապետը ողջունելով Յունաստանի Հայոց Թեմին մէջ գործող մարմիններն ու կազմակերպութիւնները, ըսաւ, որ հովուապետական այցելութեան հիմնական նպատակն է մեր թեմերուն դիմագրաւած դժուարութիւնները լսել եւ վերանորոգման գործընթացք մը միասնաբար ծրագրել: Նորին Սրբութիւնը խօսելով Սփիւռքի վերակազմակերպման մասին, յայտնեց, որ վերակազմակերպում ըսելով՝ պէտք է հասկնալ վերանորոգում, վերակենսաւորում ու վերաշխուժացում: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ մեր թեմերը հայ գաղութներուն առանցքն են: Իւրաքանչիւր թեմ, տեղական պայմաններուն բերումով, իւրայատուկ մտածելակերպ ու գործելակերպ ունի:

Կարելի չէ միատեսակ լուծում որդեգրել, այլ հարկ է, որ իւրաքանչիւր թեմ վերակազմակերպման ու վերանորոգման գործընթացքը ի՛նք ծրագրէ: Վեհափառ Հայրապետը, Հայ եկեղեցւոյ կեդրոնական դերին անդրադառնալով, ըսաւ, որ երբ թեմ կ'ըսենք կը հասկնանք եկեղեցի: Հայ եկեղեցին մեր կեանքին մէջ կեդրոնական տեղ գրաւած է: 1915-ի Յեղասպանութենէն ետք, հայ ժողովուրդը, ուր որ ալ հաստատուեցաւ, նախ եկեղեցի կառուցեց եւ անոր շուրջ հաւաքուեցաւ: Հետեւաբար, կարելի չէ զայն ձգել իր ներկայ վիճակին մէջ, այլ՝ հրամայական անհրաժեշտութիւն կը նկատենք եկեղեցին ներկայ պայմաններուն համահունչ դարձնելը. եւ ա՛յս պատճառով, Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքները պիտի սկսինք թեմերէն, ըսաւ Նորին Սրբութիւնը:

Հայրապետը յատուկ կերպով շեշտեց, որ Սփիւռքի վերակազմակերպումը մեծապէս պիտի նպաստէ Հայաստանի ու Արցախի հզօրացման: Ո՛չ Սփիւռքը, ո՛չ Հայաստանը եւ ո՛չ ալ Արցախը ինքնակեդրոն իրականութիւններ են, այլ, իրենց տարբերութիւններով հանդերձ, մէկ ամբողջութիւն են: Մեր տարբերութիւնները՝ տարբեր դերերով ու տարբեր շեշտաւորումներով, ներդաշնակութեամբ միասին պէտք է գործեն մէկ կամարի տակ: Այսօր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մշակած շրջանային թէ՛ միջազգային սերտ յարաբերութիւնները պիտի օգնեն Հայաստանին ու Արցախին:

Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ հայու ինքնութեան հարցին, ըսելով. «Այսօր պայմանները փոխուած են: Կարելի չէ հին մտայնութեան հետեւելով հայու ինքնութիւնը որոշել: Սփիւռքի մէջ հայ ըլլալը ընտրութեան հարց է: Մենք հայ մնալու համար կը տագնապինք ու կը պայքարինք: Ուստի, մենք մեր ինքնութիւնը բնորոշելու համար աւելի լայն չափանիշներու պէտք ունինք»:



Նորին Սրբութիւնը իր խօսքը ակարտեց ըսելով, որ արծարծուած բոլոր հարցերը ուղղակի թէ՛ անուղղակիօրէն առնչուած են հայ երիտասարդութեան: Մեր հիմնական մտահոգութիւնը երիտասարդութիւնն է: Փաստօրէն երիտասարդութիւնը հետզհետէ կը հեռանայ մեզմէ, ամէն տեղ: Մեր կառոյցները պէտք է գրաւիչ դարձնել հայ երիտասարդութեան համար: Շարունակելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ այսօր մեր ժողովէն կը պակսին երիտասարդները. մեր փափաքն է, որ յառաջիկայ ժողովներուն ներկայ ըլլան անոնք, իրենց սպասումները արտայայտեն գաղութի ղեկավար մարմիններուն:

Նորին Սրբութեան խօսքէն ետք, ժողովականները խօսք առին եւ ներկայացուցին գաղութին մէջ կատարուելիք վերակազմակերպման աշխատանքին գծով իրենց ունեցած պատկերացումները:

**ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏԻՆ ՄԻՋԵՒ**

Երեքշաբթի, 14 Մարտ 2023-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Յունաստանի եկեղեցւոյ հոգեւոր կեդրոնը, ուր ջերմօրէն դիմաւորուեցաւ Աթէնքի եւ համայն Յունաստանի Արքեպիսկոպոս՝ Երոնիմոս Բ.ին կողմէ: Արքեպիսկոպոսին շուրջ ներկայ էին մետրոպոլիտներ, եպիսկոպոսներ ու քահանայ հայրեր:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ անդրադարձաւ հայ եւ յոյն եկեղեցիներուն միջեւ գոյութիւն ունեցող դարաւոր սերտ յարաբերութեան ու







գործակցութեան: Ան ըսաւ, որ պատմութեան ընթացքին, պայմաններու բերումով, աստուածաբանական տարբեր մօտեցումներ ու մեկնաբանութիւններ բաժնեցին մեր եկեղեցիները, սակայն հիմնական հարցերու շուրջ մենք որդեգրեցինք նոյն մօտեցումները: Շարունակելով իր խօսքը՝ Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ այսօր մենք կը գործակցինք մեր հաւաքական արժէքներուն եւ ցեղասպանութեան առնչուած մեր դատին գծով: Մեր սերտ գործակցութիւնը չէ սահմանափակուած Յունաստանի սահմաններէն ներս, այլ գոյութիւն ունի հոն՝ ուր հայ եւ յոյն գաղութներ կան: Յիշելով անցնող շաբաթներուն տեղի ունեցած շոգեկառքի արկածը, Հայրապետը իր խոր ցաւակցութիւնը յայտնեց Երոնիմոս Բ. Արքեպիսկոպոսին: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը իր ջերմ շնորհակալութիւնը յայտնեց հայ համայնքին նկատմամբ յոյն եկեղեցւոյ ցուցաբերած աջակցութեան ու նախանձախնդրութեան համար:

Երոնիմոս Բ. Արքեպիսկոպոս, իր կարգին, յատուկ կերպով ողջունեց Վեհափառ Հայրապետին Յունաստան այցելութիւնը: Ան յիշեց Հայրապետին դերը միջ-եկեղեցական աշխարհէն ներս եւ աստուածաբանական երկխօսութեանց զարգացման մէջ: Արքեպիսկոպոսը նաեւ անդրադարձաւ Միջին Արեւելքի քրիստոնեայ համայնքներու դիմագրաւած դժուարութեանց եւ իր գորակցութիւնը յայտնեց շրջանի եկեղեցիներուն: Խօսելով հայ եւ յոյն եկեղեցիներու մասին, ան յիշեց, որ պատմական կապերով ամրապնդուած է մեր եկեղեցիներուն գործակցութիւնը: Արքեպիսկոպոսը նաեւ իր գնահատանքը յայտնեց Յունաստանի զարգացման ու յառաջդիմութեան մէջ յունահայութեան բերած դրական մասնակցութեան:

*Երկու հոգեւոր պետերու պաշտօնական խօսքերու ակարտին տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:*

*Կէսօրին, ի պատիւ Վեհափառ Հայրապետին, Յունաստանի եկեղեցւոյ պետը սարքեց ճաշկերոյթ, որուն ներկայ էին Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդական փոխանորդ եւ Գոմոթինի շրջանի Հոգեւոր Հովիւը, Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց բաժանմունքի Միջին Արեւելքի Վարիչը, Թեսաղոնիկէի Հոգեւոր Հովիւն ու յոյն հոգեւորականներ:*

**ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՈՒ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՆ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ**

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Յունաստանի Հայոց Թեմին կատարած իր հովուապետական այցելութեան երրորդ օրը, այցելեց Հայ Աւետարանական եւ Հայ Կաթողիկէ եկեղեցիներու հոգեւոր պատասխանատուներուն եւ շրջեցաւ հայ դպրոցները:*



*Վեհափառ Հայրապետը այցելեց Ազգային «Զաւարեան» վարժարանը, ուր ջերմ ընդունելութեամբ դիմաւորուեցաւ: Նորին Ս. Օծութեան այցելութեան առիթով, վարժարանի աշակերտութիւնը հայ երգերով, ասմունքներով ու պարերով գեղարուեստական ճոխ յայտագիր մը ներկայացուցին: Յայտագրի ակարտին, Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը Հայրապե-*

տին մօտեն ծանօթացուց վարժարանին կատարած աշխատանքները ու ապագայի ծրագիրները:

Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչաց կազմը՝ անոնց ազգանուէր գործունէութեան համար: Ան իր խօսքին մէջ ընդգծեց, որ հայ դպրոցը նուիրական հաստատութիւն է. հետեւաբար, գիտակցութեամբ պէտք է մօտենանք հայ դպրոցին, որովհետեւ մեր ազգի ապագան կախեալ է հայ դպրոցէն: Հայրապետը հայակերտման անհրաժեշտութիւնը վեր առնելով՝ շեշտեց, որ հայ դպրոցը միայն ուսում ջամբող հաստատութիւն չէ. հայ դպրոցը սրբավայր է՝ հայը ճշմարտօրէն եւ գիտակցօրէն հայ դարձնելու լծուած:



Ապա, Նորին Սրբութիւնը այցելեց Յունաստանի Հայ Աւետարանական համայնքի կեդրոնը: Հանդիպման ընթացքին, Հայ Աւետարանական համայնքի Հոգեւոր Պետ՝ Վերպ. Վիգէն Զոլաքեան Նորին Ս. Օծութեան պարզեց համայնքին ներկայ կացութիւնը: Վեհափառ Հայրապետը գնահատեց Վերպ. Զոլաքեանի աշխոյժ ու գործօն ծառայութիւնը՝ հայ գաղութի կեանքին մէջ:

Նոյն օրը, Հայրապետը այցելեց Ազգ. «Աւտոն եւ Սոֆիա Յակոբեան» վարժարան: Հոն եւս, Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելութեան առիթով վարժարանի նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտութիւնը հրամցուց գեղարուեստական ճոխ յայտագիր մը: Աւարտին, Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչաց կազմը՝ հայակերտումի նուիրական աշխատանքին անոնց բերած կարեւոր նպաստին համար: Վեհափառ Հայրապետը իր հայրական խօսքին մէջ ըսաւ, որ հայ դպրոցը սովորական դպրոց մը չէ, ուր միայն գիտելիք կ'ամբարենք, այլ հոն կը բացուինք մեր արժէքներուն ու ձգտումներուն: Հայ դպրոցին մէջ հայ աշակերտը հայօրէն կը կազմաւորուի: Ահա թէ ինչու դաստիարակիչ դեր ունի հայ դպրոցը:



ցը: Այս գիտակցութեամբ մենք պէտք է մօտենանք հայ դպրոցին: Սփիւռքի դժուար պայմաններուն մէջ, ջարդերէն ետք, եկեղեցւոյ կողքին, հայ դպրոցը դարձաւ մեր գոյութեան ամրոցը: Ուստի, ամէն գնով պէտք է կենսունակ ու աշխոյժ պահել հայ դպրոցը:

Վերջապէս, Վեհափառ Հայրապետը այցելեց Յունաստանի Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, ուր ջերմ ընդունելութեամբ դիմաւորուեցաւ:



Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ՝ Գերջ. Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Պէզազեան բարի գալուստի իր խօսքին մէջ անդրադարձաւ Նորին Սրբութեան հովուական բազմաբեղուն ծառայութեան: «Եղաք բարի հովիւ՝ դառնալով ժողովուրդին ցաւակից ու յուսադրելով զայն. եղաք քաջ հովիւ՝ պաշտպանելով հայ ազգի հաւատքն ու լեզուն. եղաք հայր՝ երթալով մանուկներուն ու երիտասարդներուն, ձեռք երկարելով աղքատներուն ու կարիքաւորներուն. եղաք արի հովիւ՝ պահանջելով հայ ազգի ու եկեղեցւոյ արդար իրաւունքները: Ուստի, կրնանք վկայել, որ Քրիստոսի օրինակին հետեւելով՝ ընծայեցիք Ձեր անձը՝ Ձեզի յանձնուած հօտին», ըսաւ Առաջնորդ Հայր Սուրբը:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ նախ ողջունեց Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդը, ապա կարեւորութեամբ շեշտեց, որ դաւանական տարբերութիւններէն անդին՝ մենք կը պատկանինք մէկ եկեղեցւոյ՝ Քրիստոսի եկեղեցւոյ, եւ տեղայնական տարբերութիւններէն անդին՝ կը պատկանինք մէկ ազգի, ո՛ր որ ալ ըլլանք: Այս միութեան մէջ է քրիստոնէական ու ազգային մեր զօրութեան աղբիւրը: Նորին Ս. Օծութիւնը անդրադառնալով Յունաստանի հայ երեք համայնքներուն միջեւ գոյացած գործակցական սերտ



յարաբերութեանց՝ ըսաւ. «Այստեղ, Յունաստանի մէջ, մեր երեւ համայնֆնէրը ոչ միայն սովորական իմաստով յարաբերութիւն մշակած են իրարու հետ, այլ եղբայրական ջերմ սիրով ու սերտ գործակցութեամբ կ'աշխատին՝ ի խնդիր գաղութի ծաղկման ու հզօրացման: Հետեւաբար, կ'ողջունենք երեւ համայնֆնէրու հոգեւոր առաջնորդներուն կատարած եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութիւնը»:

Հանդիպման ընթացքին, Հայ Կաթողիկէ Առաջնորդը Նորին Սրբութեան ներկայացուց Հայ Կաթողիկէ համայնքին ներկայ իրավիճակը: Նորին Ս. Օծութիւնը, իր կարգին, բարձր գնահատեց Հայր Յովսէփի տարած ծառայութիւնը՝ Յունաստանի հայ գաղութի կեանքէն ներս:

## **ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԱԹԷՆՔԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ**

Երեքշաբթի, 14 Մարտ 2023-ի երեկոյեան, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հրապարակային դասախօսութիւն մը տուաւ Աթէնքի համալսարանին մէջ: Յայտնենք, որ ութ տարիներ առաջ, Նորին Սրբութիւնը դասախօսած էր նոյն համալսարանին մէջ եւ արժանացած՝ պատուոյ դոկտորայի:

Այս անգամ, Նորին Ս. Օծութեան նիւթն էր Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին յոյն եկեղեցւոյ հետ ունեցած յարաբերութիւնը եւ քրիստոսաբանական մօտեցումը: Դասախօսութեան ներկայ էին համալսարանի ընդհանուր նախագահը, աստուածաբանական բաժնի տնօրէնը, փրոֆէսորներ, դոկտորայի ուսանողներ եւ բազմաթիւ հրաւիրեալներ:

Համալսարանի նախագահին ու աստուածաբանական բաժնի տնօրէնին բարի գալուստի խօսքէն ետք, Վեհափառ Հայրապետը իր դասախօսութեան սկիզբը շեշտեց համալսարանին դերը ընկերութեան կեանքէն ներս եւ պատմութեան ընթացքին Յունաստանի կատարած ներդրումը մարդկային մշակոյթի ու քաղաքակրթութեան մէջ: Ապա, անդրադառնալով օրուան դասախօսութեան նիւթին՝ Հայրապետը ըսաւ, որ Ս. Ներսէս Շնորհալի Հայ եկեղեցւոյ բազմատաղանդ հայրապետներէն մէկը եղած է. իբրեւ աստուածաբան, բանաստեղծ եւ երաժիշտ իր առանցքային ներդրումը ունեցած է մեր եկեղեցւոյ ծիսական կեանքին ու աստուածաբանական մտածողութեան մէջ:

Վեհափառ Հայրապետը իր խօսքը կեդրոնացուց Շնորհալի հայրապետին՝ յոյն եկեղեցւոյ հետ ունեցած միջ-եկեղեցական յարաբերութեանց վրայ: Ընդհանուր ակնարկով թուելէ ետք յիշեալ յարաբերութեանց զանազան հանգրուանները, եկեղեցւոյ միութեան հարցով յոյն եկեղեցւոյ պայմանները ու Շնորհալի Հայրապետին պատասխանները, ան ծանրացաւ քրիստոսաբանութեան եւ յատկապէս Քրիստոսի Աստուածային ու մարդկային բնութեանց փոխ-յարաբերութեան վրայ: Վեհափառ Հայրապետը յստակօրէն պարզեց Ս.

Ներսէս Շնորհալիի քրիստոսաբանական մօտեցումը՝ միաժամանակ յայտնելով, որ ան փորձած է որոշ կէտերու մէջ հասարակաց շեշտաւորումներ տեսնել հայ եւ յոյն եկեղեցիներու քրիստոսաբանական հասկացողութեանց մէջ: Այս ծիրէն ներս, Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ ընդգծեց, որ Հայ եկեղեցին monophysite չէ, ինչ որ յոյն եկեղեցին մինչեւ այսօր կը կարծէ, այլ Հայ եկեղեցին miaphysite է, եւ այս երկու ըմբռնումներուն մէջ տարբերութիւնը մեծ է:



Վեհափառ Հայրապետը իր դասախօսութիւնը եզրակացուց երկու մէջբերումներ կատարելով քաղկեդոնական եւ ոչ-քաղկեդոնական եկեղեցիներու միջեւ տեղի ունեցած աստուածաբանական երկխօսութեան յայտարարութեանէն եւ Տիեզերական Պատրիարք Աթենակորասի մէկ վկայութենէն, որոնք տարբեր մօտեցումներով կ'ըսեն, թէ քաղկեդոնական եւ ոչ-քաղկեդոնական եկեղեցիներու մօտեցումներուն միջեւ բովանդակային տարբերութիւններ չկան, այլ կայ բառապաշարի տարբեր գործածութիւն: Ապա, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ երէկ կամ այսօր, այն ինչ որ երկար քննարկումներէ եւ ուսումնասիրութիւններէ ետք կ'եզրակացնենք, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը 12-րդ դարուն պարզ ու յստակ բացատրութիւններով յայտնած է:

Յայտնենք, որ դասախօսութենէն առաջ Վեհափառ Հայրապետը հիւրասիրուեցաւ համալսարանի նախագահին ու պատասխանատուներուն կողմէ. ապա, ան առիթ ունեցաւ զրուցելու դասախօսներուն եւ ուսանողներուն հետ:

**«ԱԶԱՏ ՕՐ»-Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՏ**

*Ինչպես ծանօթ է մեր ընթերցողներուն, 11-16 Մարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հովուապետական այցելութիւն կատարեց Յունաստանի Հայոց Թեմին: «Սփիւռքի Բ. տարուան» առիթով, Վեհափառ հայրապետը ձեռնարկած է հովուապետական այցելութիւններ բոլոր թեմերէն ներս, առաջին կայանը ընտրելով Յունաստանի Հայոց Թեմը: Իր բազմազբաղ յայտագիրի ընթացքին, Նորին Սրբութիւնը առիթը ընծայեց խիստ շահեկան եւ կարեւոր հարցազրոյց մը տալու «Ազատ Օր»-ին: Ան մանրամասն պատասխանեց մեր բոլոր հարցումներուն, ներկայացնելով իր մտածումները, խորհուրդները եւ գնահատումը գաղութներու վերակազմակերպման, հովուապետական այցելութեան արդիւնքներուն եւ յունահայ գաղութի պատկերին առնչութեամբ:*

«Սփիւռքի վերակազմակերպումը այսօր դարձած է անյետաձգելի հրամայական: Երբ Սփիւռքի մասին կը խօսինք, հարկ է նկատի ունենանք, որ Սփիւռքը լայնատարած իրականութիւն մըն է»:

*Վեհափառ Տէր, որո՞նք են գլխաւոր պատճառները, որոնք նշանաւորեցին Սփիւռքի երկրորդ տարուան հռչակումը:*

Նախ կ'ուզեմ իմ հոգեկան գոհունակութիւնս յայտնել, որ անգամ մը եւս կը գտնուիմ Յունաստանի Հայոց Թեմէն ներս. այլ խօսքով՝ մեր ժողովուրդին հետ: Եկեղեցին ժողովուրդն է, եւ մեր նուիրական պարտականութիւնն է ըլլալ մեր ժողովուրդին հետ, ծառայել մեր ժողովուրդին: Վաւերական, հարազատ ու հետեւողական կերպով մեր ժողովուրդին ծառայելու համար, անհրաժեշտ է ժողովուրդը քանչնալ, այնպէս ինչպէս որ է. ժողովուրդը քանչնալ աւելի մօտէն, եւ իրագեկ դառնալ անոր կարիքներուն ու տագնապներուն: Հետեւաբար, ես ուրախ եմ, որ եկայ այստեղ եւ տեսայ Յունաստանի մեր ժողովուրդը, աւելի մօտէն քանչնալ մեր ժողովուրդին սպասումներն ու կարիքները: Այս անգամ իմ հովուապետական այցելութեան հիմնական նպատակը Սփիւռքի վերակազմակերպման ծիրէն ներս, թեմական կազմակերպումն էր:

Ինչո՞ւ Սփիւռքի վերակազմակերպումը: Վերակազմակերպում բառը պէտք է աւելի լայն շրջագիծի մէջ տեսնել: Վերակազմակերպում կը նշանակէ վերակառուցում, վերաշխուժացում, վերակենսաւորում, վերանորոգում եւ փոփոխութիւն անհրաժեշտութեան պարագային: Մեր գաղութները անփոփոխելի կառոյցներ կամ իրականութիւններ չեն: Յատկապէս ներկայ աշխարհին

մէջ մնայուն փոփոխութեան մէջ կ'ապրին: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ մեր կառոյցները, մեր ըմբռնումները, մեր մօտեցումները մնայուն կերպով վերանայման, վերաճնութեան, վերաժելորման ենթարկել:

Սփիւռֆի վերակազմակերպումը այսօր դարձած է անյետաձգելի հրամայական: Երբ Սփիւռֆի մասին կը խօսինք, հարկ է նկատի ունենանք, որ Սփիւռֆը լայնատարած իրականութիւն մըն է: Սփիւռֆը այսօր, բազմազան եւ այլազան երեւոյթներու ամբողջութիւն մըն է. սակայն ոչ ներդաշնակ ամբողջութիւն մը:

Զեմք կրնար ներկայ Սփիւռֆը իր վիճակին մէջ ձգել: Այսօրուան Սփիւռֆը երեկուան Սփիւռֆը չէ. վաղը կրնայ բոլորովին տարբեր ըլլալ: Հետեւաբար, առաջին հերթին Սփիւռֆի վերակազմակերպման մեր նախաձեռնութիւնը արթնութեան կոչ մըն է: Սփիւռֆը քմբիքի մէջ է: Մեզ շրջապատող իրականութիւններու փոփոխութիւնները շատ աւելի առաջ կ'ընթանան, քան՝ Սփիւռֆը: Պէտք է արթնանաք, մեր ներկայ իրավիճակէն դուրս գանք: Զեմք կրնար այլեւս նեղ շրջագիծերու մէջ ապրիլ: Սփիւռֆի մէջ այն գիտակցութիւնը արմատացնել է որ մենք, որպէս կառոյցներ, որպէս գաղութներ ու թեմեր, անյետաձգելի կարիքը ունինք ներկայ աշխարհին մէջ վերանորոգուելու, այլ իստով, ներկայ աշխարհին հետ իստ պահելու: Մեր մտածումները, մօտեցումները, կենցաղակերպը, գործելակերպը պէտք է դառնան համահունչ ներկայ աշխարհի պայմաններուն եւ մարտահրաւերներուն:

*Վեհափառ Տէր, ուրեմն, այն ատեն կրնանք հարցնել, թէ որո՞նք են սպասումները եւ գործնական ակնկալիքները իւրաքանչիւր Թեմի հովուապետական այցելութիւններու Ձեր ծրագրին մէջ:*

Սփիւռֆի վերակազմակերպումին մէջ մեր թեմերը կարելոր տեղ եւ դեր ունին: Իւրաքանչիւր գաղութ իր թեմական կառոյցը ունի: Գաղութին կազմակերպութիւնները բնականաբար մաս կը կազմեն Թեմին, պահելով հանդերձ իրենց անկախութիւնը, ամէն իմաստով: Թեմը պէտք է ըմբռնել աւելի լայն շրջագիծի մէջ: Մեր ժողովուրդն է Թեմը: Ճիշդ այդ իսկ պատճառով, թեմերը Սփիւռֆի վերակազմակերպման մէջ կեդրոնական դեր ունին: Ճիշդ անոր համար, ես ուզեցի մեր թեմերէն սկսիլ: Հոս եւս, անհրաժեշտ է թեմերու վերակառուցումը լայն ծիրի մէջ ըմբռնել, կազմակերպել եւ գործադրել: Օրինակի համար, առաջին հերթին մեր ծիսական կեանքը կարիք ունի վերանորոգման, մեր Հոգեւոր Դասը եւս կարիքը ունի վերակազմաւորման: Ներկայ աշխարհի մարտահրաւերները չենք կրնար անտեսել: Ներկայ ընկերութիւնները բոլորովին տարբեր են, ամէն իմաստով, երիտասարդութիւնը բոլորովին տարբեր մտայնութիւն ունի: Այս իրականութիւնները հարկ է կարելորութեամբ նկատի ունենալ: Ահա, թէ ինչու Թեմի վերակազմակերպումը կը նկատուի առաջնահերթ:

Մեր թեմական կառույցները պետք է երիտասարդանան, մեր կառույցներուն մէջ երիտասարդութիւնը ու տիկիները աւելի գործօն դերակատարութիւն պետք է ստանան: Ես մեր թեմերու իշխանութիւններուն ընդհանուր կերպով ուղղութիւն տուած եմ թեմերու վերակազմակերպման գծով: Այս աշխատանքին մէջ բնականաբար, ընդհանուր յայտարարներ կան, ընդհանուր ուղղութիւն մը կայ, միաժամանակ սակայն թեմէ-թեմ տարբեր է: Միջավայրը, ներքին դրուածքը ու սպասումները տարբեր են: Հետեւաբար անհրաժեշտ է իւրաքանչիւր թեմ իր միջավայրին մէջ ճնշել, արժեւորել եւ համապատասխան ծրագրում մշակել, պահելով հանդերձ մեր թեմական կառույցներուն մէջ հասարակաց յայտարարները, սկզբունքներն ու կառույցները: Օրինակ, բնականաբար, Հայ եկեղեցւոյ ծէսը ամէն տեղ նոյնը պետք է ըլլայ՝ յարգելով հանդերձ տեղական աւանդութիւնները: Թեմերու վերակազմակերպութիւնը կը նկատեմ շատ էական եւ ցիշոյ անոր համար այս տարի պիտի սկսիմ թեմերու այցելութիւն տալ, որպէսզի իւրաքանչիւր թեմ կարենայ սկսիլ ինքզինքը վերակազմակերպելու գործընթացին:

*Վեհափառ Տէր, Ձեր այս տեսակէտները առիթը կու տան հետեւեալ հարցումին: Մենք անշուշտ նկատի ունինք իւրաքանչիւր գաղութի ու Թեմի իւրաքանչիւր թեմերու, ինչպէս նաեւ դուք մատնանշեցիք՝ գործելակերպ, տարբեր զգայնութիւններ: Թեմերու վերակազմակերպումը կարելի՞ է, բացի համագագային խնդիրներէն, որպէս մէկ ամբողջութիւն տեսնել, միասնական մտածողութեան եւ հասարակաց թիրախներու փոխազդեցութեան ստեղծումով:*

Ինչպէս ըսի, երբ Սփիւռքը տեսնեմք իր ընդհանրութեան մէջ, հոն կը տեսնեմք միջավայրային ազդեցութիւններ, տարբերութիւններ, բայց միաժամանակ հասարակաց գիծեր: Անհրաժեշտ է տեղական իւրայատկութիւնները պահել, բայց միաժամանակ հասարակաց գիծերը, որոնք կ'երաշխաւորեն ու կ'ապահովեն մեր ամբողջականութիւնը, մեր միութիւնը պետք է շեշտենք: Այլապէս, թէ՛ գաղութները, թէ՛ թեմերը բոլորովին իրարմէ անջատ կղզիներու կրնան վերածուիլ: Սա վտանգաւոր է: Հարցին միւս երեսը, ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ, մենք այլեւս չենք կրնար ինքնամփոփ ու կղզիացած կերպով ապրիլ: Մենք մաս կը կազմենք այն ընկերութեան, ուր կ'ապրինք եւ այդ ընկերութեան մէջ համալրուած ենք: Մինչեւ հիմա կրցած ենք պահել մեր ինքնութիւնը առաւել կամ նուազ չափով, սակայն համաշխարհայնացումը ներկայ ժամանակներուն այնքան գորեղ է, որուն դիմաց չենք կրնար պատեր ու ցանկապատեր կառուցել: Անոնք շուտով փուլ կու գան, որովհետեւ համաշխարհայնացման հոսանքը գորեղ է: Փաստօրէն, համաշխարհայնացումը թափանցած է ամէն տեղ: Այս կացութեան դիմաց, որպէսզի մեր ինքնութիւնը կարենանք պահել, պետք է հաւասարակշռուած մօտեցում ունենանք: Համաշխարհայնացումը միայն տնտեսական երեւոյթ

չէ, ան մշակոյթ է, մտածելակերպ է, կենցաղակերպ է, գործելակերպ է. չենք կրնար այս բոլորէն հեռու մնալ. պէտք է որոշ չափով համակերպինք. սակայն միաժամանակ մեր ինքնութիւնը պէտք է պահենք: Ինչպէ՞ս կրնանք այս երկուքը իրարու հետ հաշտեցնել այնպիսի ձեւով, որ մէկ կողմէն՝ համաշխարհայնացումին կարելորութիւն տալով, կարենանք նոր սերունդը չհեռացնել մեզմէ, եւ միւս կողմէն՝ մեր ինքնութեան հիմնական արժէքները պահել:

Յունաստանի մէջ, Հայ երիտասարդը պիտի գիտնայ, թէ ինքը յունահայատակ է, յոյն ընկերութեան մաս կը կազմէ, բայց միաժամանակ ինքը՝ Հայ է: Ամերիկայի մէջ կ'ըսեն ամերիկեցի-ամերիկացի, սպանացի-ամերիկացի. ամերիկացի ըլլալը հասարակաց պատկանելիութիւն է, բայց այդ հասարակաց պատկանելիութեան մէջ, իւրաքանչիւր խումբ կամ համայնք իր ինքնութիւնը ունի: Մենք այս մօտեցումը պէտք է որդեգրենք վերակազմակերպման աշխատանքներուն մէջ:

*Վեհափառ Տէր, անցնինք նաեւ մեր իրականութեան եւ այն բոլորին, որ դուք նշմարեցիր Ձեր այցելութեան ընթացքին: Թեմի Երեսփոխանական Ժողովի օրակարգը ո՞ր հիմնական գլուխներուն վրայ ծանրացաւ: Ի՞նչ պէտք է սպասել մեր գաղութային կեանքի վերակազմակերպման շրջագիծէն ներս:*

Անցնող օրերու ընթացքին, առիթը ունեցայ յաջորդական հանդիպումներ ունենալ Ազգ. Վարչութեան ու թեմական կառոյցներուն, Երեսփոխանական Ժողովին եւ այլ մարմիններուն, ինչպէս նաեւ գաղութը ներկայացնող զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, առանձնաբար եւ հաւաքաբար: Նախ կ'ուզեմ խոր գոհունակութիւնս յայտնել, որ այսօր Յունաստանի գաղութը, եւ բնականաբար Թեմը, աւելի կազմակերպուած եւ աւելի աշխոյժ, կենսունակ վիճակի մէջ է: Այսօր հայ կնոջ ու հայ երիտասարդութեան ներկայութիւնը մեր կառոյցներէն ներս աւելի նկատելի է: Անցեալին, հին սերունդը կարելոր դեր ունեցաւ: Բարձր կը գնահատենք հին սերունդին դերը: Անցեալի փորձառութեան լոյսին տակ, ներկան պէտք է վերակազմակերպենք: Ես այս ֆիզը կը տեսնեմ: Ես հիացայ, երբ այդքան գեղեցիկ հայերէնով եւ տրամաբանական մօտեցումով արտայայտութիւններ կատարուեցան ժողովներուն ընթացքին: Սա պատահական երեւոյթ չէ: Սա կը նշանակէ թէ այս գաղութին մէջ հաւաքական ֆիզ մը կայ, լուրջ մօտեցում մը կայ հայ ոգին, հայ լեզուն, հայ արժէքները, հայ մշակոյթը պահելու: Սա կը նշանակէ որ եկեղեցին, սկումբը, կառոյցները, հայ դպրոցը, «Ազատ Օր»-ը՝ («Ազատ Օր»-ն ալ այլապէս դպրոց մըն է), մեր բոլոր կառոյցները կարելոր դեր ունեցած են եւ այսօր ունին, այդ բոլորին պտուղն է այսօր՝ ինչ որ ես կը տեսնեմ: Բայց եղածով պէտք է բաւարարուինք: Պէտք է լաւագոյնին ձգտինք: Երէկուան, այսօրուան եւ վաղուան միջոցը շատ կարն է. Որովհետեւ կեանքը այդքան արագընթաց կը յառաջանայ, որուն հետ անհրաժեշտ է քայլ պահել:

Այս Թեմը, ինչպես միւս թեմերը, կարիքը ունի վերակազմակերպման եւ այդ վերակազմակերպումը պետք է ծրագրուած կերպով կատարել, ոչ պարագայական մօտեցումով: Իւրաքանչիւր կառոյց ինքզինք վերակազմակերպելու ու աշխուժացնելու նիգը պետք է կատարել ամէն իմաստով՝ օրակարգէն սկսեալ, մինչեւ գործելակերպ, մինչեւ մտածելակերպ: Սա էական է ու հրամայական:

Հիմա որ Թեմի մասին կը խօսինք, անհրաժեշտ կը նկատեմ շեշտել, թէ գաղութին մէջ եկեղեցին կարելոք դեր ունի մեր կեանքի մայր էջին վրայ: Եկեղեցին մեր կեանքէն հեռու շէնք մը չէ. ան մեր համայնքն է: Եկեղեցին ապրող, գործող, ծառայող ներկայութիւն է մեր կեանքին մէջ: Եկեղեցւոյ հեղինակութիւնը ծառայութեան մէջն է: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ եկեղեցին իր շուրջ համախմբէ մեր կառոյցները, եւ մեր կառոյցները իրենք պետք է գործօն մասնակցութիւն բերեն եկեղեցւոյ հաւաքական կեանքին ու ծառայութեան: Դարձեալ կ'ուզեմ յայտնել, որ թեմերուն դրկած իմ ընդհանուր ուղեգիծիս մէջ, ուր պարգած եմ, թէ թեմական կազմակերպումը ի՞նչ ընթացք պետք է ունենայ եւ ո՞ր մարզերը պետք է դառնան առաջնահերթ: Օրինակ՝ եկեղեցւոյ դերը քրիստոնէական դաստիարակութեան մէջ շատ կարելոք է: Եկեղեցին նաեւ դեր ունի մարդակերտումի ու հայակերտումի աշխատանքներուն մէջ: Հայ դպրոցը եկեղեցիէն հեռու չէ. եկեղեցին եւս հայ դպրոցէն հեռու չէ, պետք է ըլլայ: Այս փոխադարձ կապերը եւ հաւաքական աշխատանքները պետք է յստակօրէն քննուին եւ նշուին: Կը կրկնեմ. մենք տարբեր աշխարհի մէջ կ'ապրինք, տարբեր իրականութիւններով շրջապատուած ենք, չենք կրնար ներկայ իրողութիւնը անտեսել: Մեր մօտեցումը պետք է ըլլայ գործնապաշտ եւ իրապաշտ ու համահունչ՝ ներկայ պայմաններուն ու մարտահրաւերներուն:

*Վեհափառ Տէր, ուրեմն մասնաւորելով ձեր քաղած պատկերը մեր գաղութի իրականութենէն՝ գիտենք, որ առիթը ունեցաք անգամ եւս իրազեկ դառնալու մեր գաղութի թէ՛ ազգային, թէ՛ հոգեւոր, թէ՛ կրթական ու թէ՛ նաեւ հասարակական կեանքի բազմապիսի գործունէութեան մասին: Կ'ուզէի քիչ մը աւելի մանրամասնել, աւելի ընդհանրացնել ձեր տպաւորութիւնները եւ ձեր քաղած պատկերը այս ուղղութեամբ:*

Գաղութէն ներս կը գործեն բազմաթիւ կառոյցներ, ինչպէս մեր բոլոր գաղութներէն ներս: Երէկ գիշեր, երբ հանդիպեցայ անոնց ներկայացուցիչներուն հետ, իրենց յիշեցուցի թէ դուք իրարու կ'ըսէք բոլոր կազմակերպութիւններ. բոլոր կազմակերպութիւնը ըլլալ կը նշանակէ միասին գործակցիլ եւ այդ գործակցութիւնը որքան սերտ ու ներդաշնակ ըլլայ, այնքան կառոյցներուն գործունէութիւնը կը դառնայ աւելի կազմակերպ եւ ազդու եւ կառոյցներէն անդին՝ մեր գաղութին կամ Թեմին հաւաքական կեանքը: Որեւէ կառոյցի գոյութեան պատճառը ծառայութիւնն է: Բնականաբար մեր կառոյցներ

ըր տարբեր կանոնագրութիւն, տարբեր օրակարգեր, տարբեր առաջնահերթութիւններ ունին. բայց, վերջ ի վերջոյ տեղ մը կը միանան իրարու: Միացման կէտը մեր ընդհանրական կեանքն է, թեմական ու գաղութային կեանքը: Ես բոլորին մօտ տեսայ աշխուժութիւն ու գաղութին ծառայելու պատրաստակամութիւն. միաժամանակ բոլորին մօտ տեսայ գիտակցութիւն, որ այլեւս մեր կառոյցները պէտք է վերակազմակերպուին ու վերակենսաւորուին ներկայ մարտահրաւերներուն ընդառաջ: Հետեւաբար, իմ առաջարկս պիտի ըլլայ, որ թեմ, կառոյցներ, մարմիններ, կազմակերպութիւններ սերտօրէն գործակցին, այդ գործակցութիւնը դառնայ աւելի ներդաշնակ եւ հետեւողական: Սա հրամայական անհրաժեշտութիւն է բոլոր թեմերէն ներս:

*Ձեր հովուապետական այցելութիւնը նաեւ առիթը եղաւ տեսակցութիւններ ունենալու հելլէն պետական բարձր ղեկավարութեան, ինչպէս նաեւ յոյն Ուղղափառ եկեղեցւոյ Պետին հետ: Որո՞նք են ձեր տպաւորութիւնները՝ յատկապէս միջ-եկեղեցական յարաբերութիւններու երկխօսութեան ծիրէն ներս, ինչպէ՞ս կարելի է տեսնել կապերու զարգացումը:*

Ինչպէս գիտէք, ամէն անգամ, որ այցելութիւն տամ Յունաստան, անպայման կը հանդիպիմ Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ Արքեպիսկոպոսին եւ մօտէն ծանօթ եմ իրեն: Այս հանդիպումները փրոթոֆոլային այցելութիւններ չեն եղած, այլ՝ իրապէս եղբայրական ու բարեկամական. մեր մօտ մի՛շտ միասին գործակցելու ճիգը կայ: Այս անգամ եւս, եղբայրական ընդունելութեան արժանացայ: Արքեպիսկոպոսը, հակառակ իր յառաջացեալ տարիքին, ջերմ կերպով ընդունեց զիս, եւ միասին խորհրդակցութիւն ունեցանք մեր եկեղեցիներուն, մեր ժողովուրդներուն, մանաւանդ միջ-եկեղեցական կեանքը յուզող հարցերու շուրջ: Այս առիթով նաեւ Արքեպիսկոպոսը ի պատիւ ինձի պաշտօնական ճաշկերոյթ մը սարքեց: Միջ-եկեղեցական հանդիպումներէն անդին մեր գործակցութիւնը յոյն եկեղեցւոյ հետ կը նկատեմ շատ կարեւոր: Մեր եկեղեցիներու եւ ժողովուրդներու բարեկամութիւնը պատմութեան մէջ իտր արմատներ ունի: Այսօր եւս հաւաքական արժեքներ ու աւանդութիւններ կան, հասարակաց դատ մը ունինք: Հետեւաբար, այս բոլորին շուրջ մենք պէտք է համախմբուինք եւ մեր գործակցութիւնը շարունակենք յոյն եկեղեցւոյ հետ: Այս ծիրէն ներս, ես կ'ուզեմ ուրախութեամբ ու բարձր գնահատանքով յայտնել, որ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գեղամ Սրբազան Հայրը, սերտ կապեր հաստատած է յոյն եկեղեցւոյ հետ:

Ինչ կը վերաբերի վարչապետին հետ մեր ունեցած հանդիպումին, նախապէս հանդիպած էի իրեն, տարիներ առաջ երբ նախարար էր: Վարչապետը այսօր շուրջ ժամ մը ջերմօրէն ընդունեց զիս, եւ հակառակ իր բազմազբաղ վիճակին ու մանաւանդ ներկայ տագնապալից պայմաններուն, եւ իր փափաքին ընդառաջելով, բարեկամական մթնոլորտի մէջ առանձին հանդիպում մը



ունեցանք, որոնք ընթացքին լայնօրեն անդրադարձանք չորս մարզերու.- Յունաստանի Հայ գաղութը, Լիբանանը, յատկապես նախագահական ընտրութիւնը, Յունաստանի դերը ընդհանրապէս Միջին Արեւելքէն ներս, եւ Հայաստան ու Արցախ: Շինիչ հանդիպում մըն էր: Այս առիթով կ'ուզեմ յայտնել, թէ վարչապետը յատուկ յարգանքով խօսեցաւ Յունաստանի մեր գաղութին մասին: Ես հարց տուի իրեն, թէ արդեօ՞ք որեւէ ըսելիք կամ դժգոհութիւն ունի՝ մեր գաղութին առնչուած: Ընդհակառակը, ըսաւ, ու անկողնէ՛ք է իրենք ինձմէ որեւէ դժգոհութիւն ունին, իրենք ինձի պէտք է ըսեն: Հետեւաբար, մեր գործակցութիւնը թէ՛ կրօնական եւ թէ՛ պետական մակարդակներուն վրայ պէտք է շարունակուի: Յունաստանը Եւրոպայի մէջ կարեւոր երկիր մըն է. կարեւոր դերակատարութիւն ունի: Յունաստանը իր հաւասարակշռուած քաղաքականութեամբ, ինչպէս ըսի վարչապետին, նաեւ արարական, իսլամական աշխարհին մէջ կարեւոր դեր ունի. եւ առաջարկեցի, որ Յունաստանի դերակատարութիւնը թէ՛ Եւրոպայի, թէ՛ Միջին Արեւելքի մէջ, ե՛ւ իսլամական աշխարհէն ներս անլի կազմակերպ ու գործօն ըլլայ:

Ինչպէս գիտե՛ք, երէկ համալսարանին մէջ դասախօսութիւն մը տուի: Ներկայ փրոֆէսորներէն իմացայ, որ դրական արձագանգ գտած է դասախօսութիւնս: Այս անգամ ուզեցի կեդրոնանալ մէկ կէտի վրայ, որ հետեւեալն է. պատմականօրէն եւ մինչեւ այսօր, յոյն եկեղեցին, ընդհանրապէս օրթոտոքս աշխարհը մեզ կը նկատէ միաբնակ (մոնոֆիզիթ). աստուածաբանական հիմնաւորումներով շեշտեցի, թէ մենք մոնոֆիզիթ չենք, այլ միաֆիզիթ, տարբերութիւն կայ, մոնոֆիզիթ եւ միաֆիզիթ մօտեցումներուն միջեւ: Հայ եկեղեցին միաֆիզիթ է այն իմաստով, որ երկու բնութիւնները միացեալ կ'ընդունին եւ ոչ թէ մէկ բնութիւն: Արդ, կրօնական, ակադեմական, պետական երեք տարածքները բով-բովի բերելով կ'ուզեմ հաստատել, թէ յիշեալ հանդիպումները մեծապէս դրական էին:

*Վեհափառ Տէր, վաղը կը մեկնիք, սակայն կը մնայ Ձեր այցելութեան ծանր եւ ուրախ առիթն ու արձագանգը: Մեկնելէ առաջ, ի՞նչ է ձեր Հայրական պատգամն ու թելադրանքը՝ յունահայ գաղութի ժողովուրդին:*

Այո՛, վաղը կը վերադառնամ Անթիլիասի Մայրավանք, ինձի հետ տանելով Յունաստանի Հայ գաղութը՝ իր մտահոգութիւններով, մարտահրաւերներով եւ մանաւանդ իր հաւաքական հաւատով եւ յանձնառութեամբ: Իւրաքանչիւր գաղութ Սփիւռքի մէջ իր իւրայատկութիւնը ունի, իր ըսելիքը եւ ընելիքը ունի: Յունաստանի հայութիւնը պատմական գաղութ է, ցիշոյ է, վերջին տարիներուն Հայաստանէն հայեր հաստատուեցան եւ նոր դիմագիծ տրւին գաղութին, սակայն չմոռնանք որ Ցեղասպանութենէն առաջ հայկական գաղութ եղած է հոս: Հակառակ ահաւոր դժուարութիւններու, Յունաստանի հայութիւնը ինքզինք պահած է եւ մեր հոգեւոր, բարոյական, ազգային, մշա-

կուրսային արժեքներով ու ձգտումներով կազմաւորուած է եւ սերունդներ կազմաւորած: Այս գաղութը կարելոր դեր ունի կատարելիք առաջին հերթին Հայաստանի ու Արցախի հզօրացման աշխատանքներուն մէջ: Այսօր Արցախը գոյութեան կան տագնապի մէջ է: Եւրոպայի մաս կը կազմէ այս գաղութը եւ այս ուղղութեամբ կարելոր դեր ունի կատարելիք: Երբ վարչապետին խօսեցայ այս մասին, ան ըսաւ թէ յառաջիկայ օրերուն Եւրոպայի Խորհուրդի համաժողովին պիտի արժարժէ Արցախի հարցը: Հայաստանի հզօրացման մէջ եւս Յունաստանի հայութեան ներդրումը եղած է կարելոր: Անհրաժեշտ է նոյն ոգիով շարունակել: Հայ Դատի աշխատանքներուն մէջ, յատկապէս Եւրոպայի ծիրէն ներս, գաղութը նշանակալից նպաստ ունեցած է եւ ընդհանրապէս Սփիւռքի հայութեան կրթական, մշակութային ազգային կեանքին մէջ Յունաստանի հայութիւնը երբեք լուսանցքի վրայ չէ եղած: Այս մարտահրաւերին դիմաց, գաղութը կոչուած է ինքզինք վերակազմակերպելու այնպիսի ձեւով, որ իր դերակատարութիւնը ըլլայ աւելի զօրեղ, աւելի ազդու: Արդ, կոչ կ'ուղղեմ Յունաստանի մեր սիրելի զաւակներուն, որ ա'յս գիտակցութեամբ մասնակից դառնան մեր թեմական ու գաղութային կառոյցներու կեանքին: Անոնք մեր կառոյցներն են, այդ կառոյցները մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցութեամբ, կ'ուզեմ բառը շեշտել, ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ կ'արժեւորուին եւ իրենց գործունէութեամբ անոնք մեր կեանքի ամբողջականութիւնը կը պահեն, մեր կեանքին կենսունակութիւն կու տան: Սակայն, կը կրկնեմ, մեր բոլոր կառոյցները իրենց օրակարգերով, մտածելակերպերով ու գործելակերպերով կարիքը ունին վերանորոգման: Այս աշխատանքին հարկ է լծուի գաղութը, եւ՝ շուտով:

*Վեհափառ Տէր, ջերմ շնորհակալութիւն «Ազատ Օր»ին կողմէ, որ այս առիթը ընծայեցիք մեզի: Բարի ճանապարհ կը մաղթենք Ձեզի միշտ ցտեսութեան սպասումով:*

Այս առիթով կ'ուզեմ «Ազատ Օր»-ին բարձր գնահատանքս յայտնել. «Ազատ Օր»-ը ինչպէս որեւէ հայ թերթ, մեզի համար սովորական օրաթերթ չէ, այլ՝ առաքելութիւն է, ազգային, մշակութային, կրթական առաքելութիւն: Հայ թերթը հայակերտումի ու մարդակերտումի մէջ կարելոր դեր ունի: «Ազատ Օր»-ը այս գաղութէն ներս, կարելոր դեր ունեցած է եւ ես վստահ եմ, որ նոյն դերը, վերանորոգ գ աշխուժութեամբ եւ հաւատով պիտի շարունակէ: Յաջողութիւն ձեզի:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ**

**ԺԱՄԱՆՈՒՄ**

*Յունաստանի այցելութեան աւարտին, Ուրբաթ, 17 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հովուապետական այցելութեամբ ժամանեց Կիպրոս:*

*Նորին Ա. Օծութինը դիմաւորելու եկած էին Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան, Կիպրոսի հայութեան պետական ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտէսեան, Կիպրոսի մօտ Լիբանանի Դեսպան՝ Գլոտ Ալ-Հաժալ, Երեսփոխանական ժողովի Ատենապետ՝ Վահան Այնէճեան եւ քահանայ հայրեր:*

*Ընդունելութենէն ետք, Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը մեկնեցան Ազգային Առաջնորդարան, ուր Հայրապետը ընդունելութիւն ստացաւ ազգայիններու կողմէ, որմէ ետք ուղղուեցաւ եկեղեցի, ուր կատարուեցաւ կանոնական աղօթք: Արարողութենէն ետք, Առաջնորդարանի դահլիճին մէջ, հանդիպում մը տեղի ունեցաւ Թեմի Երեսփոխանական ժողովին եւ Ազգային վարչութեան ու Հայրապետին միջեւ:*





Սրբազան Հայրը նախ ներկայացուց Թեմի Ազգային վարչութեան եւ Երեսփոխանական ժողովի անդամները, ապա իր բարի գալուստի խօսքին մէջ անդրադարձաւ Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան հիմնական նպատակը հանդիսացող Թեմերու վերակազմակերպման ու վերաշխուժացման: Սրբազան Հայրը յատուկ կերպով շեշտեց, որ Նորին Սրբութեան այցելութեան առիթով Կիպրոսի Հայոց Թեմէն ներս կը տիրէ խանդավառ մթնոլորտ:

Վեհափառ Հայրապետը, իր կարգին, նախ իր ուրախութիւնը յայտնեց Կիպրոսի Հայոց Թեմէն ներս գտնուելուն առիթով՝ ընդգծելով, որ հովուապետական այցելութեան հիմնական նպատակը վերակազմակերպման աշխատանքները աշխուժացնել եւ այս գծով մշակուող ծրագիրներուն մօտէն ծանօթանալ է: Ան իր խօսքին մէջ յատուկ կերպով շեշտեց Թեմերու վերակազմակերպման անյետաձգելի հրամայականը: «Մեզի համար թեմերը ինքնակեդրոն ու ինքնանպատակ իրականութիւններ չեն: Ճիշդ է, իւրաքանչիւր թեմ ունի իր իւրայատուկ միջավայրն ու առաջնահերթութիւնները, սակայն այդ բոլորը միացնող հասարակ յայտարարներ կան: Հոս է, որ մենք պէտք է առաւելագոյն չափով աշխատանք տանիմք՝ թէ ի՛նչ ձեւով կրնանք կամուրջներ հաստատել, յարաբերութիւններ մշակել, ներդաշնակութիւն ստեղծել համայնքային կառոյցներուն միջեւ եւ համագործակցութիւն յառաջացնել թեմերու միջեւ», ըսաւ Հայրապետը: Ապա, ան յատուկ կերպով շեշտեց եկեղեցին ժողովուրդին տանելու՝ ծիսական կեանքը վերանորոգելով եւ զայն երիտասարդութեան գրաւիչ դարձնելով: Աւարտին, Նորին Սրբութիւնը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Երեկոյեան, Նորին Սրբութիւնը մտերմիկ ընթրիք մը ունեցաւ Ազգային վարչութեան եւ Երեսփոխանական ժողովի անդամներուն հետ՝ իր կողքին ունենալով Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Սրբազան Հայրը եւ Կիպրոսի հայութեան պետական ներկայացուցիչը:

Յայտնենք, որ Կիպրոս այցելութեան՝ Հայրապետին կ'ընկերանան Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեան եւ միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց բաժանմունքի Միջին Արեւելքի բաժնի Վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԷՋ**

Շաբաթ, 18 Մարտին, Վեհափառ Հայրապետը, Կիպրոսի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, յաջորդաբար ընդունեց այցելութիւնը Շուէտի կառավարութեան հովանաւորութիւնը վայելող Religious Track գրասենեակի պատասխանատու՝ Սալբի Էսքիճեանի, Կիպրոսի Պապական նուիրակ՝ Ճորճ Եպիսկոպոսի եւ լատին եկեղեցւոյ պատրիարքական փոխանորդ Պրունօ Եպիսկոպոս Վարիանոյի:

Հանդիպումներուն ներկայ էին Թեմի Կաթողիկոսական Փոխանորդը, Քաղաքական ժողովի համա-ատենապետը եւ միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց բաժանմունքի Միջին Արեւելքի բաժնի Վարիչը:





Սալբի էսքիճեան լայն շրջագիծի մէջ ներկայացուց Religious Track գրասենեակի գործունէութիւնը Կիպրոսի մէջ՝ շեշտելով գրասենեակին բերած նպաստը Կիպրոսի խաղաղ ու համերաշխ գոյակցութեան: Ան ըսաւ, որ գրասենեակին հետապնդած նպատակներն են ամբողջ Կիպրոսի մէջ կրօնական պատասխանատուներու միջեւ երկխօսութիւն ստեղծել, երկրին մէջ տեղի ունեցող խաղաղ բանակցութիւններուն նպաստել եւ կրօնական ազատութիւն հաստատել՝ ազատ ու անվտանգ մուտք ապահովելով պաշտամունքի բոլոր վայրերը:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Religious Track գրասենեակին կատարած աշխատանքները ու շեշտեց երկխօսութեան կարեւորութիւնը՝ Կիպրոսի հարցին լուծման գծով: Նորին Սրբութիւնը ընդգծեց, թէ կրօնական վայրերու ապահովութիւնն ու պաշտպանութիւնը անհրաժեշտ հրամայական է, որովհետեւ անոնց պաշտպանութեամբ կարելի է հաւատքի ազատութիւնը ամրապնդել Կիպրոսի հասարակութեան մէջ:

Ապա, նորին Ս. Օծութեան այցելեց Պապական նուիրակ՝ Ճորճ Եպիսկոպոսը: Այցելութիւնը առիթ մը հանդիսացաւ լայնօրէն անդրադարձ կատարելու ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ու միջ-եկեղեցական գործակցութեան եւ մասնաւորաբար Վատիկանի հետ մշակուած սերտ յարաբերութեան: Հանդիպման աւարտին, Վեհափառ Հայրապետը իր հեղինակած The Armenian Church գիրքէն նուիրեց Պապական նուիրակին:





Նորին Սրբութիւնը նաեւ ընդունեց Կիպրոսի մէջ լատին եկեղեցւոյ Պատրիարքական Փոխանորդ՝ Պրունօ Եպիսկոպոս Վարիանօն: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ հայ եւ լատին եկեղեցիներուն միջեւ գոյութիւն ունեցող դարաւոր յարաբերութեան եւ միջ-եկեղեցական գործակցութիւնը առաւել եւս աշխուժացնելու կարելիութեան: Աւարտին, Վեհափառ Հայրապետը իր հեղինակած The Armenian Church գիրքէն նուիրեց Պատրիարքական Փոխանորդին:

Կէսօրին, ի պատիւ Վեհափառ Հայրապետին սարքուեցաւ ճաշկերոյթ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ Կ՝ՈՒՆԵՆԱՅ  
ԿԻՊՐԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ  
ԵՒ Կ՝ՕՐՀՆԷՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ**

Շաբաթ երեկոյեան, Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Իւթիւճեան» սրահին մէջ Նորին Սրբութիւնը հանդիպում ունեցաւ կիպրահայ կազմակերպութեանց ներկայացուցիչներուն հետ:

Հանդիպման ներկայ էին Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդը, պետական ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտէսեան, թեմական մարմնի ներկայացուցիչը, Ազգային Վարչութիւնը, Հայաստանի Հանրապետութեան պատուոյ Հիւպատոսը, Ս.Դ.Հ.Կ.ի, Հ.Յ.Դ.ի, Ռ.Ա.Կ.ի, Հ.Մ.Ը.Մ.ի, Հ.Ե.Մ.ի, Հ.Բ.Ը.Մ.ի, Հ.Օ.Մ.ի, Կիպրոսի Համազգայինի, Լաոնաքայի հայկական մարմինի,



Պաֆոսի հայերու վարչութեան ներկայացուցիչները, «Նարեկ» վարժարաններու հոգաբարձութիւնը, տնօրէնուհին եւ ուսուցչական կազմը, Ազգային Առաջնորդարանի քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբը, Կիպրոսի հոգեւոր կանանց ատենապետուհին եւ կիպրահայ առցանց գործող մամուլի պատասխանատուները:

Սրբազան հայրը Հայրապետին ներկայացուց Կիպրոսի հայ համայնքը ղեկավարող մարմինները եւ ընդգծեց համերաշխօրէն կատարուած աշխատանքին արդիւնաբերութիւնը՝ նշելով անցնող տարիներուն կատարուած աշխատանքները:

Նորին Սրբութիւնը ողջունելով ներկաները՝ ըսաւ, որ երբ գաղութի մը բոլոր կառույցները, մտածողութիւնները, տարբերութիւնները, մէկ ամբողջութեան ծիրէն ներս, քով-քովի կու գան ու ներդաշնակ գործունէութիւն կը ծաւալեն՝ կազմակերպուած գաղութի մը խօսուն պատկերը կ'ուրուագծուի մեր դիմաց: Միակողմանի, միատեսակ ու միապաղաղ մտածողութենէ պէտք է դուրս գանք եւ միախմբուինք հիմնական արժէքներու, մտահոգութիւններու եւ նպատակներու շուրջ: Շարունակելով իր խօսքը՝ ան շեշտեց միասնական գործունէութիւն ծաւալելու անհրաժեշտութիւնը: Հայրապետը ըսաւ. «Հայութիւնը ֆակտագրական ժամանակներէ կ'անցնի: Հետեւաբար, այսօր, առաւել քան երբեք, կարիքը ունինք միասնաբար աշխատելու»: Ան կարեւորութեամբ շեշտեց, որ Սփիւռքի վերակազմակերպումը մեծապէս պիտի նպաստէ Հայաստանի ու Արցախի հզօրացման: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիութիւնը սոսկ լողունգ ըլլալէ անդին, պէտք է մեր մտածողութեան ուղեցոյց դառնայ: Կեդրոնանալով Սփիւռքի վերակազմակերպման վրայ, ան ըսաւ, որ Սփիւռքը իր ներկայ վիճակէն դուրս պէտք է բերել: Սփիւռքը տարտղնուած է. ան կարիքը ունի համախմբուելու, կարիքը ունի հաւաքական արժէքներու, կեցուածքներու եւ ուղղութիւններու ներդաշնակման: Մեր զանազանութիւնները պահելով հանդերձ պէտք է ներդաշնակենք մեր աշխատանքները: Հետեւաբար, Սփիւռքի վերակազմակերպումը մեզի համար դարձած է անյետաձգելի հրամայական:



Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը կիպրահայ կազմակերպութեանց հետ ունեցած իր հանդիպումէն առաջ ունկնդրեց Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մանկապատանեկան երգչախումբին կատարողութիւնը: Շուրջ 70 մանուկներէ եւ պատանիներէ բաղկացած երգչախումբը, Նորին Սրբութեան հովուապետական այցելութեան առիթով, հրամցուց հայ հոգեւոր եւ ազգային երգերէն փունջ մը: Հանդիսութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը իր հայրական օրհնութիւնը փոխանցեց մանկապատանեկան երգչախումբի անդամներուն:

Նոյն օրը գիշերը, Վարդգէս եւ Մակի Մահտէսեան ամուր իրենց բնակարանին մէջ, ի պատիւ Վեհափառ Հայրապետին, ընթրիք մը սարքեցին, որուն ներկայ էին Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան, Կիպրոսի մօտ Լիբանանի Դեսպան՝ Գլոտ Ալ-Հաճալ, Տիար Գրիգոր Մահտէրէճեան, Կիպրոսի Հայոց Թեմի Երեսփոխանական ժողովի Ատենապետ՝ Վահան Այնէճեան եւ տիկինը, Կիպրոսի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան Ատենապետ՝ Սեւակ Կիրիւնլեանն ու տիկինը եւ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը:

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Կիրակի, 19 Մարտ 2023-ի առաւօտեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հանդիսապետեց Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. եւ Անմահ Պատարագին եւ իր Հայրապետական Պատգամը փոխանցեց կիպրահայութեան: Վեհափառ Հայրապետը եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ Ազգային մարմիններու ներկայացուցիչներուն, քահանայ հօր, դպրաց դասուն եւ հաւատացեալներու հոծ բազմութեան կողմէ, որոնք եկած էին լսելու Հայրապետին պատգամը եւ ստանալու անոր հայրական օրհնութիւնը:

Կաթողիկոսական Փոխանորդ Սրբազան Հայրը բարի գալուստի խօսք արտասանեց ու շեշտեց Նորին Սրբութեան հովուապետական այցելութեան կեդրոնական նպատակը եղող Սփիւռքի վերակազմակերպման, վերաշխուժացման ու վերանորոգման անհրաժեշտութիւնը: Ան ընդգծելով Վեհափառ Հայրապետին հոշակագիրներուն կարեւորութիւնը, ըսաւ, որ հայ ազգը իր հայրապետներուն գծած ուղիէն քալելով է, որ պիտի կարողանայ հզօրանալ իր ազգային կեանքին մէջ ու ամրապնդուիլ իր հոգեւոր գնացքի ընթացքին: Ապա, ան Հայրապետը հրաւիրեց փոխանցելու իր հայրական ու հայրապետական պատգամը:

Նորին Ս. Օծութիւնը իր պատգամին սկիզբը գնահատանքով ողջունեց Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Սրբազան Հօր, Հոգեւոր դասուն, Ազգային Վարչութեան եւ Կիպրոսի հայ կեանքէն ներս գործող բոլոր կազմակերպութիւններուն խանդավառ ու ներդաշնակ ծառայութիւնը:



Պատգամին բնաբան ընտրելով Յովհաննու Աւետարանին հետեւեալ տողերը. «Ես եկայ՝ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան» (Յճ 10.10), Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ քրիստոնէական հասկացողութեամբ մարդուն կեանքը Աստուծոյ ներկայութեամբ կ'արժեւորուի ու կը հարստանայ: Կեանքը մեր դիմաց կը բանայ զանազան ճամբաներ, սակայն քրիստոնէայ անհատին կոչումն է ընտրել ճշմարիտ ու վաւերական կեանքի ճամբան՝ Քրիստոս-Կեանք ճամբան: Շարունակելով՝ ան յստակացուց, որ կեանքը պէտք չէ հասկնալ իր նեղ պարունակին մէջ. անիկա հոմանիշ է Աստուծոյ ներկայութեան: Աստուած ոչ միայն ստեղծիչն է կեանքին, այլեւ անոր ներկայութիւնն է: Կեանքին իմաստ ու նպատակ տուողը Աստուած ինքն է: Երբ Աստուած բացակայ է մեր կեանքէն՝ հոն կը տիրէ խաւարը, այլ խօսքով՝ շարիքը: Մեծ պահքի իւրաքանչիւր Կիրակին ունի իւրայատուկ անուանում: Պատահականօրէն շէն դրուած այդ անունները, այլ՝ հոգեւոր վերանորոգման առաջնորդող պատգամներ կ'ընդգրկեն անոնք: Անցնող շաբաթներուն տեսանք, թէ ինչպէ՛ս մարդ արարածը մեղանշելով հեռացաւ Աստուծմէ, այլ խօսքով ընտրեց խաւարը եւ շարը: Ահաւասիկ այս կացութեան դիմաց կեանքի Աղբիւրը՝ Աստուած, իր Միածին Որդին ղրկեց աշխարհ, որպէսզի մահուան ճամբան բռնած մարդը առաջնորդէ ճշմարիտ ու յաւիտենական կեանքին: Աւետարանները յստակ կերպով կը պարզեն, թէ Քրիստոս Իր կեանքով ու հրաշքներով ցոյց տուաւ մարդուն կեանքի ճամբան: Կեանքի ճամբան լոյսի ու փրկութեան ճամբան է: Հետեւաբար, Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած անձը պէտք է քալէ այդ ճամբէն, շեշտեց Հայրապետը:

Ս. Պատարագէն ետք տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն եւ աջահամբոյր, որուն յաջորդեց պաշտօնական ճաշկերոյթ՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Ճաշկերոյթին ներկայ էին Կիպրոսի հայոց թեմական ու համայնքային պատասխանատու մարմինները:

Նորին Արքեպիսկոսը ճաշկերոյթի իր փակման խօսքին մէջ երկու ընդգծումներ կատարեց՝ ա) համախումբ ապրելու հրամայականը՝ մեր ազգի ընդհանրական արժէքներով շաղախուած բ) մեր կեանքը մնայուն պայքարի վերածելու անհրաժեշտութիւնը՝ ի խնդիր համահայկական իտէալներու իրականացման:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ'ԸՆԴՈՒՆԻ ՆԻԿՈՍԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏՆՕՐԷՆ ՈՒ ԴԱՍԱԽՕՍՆԵՐԸ**

Նոյն օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Նիկոսիոյ համալսարանի աստուածաբանական ու փիլիսոփայական բաժանմունքի Տնօրէն Փրոֆ. Քրիսթոս Էքոնոմու, ընկերակցութեամբ համալսարանի դասախօսներուն: Տնօրէնը Վեհափառ Հայրապետին ներկայացուց համալսարանի դասընթացքները ու տեղեկացուց, որ Կիպրոսի համալսարանը կը գործակցի Թեսաղոնիկէի համալսարանին հետ:

Յայտնենք, որ Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդը նըշեալ համալսարանին մէջ իր բարձրագոյն ուսումը կը կատարէ՝ ստանալու համար աստուածաբանութեան մագիստրոսական վկայականը:



Հանդիպումը առիթ հանդիսացավ գրուցելու աստուածաբանական հարցերու շուրջ: Նորին Սրբութիւնը իր տեսակէտները պարզեց՝ յատկապէս ուղղափառ աստուածաբանութեան իւրայատկութիւններուն գծով, ու կարեւորութեամբ շեշտեց ուղղափառ մտածողութիւնը հայրաբանութեան շրջագծէն դուրս բերելու եւ ներկայ ժամանակներու իրականութիւններուն ներդաշնակելու անհրաժեշտութիւնը: Ան նաեւ անդրադարձաւ համալսարանէն ներս տուեալ նիւթ մը զանազան մօտեցումներով ներկայացնելու կարեւորութիւնը, որպէսզի ուսանողներ առիթը ունենան աւելի լայն հորիզոնի վրայ տեսնելու քննարկուող նիւթերը:

### ԿԻՊՐՈՍԻ ՄԱՐՈՆԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակի երեկոյեան, Վեհափառ Հայրապետը Կիպրոսի Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց Կիպրոսի Մարոնիթ համայնքի Առաջնորդ՝ Սալիմ Եպիսկոպոս Սֆէյրը:

Սֆէյր Եպիսկոպոս պարզեց Կիպրոսի մէջ Մարոնիթ համայնքին կացութիւնը ու յատկապէս շեշտեց մարոնիթ եւ հայ եկեղեցւոյ միջեւ գոյութիւն ունեցող սերտ ու եղբայրական յարաբերութիւնը: Նորին Սրբութիւնը, իր կարգին, բարձր գնահատանքով ողջունեց Կիպրոսի մէջ մարոնիթ եւ հայ եկեղեցւոյ միջեւ մշակուած սերտ յարաբերութիւնը ու կարեւորութեամբ շեշտեց յիշեալ եկեղեցիներուն միջեւ մշակուած եղբայրական յարաբերութեան ամրապնդումն ու անոր զարգացման անհրաժեշտութիւնը:



Ապա, Նորին Ս. Օծութինը լայն շրջագծի մէջ խօսեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան գլխաւոր երեսներուն մասին: Ան անդրադարձաւ Լիբանանի ներկայ ընկերատնտեսական կացութեան եւ հայ համայնքին որդեգրած դրական ու հաւասարակշռուած դերակատարութեան՝ իբրեւ Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկը: Հանդիպման ընթացքին նաեւ արծարծուեցաւ յառաջիկայ նախագահական ընտրութեան նիւթը:

Ապա, Հայրապետը փոխադարձ այցելութիւն կատարեց Կիպրոսի մարտնիթ համայնքի Առաջնորդարան, իր կողքին ունենալով Խորէն Սրբազան Հայրը, Գրիգոր Մահսէրէճեանը, Սեւակ Կիրիւնլեանն ու Հայր Սարգիսը:

Մտերմիկ հանդիպման ընթացքին, Վեհափառ Հայրապետը լանջախաչ նուիրեց Մարտնիթ Առաջնորդին եւ փոխադարձաբար նուէրներ ստացաւ անկէ: Գիշերը, Մարտնիթ Առաջնորդը ընթրիք սարքեց՝ ի պատիւ Հայրապետին:

#### **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՀԱՆԳԻՊԻ ԿԻՊՐՈՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ**

Երկուշաբթի, 20 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան նորընտիր Նախագահ՝ Նիքոս Խրիսթոտուլիտէսին հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան հետեւեալ նիւթերը.- ա) Կիպրոսի



հայ համայնք բ) Արցախի շրջափակում, գ) Հայաստանի դիմագրաւած մարտահրաւէրներ դ) Լիբանանի նախագահական ընտրութիւն եւ ե) Կիպրոսի դերը Միջին Արեւելքէն ներս:

Վերոնշեալ հարցերու շուրջ տեսակէտներու լայն փոխանակում տեղի ունեցաւ Վեհափառ Հայրապետին եւ նախագահին միջեւ: Նորին Ս. Օծութիւնը անհրաժեշտ տեղեկութիւններ ու իր տեսակէտները փոխանցեց նախագահին՝ ընդառաջելով անոր փափաքին, վերոնշեալ հարցերուն առնչուած լուծումներ գտնելու:

Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ նուէրներու փոխանակում: Վեհափառ Հայրապետը նախագահին յանձնեց Սուրբ Գրիգոր Նարեկացիի աղօթամատեանի բնագրին բազմապատկուած մէկ օրինակը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնական գաթալոկը: Նախագահը, իր կարգին, Վեհափառ Հայրապետին յանձնեց կիպրական յատուկ ասեղնագործ ձեռագործ կտոր մը:

Յիշենք, որ Վեհափառ Հայրապետին պատուիրակութեան մաս կը կազմէին Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդը, պետական ներկայացուցիչը, Քաղաքական ժողովի համա-ատենապետը, Երեսփոխանական ժողովի եւ Ազգային Վարչութեան Ատենապետները եւ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց բաժանմունքի Միջին Արեւելքի բաժնի Վարիչը:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԿԻՊՐՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԵԼՈՐ ՊԵՏԻՆ ՄԻՋԵՒ**

Երկուշաբթի, 20 Մարտ 2023-ին, Հայրապետը եւ իր պատուիրակութիւնը այցելեցին Նիկոսիոյ յոյն ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքարան, ուր հանդիպում մը տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ Կիպրոսի ուղղափառ եկեղեցւոյ Հոգեւոր Պետ՝ Ճորճիոս Գ. Արքեպիսկոպոս Փափախրիստոսթոմոսին միջեւ:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր ակնարկ մը նետելու երկու եկեղեցիներու ու ժողովուրդներու պատմական յարաբերութեան, ինչպէս նաեւ անդրադարձ կատարուեցաւ Թուրքիոյ կողմէ Կիպրոսի գրաւման յառաջացուցած ահաւոր դժուարութիւններուն՝ յատկապէս կրօնական մարզէն ներս, եւ շեշտուեցաւ հայ ու յոյն ազգերու դատերը միասնական ճիգով հետապնդելու հրամայականը:

Ապա, տեղի ունեցաւ նուէրներու փոխանակում: Հայրապետը Արքեպիսկոպոսին յանձնեց Սրբալոյս Միւռոնի օրհնութեան առիթով պատրաստուած





*կաթսայէն օրինակ մը, իսկ Արքեպիսկոպոսը՝ Կիպրոսի խորհրդանիշը ներկայացնող ափսէ մը, որմէ ետք Նորին Ս. Օծութինը եւ իրեն ընկերակցող պատուիրակուծիւնը ճաշի հիւրը եղան Արքեպիսկոպոսին:*

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ  
ՆԻԿՈՍԻՈՅ ԱԶԳ. ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆ**

*Երկուշաբթի, 20 Մարտին, Վեհափառ Հայրապետը իր շքախումբով հայրական այցելուծիւն մը տուաւ Նիկոսիոյ Ազգ. Նարեկ վարժարան ու անոր*



տոմարին մէջ կատարեց հետեւեալ արձանագրութիւնը՝ «Հայ դպրոցը կը մնայ կարեւոր սիւներէն մէկը հայ համայնքին. զայն պէտք է պահել ամուր ու կենսունակ»:

Ազգային երգերով ու արտասանութիւններով աշակերտները յայտագիր մը ներկայացուցին, որմէ ետք Վարժարանի տնօրէնուհին լայն բացատրութիւն տուաւ Նիկոսիոյ, Լաոնաքայի ու Լիմասոլի մէջ գտնուող Ազգ. Նարեկ վարժարաններու հիմնադրութեան ու գործունէութեան մասին:

Իր հայրական խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը իր գնահատանքն ու քաջալերանքը փոխանցեց աշակերտներուն, անոնց ծնողներուն, վարժարանի տնօրէնութեան ու ուսուցչաց կազմին՝ յիշեցնելով հայ դպրոցին վերապահուած կարեւոր առաքելութիւնը, յատկապէս Սփիւռքին մէջ մեր գաղութներու հայապահպանման հաւաքական պայքարի ծիրէն ներս:





**ՀԱՅ ԴԱՏ****«ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ԴԵՄ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ  
ԱՐԺԱՆԱԴԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔԻՆ»\*****Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Այսօր, 21 Մարտ 2023-ը, հարիւրերորդ օրն է Ազրպէյճանի կողմէ կատարուած Արցախի շրջափակումին: Չենք կրնար լուռ մնալ միջազգային համայնքին եւ մեր մօտ թէ հեռու բարեկամներու անտարբերութեան դիմաց: Փաստօրէն ցեղասպանութեան համագոր անմարդկային արարք մըն է ազերիներու կողմէ 180,000 բնակչութիւն հաշուող Արցախի դէմ կատարուած շրջափակումը: Ձի' բաւեր միայն դատապարտել ու քննադատել: Անհրաժեշտ է գործնական քայլերու դիմել ու պաշտպանել Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը:

Այս մօտեցումով, Մենք, որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Արցախի արդար դատը շարունակեցինք պաշտպանել՝ մէկ կողմէն յիշեցնելով Արցախի ժողովուրդին արդար իրաւունքը, միւս կողմէն կոչ ուղղելով մեզի բարեկամ երկիրներուն՝ գործնապէս զօրակցելու մեր ժողովուրդի արդար դատին:

Այս մօտեցումով մի քանի օրեր առաջ Յունաստանի վարչապետին հետ ունեցած Մեր հանդիպման ընթացքին յիշեալ հարցը պարզեցինք: Նոյն մօտեցումով, այս առաւօտ, Արցախի ներկայ վիճակը ու նաեւ ինքնորոշման իրաւունքը ներկայացուցինք Կիպրոսի նորընտիր նախագահին: Մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին հին բարեկամները նկատուող Յունաստանի ու Կիպրոսի վերին ղեկավարները խոստացան Արցախի հարցը յառաջիկայ օրերուն ներկայացնել Եւրոպական Միութեան Խորհուրդի նիստին:

Արցախի հարցը համահայկական առաջնահերթութիւն է: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նոյն յանձնառութեամբ պիտի շարունակէ մնալ Արցախի ժողովուրդի կողքին՝ միջազգային շրջանակներէն ներս հետապնդելով Արցախի ժողովուրդին արդար դատը:

\* Արցախի շրջափակման 100-րդ օրուան առիթով:

## ՏՕՆԱԿԱՆ

### ԱԲԱԳ ՇԱԲԱԹԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Աւագ շաբաթը մեր հաւատացեալ զաւակներու կեանքին մէջ իւրայատուկ տեղ կը գրաւէ: Այս շաբթուան ընթացքին մենք կը վերապրինք Քրիստոսի երկրաւոր կեանքին ու առաքելութեան վերջին հանգրուանը, որուն ընթացքին կ'իրականանայ Աստուծոյ խոստումը՝ մարդկային փրկագործութիւնը Քրիստոսի պատարագումով:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ կատարուած հոգեպարար արարողութիւններուն կը հանդիսապետէ ու խորհուրդներուն պատգամը ժողովուրդին կը փոխանցէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, իսկ Միաբան Հայրերը, գեղեցիկ աւանդութեան համաձայն, կ'ուղղուին Լիբանանի Հայոց Թեմի մեր եկեղեցիները, ժողովուրդին մօտ, ու մեր ծուխերուն մէջ կը կատարեն Մեծ Պահքը եզրափակող հոգենորոգ այս ծէսերը:

#### ԾԱՂԿԱԶԱՐԴ

Արամ Ա. Կաթողիկոս Հայրապետական Օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով եւ ազգային վառ ապրումներով ողջունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանք հաւաքուած հոծ թիւով հաւատացեալները, ի մասնաւորի երիտասարդ ընտանիքները, որոնք համախմբուած էին տօնախմբելու մեր Փրկչին՝ Քրիստոսի յաղթական մուտքը խորհրդանշող Ծաղկազարդը եւ իրենց մանուկները՝ ստանալու Հայրապետին Օրհնութիւնը:

Կիրակի, 2 Ապրիլ 2023-ին, Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան մատուցեց Ս. եւ Անմահ Պատարագը եւ Մայր Տաճարի ղօղանջներուն ներքոյ մանուկներուն թափօրը գլխաւորեց: Հուսկ, Նորին Ս. Օծութիւնը Վեհարանի պատշգամէն Հայրապետական պատգամով ողջունեց բազմահազար հայորդիները, ըսելով.՝

«Սա ի՛նչ ոգեշնչող տեսարան է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն ներս: Մեր ժողովուրդի զաւակները, հակառակ



երկրէն ներս տիրող տնտեսական ու ընկերային տագնապին, հաւատքի մղումով այսօր եկած են Աստուծոյ տունը, մեր ազգին տունը, որպէսզի միասնաբար ողջունենք Քրիստոսի մուտքը Երուսաղէմ: Սա պահուն, ձեր բոլորին աղօթքներուն թարգմանը կ'ըլլամ, երբ Երուսաղէմ մուտք գործող մեր Տիրոջ ուղղելով իմ աղօթքս՝ կ'ըսեմ.- «Ո՛վ Տէր, եկուր եւ ծաղկագարդէ մեր ազգին կեանքը երկնային բարիքներով, շնորհքներով ու պարգեւներով: Ամրապնդէ մեր ազգին սէրը ու միասնականութիւնը, ամէ՛ն տեղ՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ: Ո՛վ Տէր, Արցախը շրջապատող ամէն տեսակ շղթաները քանդէ՛ Քու Աստուածային զօրութեամբդ: Հեռացուր Հայաստանի սահմաններէն անոնք, որոնք կը փորձեն հարցականի տակ առնել մեր հայրենիքին գերիշխանութիւնն ու անկախութիւնը: Ո՛վ Տէր, մեր ընտանիքներուն ու զաւակներուն կեանքը լեցուր իմաստութեամբ ու առողջութեամբ: Թող մեր կեանքէն հեռանայ ամէն տեսակ չարիք եւ մեր կեանքը լեցուի Աստուածային օրհնութեամբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

*Պատգամէն ետք հաւատացեալները միաձայն երգեցին «Կիլիկիա» օրհներգը եւ Հայրապետական մաղթերգը: Ապա, Վեհափառ Հայրապետը իր մօտ ընդունեց մանուկները եւ իր Հայրական ու Հայրապետական օրհնութիւնը բաշխեց անոնց:*

*Յիշատակութեան արժանի է, որ Կաթողիկոսարանի Կիրակնօրեայ Վարժարանի ուսուցիչները յանձն առած էին Մայրավանքի շրջափակին զարդարանքները, ինչպէս նաեւ փոքրիկներուն համար նախատեսուած նուէրները:*

## ԴՌՆԲԱՑԷՔ

Ծաղկազարդի հոգեպարար տօնախմբության կը յաջորդէ Դռնբացէքի հոգեգմայլ արարողութիւնը: Հետեւաբար, նոյն օրը, երեկոյեան ժամը 4:00-ին, Կոմիտաս Արքեպիսկոպոս, երկու Միաբան Հայրերու ընկերակցութեամբ եւ «Բաց մեզ, Տէր» շարականի երգեցողութեամբ, թակեց դէպի Քրիստոս տանող դուռը:

Օրուան խորհուրդը պարփակող շարականներու երգեցողութեան աւարտին, Սրբազան Հայրը հաւատացեալներուն փոխանցեց տօնին պատգամը: Ան ըսաւ, որ եկեղեցական արարողութեանց ճամբով հաւատացեալը իր առօրեայ հեքէն կ'անշատուի եւ կը հրաւիրուի ապաշխարութեամբ վերանորոգելու իր բարոյական կեանքը. այս մէկը մանաւանդ կը տեսնենք Աւագ շաբթուան ընթացքին, որուն սկիզբը կը հանդիսանայ Քրիստոսի Երուսաղէմ մուտքը:

Ապա, Սրբազան Հայրը երեք կէտերու մէջ ամփոփեց Դռնբացէքի խորհուրդը: Ան ըսաւ.–

ա) Աւագ շաբթուան ընթացքին լոյսը կը սեւեռուի միայն Քրիստոսի անձին վրայ, որ գլխաւոր դերակատարն է. Ան է բոլոր պաշտամունքներու միջնորդը, որ կրեց ահաւոր շարժարանքներ ու խաչելութիւն եւ իրականացուց փրկագործութիւնը՝ յաղթական կերպով: Սրբազան Հայրը աւելցուց, որ Դռնբացէքի արարողութիւնը անմիջական կապ մը չունի քառասուն օր Ս. Խորանի վարագոյրի գոցուելուն, որովհետեւ վարագոյրը օր մը առաջ՝ Ղազարոսի յարութեան յիշատակին նուիրուած երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Ծաղկազարդի օրուան օրհնութեամբ կը բացուի:

բ) Պահեցողութեան ճամբով հաւատացեալները ջանք թափեցին հոգեպէս բիրեղանալու, որովհետեւ Մեծ Պահոց մէջ հասարակ օրերու սուրբերու յիշատակներ չենք տօներ: Սակայն, այսօր, զղջումով եւ խոստովանութեամբ ապաշխարողները իրաւունք ստացան ներկայ ըլլալու Ս. եւ Անմահ Պատարագին՝ բաց վարագոյրին առջեւ: Ան ըսաւ, որ փակ խորանը բանալէ ետք, եկեղեցույ հովիւը կու տայ իր վկայութիւնը, որպէսզի ո՛չ միայն արդարները, այլեւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ արդարացած մեղաւորները եւս մուտք գործեն Դռնէն, որովհետեւ Դուռը Տէրն է եւ ողորմութեան աղբիւրը՝ Ս. Հոգիին շնորհքը:

գ) Դռնբացէքի արարողութեան լոյս սփռող պատմութիւնը տասը կոյսերու առակին պատմութիւնն է, որուն պատգամը կը խօսի երկինքի Դռան՝ Քրիստոսի գալստեան մասին:

Աւարտին, Կոմիտաս Սրբազան հաւատացեալները հրաւիրեց ըլլալ զգօն Քրիստոսի գալստեան, որպէսզի կարենան մուտք գործել Դռնէն ներս:

## ՏԱՍՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Աւագ Երեքշաբթի, 4 Ապրիլ 2023-ի երեկոյեան, տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որուն ընթացքին յիշատակուեցաւ Տասը Կոյսերու առակը:

Աւանդութեան համաձայն, արարողութեան տասը կոյսերը կազմեցին Մայրավանքի Կիրակնօրեայ Վարժարանէն տասը աշակերտուհիներ, որոնք արարողութեան աւարտին բարձրացան Վեհափառ Հայրապետին մօտ՝ ստանալու համար անոր հայրական օրհնութիւնը: Աշակերտները առաջնորդուեցան փոխ-լուսարարապետ՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթանեանի կողմէ՝ ընկերակցութեամբ Մայրավանքի Կիրակնօրեայ Վարժարանի Տնօրէն՝ Ժանին Դանիէլեանին եւ ծնողներուն:



Նորին Սրբութիւնը իր ուրախութիւնը յայտնեց ի տես Հայ եկեղեցւոյ սրբազան աւանդութիւնները նախանձախնդրութեամբ կենդանի պահող Կիրակնօրեայ վարժարաններուն, իր ջերմ գնահատանքն ու իր հայրական օրհնութիւնը փոխանցեց անոնց:

## ՈՏՆԼՈՒԱՅ

Աւագ Հինգշաբթի օր, Հայ եկեղեցին, առաւօտուն մատուցած Ս. եւ Անմահ Պատարագով, կը յիշատակէ մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի վերջին ընթրիքը. երեկոյեան կը կատարէ Ոսնլուայի Կարգը, իսկ գիշերը՝ Տիրոջ մատնութիւնը, դատապարտութիւնն ու շարժարանքները:



6 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Մայր Տաճարին մէջ Արամ Ա. Կաթողիկոս հանդիսապետեց Ուտնլուայի Կարգին՝ հետեւելով մեր Փրկչի օրինակին: Ղենջակը մէջքին ծունկի գալով, Նորին Ս. Օծութինը Քրիստոսի 12 առաքեալները խորհրդանշող Միաբան Հայրերուն եւ Դպրեվանքի սաներուն ոտքերը լուաց՝ իբրեւ Քրիստոսի խոնարհութեան եւ ծառայական սիրոյ արտայայտութիւն:

Իր Հայրապետական պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ սիրոյ ծառայութեան: Ան ընդգծեց քրիստոնէութեան հասկացողութեան մէջ սիրոյ առանցքային կարեւորութիւնը, որ ո՛չ թէ սովորական ու պարագայական երեւոյթ է, այլ՝ ուղղակի Աստուծոյ էութիւնը: Ան ըսաւ, որ Աստուած տիեզերքը ստեղծեց մղուած իր Սէրէն, եւ թէեւ մարդը մեղանշեց ու հեռացաւ Աստուծմէ, սակայն Ան իր Միածին Որդին աշխարհ ղրկեց ու խաչելութեամբ ապացուցեց իր անսահման ու անհատնում սէրը մարդուն հանդէպ: Նորին Սրբութիւնը նաեւ նշեց, որ հոն ուր սէր չկայ՝ չարիք կը տիրէ: Այս աշխարհի բոլոր հարստութիւնները փուճ են առանց Աստուծային սիրոյ ըսաւ ան եւ յորդորեց հաւատացեալները հետեւելու Քրիստոսի ճանապարհին՝ սիրելու մեր անձը եւ սիրելու զիրար:

Անդրադառնալով ուտնլուայի արարողութեան, Արամ Ա. Կաթողիկոս վերջիշեցուց, որ Ուտնլուայի Կարգը ո՛չ թէ լոկ դէպքի մը յիշատակումն է, այլ Քրիստոսի սիրոյ պատգամը կենդանի պահելն է: Այսօր մենք սիրոյ կարիքը ունինք, ամէն տեղ՝ Հայաստան, Արցախ եւ ամենուրեք. պէտք է մեր կեանքը ճշմարիտ սիրոյ կրակով թրծուի ու շաղախուի, որպէսզի սէրը տիրապետէ մեր կեանքին մէջ ու հեռանայ ամէն շարիք, յայտնեց ան:





Աւարտին, Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ այսօր Քրիստոս Ինք Իր եկեղեցւոյ ճամբով դարձեալ կը յիշեցնէ մեզմէ իւրաքանչիւրին՝ սիրեցէք զիրար այնպէս ինչպէս Ինք սիրեց մեզ. «Հեռո՛ւ մնացէ՛ք ամէ՛ն տեսակ չարէ ու չարի՛ք յառաջացնող իօսութիւտ, կեցուածքներէ, գործելակերպերէ, կենցաղակերպերէ: Սիրեցէ՛ք զիրար, որպէսզի Քրիստոս մեր կեանքին մէջ ապրի եւ մենք Քրիստոսի ներկայութեամբ հօգօրանանք եւ մեր կեանքը պայծառակերպուի», եզրափակեց Նորին Ս. Օծութիւնը:

## ԽԱՒԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

Աւետարաններու ընթերցումներու զուգահեռ կատարուող 12 առաքեալները խորհրդանշող մոմերու յաջորդական շիջումներէ ետք, երբ մարեցան նաեւ եկեղեցւոյ կանթեղները՝ վառած պահելով միայն Քրիստոսի Լոյսը խորհրդանշող սպիտակ մոմը, Մայր Տաճարին մէջ երգուեցաւ «Փառք Ի Բարձունս» շարականը: Ասոր յաջորդեց Յեղասպանութիւն ապրած հայ ժողովուրդին սրտին շատ մօտիկ «Ո՛ր ես, Մայր Իմ» երգը՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուլբերթանեանին կատարողութեամբ: Հուսկ, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան օրուան հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց եւ աղօթք բարձրացնելով, ըսաւ. «Արքա՛յ երկնաւոր, սրտաբեկ հոգիով եւ ողբաձայն աղաղակով կը հայցենք քու ողորմութիւնդ, որովհետեւ սոսկ շնորհած ողորմութեամբդ է, որ մենք կրնանք կանգնիլ քու փառահեղ էութեանդ առջեւ: Կը գիտակցինք մարդկային մեր անկատար էութեան եւ քու ամենօրհնեալ անունդ կը կան-



չենք աղերսագին՝ յուսալով, որ ողորմութեամբդ գօտեպնդես մեզ: Նայէ՛ մեր զղջման խոստովանութեան եւ մահուան արժանի մեր անձերուն պարգեւէ՛ անմահիդ ողորմութիւնը: Գթութեամբ ընդունէ մեղքով ծանրացած մեր դառնացած խօսքերը»:

### ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳ

7 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Աւագ Ուրբաթ օրուան յատուկ շարականներու, սաղմոսներու եւ աղօթքներու կատարումներու ներքոյ յիշատակեցինք մեր Փրկչին Թաղման Կարգը: Արարողութեան աւարտին, Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող ծաղկածածկ սեղանին առջեւ կանգնած, Վեհափառ Հայրապետը հաւատացեալներուն յղեց իր Հայրապետական Պատգամը:

Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ Պօղոս առաքեալ՝ թեսաղոնիկեցիներուն ուղղած իր նամակին մէջ, խօսելով Քրիստոսի խաչելութեան ու թաղման մասին, կ'ըսէ, թէ Քրիստոս մեզի համար մեռաւ, որպէսզի Իրմով մենք կենդանի ըլլանք. այլ խօսքով՝ Քրիստոս խաչուեցաւ ու թաղուեցաւ մեզի համար, որպէսզի Իր մահով մենք կեանք ունենանք. առաքեալին այս պարզ բառերուն մէջ ամփոփուած է այսօրուան արարողութեան խորհուրդը: Աստուծոյ Որդին մեկնելով Աստուածային սէրէն, ո՛չ միայն աշխարհ եկաւ մեր մէջ ըլլալու, այլ նաեւ մեզի համար Իր արիւնը թափելու. ուստի, Քրիստոսի երկնաւոր կեանքը ինքնանպատակ չէ, այլ կեդրոնացած է մէկ նպատակի շուրջ՝ մարդու փրկութեան, ընդգծեց Նորին Սրբութիւնը:





Շարունակելով իր խօսքը՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ մեր եկեղեցույ ծէսը կարեւորութեամբ կը շեշտէ Քրիստոսի՝ Իր մահուամբ մահուան յաղթելու ճշմարտացիութիւնը: Հետեւաբար, Քրիստոսի գերեզմանը սովորական հասկացողութեամբ գերեզման չէ: Մենք այս գերեզմանին կը մօտենանք իբրեւ կեանքի աղբիւր: Արամ Ա. Կաթողիկոս իր պատգամին մէջ յիշեցուց, որ հայ ժողովուրդը Քրիստոսի թաղման օրը 2 գեղեցիկ աւանդութիւններ ունի. - ա) Քրիստոսի գերեզմանին տակէն անցնիլ եւ բ) Քրիստոսի գերեզմանին վրայէն ծաղիկ մը առնել եւ տուն տանիլ: Այս մէկը խորունկ իմաստ ու խորհուրդ բովանդակող աւանդութիւն մըն է. հետեւաբար, երբ մեր կեանքը վերանորոգելու համար մօտենանք Քրիստոսի գերեզմանին, Իր մահով կեանք կ'առնենք ու մեր կեանքը կը վերանորոգենք, ըսաւ Նորին Սրբութիւնը ու յորդորեց, որ մեր առօրեայ կեանքի մարտահրաւէրներուն ու դժուարութիւններուն այս գիտակցութեամբ ու հաւատքով մօտենանք:

Հոգեպարար արարողութիւնը իր աւարտին հասաւ «Խաչի Քո Քրիստոս երկիրպագանեմք» հոգեթով շարականի երգեցողութեամբ եւ «Պահպանիչ» աղօթքով: Կարեւորութեամբ նշենք, որ արարողութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը ներկայ հաւատացեալ հայորդիները օրհնեց Քրիստոսի Խաչափայտին սրբազան մասունքով, որ ամէն տարի Թաղման Կարգի արարողութեան դուրս կը բերուի «Կիլիկիա» թանգարանէն:

### ՃՐԱԳԱՒՈՅՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՏՆՕՐՀՆԷՔ

Գեղեցիկ են մեր եկեղեցւոյ աւանդութիւնները, որոնք աւելի քան 1700 տարի պահած ենք՝ հակառակ զանազան արտաքին արգելքներու, եւ թէկուզ դարուն հետ համահունչ ըլլալու համար փոփոխութիւններու ենթարկուած ըլլալով: Այսպէս, Զատիկը կանխող օրը կը կոչուի Ճրագալոյց, որովհետեւ հաւատացեալները ամբողջ օրը կը նուիրէին ինքնապատրաստութեան աշխատանքի՝ վառ հաւատքով մասնակից դառնալու Ս. Յարութեան խորհուրդին:

Քրիստոսի յաղթանակը մահուան դէմ եւ մեր փրկութիւնը յիշատակող Ս. Յարութեան տօնին պատրաստութեամբ, Շաբաթ երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ:

Յաւարտ Ս. Պատարագին, Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան Ս. խորանէն Յարութեան լոյսը փոխանցեց Նորին Ս. Օծութեան: Հայրապետ, միաբան հայրեր, դպրեմանեցիներ եւ ներկայ հաւատացեալ հայորդիներ միաբերան երգեցին Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութիւնը աւետող «Այսօր յարեաւ ի մեռելոց...» հոգեթով շարականը: Ապա, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարանի դահլիճ, ուր կատարուեցաւ զատկական տնօրհնէքի արարողութիւնը:

Հայ եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան անդամները Ս. Յարութեան շարականներ նուագեցին՝ ստեղծելով առաւել տօնական մըթնոլորտ:



**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱՓԱՌ ՏՕՆԸ  
ՀԱՆԴԻՍԱԲՈՐԱՊԷՍ ՆՇՈՒԵՑԱԲ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

**«ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՏՔՈՎ  
ՇԱՂԱԽԵՆՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Կիրակի, 9 Ապրիլ 2023-ի առաւօտուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանք հաւաքուած էր հաւատացեալներու հոծ բազմութիւն մը՝ տօնելու մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան տօնը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Զատիկական Հայրապետական Ս. Եւ Անմահ Պատարագ, որուն ընթացքին Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոս յղեց իր Հայրապետական Պատգամը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը:

Հաւատացեալներու կողքին Պատարագին ներկայ էին Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը՝ իր տիկնոջ հետ, դեսպանատան անձնակազմէն պատուիրակութիւն մը, մեր Ս. Աթոռին Ազգ. Կեդրոնական Վարչութեանէն անդամներ, քաղաքապետներ եւ քաղաքական ու ազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Նորին Սրբութիւնը իր Պատգամին մէջ կոչ ուղղեց մեր ժողովուրդի զաւակներուն, Քրիստոսի հրաշափառ Յարութեան հաւատքով շաղախելու մեր կեանքը: Իր Հայրապետական Պատգամին որպէս մեկնակէտ ընտրած էր հրեշտակին խօսքը՝ ուղղուած Քրիստոսի գերեզմանը այցելող կիներուն. «Մի՛ վախճա՛մ. Քրիստոսը հոս չէ, այլ յարութիւն առաւ»: Արդարեւ, «Քրիստոսի Յարութիւնը կը կազմէ առանցքը ու նպատակը քրիստոնէական կեանքին ու վկայութեան», յիշեցուց Նորին Ս. Օծութիւնը: «Քրիստոսի Յարութիւնը յաղթանակն էր կեանքին՝ մահուան դէմ, երկիւնքին՝ Աստուծմէ հեռացող երկրին դէմ. բարիին՝ չարին դէմ: Քրիստոսի Յարութեան հաւատքը դարձաւ ամուր կռուանը եկեղեցւոյ առաքելութեան: Հակառակ պատմութեան հալածանքներուն, Քրիստոսի Յարութեան հաւատքով զօրացած եկեղեցին պատգամաբերը դարձաւ մահուան վրայ Աստուծոյ Որդիին տարած յաղթանակին»:



*Ապա, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Հայ եկեղեցւոյ առաքելութեան մեր ժողովուրդի տագնապալից կեանքին մէջ: «Մեր պատմութիւնը ահաւոր տագնապներով լեցուած է. մեր եկեղեցին երբեք չէ վիասած, այլ Քրիստոսի Յարութեան հաւատքով դարձած է ամուր կոտուան մեր ազգին ու հայրենիքի գոյութեան, գորեղ վահան՝ մեր ազգն ու հայրենիքը ընկնելու ու գերելու ամէն տեսակ փորձերուն դէմ: Զմոռնանք, որ Հայոց Յեղասպանութենէն ետք մեր եկեղեցին մեր ազգի կեանքին մէջ դարձաւ Յարութեան հաւատքով ամրապնդող եւ մեր հաւաքական կեանքը Յարութեան շունչով թրրծող յարուցեալ Քրիստոսի պատգամաբերը: Մեր եկեղեցին իր առաքելութեամբ ու ծառայութեամբ մեր ազգին փոխանցեց Քրիստոսի թափուր գերեզմանէն ճառագայթող յարուցեալ կեանքի յոյսը եւ կեանքի չարիքներուն ու մահուան դէմ պայքարելու յարութեան հաւատքը», շեշտեց Նորին Սրբութիւնը:*

*Խօսելով ներկայ ժամանակներուն մասին՝ Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ. «Մեր ժողովուրդի պատմութեան ներկայ տագնապալից ժամանակներուն, երբ Արցախը նոյն ցեղասպանին կողմէ կը մնայ շրջափակուած, երբ Հայաստանը նոյն ցեղասպանին կողմէ միշտ կը մնայ ենթակայ յարձակումներու, մարդկային իրաւունքներու ու արժէքներու դէմ նկատուող այս կացութեան դիմաց, մեր եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ: Մեր հայրենիքին ու ազգին պաշտպանութեան պայքարի առաջին գիծին վրայ եղած է միշտ մեր եկեղեցին՝ Վարդանանց պատերազմէն սկսեալ մինչեւ Սարդարապատ ու Ար-*





ցախ: Այսօր յարուցեալ Քրիստոս իր եկեղեցւոյ ցամբով կոչ կ'ուղղէ մեր ժողովուրդի գաւակներուն՝ յԱրցախ, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի՝ ըսելով, մի՛ վախնա՛ք, ես ձեզի հետ եմ: Յարուցեալ Քրիստոսի մահուան դէմ տարած յաղթանակով հօգրացած, մենք պէտք է շարունակենք մեր պայքարը յանուն արդարութեան, յանուն իրաւունքի ու արժանապատուութեան, յանուն Արցախի, Հայաստանի եւ մեր ազգի հօգրութեան», *պատգամեց Նորին Սրբութիւնը:*

*Յաւարտ Ս. Պատարագին, Հայրապետական թափօրը մեծաշուք հանդիսութեամբ ուղղուեցաւ Վեհարան, ուր բոլոր ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» օրհներգը եւ Հայրապետական մաղթերգը: Ապա, Նորին Ս. Օծութիւնը օրհնեց ներկայ հաւատացեալները՝ անգամ մը եւս աւետելով՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց. օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:*

*Հուսկ, Արամ Ա. Կաթողիկոս Զատկական շնորհաւորութիւնները ընդունեց Վեհարանի դահլիճին մէջ:*

## ԱՊՐԻԼ 24-Ի ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

### ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

Հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ Հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեդրոնատեղիին՝ Անթիլիասի Մայրավանքին մէջ Կիրակի, 23 Ապրիլի երեկոյեան ժամը 8:00-ին, ժողովրդային հաւաքով տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 108րդ ամեակի ոգեկոչումը՝ հոծ թիւով հայորդիներու եւ պաշտօնական անձնաւորութիւններու մասնակցութեամբ:

Հաւաքին բացման խօսքը արտասանեց Հ.Ե.Հ.Ո.Մ.ի Վարչութեան Ատենապետ՝ Սերուժ Խանճիհանեան, որ յատկապէս լուսարձակի տակ առաւ միասնական աշխատանքի կարեւորութիւնը՝ կարենալ իրագործելու ազգային վերածնունդն ու զարթօնքը, շարունակելու ապրիլ հայօրէն եւ հայկական արժէքներուն հաւատարիմ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան խօսքը արտասանեց Տիգրան Միհրանեան, որ անդրադարձաւ Թուրքիոյ ցեղասպանական ծրագիրին նորօրեայ կոտորածներուն՝ դիտել տալով, որ հակառակ 44-օրեայ պատերազմին ձախողութեան հետեւանքով ձեռք բերուած համաձայնութիւններուն՝ Ազրպէյճանի ղեկավարութիւնը կը շարունակէ իր թշնամական քաղաքականութիւնը՝ վտանգելով շրջանի կայունութիւնը: Ան շեշտեց, որ Ազրպէյճանի Նախագահ՝ Իլհամ Ալիեւ երկիր ղեկավարելու դասերն ու շրջանը ապակայունացնելու դիւային խորհուրդները կը ստանայ իր սիոնական ռազմաքաղաքական դաշնակից Իսրայէլէն: Ուստի հայութեան դիմադրութիւնը մաս կը կազմէ շրջանը ապակայունացնել փորձող սիոնական եւ համաթուրանական դաշինքին դէմ մղուող պայքարին:

Այնուհետեւ Կասիա Շատարեւեան երգեց «Տուն Իմ Հայրենի» երգը:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան խօսքը արտասանեց Լեւոն Բարսեղեան, որ նշեց, թէ ազգովին կորսնցնելէ ետք հող եւ հայրենիք, կը դիմագրաւենք նոր արհաւիրք, որուն զոհը կը դառնան մեր Հայրենիքը, մեր աչքի լոյս Արցախը եւ Միջին Արեւելքի հայաշատ գաղութները, ու շարունակեց, որ Հայաստանամերձ գաղութները ենթարկուելէ ետք ռազմական եւ

տնտեսական տազնապներու, կը հայաթափուին: Ան նկատել տուաւ, որ ժամանակն է ազգովին որդեգրելու նոր ռազմավարութիւն ու ծրագիր եւ ջանալու միաւորել ոյժերը ու կոչ ուղղեց՝ զանազանութիւն դնելու պետականութեան եւ իշխանութեան միջեւ, յայտնելով, որ պետականութիւնը մնայուն է, մինչ իշխանութիւնը՝ գնայուն, ուստի պէտք է գուրգուրալ մեր պետականութեան վրայ, որ հազարաւոր մարտիրոսներու թափած արեամբ հիմնուած է:

Ապա Անի Եփրեմեան ասմունքեց ազգայնաշունչ քանի մը քերթուած:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խօսքը արտասանեց Վիգէն Աւագեան, որ նշեց, թէ Յեղասպանութիւնը մեզի համար պատմական անցեալ չէ, այլ ամէնօրեայ ապրուող իրականութիւն, դիտել տալով, որ Յեղասպանութեան խորհրդանիշը դարձած Ապրիլ 24-ը անցնող 108 տարիներուն իր մէջ խտացուց հայ ժողովուրդին ձգտումներն ու նպատակները: Ան նշեց, որ այդ օրը այլեւս դադրած է յիշատակի սոսկական օր մը ըլլալէ ու դարձած՝ իրաւագրկման եւ հայրենագրկման դէմ պայքարի, արդարութեան, հատուցման եւ պահանջատիրութեան օր: Աւագեան հաստատեց, որ իրաւունքները ո՛չ մէկ պարագայի կը տրուին իբրեւ շնորհ կամ նուէր, այլ ձեռք կը բերուին յամառ ու յարատեւ պայքարով միայն: Ան նշեց, որ հայ-թրքական հաշտեցման որեւէ առաջարկ, հայութեան համար պայմանաւորուած է պատմական արդարութեան վերականգնումով: Այս իսկ պատճառով վտանգաւոր է թրքական ամէն ծուղակ, որ Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորման քօղին տակ կը փորձէ պատմաքաղաքական զգայուն հարցերու շուրջ Հայաստանէն զիջումներ կորզել եւ Երեւանին հաշտութիւն պարտադրել, ըսաւ ան: Աւագեան իր խօսքը եզրափակեց՝ նշելով, որ Հայոց Յեղասպանութեան 108րդ ամեակի պատկերը՝ մոխրագո՛յն պատկեր է, որուն ի տես այլընտրանք չունինք՝ բացի հաւաքաբար մեր պատասխանատուութիւնները ստանձնելու բարձրութեան վրայ գտնուելէ:

Հաւաքի աւարտին իր Հայրապետական պատգամը ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Ստորեւ կը ներկայացնենք Նորին Սրբութեան պատգամը.—

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄՐՈՒՄ ԱՅԼ ԸՆՏՐԱՆԸ ԶԿԱՅ

Ճակատագրական է ներկայ հանգրուանը մեր ազգի պատմութեան: Մութ ամպերով է ծածկուած երկնակամարը հայ կեանքին: Անորոշ է Արցախին ու Հայաստանին առջեւ բացուած հորիզոնը: Կարելի չէ այլապէս բնութագրել մեր ազգի կեանքին պարզած ներկայ պատկերը:

Գիտե՛նք, իրապաշտութիւնը երբեմն յուսահատութեան կրնայ առաջնորդել: Սակայն հաւատով զինուած, կամքով պրկուած ու միասնական ոգիով գօտեպնդուած, որպէս ազգ կոչուած ենք խոհեմութեամբ ու համախոհութեամբ դիմագրաւելու մեզ շրջապատող բազմազան ու այլազան տագնապները, ներքին թէ արտաքին: Անհրաժեշտ է, որ մեր մօտեցումները ըլլան իրատես եւ հայեցակէտերը՝ համապարփակ, որպէսզի կարելի ըլլայ խնդիրները նի՛շդ տեսնել, կացութիւնները նի՛շդ ըմբռնել եւ մեր շուրջը տեղի ունեցող զարգացումները նի՛շդ կերպով գնահատել՝ աշխարհաբախաբանական յարափոփոխ պայմաններու լոյսին տակ:

Ապրիլ 24-ը մեր պահանջատիրական պայքարին, իր ուզումովարական ու մարտավարական տարածքներով, վերաշեշտման ու միաժամանակ վերաբեռնման յիշեցում է: Ապրիլ 24-ը նաեւ այսօր, առաւել քան երբեք, ազգային միասնականութեան ամրապնդումի ու անոր հրամայականին անսալու մարտահրաւեր է:

Եկէ՛ք, պահ մը դիտենք մեր ներկայ կեանքը:

Ազրպէյճանի սուրը ազատօրէն կը շարունակէ ճօճել Հայաստանի ու Արցախի ուղղութեամբ: Արցախը տակաւին կը մնայ շրջափակուած ու ենթակայ՝ հայաթափումի վտանգին: Բարոյական գորակցութենէն բացի, ցարդ որեւէ պետութիւն չուզեց միջամտել՝ վերջ տալու միջազգային օրէնքին ու մարդկային իրաւանց խոտոր համեմատող այլ տեսակի այս ցեղասպանութեան:

Վտանգուած են Հայաստանի սահմանները ու նոյնիսկ գերիշխանութիւնը: Ազրպէյճանի հողային ամբողջականութեան ճանաչումը ո՛չ միայն ինքնիշխան Արցախին վրայ շիրմաքարի գետնեղում պիտի ըլլայ, այլ նաեւ Հայաստանի հանդէպ Ազրպէյճանի ուզումատենչ ախորժակներու առաւել սրում: Տակաւ արմատացող ու ծաւալող մտահոգիչ երեւոյթ մը, որուն նշանները սկսած են դառնալ ակնյայտ:

Աննախատեսելի հետեւանքներով յի այս վտանգալից կացութեան դիմաց, Արցախի ապահովութիւնը երաշխաւորելու կոչուած Հայաստանի ուզումավարական գործընկերը, բնականաբար իր շահերէն մեկնած, կը մնայ սուկ դիտողի կրաւորական վիճակին մէջ: Հայաստանը առանձին է եւ Արցախը՝ փաստօրէն լքուած: Սակայն, յարգանք ու պատիւ Արցախի ժողովուրդին, որ իր իրաւունքներու պաշտպանութեան պատնէշին վրայ կը մնայ ամուր: Նո՛յն պատնէշին վրայ ողջ Սփիւռքը Արցախի կողմին ու Արցախին նման կը մնայ ամուր:



Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիութեան գործակցութիւնը փաստօրէն դարձած է մակերեսային: Հետզհետէ իրարմէ կը հեռանանք. նոր նեղեր կը յառաջանան հայ կեանքէն ներս, ամէ՛ն տեղ: Փոխադարձ մեղադրանք ու ատելութիւն սերմանող լոգումներով ու կեցուածքներով շրջապատուած ենք: Հայաստան ու Արցախ կը գտնուին ճակատագրական խաչմերուկի աջել:

Եթէ կը կարծուի, որ տարածաշրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատման համար զիջումներ կատարելով, Հայաստանին համար կարելի պիտի դառնայ մնայուն խաղաղութիւն ու տնտեսական զարգացում ապահովել, հարկ է ըլլալ զգո՛յշ...: Թուրքիոյ ու Ազրպէյճանի առջել Հայաստանի դռները լայնօրէն բանալով, կրնայ վտանգուիլ Հայաստանի ամբողջականութիւնը, անվտանգութիւնն ու անկախութիւնը եւ Արցախը կրնայ անհետանալ հայ կեանքի բարտէսէն: Հետեւաբար, ընդունելի չէ, որ Ազրպէյճանի հետ խաղաղ գոյակցութեան համաձայնութիւն գոյանայ՝ ի հեճուկս Արցախի ինքնորոշման իրաւունքին, ո՛չ ալ Թուրքիոյ հետ դիւանագիտական ու տնտեսական յարաբերութեան հաստատում՝ ի հեճուկս մեր պատմական իրաւունքներուն, Ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման: Ճկուն ու իրատես դիւանագիտական մօտեցումը չշփոթենք համակերպումի ու զիջումի բաղաճակնութեան հետ:

Զմոռնանք, որ ազգերու իրաւունքը ճշդօրէն դժբախտաբար ոյժի իրաւունքն է եւ ո՛չ թէ իրաւունքի ոյժը. շահերն են, եւ ո՛չ թէ արժէքները: Այսպէ՛ս եղած է միշտ, եւ այսպէ՛ս է նաեւ այսօր՝ միջազգային օրէնքով եւ համամարդկային սկզբունքներով ու արժէքներով ինքզինք կառավարելու ուխտը կնքած աշխարհին մէջ:

Զմոռնանք նաեւ, որ իր հայրենիքին ապագան, իր պատմութեան ընթացքը ճշդօրէն ժողովուրդն է, ժողովուրդի հաւաքական հաւատքը, կամքը ու տեսլականը, որքան ալ սհեղ ըլլան զինք շրջապատող պայմանները:

Հայաստանը, Արցախը եւ ընդհանրապէս մեր ազգը շրջապատող սհաւոր սպառնալիքներուն միայն մէ՛կ հաւաքական ոյժ կրնայ դիմադրել.– ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ: Մեզի համար սա անժխտելի համոզում է ու միաժամանակ՝ անսակարկելի ու անյետաձգելի հրամայական, մեր պատմութեան ներկայ վնասողորոշմ հանգրուանին: Այլ ընտրանք չունինք:

Արդ, սիրելի՛ հայրերիներ, զիրար մեղադրելով ու անգոսնելով, բարոյական ու հոգեւոր արժէքներ արհամարհելով, պետութիւնը եկեղեցիէն հեռացնելով եւ եկեղեցին՝ պետութենէն, հայրենիք չենք կրնար կերտել, այլ հայրենիք կը բանդենք: Իրարու դէմ խօսիլը քաջութիւն չէ. իրարու հե՛տ խօսիլը քաջութիւն է ու նաեւ իմաստութիւն: Հետեւաբար, իրարու հետ խօ-

սինքն պատասխանատու ու յանձնառու ոգիով, ազգին ու հայրենիքին շահերը ամեն բանէ վեր նկատելով եւ նոյնիսկ, ի պահանջել հարկին, մեր համագումներէն ու կեցուածքներէն, մեր դիրքերէն ու հանգամանքներէն հրաժարելով: Ժամանակի նշանները մի՛շտ կարդանք ու մի՛շտ կերպով կողմնորոշուինք: Եթէ այսօր Լաչինի ճամբան փակ է մեր առջեւ, վաղը բազմ՛ւմ ճամբաներ կրնան փակուիլ մեր առջեւ, եթէ չհամախմբուինք ու չդառնանք մէկ բռունցք, այսօ՛ր, վաղը կրնայ ո՛ւշ ըլլալ...:

Մենք բազմիցս Հայաստանի ու Արցախի փրկութեան միակ օրակարգի շուրջ համազգային համախմբումի կոչ ուղղած ենք՝ խորապէս հաւատալով, որ ա՛յս է մեր ազգը ու հայրենիքը դէպի ապահով ու հզօր ապագայ առաջնորդող միակ՝ ճամբան: Մեր մէկուկէս միլիոն սրբացեալ նահատակներու անիւններուն դիմաց կանգնած, դարձեալ համազգային համախմբումի կոչ կ'ուղղենք, այս անգամ աւելի գօրեղ շեշտով:

Մեր յիշած հիմնախնդիրները համազգային բնոյթ ու հետեւանք ունին. հետեւաբար, անոնք համազգային մաշտապով հարկ է բննարկուին: Ներկայ օրհասական ու անել պայմաններուն մէջ, կը կրկնե՛նք, միակ ընտրանքը համազգային համախմբումն է՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի պետական, քաղաքական ու կրօնական ղեկավարներու գործօն մասնակցութեամբ: Արդարեւ, առաջնահերթ հրամայական մը, որուն իրագործման գծով Մենք անձնապէս ունինք Մեր պատկերացումը:

Սա պահուն, Մեր պատգամը ժողովուրդին ուղղուած արթնութեան հրաւեր է, իսկ ղեկավարութեան՝ քաղաքական իրատեսութեան ու հեռատեսութեան կոչ: Պատմութեան դիմաց բոլորս հաւաքական նոյն պատասխանատուութեան կոչուած ենք. – ըլլալ Արցախի ու Հայաստանի կողմին, ըլլալ մէկ ազգի անժամանցելի իրաւունքներու կողմին, անվերապահ ու ամբողջական կերպով եւ ազգին ներուժը ի սպաս դնելով մեր գերագոյն ու ընդհանրական իտէալներու կենսագործման՝ դերերու յստակեցումով, աշխատանքի բաժանումով եւ ներդաշնակ գործակցութեամբ:

Ա՛յս կը պահանջէ ազգային ինքնագիտակցութիւնը եւ իրա՛ւ հայրենասիրութիւնը:

Աւետարանը կ'ըսէ. – «Ականջ ունեցողը թող լսէ» (Մր 4.9):

*Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Շնորհալի» երգչախումբին փունջ մը երգերով եւ հայորդիներու միաբերան «Կիլիկիա» օրհներգի երգեցողութեամբ:*

**Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՏՈՒՅՈՒՄ  
ԵՒ ԲԱՐԵՆՕՍԱԿԱՆ ԿԱՐԳ**

Նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, Հայոց Յեղասպանութեան 108րդ ամեակին առիթով, Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023-ի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ՝ Յեղասպանութեան զոհ սրբացեալ նահատակներու յիշատակին: Ս. Պատարագը մատուցեց Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:

Ս. Պատարագին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանն ու դեսպանատան անձնակազմը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամները, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.), Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) վերին մարմիններու ներկայացուցիչները, նախկին թէ ներկայ երեսփոխաններ ու նախարարներ, լիբանանահայ համայնքի բոլոր կազմակերպութիւններու, կառոյցներու, մարմիններու ու բարեսիրական միութիւններու ներկայացուցիչները:

Յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագին, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Մայր Տաճարին կից գտնուող Սրբոց Նահատակաց յուշարձան-մատուռ, ուր Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ կատարուեցաւ սրբադասեալ նահատակներուն նուիրուած Բարեխօսական Կարգը, որմէ ետք մատրան առջեւ կազմակերպութիւններու ու կառոյցներու ներկայացուցիչներուն կողմէ տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղման արարողութիւնը:





Ապա, սկաուտական կազմերը եւ անոնց պատկանող շեփորախումբերը (Հ.Մ.Ը.Մ., Հ.Մ.Մ. եւ Հ.Ե.Ը.), Վեհարանին դիմաց կանգնած՝ իրենց որդիական երախտագիտութիւնն ու զօրակցութիւնը արտայայտեցին Նորին Սրբութեան: Արամ Ա. Կաթողիկոս Վեհարանի պատշգամէն ողջունելով Մայրավանքի շըրջափակին մէջ հաւաքուած մեծ թիւով սկաուտներն ու անոնց պատասխանատու մարմինները՝ յայտնեց, որ անոնք գործող, ծառայող ու մասնակցող ներկայութիւն են մեր հաւաքական կեանքին մէջ. եւ ահաւասիկ, ձեր ներկայութիւնը այստեղ ինքնին պերճախօս վկայութիւն է, թէ Լիբանանի հայութիւնը, հակառակ իր տնտեսական ու ընկերային բազմապիսի ու այլազան դժուարութիւններուն, ո՛չ միայն պահեց իր ամբողջականութիւնը, այլեւ իր հաւաքական ու համայնքային կեանքը, կազմակերպուածութիւնն ու աշխոյժութիւնը: «Այսօր, Հայոց Յեղասպանութեան 108րդ ամեակին առիթով, դուք եկած էք ո՛չ թէ միայն ձեր յարգանքը մատուցանելու մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն, այլ ձեր եւ մեր բոլորին պահանջատիրական յանձնառու պայքարը վերանորոգելու: Մենք պայքարի՝ ժողովուրդ եմք. մենք պահանջատէ՛ր ժողովուրդ եմք եւ կապուած եմք ու պիտի մնանք՝ մեր ազգի ընդհանրական արժէքներուն եւ իրաւունքներուն», ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

Իր խօսքի աւարտին, Նորին Սրբութիւնը իր Հայրական ու Հայրապետական օրհնութիւնը փոխանցեց սկաուտներուն ու պատասխանատու մարմիններուն եւ բարի երթ ու յաջողութիւն մաղթեց անոնց ազգանուէր ծառայութեան մէջ:



**ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ**

**«ԿՐՕՆՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ  
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԿԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

*Ուրբաթ, 3 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելուները «Կրօններ» (Adyan) կազմակերպության գործադիր տնօրէն՝ դոկտ. Էլի Ալ-Հինտիին, ընկերակցութեամբ նոյն կազմակերպության ծրագիրներու ղեկավարին:*



*«Կրօններ»ը Միջին Արեւելեան կազմակերպութիւն մըն է: Ան գրասենեակներ ունի տարբեր շրջանի երկիրներու մէջ: Անոր նպատակն է երկխօսութիւն ու գործակցութիւն յառաջացնել՝ յատկապէս իսլամութեան ու քրիստոնէութեան միջեւ: Այս կազմակերպութեան մաս կը կազմեն թէ՛ քրիստոնեայ եւ թէ՛ իսլամ կրօնականներ ու զանազան բնագաւառներու պատկանող մասնագէտներ:*

*Դոկտ. Ալ-Հինտի Նորին Սրբութեան ներկայացուց կազմակերպութեան յառաջիկայ ծրագիրները եւ այս ծիրէն ներս առաջարկեց, որ Ապրիլ ամսու աւարտին, կարելոր հանդիպում մը կայանայ Անթիլիասի Մայրավանքին մէջ: Նորին Ս. Օծովիւնը յիշեալ կազմակերպութեան անդամ նշանակեց Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը:*



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ  
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ**

*Ուրբաթ, 10 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետ ընդունեց Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Լիբանան ժամանած վեց հոգիներէ բաղկացած պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին քարտինալներ եւ եպիսկոպոսներ:*

*Պատուիրակութեան այցելութեան նպատակն էր մօտէն ծանօթանալ Լիբանանի այժմու կացութեան եւ յատկապէս քրիստոնեայ համայնքներուն կողմէ կատարուող աշխատանքներուն:*

*Վեհափառ Հայրապետը ընդհանուր գծերով ներկայացուց նախ Միջին Արեւելքի քրիստոնեայ համայնքներուն պարզած ներկայ վիճակը եւ անոնց*



կողմէ կատարուող հոգեւոր, դաստիարակչական ու մարդասիրական աշխատանքները: Ան յատուկ կերպով անդրադարձաւ տարածաշրջանի հայ համայնքներուն: Ապա, նորին Ս. Օծութինը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն, որոնք առաւելաբար առնչուած էին միջ-եկեղեցական ու միջ-կրօնական մարզերուն:

Հանդիպման աւարտին, պատուիրակուծինը այցելեց Մայր Տաճար եւ Սրբոց Նահատակաց յուշարձան:



**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ KAICIID-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ  
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ**

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, Դպրեւանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան իր մասնակցութիւնը բերաւ Ապտալլահ Պըն Ապտուլազիզ Բ. Թագաւորի անուան միջ-կրօնական եւ միջ-մշակութային միջազգային կեդրոնի (KAICIID) Fellows Programme ծրագրի կրօնական-կրթական հիմնարկներու տնօրէններու համաժողովին, որ տեղի ունեցաւ 17-18 Մարտ 2023-ին, Մալիզիոյ մայրաքաղաք Քուալա Լամփուրի մէջ: Սոյն համաժողովին իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 34 կրօնական-կրթական հիմնարկներ 25 երկիրներէ: Համաժողովին նպատակն էր





միջ-կրօնական կրթական հիմնարկներու ցանց (Network) մը յառաջացնել, երկխօսութիւն եւ հաստատութենական գործակցութիւն ծաւալելու համար:

Հայր Սուրբը համաժողովին ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը, յատկապէս Դպրեվանքին ճամբով, որ ո՛չ միայն կը պատրաստէ ապագայի Հայ Հոգեւորականը, այլեւ միջ-կրօնական եւ միջ-մշակութային յարաբերութեանց դասպաններ: Ան վերահաստատեց Կաթողիկոսութեան միջ-կրօնական երկխօսութեան հանդէպ ունեցած հաւատքը եւ գործնականօրէն նպաստելու պատրաստակամութիւնը:

Համաժողովին որոշուեցաւ ընդլայնել հիմնարկներու գործակցութիւնը միջ-կրօնական երկխօսութեան ծիրին մէջ եւ մշակել այնպիսի ծրագիրներ, որոնք գործնականօրէն կը նպաստեն միջ-կրօնական յարաբերութեան ստեղծման կրթական հաստատութիւններու միջեւ:

Յայտնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը KAICIID-ի հիմնադրութեան առաջին իսկ օրէն, իր աշխոյժ մասնկացութիւնը կը բերէ անոր զանազան ծրագիրներուն: Արամ Ա. Վեհափառ Հայրապետը բազմիցս հրաւէրներ ստացած է, իբրեւ գլխաւոր դասախօս, բանախօսելու միջ-կրօնական գագաթնաժողովներու եւ մասնակցելու միջ-կրօնական ղեկավարներու հանդիպումներուն:



### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ

Երեքշաբթի, 21 Մարտ 2023-ին, Վատիկանի մէջ Ս. Ներսէս Շնորհալիի վախճանման 850 ամեակի նշման նախապատրաստական աշխատանքներու ծիրէն ներս, Վատիկանի մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի (ներկայացուցիչ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան), Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեանի (ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան) եւ Գերշ. Տ. Վարդան Եպս. Պողոսեանի (ներկայացուցիչ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարքութեան) միջեւ:



Յաջորդ օրը Նարեկ Արքեպիսկոպոս այցելեց Արեւելեան Եկեղեցիներու Բաժանմունքի նորանշանակ Նախագահ՝ Գլուատիօ Կուճերոթի Արքեպիսկոպոսին ու յանուն Վեհափառ Հայրապետին շնորհաւորեց զինք այս պատասխանատու պաշտօնը ստանձնելուն առիթով: Հանդիպման ընթացքին ընդգծուեցան Վատիկանի ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմական սերտ կապերը եւ անդրադարձ կատարուեցաւ Լիբանանի ընդհանուր իրավիճակին ու նախագահական ընտրութեան գծով Արամ Ա. Կաթողիկոսին եւ Մարոնիթ եկեղեցւոյ Ռայի Պատրիարքին միացեալ ճիգերուն:

Կուճերոթի Արքեպիսկոպոս յայտնեց, որ մօտէն կը ճանչնայ Վեհափառ Հայրապետը եւ այս առիթով, ան իր ջերմ ողջոյնները յղեց Նորին Ս. Օծութեան:



**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՍՆԱԿՑԵՅԱԲ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ Ե.Հ.Ն.Ի ԺՈՂՈՎԻՆ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի անդամ եկեղեցիներու աւելի քան 60 միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքներու պատասխանատուներ առցանց ժողով մը գումարեցին 21-23 Մարտ 2023-ին: Սոյն ժողովին, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցաւ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի Վարիչ՝ Գերայ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան:

Ժողովը կը նպատակադրէր ամրացնել Ե.Հ.Ն.Ի անդամ եկեղեցիներուն մասնակցութիւնը խորհուրդի կեանքին ու գործին, իրար հետ բաժնել շրջանային փորձառութիւններ, ինչպէս նաեւ ներդրում ունենալ անոր ապագայ աշխատանքներու ծրագրաւորման: Այս ժողովէն բխած ցանցը նաեւ կը նպաստէ անդամ եկեղեցիներուն եւ պատասխանատուներուն համագործակցութեան: Աւելցնենք, որ օրակարգի վրայ էր նաեւ Զուիցերիոյ մէջ 21-27 Յունիսին տեղի ունենալիք 11-րդ ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած Ե.Հ.Ն.Ի Կեդրոնական Վարչութեան առաջին ժողովին նախապատրաստական աշխատանքները:

Նշենք, որ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, որ երկու յաջորդական ընտրաշրջանի համար Ատենապետ եղած է Ե.Հ.Ն.Ի Կեդրոնական ու Գործադիր վարչութիւններուն, ներկայիս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի

*նախագահներէն մէկն է՝ ներկայացնելով Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքն ու Միջին Արեւելքը:*



### ԳԵՐՄԱՆԻՈՅ «ԱՅՇՏԵՏ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՄՊԻՈՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

*Ուրբաթ, 24 Մարտ 2023-ին, Գերմանիոյ «Այշտէտ» համալսարանի աստ-ուածաբանական ամպիոնի Տնօրէն՝ Թովմաս Գլեմըր այցելեց Անթիլիասի Մայրավանք, ընկերակցութեամբ երկու դասախօսներու եւ երեք դոկտորայի ուսանողներու: Անոնք մօտէն ճանչցան Մայրավանքի Մայր Տաճարը, «Կիլիկիա» թանգարանն ու մատենադարանը եւ յարակից գրասենեակները:*



*Ապա, հիւրերը այցելեցին Վեհափառ Հայրապետին եւ մօտէն իմացան մեր Ս. Աթոռին կողմէ կատարուող աշխատանքներուն մասին, յատկապէս միջ-եկեղեցական, միջ-կրօնական ու ակադեմական մարզերէն ներս:*

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԶՈՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ  
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ**

31 Մարտ 2023-ին, յատուկ հանդիսութեամբ նշուեցաւ Լեոնալիբանանի մէջ Ասորի Ուղղափառ համայնքի Առաջնորդարանի հիմնադրման յիսնամեակը, որուն ընթացքին տեղի ունեցաւ սոյն յօբելինականին յատուկ ճորճ Եպս. Սալիպայի կողմէ պատրաստուած հատորին շնորհահանդէսը: Հանդիսութեան ներկայ էին Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Պետ՝ Ա.Ֆրամ Բ. Պատրիարքը եւ զանազան համայնքներէն ներկայացուցիչներ: Օրհնութեամբ Ն.Ս. Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, հանդիսութեան ներկայ գտնուեցան Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեան Վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանն ու Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհեանը:



Իսկ 6 Ապրիլ 2023-ին, տեղի ունեցաւ տասը տարի առաջ Հալէպի մէջ Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ՝ Պուլոս Եպս. Եազիճիի եւ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ՝ Եուհաննա Եպս. Իպրահիմի առեւանգման նշումը: Նշման ներկայ էին համայնքային, քաղաքական եւ ընկերային մարզերէն ներս գործող անձնաւորութիւններ ու քրիստոնէական համայնքներէ հոգեւորականներ: Յիշեալ հանդիպումին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայ գտնուեցաւ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը:

## ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

### ԼՈՋԱՆԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Խաչիկ Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամ»-ի յանձնախումբին նախաձեռնութեամբ, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ 22-24 Ապրիլ 2023-ին տեղի ունեցան խորհրդակցական նիստեր յատկացուած «Լոզանի 100-ամեակին Ընդառաջ» թեմային:

Տարեսկիզբին, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ կայացած հերթական նիստերու ընթացքին ընդգծուած էր անհրաժեշտութիւնը Լոզանի պայմանագրին 100-ամեակին ընդառաջ նախապատրաստուելու՝ հիմնական երկու ուղղութիւն նկատի ունենալով. առաջին, գտնել իրաւական այն ուղիները, որոնք Սեւր-Լոզան յարաբերակցութեամբ խնդրոյ առարկայ չեն դարձրներ հայութեան պատմական իրաւունքները. երկրորդ, ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու պահպանման առումով լուսարձակի տակ կը բերեն Թուրքիոյ ստանձնած պարտաւորութիւնները:



Այս խորհրդակցական նիստերուն հրաւիրուած էին Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգ. Ակադեմիայի (Գ.Ա.Ա.) պատմութեան հիմնարկի Տնօրէն՝ Փրոֆ. Աշոտ Մելքոնեան (յանձնախումբի անդամ), Գ.Ա.Ա.ի արեւելագիտութեան հիմնարկի տնօրէնի խորհրդակցական, Ակադեմիկոս՝ Փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան, Գ.Ա.Ա.ի պատմութեան հիմնարկի Հայոց Յեղասպանութեան եւ հայկական հարցի բաժնի Վարիչ՝ Դոկտ. Արմէն Մարուքեան, միջազգային օրէնքի մասնագէտ եւ Սիսի պատմական Կաթողիկոսարանի դատի թղթածրարի պատասխանատու՝ Դոկտ. Նորա Պայրազտարեան-Գապագեան, Պատմաբան Երուանդ Փամպուքեան (յանձնախումբի ատենակետ), յանձնախումբի անդամներ՝ Կիրո Մանոյեան, Շահան Գանտահարեան եւ Կաթողիկոսութեան հիմնադրամներու յանձնախումբերու քարտուղար-գործավար՝ Ահարոն Շիրտըմեան:

Նկատի ունենալով հարցին քաղաքական ուղղուածութիւնն ու ներկայացուցած այժմէական նշանակութիւնը, ինչպէս նաեւ համահայկական օրակարգի բնոյթը, Վեհափառ Հայրապետին հրաւերով նիստերուն նաեւ մասնակցեցան Հայ քաղաքական կուսակցութիւններու բարձրագոյն մարմիններու ներկայացուցիչները՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.) Կեդրոնական Վարչութեան անդամ Ալեքսան Քէօշկէրեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) Կեդրոնական Վարչութեան անդամ Տոբթ. Աւետիս Տաքէսեան:

Եւօրեայ նիստերու ընթացքին ներկայացուցեցան մասնագիտական զեկուցումներ՝ պատմական, իրաւական եւ քաղաքական ուղղութիւններով: Պատմաբաններու, իրաւաբաններու եւ Սփիւռքի Հայ քաղաքական-հասարակական գործիչներու այս համատեղ քննարկումը նպաստեց առաջադրուած թեմայի արծարծման նախապատրաստական փուլի կայացման:

Մասնակիցները յատկապէս շեշտեցին, որ ներկայ ճգնաժամային պայմաններուն մէջ, համազգային առումով, խիստ անհրաժեշտ են նման նախաձեռնութիւններ, որոնք կը համախմբեն հայ գիտական եւ քաղաքական միտքի ներկայացուցիչները համատեղ քննարկելու պատմական ենթահող ունեցող եւ տարածաշրջանին մէջ արձանագրուող իրադարձութիւններն ու անոնց հաւանական հետեւանքները, թէ՛ հարաւային Կովկասի եւ թէ՛ Միջին Արեւելքի մէջ:

Նորին Ս. Օծութիւնը իր խոր գոհունակութիւնը յայտնեց համախմբման երեւոյթին, միասնաբար խնդիրները քննարկելու պատրաստակամութեան եւ մանաւանդ իւրաքանչիւր ոլորտի տեսանկիւնէն խորքային ու որակեալ զեկուցումներուն, խորհրդակցութիւններուն եւ անոնցմէ բխած առաջարկներուն համար:

Համակողմանիօրէն անհրաժեշտ նկատուեցաւ նման ձեւաչափով խորհրդակցական հանդիպումները շարունակել:



**ԴՊՐԵՎԱՆՔ**

**ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ**

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**

Ուրբաթ, 3 Մարտ 2023-ի երեկոյեան, նախաձեռնութեամբ Դպրեվանքի Տեսչութեան եւ կազմակերպութեամբ Ուսանողական Խորհուրդին, Դպրեվանքիները հաւաքուեցան «Բրաբրոն Տումանեան» հանդիսասրահին մէջ՝ վայելելու համար Զաքար եւ Կամիլա Քէշիշեան ամուլին կատարողութեամբ գեղեցիկ գեղարուեստական յայտագիր մը:

Բացման խօսքը արտասանեց Հնծայարանի սաներէն՝ Բարշ. Նշան Սրկ. Անտրեան, որ ըսաւ. «Հայ երգը, երաժշտութիւնն ու բանաստեղծութիւնը մեր ազգին սնունդը դարձան, այնքան որքան՝ երկիւղալից աղօթքը: Այսօր, ողջ Սփիւռքը հայկականութեամբ կ'ապրի, որովհետեւ Հայ երգն ու բանաստեղծութիւնը ջուր կու տան օտար հողին վրայ աճած հայ ծիլերուն»:

Շուիահար, տուտուկահար եւ խմբավար՝ Զաքար Քէշիշեան ու դաշնակահարուհի ու բանաստեղծուհի Կամիլա Քէշիշեան Հայ երգի, երաժշտութեան եւ բանաստեղծութեան նուիրեցին երեկոն՝ առաւելաբար Կոմիտասի ու Սայաթ Նովայի ընմէջէն:





Աւարտին, խօսք առաւ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէր-նէգեանը եւ բարձր գնահատեց երաժիշտ ու արուեստագէտ զոյգը: Ան նշեց, որ «Հայ երգն ու բանաստեղծութիւնը կը նմանին կենսայորդ ջուրի, որովհետեւ հոն ուր ջուր կայ՝ կեանք կայ: Մենք մեր առաքելութեան ընթացքին միայն հաւատք պիտի չպահենք, այլ նաեւ կոշուած ենք Հայ մշակոյթը սերունդէ սերունդ, ջահի պէս փոխանցելու, որպէսզի հայկական ոգին չմարի, չնուաղի եւ չլքուի»:

**ԴՊՐԵՎԱՆԵՑԻՆԵՐԸ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Չորեքշաբթի, 15 Մարտ 2023-ի առաւօտուն, խումբ մը ընծայարանականներ, Դպրեվանքի Տեսչական կազմի գլխաւորութեամբ, այցելեցին Ազգ. Եղիշէ Մանուկեան քոլէճ եւ Ազգ. Միացեալ վարժարան, հերթաբար աշակերտներուն ներկայացնելու քառասնօրեայ պահեցողութեան կարեւորութիւնն ու Դպրեվանքի առաքելութիւնը:

Հանդիպումներուն ընթացքին, առաջին հերթին սաները Արեւագալի հոգեշունչ շարականներէն պատառիկներ երգեցին, որմէ ետք Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան խօսեցաւ միջինքի եւ պահքի կարեւորութեան մասին: Ան իր ներկայացումներուն առանցքը դարձուց մեր ստամոքսներէն զրկած պատառները մեր նմանին յատկացնելու անհրաժեշտութիւնը եւ նշեց, որ միջինքը լաւագոյն առիթն է մեր անձերը քննելու ու



մեր սխալները լաւապէս ճանչնալու, որպէսզի կարենանք մաքուր հոգիով ու սրտով հասնիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեան խորհուրդին:

Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան եւ խօսք առնելով ընդհ. գիծերու մէջ ներկայացուց Դպրեվանքն ու առաքելութիւնը՝ շեշտելով, որ Հայ աշակերտը կարելոր դեր ունի թէ՛ ազգային եւ թէ՛ եկեղեցւոյ կեանքէն ներս, որովհետեւ ազգին ապագան անոր վստահուած է: Ան յորդորեց աշակերտները ըսելով, որ անոնք են կրկին յարութեան յոյսն ու ոյժը Հայ ժողովուրդի զաւակներուն:

Աւարտին, վարժարաններուն տնօրէնութիւնները իրենց անհուն ուրախութիւնը փոխանցեցին Դպրեվանքի Տեսչական կազմին եւ դպրեվանեցիներուն՝ շահաւէտ այցելութեան համար:

## ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՆԵՐԸ ԾԽԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի գեղեցիկ աւանդութիւններէն մէկն է պահեցողութեան քառասնօրեակի հսկումները կատարել Լիբանանի ծխային եկեղեցիներուն մէջ, այսպիսով՝ առիթ ընծայելով հաւատացեալ ժողովուրդին Դպրեվանքի սաներուն կատարողութեամբ վայելելու աղօթքներն ու շարականները, ինչպէս նաեւ ծանօթացման առիթ ստեղծելու մեր ազգի ապագայ հոգեւոր ու ազգային ծառայողներուն հետ:

Այս տարի, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանին եւ գլխաւորութեամբ Դպրեվանքի Տեսուչ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանին, մեր սաները այցելեցին հետեւեալ եկեղեցիները՝ Ֆանարի Ս. Երրորդութիւն մատուռ (24 Փետրուար), Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցի (10 Մարտ) եւ Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցի (24 Մարտ):

• Ֆանարի Ս. Երրորդութիւն մատրան մէջ, յաւարտ հսկումին, Առաջնորդ Սրբազան Հայրը իր բարձր գնահատանքը յայտնեց Դպրեվանեցիներուն ըսելով՝ «Մեր եկեղեցւոյ սպասաւորութեան աշխատանքին լծուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի սաները օրէ օր կը զարգանան եւ կ'աճին՝ ծառայելու համար Հայ ժողովուրդի զաւակներուն: Հետեւաբար, յարատեւ աղօթենք անոնց համար, որպէսզի Աստուած հաստատ եւ անփորձանք պահէ անոնց մատղաշ քայլերը»:

Օրուան խորհրդածութիւնը կատարեց Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան հետեւեալ բնաբանին լոյսին տակ. «Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի» (Բ.Տմ 4.7): Ան ըսաւ, որ քառասնօրեայ պահեցողութեան ընթացքին պէտք է

մտածենք, թէ ի՞նչ բանի համար պէտք է պատերազմինք ու գիտակցինք, թէ ի՞նչ բան պէտք է պահենք մեր կեանքին մէջ եւ ինչը հեռացնենք մեր կեանքէն: Արդ, իրարու դէմ պատերազմելու փոխարէն՝ պայքարինք իրարու փրկութեան համար:

Արարողութենէն ետք տեղի ունեցաւ մտերմիկ սիրոյ սեղան, որուն ընթացքին Ֆանարի Հ.Յ.Դ. «Է. Ակնունի» Կոմիտէի ներկայացուցիչ՝ Արծիւ Տէր Խաչատուրեան եւ Ֆանարի Թաղականութեան Ատենապետ՝ Խաչիկ Էլէյճեան իրենց սրտի խօսքերը արտասանեցին: Հուսկ, Տեսուչ Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց ծովսի Քահանայ Հօր եւ Տիկնաց յանձնախումբին՝ իրենց սիրալիր ընդունելութեան համար:

• Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, – Առաջնորդ Սրբազան Հայրը պատգամեց, որ Մեծ Պահքը դէպի Աստուած երթալու պատրաստութեան շրջանն է: Մեր եկեղեցւոյ հայրերը այս քառասնօրեայ շրջանը հաստատած են, որպէսզի մենք պահ մը անդրադառնանք, թէ մարդը Աստուծոյ պատկերին եւ նմանութեան համաձայն ստեղծուած է, ըսաւ ան ու ափսոսանք արտայայտեց, որ այսօր այդ պատկերը կ'աղաւաղուի: Վերջապէս, ան քաջալերեց հաւատացեալները՝ ըսելով, որ քառասնօրեայ պահեցողութիւնը լաւագոյն առիթն է մեր մարմինը կրթելու եւ հոգիները դաստիարակելու:

Սրբազան Հօր խօսքէն ետք, օրուան խորհրդածութիւնը ներկայացուց Դպրեվանքի աւարտական սաներէն՝ Բարշ. Նշան Սրկ. Անտրեան, բնաբան ունենալով «Յամենայն ժամ աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արագիս Տէր» շարականէն: Ան նշեց, որ կ'ապրինք օրեր, ուր վախն ու սարսափը մնայուն ներկայութիւն դարձած են մեր կեանքէն ներս: Այնուամենայնիւ, ո՛չ մէկ բան մեզ կրնայ հեռացնել մեր հաւատքէն, որովհետեւ մեր հաւատքի խարխալը Քրիստոս ինքն է:

Հսկումի արարողութենէն ետք, Դպրեվանքիներ եկեղեցւոյ անդամներուն հետ, համախմբուեցան սիրոյ սեղանի շուրջ, այնուհետեւ, Դպրեվանքի Տեսուչ Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց ծովսի Քահանայ Հօր եւ Տիկնաց յանձնախումբին:

• Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, արարողութեան աւարտին, Հայր Պարոյր իր խօսքը ուղղեց հաւատացեալ ժողովուրդին, ըսելով. «Խաչին նշանը տարիք եւ կարողութիւն չի ճանչնար: Այսօր բոլորս այստեղ հաւաքուած ենք, որովհետեւ Խաչին նշանը մեզ կը հրաւիրէ աղօթելու անոր առջեւ եւ փառք տալու անոր փրկութեան համար: Կենարար խաչը սիրոյ նշան է, պէտք է սիրով միանանք անոր տակ եւ անոր ընդմէջէն Քրիստոս փնտռենք մարդոց մէջ»:



Օրուան խորհրդածութիւնը ներկայացուց Դպրեվանքի աւարտական սաներէն՝ Բարշ. Հրակ Սրկ. Գրտանեան, հետեւեալ բնաբանով. «Ինծի՛ եկէք դուք բոլորդ, յոգնածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի» (Մտ 11.28): Ան ըսաւ, որ մեր կեանքի ծովը Քրիստոսով նաւարկելու պարագային անպայմանօրէն կը հասնինք փրկութեան նաւահանգիստ. ուստի, բաւարար է վստահիլ բարի Նաւապետին՝ առանց երկմտանքի:

Արարողութենէն ետք, սիրոյ սեղանի մը շուրջ համախմբուեցան Դպրեվանքն ու Ս. Աստուածածին եկեղեցւոյ մեծ ընտանիքը եւ հիւրասիրուեցան եկեղեցւոյ Տիկնաց Յանձնախումբին կողմէ: Դպրեվանքիներ ազգային եւ ժողովրդական երգերով ճոխացուցին երեկոն: Աւարտին, Տեսուչ Հայր Սուրբը յայտնեց իր շնորհակալութիւնը:

### **ՄԻՋԻՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Չորեքշաբթի, 29 Մարտ 2023-ին, Դպրեվանքի մեծ ընտանիքն ու բարեկամները, Միջինքի ուրախ առիթով հաւաքուեցան «Բրաբիոն Տումանեան» սրահ, վայելելու համար Դպրեվանքի Տեսչութեան հովանաւորած եւ Տիկնաց Յանձնախումբին կազմակերպած Միջինքի ճաշկերոյթը: Այս առիթով, Յանձնախումբի անդամներէն՝ Տիկ. Մարո Թազեան հանդէս եկաւ բացման խօսքով ու շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն՝ այս ձեռնարկը քաջալերելուն համար: Ճաշկերոյթը ճոխացուցին դպրեվանքիները՝ ազգային երգերով ու



բանաստեղծութիւններով, ինչպէս նաեւ՝ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլէճի աւագ ուսուցիչ ջութակահար՝ Արմէն Ճենտերէճեանն ու դաշնակահար Ներսէս Զուլճեանը:

Ձեռնարկի ընթացքին խօսք առաւ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, որ հակիրճ ակնարկ մը նետեց Մեծ Պահքի եւ Միջինքի մասին: Ան առիթը օգտագործելով, խօսեցաւ նաեւ Դպրեվանքի առաքելութեան մասին ու նշեց. «Իւրաքանչիւրդ կրնաք Դպրեվանքի դեսպանները դառնալ եւ նպաստել այն առաքելութեան, որ ո՛չ թէ տեղական, այլ՝ համասփիւռքեան է»:

Յայտնենք, որ օրուան սիրոյ սեղանը ամբողջութեամբ հովանաւորած էր Տիկ. Թամար Զէյթլեանը (Ճաշարան «Արեւ»), որ արժանացաւ Տեսչութեան, Տիկնաց Խորհուրդի եւ ներկաներու երախտագիտական արտայայտութիւններուն:

**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ «ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԽՆԱՄԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ» ՆԻՒԹՈՎ**

Ուրբաթ, 31 Մարտ 2023-ին, Դպրեվանք այցելեց Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Լիբանան ժամանած խումբ մը բժիշկներէն՝ Տոքթ. Կարինէ Լէփէճեան, որ սիրալիր ընդունելութեան արժանացաւ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի կողմէ: Տոքթ. Լէփէճեան Դպրեվանք եկած էր դասախօսելու առողջապահութեան կարեւորութեան եւ առոյգ ապրելու հիմնական գիտելիքներուն ու միջոցներուն մասին:





Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան: Հայր Սուրբը դիտել տուաւ, որ 21-րդ դարը ունի լայն կարելիութիւններ, որոնցմէ կրնանք օգտուիլ առողջ կեանք մը ապրելու համար ու նշեց՝ «Իւրաքանչիւր անհատ իր անձին բժիշկն է. եթէ ուշադիր չըլլանք, կը կորսնցնենք մեր թանկագինը՝ առողջութիւնը»: Օրուան դասախօսը մանրամասնօրէն բացատրեց առողջ կեանք մը վարելու կերպերը ու անդրադարձաւ բժշկական խնամքին կարեւորութեան:

Այնուհետեւ, Տեսուչ Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց Տոքթ. Լէփէճեանին՝ ընծայած առիթին համար ու գնահատեց անոր օգտաշատ ներկայացումը: Հայր Սուրբը ընդգծեց, որ «Աստուած մեզի այնպիսի մարմին, միտք եւ հոգի տուած է, որ կրնանք մենք զմեզ առողջ պահել: Երբեմն կը մոռնանք մեր առողջութեամբ հետաքրքրուելու եւ կը տարուինք մեր առողջութիւնը վնասող սովորամոլութիւններով: Երբ կանուխ տարիքէն ուշադիր ըլլանք մեր առողջութեան, պիտի տեսնենք, թէ ինչպէ՛ս մեր մարմինը պիտի վարձատրէ մեզ կենսունակութեամբ»:

Ձեռնարկի աւարտին, Դպրեվանքի մեծ ընտանիքի անունով, Տեսուչ Հայր Սուրբը յուշանուէրով մը պատուեց յարգարժան հիւրը:

## **ՖՐԵՉՆՈՑԷՆ ԺԱՄԱՆԱԾ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՅԱՐԿԷՆ ՆԵՐՍ**

Երկուշաբթի, 3 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Ֆրեզնոյէն ժամանած հայ բժիշկներու պատուիրակութիւնը Դպրեվանք այցելեց: Այս մէկը առիթ հանդիսացաւ, որ բժիշկները թէ՛ մօտէն ծանօթանան Դպրեվանքի առաքելութեան ու առօրեային եւ թէ՛ բժշկական ընդհանուր քննութեան ենթարկեն

դպրեվանեցիները: Օրուան աւարտին, անոնք դարձան Դպրեվանքի մեծ ընտանիքին սեղանակից:

Ընթրիքի ընթացքին, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան գնահատեց բժիշկներուն առաքելութիւնը, ըսելով. «Այս նուիրեալ բժիշկները հեռաւոր ափերէն եկած են Լիբանան, որպէսզի կամաւորաբար ծառայեն հայ ազգին: Թէեւ անոնք Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կ'ապրին, սակայն Դպրեվանքը միշտ վառ կը մնայ իրենց սրտերուն մէջ»:



Սրտի խօսք արտասանեց Ֆրեզնոյի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս եւ սոյն առաքելութեան Նախագահ՝ Պերճ Սրկ. Աբգարեանը: Ան քաջալերեց դպրեվանեցիներուն նուիրուածութիւնը եւ ըսաւ. «Հայ ազգին ծառայելը մեր առաքելութեան հիմնական մասնիկն է: Մենք այստեղ կը գտնուինք, որպէսզի Հայ ժողովուրդը ներշնչենք եւ անոնք ալ զգան, որ իրենք առանձին չեն, այլ՝ Ֆրեզնոյի Հայ գաղութը միշտ իրենց կողքին է»:

**ՅԻՇԱՏԱԿ ՏԱՍԸ ԿՈՒՍԱՆԱՅ**

Երեքշաբթի, 4 Ապրիլ 2023-ի Երեկոյեան, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ տեղի ունեցաւ Երեկոյեան ժամերգութիւն, որուն ընթացքին կատարուեցաւ Տասը Կոյսերու յիշատակումը: Արարողութեան ընթացքին եր-



գուեցան օրուան խորհուրդը ներկայացնող շարականները եւ կարդացուեցան օրուան ընթերցումներն ու Աւետարանը:

Տասը ժառանգաւոր դպրեվանեցիներ, Աւետարանի ընթերցման պահուն, լապտերները իրենց ձեռքին, Ս. Խորանին առջեւ շարուեցան՝ իբրեւ խորհրդրդանիշ տասը կոյսերուն:



Այնուհետեւ, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խրատեց դպրեվանեցիները, ըսելով. «Սիրելի՛ տղաք, այսօր դուք մարմնաւորեցիք Քրիստոսի այն պատգամը, որ իւրաքանչիւրիս համար հրաւէր մըն է: Հրաւէր՝ արթուն մնալու, յարատեւ աղօթելու եւ մեր հաւատքի ճրագը վառ պահելու: Հետեւաբար, միշտ պէտք է պատրաստ ըլլանք եւ արթուն մտքով սպասենք Տիրոջ Երկրորդ Գալուստին»:


Աւարտին, օրուան խորհուրդին մասնակցող տասը դպրեվանեցիները յիշատակի խմբանկար մը առին տեսչական կազմին հետ:

### **ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝**

### **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկներու շարքին, Ուրբաթ, 21 Ապրիլին, Դպրեվանքի Ուսանողական խորհուրդը կազմակերպած էր դասախօսական երեկոյ մը՝ բանախօս ունենալով Դպրեվանքի վաստակաշատ ուսուցիչներէն՝ Պրն. Կարօ Յովհաննէսեանը:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց ընծայարանի սաներէն՝ Հրակ Կիս. Սրկ. Թաշճեանը, որ վերլիշեցուց ոգեկոչման ընդմէջէն կամքի վերանորոգման կարեւորութիւնը: Ապա, գեղարուեստական կոկիկ յայտագիրով հանդէս եկան սաները, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ բանախօսը:



Պրն. Կարօ Յովհաննէսեան առանձնացուց Յեղասպանութեան առնչուած յատկանշական դէպքեր ու զուգահեռներ ընդգծեց 1915-ին եւ ներկայիս՝ Արցախի մէջ տեղի ունեցող ցեղասպանութիւններուն հանդէպ պետութիւններուն որդեգրած կեցուածքներուն միջեւ: Ան ըսաւ.

«Ձէնքէն աւելի մարդկային միտքն է ստեղծողը: Բնութեան մէջ կրնայ ճիշդ ըլլալ, որ մեծը կը յաղթէ փոքրին, սակայն մարդկային ընկերութեան մէջ այդ մէկը ճիշդ չէ. միայն ու միայն միտքն է յաղթողը»:

Աւարտին, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան իր սրտի խօսքը ուղղեց դպրեվանեցիներուն եւ ընդգծեց Ապրիլ 24-ի սուրբ խորհուրդը ըմբռնելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ պարտական ենք մեր պապերուն: Ան քաջալերեց սաները, որ շարունակեն հաւատարիմ մնալ նահատակ սուրբերու պայքարին ու այդ գիտակցութեամբ մօտենան Հայոց Յեղասպանութեան հարցին»:

Աւարտին, Տեսուչ Հայր Սուրբը Դպրեվանքի մեծ ընտանիքին անունով, յուշանուէրով մը պատուեց վաստակաշատ ուսուցիչ՝ Պրն. Կարօ Յովհաննէսեանը:

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԶԵՌՆԱՐԿ**

Հինգշաբթի, 20 Ապրիլ 2023-ի առաւօտուն, Հայկազեան Համալսարանի մէջ կայացած Հայոց Յեղասպանութեան ոգեկոչումին իրենց մասնակցութիւնը բերին Դպրեվանքի ընծայարանի սաները: Ասիկա առիթ հանդիսացաւ նաեւ, որ սաները մօտէն ծանօթանան համալսարանին: Առ այդ, Հայկազեան համալսարանի դասախօս եւ Դպրեվանքի ուսուցիչ՝ Շաղիկ Գանտահարեան-Խիւտավերտեանի առաջնորդութեամբ, սաները շրջեցան Հայկազեանի զանազան բաժանմունքները եւ ծանօթացան անոնց աշխատանքներուն:

Աւարտին, դպրեվանեցիներ իրենց խորին երախտագիտութիւնը յայտնեցին Հայկազեան համալսարանի Նախագահ՝ Վերպ. Դոկտ. Փօլ Հայտոսթեանին՝ այս առիթին ու հրաւերին համար:

## ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՄԷՋ

Կիրակի, 23 Ապրիլ 2023-ին, Պիքֆայայի Ս. Նահատակաց խորանին առջեւ, տեղի ունեցավ մէկ ու կէս միլիոն սրբադասուած նահատակներուն յիշատակի նախատօնակը, նախագահութեամբ՝ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանին եւ մասնակցութեամբ Տեսչական կազմի անդամներուն, Դպրեվանեցիներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկաուտական խմբապետական կազմերուն: Նախտօնակէն ետք, Դպրեվանեցիներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ ուղղուեցան դէպի նահատակներու յուշարձան եւ միասնաբար իրենց յարգանքի տուրքը արտայայտեցին մոմավառութեամբ ու ծաղկեպսակ զետեղելով:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.-ի խօսք արտասանեց Լիբանանի շրջանային խմբապետութեան անդամ՝ Լոռի Պիլալեան, որմէ ետք Տեսուչ Հայր Սուրբը օրուան պատգամը յղեց ներկաներուն: Ան ըսաւ. «Նոյնիսկ եթէ չարը՝ թուրքը մեզ գերեզման դնէ, մենք գերեզմանին մէջ չենք մնար, այլ դուրս կու գանք յարութիւն եւ նոր կեանք առած, որովհետեւ մենք մահուամբ չենք դատապարտուիր: Մեր այսօրուան սիրտը խոցուած է Արցախի հայութեամբ եւ Արցախի սուրբ հողի կաշկանդումով ու բռնագրաւումով»:



## ՍՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ

### ՍՓԻԻՌՔԻՅ ԴԵՊԻ ՍՓՈՒԲՄ ՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ

Արամ Վեհափառը 2022 եւ 2023 տարիները հուշակեց Սփիւռքի տարի: Սա ընդհանուր անդրադարձման պատեհի ու հրատապ առիթ է՝ նամանականդ Արցախի ողբերգական պատերազմից յետոյ, երբ թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Սփիւռքը անփառունակ վիճակում են գտնուում: Միջին Արեւելքի վերջին տասնամեակների քաղաքական ու տնտեսական անկումը ջլատել ու նօսրացրել են հայկական դասական գաղութները՝ սատարելով արտագաղթը դէպի Արեւմուտք կամ Հայաստան: Հայաստանի անկախութիւնն էլ իր հերթին կլանեց Սփիւռքի տնտեսական, մարդկային ու մտաւոր ոյժը, որը այս տասնամեակներում կեդրոնացած էր Հայաստանի բարգաւաճմանը նպաստելու վրայ: Այս երկու քաղաքական ազդակների հետեւանքով տուժեց Սփիւռքը՝ մանաւանդ Միջին Արեւելքի Սփիւռքը, որը մարդկային ոյժով տեւականօրէն սնում էր արեւմտեան Սփիւռքը: Այնտեղից արտագաղթողներն էին, որոնք կենսունակութիւն ու կայտառութիւն էին բերում այստեղի համայնքներին, որոնք առանց այդ հոսքի հոգեվարքի մէջ կ'ընկնէին: Այս տասնամեակների ընթացքին Սփիւռքը ինքն իր մէջ սփռուեց եւ այս սփռումից պէտք է կրկին դէպի Սփիւռք վերադառնայ:

Սա առաւել եւս անհրաժեշտ է, որովհետեւ այստեղ ծառայած է նաեւ Արեւմտահայութեան եւ արեւմտահայերէնի հարցը: Հայաստանից դէպի Արեւմուտք շարունակուող ու նոր թափ առած արտագաղթը ոչ միայն հիւծում է Հայաստանը, այլ աւելի սրում արեւմտահայերէնի գոյութենական տագնապը: Ամէն ինչ վերածուում է արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնը լուռ նահանջում է: Համայնքային վարչական հաղորդակցութիւնները վերածուում են սովետական ուղղագրութեամբ գրուող արեւելահայերէնի, էջմիածնական թեմերում հայաստանցի արեւելահայ հոգեւորականների գերակշիռ մեծամասնութիւնը խօսում է արեւելահայերէն եւ քչերն են հոգում արեւմտահայերէնին եւ փորձում սատարել արեւմտահայերէնի ամրացմանը: Իրենք թերեւս զգան տագնապը, թերեւս կարեկցեն, բայց քչերն են այդ տագնապը իրենցը համարում եւ հակակշռում: Սփիւռքի հարցը այսօր էսպէս արեւմտահայութեան հարցն է: Բարեբախտաբար կան արեւմտահայերէնի ուսուցման

նախաձեռնություններ, հետաքրքրական նախաձեռնություններ, սակայն սըրանք բաւարար չեն: Սփիւռքի հարցը համայնքային եւ ընտանեկան կեանքի հարց է՝ եւ ոչ միայն ուսումնական ու մտաւոր:

Որո՞նք են Սփիւռքի հզօրացման ակունքները: Նախ եւ առաջ Հայաստանում եւ Սփիւռքում յստակ պատկերացում չկայ Սփիւռքի մասին: «Սփիւռքը» միգամած մի հասկացում է եւ նշանակում մանաւանդ «արտասահմանեան կեցավայր»: Այս ըմբռնման պատճառով էլ սովետական ականդրութեան համաձայն խօսուում է «Նոր Սփիւռքից» ու «Հին Սփիւռքից»՝ այնպէս ինչպէս խօսուում է «Հին ու նոր ուղղագրութիւնից» կամ «Հին ու նոր հայ մշակոյթից»: Այս ածականները ոչ թէ ժամանակային ածականներ են, այլ գաղափարախօսական՝ հինը հնացածն է, մինչ նորը՝ թարմն ու դալարը: Ի դէպ Քրիստոնեաների համար միայն մէկ իրաւ նորութիւն կայ: Դա էլ Քրիստոսի մարդեղութիւնն է: Եւ այս պատճառով էլ շարականները լեցուն են «նոր» ածականով (հին ու նոր Ադամ, հին ու նոր Եւա, նոր ժողովուրդ եւայլն): Միւս «նորութիւնները» արդէն իսկ առկայի այլակերպ միացումն ու բաժանումներն են, լուծումն ու բաղադրումը: Սփիւռքը սակայն նախ եւ առաջ «կեցավայր» չէ, այլ «կեցածեւ»՝ իրեն իւրայատուկ ժամանակով: Հայաստանցին եւ սփիւռքահայը տարբեր վայրերում եւ տարբեր ժամանակներում ապրող մարդիկ են: Գերմանիա եկող Հայաստանցիները «նոր» սփիւռքահայեր չեն, այլ «աւաւսահմանցի հայեր» են, որովհետեւ արտասահմանում են ապրում եւ սփիւռքեան կեցածեւի փորձառութիւն չունեն: Իսկ սփիւռքահայերը արտասահմանցիներ չեն, որովհետեւ Հայաստանը իրենց համար ոչ թէ իրական, այլ իրականութեան սահմանամերձ գաղափարական ներ-սահման է:

Սփիւռքի հզօրացման ակունքներից մէկը զգայաւորանքներն են: Հայկական շրջանակներում յաճախ խօսուում է «հայկական զգացումի» մասին, որ նա պակսում է երիտասարդութեան մէջ, որ առանց այդ զգացումի հիւժուում է «հայկական ինքնութիւնը», որ համայնքների առաջնահերթ պարտականութիւնն է «մատաղ սերնդին» փոխանցել այդ զգացումը: Հակիրճ ասած՝ «հայապահպանութիւնը» համարում է զգացական հարց: Այս կարծիքը ինքնին սխալ չէ, բայց թերի է: Զգացականից բացի կարեւոր է զգայականը՝ իմա մարմինը: «Հայապահպանութիւնը» մարմնական հարց է: Զգայարանքները կամ մարմինը հայ մշակոյթի մէջ որբակեաց են, կարծես թէ երկրորդական լինեն՝ թերագնահատելի: Հաւանաբար քրիստոնէութեան թիւրըմբռնումն է, որ սատարում է նման նախապաշարումների տարածմանը: Ճիշդ է, որ քրիստոնէութեան մէջ արմատացած է մարմնի ու զգայարանքների հանդէպ քննադատական կեցուածքը՝ այն աստիճան որ Աստուծոյն մօտենալու եւ միանալու համար անհրաժեշտ է համարում «սպանել» մարմինը եւ չէզոքացնել զգայարանքները: Սակայն սա իրաւ քրիստոնէական հայեցակէտ չէ, որովհետեւ նախ մարմինը Աստծոյ արարչագործութեան մաս է կազմում ու «բարի» է, եւ

ապա մարդու կենդանի մարմինը հոգեկանի եւ զգայականի անքակտելի ամբողջութիւնն է: Եւ ամբողջութիւնը աւելի է քան մասերի սոսկ գումարը:

Սակայն անկախ աստուածաբանական այս մտքերից, մարդաբանութիւնը մեզ ուսուցանում է, որ ճանաչողութեան հիմքը զգայարանքներն են: Թովմաս Ակուինացիի (1225-1274) ասոյթը հանրածանօթ է՝ "Nihil est in intellectu, quod non fuerit in sensu", որը նշանակում է՝ «Բանականութեան մէջ ոչինչ կայ, որը նախօրօք չի եղել զգայարանքների մէջ»: Այն, ինչ որ ինձ այստեղ հետաքրքրում է, ոչ այնքան ճանաչողութեան հարցն է, այլ այս սկզբունքի գործնական հետեւումները: Հիմնական հետեւումը այն է, որ «հայկականութիւն» փոխանցելու համար պէտք է հիմնուել զգայարանքների վրայ: Այսօր զգայարանքներն ու մարմինը թերագնահատում են նաեւ ուրիշ պատճառով: Դա թուայնացումն է: Մինչ իրականութիւնը եռաձաւ է, համակարգչային աշխարհը երկաձաւ է: Երեխաների կազմաւորման համար սակայն էական է իրական՝ եռաձաւ եւ ոչ միայն թուայնացած՝ երկաձաւ աշխարհը: Հոտոտելիքը, շօշափելիքն ու ճաշակելիքը նոյնքան կարեւոր են ինչքան տեսանելիքն ու լսելիքը: Առաւել եւս այս զգայարանքների միասնական ապրումը աւելի կարեւոր է քան մասնատուածը՝ մէկ կողմից տեսանելիքն ու լսելիքը եւ միւս կողմից հոտոտելիքը, շօշափելիքն ու ճաշակելիքը: Ժամանակի ու միջոցի ընկալումն էլ զօդուած է բոլոր զգայարանքների եւ մարմնի հետ: Նոյնիսկ համակարգչային աշխարհում տեսանելիքն ու լսելիքը տարբերում են իրական ձայներից ու գոյներից: Երեխաների աշխարհը պիտի իրականը լինի եւ ոչ թուայնացած՝ նոյնիսկ եթէ թուայնացումը մեծ հնարաւորութիւններ է մատուցում բոլորին: Ինքնութիւնն էլ, թէ անհատականը եւ թէ հաւաքականը, online չէ, այլ offline, ոչ թէ երկձաւ, այլ եռաձաւ:

Ցաւալի է որ այս դաստիարակչական հարցերի մասին համայնքներում չի խօսւում: Բոլորը զմայլած համակարգիչի ընձեռած կարելիութիւններով հեշտութեամբ մոռանում են նոյն այդ կարելիութիւնների վտանգները դաստիարակութեան ու առողջութեան համար: Հարցը միայն մոլութիւնը չէ, որի ապաքինման ծախսերը օրինակ Գերմանիայում ապահովագրական ընկերութիւններն են ստանձնում, այլ նաեւ անշարժութեան ու առանձնութեան վտանգը, սերտելու ունակութեան տկարացումը եւ ուշադրութեան ճապաղումը: Զգայարանքների համապարփակ գործածութիւնն ու խնամքը կարեւոր են թէ՛ դաստիարակութեան, թէ՛ համայնքային կեանքի եւ թէ՛ համայնքներում զգայարանքների միջոցով երեխաների անգիտակցութեան վրայ ազդելու համար:

Համայնքները փորձում են ամէն գնով առինքնել երիտասարդութիւնը, իրենց ներգրաւել համայնքային աշխատանքների մէջ, որպէսզի երբ հին սերունդը հրապարակից քաշուի, նոր սերունդը ստանձնի եւ շարունակի համայնքային կամ գաղութային աշխատանքները: Այս ջանքերում համայնքներն

ու հովիւնները կեդրոնանում են երիտասարդների վրայ եւ յաճախ մոռանում են մանուկներին եւ մանուկների ծնողներին: Մինչ բարդ է թափանցել երիտասարդների գիտակցութեան ու ներաշխարհի մէջ եւ աւելի ժամանակատար՝ եթէ նրանք արդեն իսկ արբունքի տարիքի մէջ են, աւելի դիւրընթաց է հասնել մանուկների անգիտակցիմ զգայաւանմների միջոցով: Հինգ զգայարանքների միջոցով կարելի է մանուկներին ընտելացնել, մտերմացնել հայ մշակոյթի հետ, որպէսզի երբ երեխաները մեծանան, այդ մտերմութիւնը հանգի հարազատութեան ու համայնքային աշխուժութեան: Սակայն այս բոլոր նկրտումները ապարդիւն կը մնան, եթէ ծնողները չը գործակցեն եւ բոլոր պարտականութիւնը կործեն համայնքների եւ հոգեւորականների ուսերին: Մինչ երիտասարդների պարագային ծնողների դերը սահմանափակ է, մանուկների պարագային դա էական է:

Ինչպէս է կարելի սնել զգայարանքները՝ տեսողականը, լսողականը, ճաշակելիքը, շոշափելիքը եւ հոտոտելիքը: Ահաւասիկ մի քանի օրինակներ, որոնք սպառիչ չեն, ոչ էլ վերջնական կամ հարկադրական: Կարեւորը սկզբունքն է, իսկ օրինակները փոխարինելի են:

Ա) Այբուբենը՝ ամէն գիր տպուած, գծագրուած կամ լուսանկարուած առանձին թուղթի վրայ կախել մանուկի սենեակի պատերից կամ հայերէն գիրք ու թերթ դնել գետնի վրայ, որպէսզի երեխան խաղալու ժամանակ անընդհատ այդ գրերը տեսնի: Երեխաների աչքն ու ձեռքը պիտի տեսնեն, շոշափեն այս առարկաներին, քայլելու ժամանակ ակռկեն գրքին, առանց որ ծնողները երկար ու բարակ այբուբենի կամ հայերէն լեզուի մասին խօսեն կամ այդ գրերը դիտումնաւոր երեխաների ուշադրութեան յանձնեն: Իրենց առկայութիւնը երեխաների շրջապատում բաւարար է, որ անգիտակիցը ըմբռնի այդ բոլորը:

Բ) Ամէն օր մէկ ժամ լսել Կոմիտասի երաժշտութիւնը: Երեխան թող խաղայ եւ ենթախորքում լսի Կոմիտասի երաժշտութիւնը՝ առանց բացատրութիւնների կամ պատմական ներբողների: Սա կարող է ժողովրդական կամ հոգեւոր երաժշտութիւնը լինի՝ իրենց կշռոյթով ու մեղեդիներով:

Գ) Կիրականամուտին կամ Տաղաւար Տօներին թող ընտանիքները խունկ ծխեն կամ Papier d'Armenie վառեն, որպէսզի հոտառութիւնը շաղկապուի այս փոքր ծէսի հետ:

Այս երեք օրինակները կարելի է նաեւ իրար հետ բաղադրել: Էականը նման արարմունքների կանոնաւոր եւ տեւական գործադրումն է, որպէսզի մանուկները կամաց-կամաց անգիտակցաբար մտերմանան հայ գրերի կամ հայկական դասական երաժշտութեան կամ սովորութիւնների հետ: Կարելի է նաեւ թ'է անչափահասների եւ թ'է չափահասների համար պատրաստել You-



tubeեան մի շարք, որը պարունակի արեւմտահայ գրականութեան ծաղկաքաղի ընթերցանութիւնը: Առանց վերլուծութեան կամ երկար բացատրութիւնների ասմունքողը ընթերցում է օրինակ Շահան Շահնուրի մի քանի յօդուածները կամ Ռուբէն Զարդարեանի մի քանի պատմուածքները կամ Յակոբ Օշականի «Մնացորդացի» հատուածներ: Եւ ընտանիքները երեխաների ներկայութեամբ լսում են այս շարանը: Կարելոր չէ ամէն բառ ու դարձուածք հասկանալը: Կարելորը լեզուն է իր ամբողջականութեան մէջ՝ իր կշռոյթով ու շեշտով: Ով գրականութիւն կարդալու տրամադրութիւն չունի, կարող է գրականութիւն լսել: Նման մի շարքի պատրաստութիւնը ճկուն է եւ կարող է բազմաթիւ տարազումներ ունենալ:

Համայնքայինները կամ հոգեւորականները թող նորածինների ծնողների հետ խօսեն, բացատրեն այս բոլորի նպատակն ու սկզբունքը եւ խրախուսեն, որ մասնակցեն: Սա առաջին քայլն է: Իսկ երկրորդը՝ նոյնքան կարելորդ՝ այն է, որ մկրտող հոգեւորականները կամ համայնքայինները պարբերաբար հանդիպեն ծնողներին եւ տեղեկանան, թէ արդեօք իրենք գործադրում են այս առաջարկները եւ որոնք են իրենց փորձառութիւնները: Կարելի է նոյնիսկ նորածինների կամ մանուկների ծնողներին հաւաքել եւ միասնաբար խօսել այս հարցերի եւ իրենց ունեցած փորձառութիւնների մասին: Այս խօսակցութիւնն ու պարբերական յիշեցումը անհրաժեշտ է, որովհետեւ ծնողները նոյնքան ուղեցոյցի պէտք ունեն, ինչքան մանուկները:

Ինչքան լաւ կը լինէր, եթէ համայնքներում խօսուէր նաեւ այն հարցի մասին, որ թուայնացած այս ժամանակում հաղորդակցութեան նոր միջոցները պէտք է գիտակցաբար ու վերապահութեամբ գործածուեն, որ ծնողները պէտք է իրենց ընտանեկան կեանքում ժամեր վերապահեն՝ մանաւանդ երեխաների ներկայութեամբ, որոնց ընթացքին իրենք ոչ բջիջային հեռաձայնը գործածեն, ոչ համացանցում դեգերեն եւ ոչ հեռատեսիլի մէջ թաղուեն, այլ երեխաների հետ խաղան, երգեն, պարեն, արտասանեն, այսինքն բոլոր զգայարանները բանեցնեն\* : Միայն համակարգիչով եւ ոչ ձեռքով գրելը

\* Հաղորդակցութեան այս նոր միջոցները մարդկանց նոյնիսկ անասնացնում են: Աւրտրիացի իմաստասէր Գիւնթըր Անդրըսը գրում է՝ «Անմիջականութիւնը բարբարոսութիւն է»: Անասունը իր հակազդեցութիւնների մէջ անմիջական է, որովհետեւ իր բնագործ անխաթար է, միչդեռ ասունը, այսինքն մարդը, թոյլ եւ անորոշ բնագործ ունի եւ մշակոյթ է ստեղծում զսպելով իր կիրքերը, հունաւորելով իր զգացումներն ու ձգտումները: Անասունը չի կարող ինքն իրեն զսպել եւ հետեւում է իր բնագործին: Ոչ այսպէս մարդը: Օրէնքը, քաղաքավարութիւնը, բարոյականութիւնը կամ հաստատութիւնները մարդկային կեանքը միջնորդուած են դարձնում եւ զսպում մարդու անմիջականութիւնը: SMS, Facebook, twitter, եւ այլն ստիպում են մեզ ճիշդ հակառակը՝ անմիջական դառնալու՝ անմիջապէս պատասխանել, անմիջական ներկայութիւն ցուցաբերել, անմիջապէս կարծիք յայտնել՝ համաձայնել, հակառակել, հաւանել, հայհոյել: Մէկ հպում եւ հակազդեցութիւնը փո-

նմանապէս վնասում է մտածելուն, որովհետեւ ձեռքը միայն իրեր բռնելու գործիք չէ, այլ նաեւ ըմբռնելու միջոց: Այս պատճառով պէտք է ընտանիքները ուշադիր լինեն, որ երեխաները իրենց ձեռքերը համապարփակ օգտագործեն: Ձեռքը կապուած է մտքի հետ: Ինչքան լաւ կը լինէր, եթէ համայնքները եւ հոգեւորականները նաեւ այն հարցի մասին խօսէին, որ երեխաների կեանքը պէտք է կշռոյթ ունենայ՝ ամենօրեայ կանոնաւոր կրկնութիւն: Այս առօրեայի կշռոյթը կոչուում է ծէս: Ծէսը եւ ծիսակատարութիւնը միայն կրօնական երեւոյթներ չեն, այլ ընդհանուր մարդկային: Ընտանիքներն էլ պէտք է մշակեն իրենց ծէսերը՝ առօրեայ ու պարբերական կրկնութիւնները, որոնք երեխաներին կոփում են եւ վստահութիւն ներշնչում, ինքնավստահ դարձնում: Ծէսն էլ կրթութեան ու կրթանքի մաս է կազմում: Կաւ ընտանիքները ծէս ունեցող ընտանիքներն են: Սա նշմարել եմ ոչ միայն, բայց նամանաւանդ գերմանական ազնուական գերդաստանների մօտ, որոնք հարիւրաւոր տարիների պատմութիւն ունեն եւ իրենց ընտանեկան աւանդութիւնները սերնդից սերունդ փոխանցելով կոփում են իրենց ընտանեկան ինքնութիւնը:

Այս գործնական հարցերի մասին կարելի է նաեւ ուղեցոյց մի հակիրճ տեսանիւթ պատրաստել՝ օրինակներով ու բացատրութիւններով եւ ցրել համայնքներում:

Այս ընդհանուր նկատառումներից յետոյ անդրադառնանք արեւմտահայերէնի հարցին:

Սփիւռքի հարցը հիմնականում արեւմտահայութեան եւ արեւմտահայերէնի հարցն է: Եթէ Հայաստանում արեւելահայերէնը իմաստային տազնապի ու երեւումների, արեւմտահայերէնը գոյութեմական տազնապի եւ հոգեվարքի մէջ է: Այն գլխաւոր պատճառը, որը լեզուն վերածել է «ի միջի այլոց» հարցի այն թիրրմբոնումն է, որի համաձայն «լեզուն հաղորդակցական միջոց է»: Ըստ այս ըմբռնումի մարդը ընկալում, զգում եւ մտածում է եւ ապա մտածածը, զգացածը եւ ընկալածը «արտայայտելու» համար մի «միջոց» է փնտռում եւ քանի որ այդ միջոցը ոչ սուրճն է, ոչ աղը եւ ոչ էլ օճառը, դիմում է միւս «միջոցին»՝ գրին: Ուրեմն մարդը «գործածում» է գիրը, արտայայտում եւ արտայայտուելուց յետոյ այդ «միջոցը» պահարանի մէջ դնում եւ մինչեւ յաջորդ «գործածութիւնը» ապահով պահում: Նման մօտեցումը թերեւս կայտառ երեւակայութեան արդիւնքը լինի, սակայն մարդաբանութեան հետ որեւէ առնչութիւնն չունի: Անշուշտ այս հակիրճ տողերով կարելի չէ հանգամանօրէն անդրադառնալ սոյն հարցին, սակայն ելնելով այն իրադրութիւնից, որ

---

խանցում է: Այս անմիջականութիւնը սակայն անասնականանցում է մարդուն եւ մանկամտացում: Այսօրուայ գոնէ Եւրոպայում տիրող հանրային դիւրագրգռութիւնն ու յարձակողականութիւնը նաեւ այս անմիջականութեան հետեւանքներն է: Եւ ով յապաւումներով ու կրճատումներով է գրում, սկսում է նաեւ կրճատուած մտածել:

մարդը ընկալում, զգում եւ մտածում է ոչ թէ լեզուից դուրս, այլ լեզուի մէջ, ապա լեզուի նկատմամբ հոգատարութիւնն ու հոգածութիւնը միաժամանակ մտածման, զգացման եւ ընկալման խնամք ու մշակումն է: Հետաքրքրական եւ օգտաշատ հետազօտութիւն պիտի լինէր քննելը, թէ ինչպէս Հայաստանում արեւելահայերէնի անկումը մղել է նաեւ պետական կարգ ու սարքի թուլացմանը:

Լեզուի նկատմամբ անհոգութիւնը ընկալման, զգացման եւ մտածման նկատմամբ անհոգութիւն է: Արեւմտահայերէնի նկատմամբ «Գնա՛ մեռիր, արի սիրեմ» լողունգը չի կարող այլեւս գործունէութեան կարգախօս լինել: Մշակոյթը թանգարանում դնելն ու աշխարհում հնապարծիկ ու սնափառ դեգերելը իմաստութեան նշան չէ: Իմաստութիւնը եղածն ու ունեցածը խնամելու եւ մշակելու մէջ է: Ով «հոգի» ունի «հոգում» է, «նախահոգ» քայլեր է նախաձեռնում, խնամում է ու մշակում: Իսկ ով մշակում է, մշակոյթ ունի: Խնամուած ու կոփուած լեզուն մշակոյթ ունենալու ցայտուն նշաններից է: Կոփուած լեզու նշանակում է կոփուած միտք: Սփիւռքեան շաբաթօրեայ կամ կիրակնօրեայ վարժարանները մեծ նուիրումով ու զոհաբերութեամբ շարունակում են իրենց աշխատանքը, սակայն նման անձնուէր ճիգը հարցի լուծման մի մասն է: Ընտանիք, զգայարանք եւ ծէս պէտք է դառնան այն հիմքը, որի վրայ կարող են թարմանալ ու ամրապնդուել ուսումնական այս ձեռնարկները:

Ստորեւ մի քանի այլ առաջարկներ՝

Ա) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Մխիթարեան Միաբանութիւնը, Զմմառի Կաթողիկէ Պատրիարքութիւնը եւ գործող արեւմտահայ քիչ թէ շատ հաստատուն կազմակերպութիւնները թող միասնաբար մշակեն արեւմտահայ մշակոյթը խթանելու մի ծրագիր: Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը պէտք է սփիւռքեան ծուխերում պաշտօնավարող հոգեւորականներին յանձնարարի, որ իրենք յատուկ հոգատարութիւն ցուցաբերեն արեւմտահայերի եւ արեւմտահայերէնի նկատմամբ, հայթայթելով լեզուի ու մշակոյթի ուսուցման ու բանեցման միջոցներ:

Բ) Անհրաժեշտ է վերաբացուեն կա՛մ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան եւ կամ էլ Սերի Մուրատեան վարժարանը, որոնք Եւրոպայի ամենագեղեցիկ երկրներում ու քաղաքներում գտնուելով, կարող են նոր շունչ ու թափ տալ արեւմտահայ մշակոյթին: Ես Մուրատ-Ռափայէլեանի նախկին սան եմ: Ինչքան տարիները անցնում են եւ տեսնում եմ արեւմտահայ համայնքների փլուզումն ու կրթութեան նուազումը, այնքան աւելի համոզում եմ նման աւանդութիւն ունեցող վարժարանների վերաբացման անհրաժեշտութեամբ ու առաքելութեամբ:

Գ) Նկատի ունենալով, որ Հայաստանում արդեն մեծ թուով արեւմտահայեր են ապրում, թող Հայաստանը արեւմտահայերէնը պաշտօնապէս յայտարարի իբրեւ պետական երկրորդ լեզու: Սա թոյլ կը տայ, որ արեւմտահայերը Արեւելահայաստանում շարունակեն իբրեւ արեւմտահայ ապրեն:

Դ) Հայութիւնը պէտք ունի քանակի: Թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայաստանում: Ծննդաբերութիւնը պէտք է աճի: Քանակը որակ է բերում: Եւ քաղաքական, ընկերային ու պաշտպանական գործունէութեան ծիրը ընդլայնուում է: Կառավարութիւնները նման նախաձեռնութիւնները հունաւորում են տուրքերի համակարգը համապատասխանօրէն փոխելով: Սփիւռքը կարող է այդ ընթացքը սատարել, օրինակ այդ նպատակին ծառայող մի հիմնադրամի կազմութեամբ:

Ե) Մի վերջին կէտ: Հասկանալի լինելու մարմանը վտանգաւոր է արեւմտեան Սփիւռքի համար: Որովհետեւ այստեղ օտար լեզուն միշտ աւելի հասկանալի է եւ հայերէնի հետ մրցակցութիւնը իր օգտին է վերջանում: Գերմանիայում օրինակ, երբ որեւէ մի ժողովի կամ նախաձեռնութեան ընթացքին մի անձ հայերէն լաւ չի հասկանում, հաւանական է, որ ամբողջ նիստը հայերէնից փոխուի գերմաներէնի: Սա վատառողջ սովորութիւն է, որը նաեւ ստրկամտութեան արտուղիներից է: Եթէ ամէն ինչ անընդհատ քարգմանուի, այլեւս մեկ մեզ հետ միայն քարգմանական յարաբերութիւն կունենանք եւ սա կործանարար կը լինի: Կրկին՝ լեզուն նախ եւ առաջ հաղորդակցութեան միջոց չէ: Մարդը ապրում, զգում ու մտածում է լեզուի մէջ: Աւելի անհեթեթը այն է, որ ծնողները իրենց երեխաներին հայերէն լեզուի դասընթացքի են ուղարկում, բայց երբ երեխան դասարանից դուրս է գալիս նոյն ծնողները սկսում են իրենց երեխաների հետ օրինակ գերմաներէն խօսել: Կարելի է այսքան միամիտ, չասելու համար անմիտ լինել: Նման երեւոյթները մանր հարցեր չեն, այլ հանգուցային: Ես, օրինակ մեր համայնքներում երբեք գերմաներէնով չեմ դասախօսում, նոյնիսկ երբ ատենապետները բողոքում են, որ մարդիկ չեն հասկանալու: Դասախօսութիւնը սիրով կ'ամփոփեմ գերմաներէնով, բայց կը դասախօսեմ միայն հայերէնով: Հայերէնը պէտք է «լսելի» դառնայ ու մնայ: Զհասկանալը պէտք է մղի ոչ թէ գերմաներէնի կամ այլ լեզուի կիրառմանը, այլ հայերէնի աւելի լայնածաւալ գործածմանը: Եւ եթէ դասախօսը կամ համայնքի ատենապետը ներկաներին բացատրի, որ հայերէնը էական է ինքնութեան համար, որ նիւթով հետաքրքրուողներն ու լեզուին անծանօթները թող «չհասկանալու» այդ «զոհաբերութիւնը» ստանձնեն, որպէսզի հայերէնը չտուժի, ապա վստահ եմ, որ շատերը կ'ըմբռնեն վիճակը եւ նոյնիսկ կը խթանեն, որ ելոյթը միայն հայերէնով տեղի ունենայ:

Ամփոփելով՝ Սփիւռքը թուլանալով չէ, որ Հայաստանը կը հզօրանայ: Հզօր Հայաստանը պէտք ունի հզօր Սփիւռքի: Այդ պատճառով ժամանակն է,

որ Սփիւռքը իր ոյժերը կեդրոնացնի նաեւ իր զարգացման վրայ, նամանականդ արեւմտահայ մշակոյթի ամրացմանն ու ծաւալման համար: Հայութեան հարստութիւնը իր գանազանութիւնն ու երփնեքանգութիւնն է: Այդ երփնեքանգութիւնը պէտք է խնամել ու մշակել: «Զարգացում»-ը ունի երկու նախադրեալ՝ ա. Տարբերակում եւ բ. Համարկում: Զարգացած միաւորներ՝ անձից մինչեւ պետութիւն տարբերակուած են, զանազան շերտեր ունեն, սակայն միաժամանակ համարկուած: Հայերի մօտ սիրելի դարձած «միութիւն»-ը խաթարում է տարբերակումը եւ ջլատում համարկումը: Շատ բնական է որ տարբերութիւն կայ պոլսահայի, երեւանցու, ջուղայեցիի կամ լիբանանահայի միջեւ: Ինչ լաւ որ այդ տարբերութիւնները կան՝ բարբառ, հանաք, վարք ու բարք: Այս բոլորը պէտք է խնամել ու գուրգուրալ: Ինչ լաւ կը լինէր, եթէ Ազգային Ժողովում տարին երկու անգամ, երբ օրակարգը թեթեւ է, երեսփոխանները իրենց բարբառներով ելոյթ ունենան: Ինչ լաւ կը լինէր, եթէ Հայաստանը ապակեդրոնացած լինէր եւ ամէն ինչ քաղաքամայրում թխմուած չը լինէր: Եթէ Գերմանիայում Միւնխէնի կամ Ֆրակֆուրտի օգակայարանները շատ աւելի որակաւոր են քան թէ Բեռլինինը, ապա սա Գերմանիոյ ոչ թէ թուլութեան, այլ հզօրութեան նշանն է: «Միութիւն» չի նշանակում «մէկութիւն», այլ «գործակցութիւն»: Իսկ գործակցութիւնը օգտակար է միայն այն ժամանակ, երբ զանազանութիւնը չի տափակեցում, այլ մշակում է ու խնամում: Սա վերաբերում է Սփիւռքին ու Հայաստանին եւ սա վերաբերում է արեւելահայերէնին ու արեւմտահայերէնին:

ԴՈԿՏ. ՎԱԶՐԻԿ ԲԱԶԻԼ



**ԹԵՄԱԿԱՆ**

**«ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ  
ՏԻԱՐ ՄԱՅՔ ՍԱՐԵԱՆԻ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ եւ խնդրանքով ու Ա.Մ.Ն. Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանի ձեռամբ, Ուրբաթ, 28 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Սարեան ընտանիքին կողմէ կազմակերպուած յատուկ ընդունելութեան մը ընթացքին, որ տեղի ունեցաւ Ս. Նահատակաց եկեղեցւոյ համալիրի հաթուն Սարեան շրջափակին մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկեան Ասպետ» շքանշան յանձնուեցաւ Տիար Մայք Սարեանի:

Տիար Մայք Սարեան անցնող տարիներու ընթացքին բազմամակարդակ նիւթական գորակցութիւն կատարած է Արեւմտեան Հայոց Թեմի զանազան ծրագիրներու յաջողութեան ի խնդիր, ինչպէս նաեւ գաղութային եւ համահայկական տարատեսակ գործոց յաջողութեան համար:



Հայ Եկեղեցին, Ազգային Առաջնորդարանը, Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցին, Հայ Դատը, հայկական միութիւններն ու կառույցները վայելած են Տէր եւ Տիկ. Մայք եւ Էվելինա Սարեանի ուշադրութիւնն ու աջակցութիւնը, որուն վերջին պսակումը կը հանդիսանայ Վեհափառ Հայրապետին Արեւմտեան Հայոց Թեմ Հովուապետական այցելութեան ընդառաջ հարիւր հազար (\$100,000) տոլարի նուիրատուութիւնը:

Յայտնենք, որ ընտանեկան ձեռնարկին խօսք առին Տեարք՝ Կրէկ Մարթայեան, Ճօ Կանիմեան, Էվելինա Սարեան, հարազատներ ու բարեկամներ, մինչ Հայրապետական կոնդակը ընթերցեց եւ իր սրտի խօսքը փոխանցեց՝ Առաջնորդ Սրբազան Հայրը:

**Հ.Ե.Հ.Ո.Մ.**

**Հ.Ե.Հ.Ո.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 60 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ՝ «ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ՝ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԴԵՍՊԱՆ» ԹԵՄԱՅՈՎ**

Հայ Եկեղեցույ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 60 ամեակը՝ ձեռնարկելով հայ ուսանողութիւնը հայ ինքնութեան հետ առնչող զանազան ծրագիրներու, ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 2023 թուականը Սփիւռքի վերակազմակերպման տարի հռչակելուն ծիրէն ներս:

Առ այդ, Շաբաթ, 25 Մարտ 2023-ի առաւօտուն, օրհնութեամբ ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ ընթացք առաւ վերոյիշեալ ծրագիրներու սեմինարներու շարքին առաջինը, աշակցութեամբ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքին: Միօրեայ այս առաջին սեմինարը կրեց «Հայ Համալսարանականը՝ Մշակոյթի Դեսպան» թեման, որուն ընթացքին անդրադարձ կատարուեցաւ գիրի ու գրականութեան մշակոյթի եւ ուսման տեսանկիւններէն:





Բացման խօսքը արտասանեց Հ.Ե.Հ.Ո.Մ.ի Ատենապետ՝ Սերուժ Խանճի-հանեան, որ վեր առնելով Հայ մշակույթը՝ ընդգծեց Սփիւռքի մէջ հայօրէն ապրելու կոչուած հայ երիտասարդին պարտականութիւնը: Ան շեշտեց մշակույթին էական դերը ինքնութեան պահպանման մէջ ու այս բոլորը դիտել տուաւ, մեկնելով Վեհափառ Հայրապետին 2023 տարուան հռչակագիրին մէջ հնչած Սփիւռքի վերականգման ու վերակազմակերպման կոչէն:

Բացման նիստին, Նորին Ս. Օծութիւնը երկխօսութիւն ունեցաւ մասնակից երիտասարդներուն հետ, որոնք եկած էին լիբանանահայ վարժարաններէն եւ երիտասարդական ուսանողական զանազան միութիւններէն: Իր խօսքին մէջ Հայրապետը կեդրոնացաւ Սփիւռքի վերականգման աշխատանքներուն մէջ մշակույթին կարեւորութեան վրայ եւ այս իմաստով մատնանշեց երիտասարդներուն դերակատարութիւնը: Ապա, մասնակիցները աւելի խորացան նիւթերուն մէջ կլոր սեղանի մը ընդմէջէն՝ Լուիզա Պապոյեանի, Դոկտ. Արմէն Իւրնէշլեանի եւ Զաքար Քէշիշեանի հետ, զրուցաւար ունենալով Արազ Գոճայեանը: Կէսօրուան ճաշի դադարէն ետք, մասնակիցները հաւաքական աշխատանոց մը ունեցան՝ հայ մշակույթը արդիական կերպերով հանրութեան ներկայացնելու թեմայով, գլխաւորութեամբ Դոկտ. Քրիստին Արզումանեան-Ղազարեանի:

Հայրապետ-ուսանող զրուցի ընթացքին, Նորին Սրբութիւնը իր խօսքը սկսաւ բարձր գնահատելով ուսանողներուն մասնակցութիւնը այս ծրագիրին եւ Հ.Ե.Հ.Ո.Մ.ի նախաձեռնութիւնը՝ նշելով, որ սա պերճախօս վկայութիւն է երիտասարդութեան կապուածութեան մեր ժողովուրդի արժէքներուն, մշակույթին, աւանդին ու պահանջատիրութեան՝ հակառակ առօրեայ կեանքին մէջ տիրող ընկերատնտեսական բազմաթիւ մարտահրաւէրներուն: Այս առիթով Հայրապետը անգամ մը եւս շեշտեց իր սկզբունքը՝ «Երիտասարդութիւնը մեր կեանքի լուսանցքն է վրայ պէտք չէ ըլլայ, այլ՝ մայր էջին վրայ» եւ ըսաւ, որ այս սկզբունքէն մեկնելով երիտասարդը իր ըսելիքն ու ընելիքը պիտի ունենայ մեր հաւաքական կեանքի բոլոր մակարդակներուն վրայ:

Նորին Սրբութիւնը ապա անդրադարձաւ Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն մէջ երիտասարդին դերակատարութեան ու մասնակիցներէն լսեց մարտահրաւէրները շրջանցելու ուղղութեամբ անոնց կարծիքներն ու սպասումները: Նկատի ունենալով, որ օրուան թեման մշակույթն էր, Հայրապետը վերասահմանեց մշակույթ հասկացողութիւնը՝ մէկ քայլ անդին տանելով դասական սահմանումէն: Ան նշեց, որ մշակույթը, ըլլալով հաւաքականութեան մը ինքնարտայայտութեան միջոց, իր մէջ կը պարփակէ նաեւ կենցաղակերպ, մտածելակերպ, գործելակերպ, եւ այլն...: Ան կեդրոնացաւ մշակույթի ծաւալման մէջ կրօնքի ներդրումին վրայ եւ բացատրեց ազգերու մշակույթներուն մէջ քրիստոնէութեան ու իսլամութեան ազդեցութեան տարբերութիւնները:



Արամ Ա. Կաթողիկոս նաեւ անդրադարձաւ ուսանողներուն եւ երիտասարդներուն կենցաղին ու որոշումներուն վրայ գերիշխող ներկայ աշխարհի պայմաններուն ու իրավիճակին: Այս գծով ան ըսաւ, որ անցեալին մեր ազգին շուրջ դրուած ցանկապատները ամուր պահեցին մեր ինքնութիւնը, սակայն ներկայիս նոյն կերպով ու ոճով ապրիլը հակառակ ազդեցութիւն կ'ունենայ: Այնուամենայնիւ, բոլոր երկսայրի սուրբերուն պատասխանները կը գտնուին հայ ընտանիքին մէջ. ուստի, իրապաշտ պէտք է ըլլանք մեր մօտեցումներուն մէջ՝ միշտ հաստատ պահելով ընտանիք ամրոցը:

Խօսելով Սփիւռքի վերականգնումին մասին, Նորին Ս. Օծութիւնը քաջալերեց ուսանողները ըլլալ ներկայ աշխարհին հետ համահունչ՝ մտածելակերպով ու գործելակերպով, խուսափիլ ծայրայեղութիւններէ եւ ժամանակավրիպութիւններէ: Այս իմաստով, Հայրապետը յորդորեց երիտասարդները, ի պահանջել հարկին, ձայն բարձրացնելու մեր կառույցներուն մէջ, սակայն առանց քանդելու ու կործանելու ցարդ կատարուած իրագործումները: Ան շեշտեց, որ մեր կառույցները, սկսեալ եկեղեցիէն, կարիքը ունին ինքնաքննութեան, որպէսզի առաւել ներկայութիւն ըլլան ներկայ աշխարհի պայմաններով ապրող երիտասարդութեան կեանքին մէջ:

Երիտասարդներուն հետ զրոյցի ընթացքին, Հայրապետը նաեւ խօսեցաւ Հայու ինքնութեան, Արցախի ու Հայաստանի ներկայ իրավիճակին, Լիբանանի տագնապին եւ երիտասարդութեան վրայ Սփիւռքին անկազմակերպ-ուածութեան ժխտական ազդեցութեան մասին:

Օրուան երկրորդ նիստը «Հայ Համալսարանականը՝ Մշակույթի Դեսպան» թեմայով, Դոկտ. Արմէն Իւրնէշլեան անդրադարձաւ գիրքի ու գրականութեան, Զաքար Քէշիշեան՝ մշակույթի եւ Լուիզա Պապոյեան՝ ուսման ընդմէջէն: Զրոյցը վարեց Արազ Գոճայեանը, որ ամփոփ կերպով ներկայացուց հիւրերը ու առաջին հերթին խօսքը փոխանցեց մասնակից երիտասարդներուն, որպէսզի Վեհափառ Հայրապետի զրոյցէն բխած գաղափարներուն մասին առիթ ունենան աւելի խորանալու. իսկ երեք զրուցակիցները իրենց փորձառութիւններէն եւ մասնագիտութիւններէն մեկնելով՝ աւելի հարստացուցին զրոյցը ու հարցերուն պատասխան տուին:

Կլոր սեղանի ընթացքին առաւելաբար անդրադարձ կատարուեցաւ սերունդներու լեզուամտածողութեան տարբերութեան՝ ի մտի ունենալով ներկայ դարու արհեստագիտութիւնը, տարբեր սերունդներու միտքերու արտայայտութեան մակարդակին, ժողովրդական մշակույթի համաշխարհայնացման, ասպարէզի ընտրութեան մէջ ներկայ ընկերատնտեսական իրավիճակի ազդեցութեան, առօրեայ կեանքէն անդին հայերէն լեզուի օգտագործման սահմանափակումներուն ու առիթներուն եւ անցեալէն սորվելով ու ներկայ առիթներէն օգտուելով դէպի ապագայ նայելու մասին: Զրոյցի ընթացքին խօսուեցաւ նաեւ հայ մշակույթի դեսպան ըլլալու կերպերուն մասին, ուր հայ երիտասարդը պէտք է տիրապետէ իր մշակութային արժէքներուն ու աւանդներուն եւ իմանայ օտար մշակույթներու մասին:

Սեմինարի վերջին բաժինով Դոկտ. Քրիստին Արզումանեան-Ղազարեան ներկայացուց ներկայ դարուն մեր ունեցած հմտութիւններն ու ստեղծագործութիւնները լաւապէս տարածելու եւ անոնց շուրջ հետաքրքրութիւն ստեղծելու մասին: Աշխատանոցի ընթացքին, մասնակիցները բաժնուեցան վեց խումբերու, որոնցմէ իւրաքանչիւրը ընտրեց մշակութային արժէք մը եւ աշխատանոցէն սորված հմտութիւնները օգտագործելով՝ նորօրեայ branding-ով ծանուցելու ծրագիրներ մշակեց:

Աւարտին, Հ.Ե.Հ.Ո.Մ.ի Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգձ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան իր փակման խօսքը արտասանեց, ուր շնորհակալութիւն յայտնեց մասնակիցներուն եւ հիւր զեկուցաբերներուն ու զրուցավարին: Ան ընդգծեց, որ երիտասարդը իր խօսքով ու գործով յառաջ կը տանի ժողովուրդի մը ազատութեան եւ անկախութեան երթը: Ան խրախուսեց երիտասարդները, որ շարունակեն անվհատ պայքարիլ՝ մանաւանդ Սփիւռքի մէջ, ու ամէն միջոց ի գործ դնեն հայ մշակույթի գոյատեւման:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
---------------

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Կ'ԸՆԴՈՒՆԻ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ  
ՆՈՐԱԿԱԶՄ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Երկուշաբթի, 4 Ապրիլ 2023-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Երիտասարդական Բաժանմունքի նորակազմ վարչութիւնը՝ գլխաւորութեամբ Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Երիտասարդական Բաժանմունքը, Վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ, հաստատուած է 2004-ին եւ կը գործէ Կաթողիկոսութեան մակարդակի վրայ, այսինքն՝ իր գործունէութիւնը կը ծաւալէ հոն, ուր հայ երիտասարդ կ'ապրի: Երկու տարուան յարգելի պատճառներու դադարէ մը ետք, Բաժանմունքը իր առաքելութեան կը վերադառնայ նոր վարչութեամբ, որ իր կազմին մէջ կը ներառէ նաեւ մեր թեմերէն աշխուժ երիտասարդներ:

Հանդիպման ընթացքին երիտասարդները Նորին Սրբութեան ներկայացուցին Բաժանմունքին այս տարեշրջանի ծրագիրը, որ առիթ հանդիսացաւ Նորին Ս. Օծութեան հետ զրուցելու երիտասարդութիւնը յուզող հարցերու մասին՝ Սփիւռքի վերակազմակերպման տարուան հռչակագիրին մէջ նշուած մտահոգութիւններէն մեկնելով: Եւ որպէսզի երիտասարդին ձայնը լսելի դառնայ ամենուրեք ու երիտասարդութիւնը քով-քովի գալով բիւրեղացնէ մարտահրաւէրները՝ հարցերու լուծումներ որոնելով, պիտի կազմակերպուին երեք շրջանային համագումարներ՝ Միջին Արեւելք, Եւրոպա եւ Ամերիկա: Համագումարներուն գլխաւոր թեման ինքնաքննութիւն եւ վերակազմակերպում է, որոնց անդրադարձ պիտի կատարուին տարբեր նիստերու, վարժանիստերու եւ աշխատանոցներու ճամբով:

Նշենք, որ Երիտասարդական Բաժանմունքը կը վայելէ Նորին Սրբութեան անմիջական հոգատարութիւնը, ինչպէս նաեւ կը գործէ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանի խորհրդատուութեան ներքեւ:

**«ՆԱՐԵԿԱՑԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ**

**«ՆԱՐԵԿԱՑԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՍԱՆՈՒԿՆԵՐԸ  
ՎԵՅԱՓԱՌ ՀՕՐ ՀԵՏ ԿԸ ՆՇԵՆ Ս. ՉԱՏԻԿԸ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի «Նարեկացի» երգչախումբի փոքրիկները շաբաթական դրուժեամբ կը հաւաքուին Մայրավանք ու Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի ղեկավարութեամբ կը կատարեն երգչախումբի փորձերը: Փոքրիկները նաեւ հաճելի ժամանակ կ'անցնեն Մայրավանքին մէջ, շնորհիւ անձնուէր վարչական կազմին, որ նաեւ յանձն առած է ընկերային հաւաքներու, խաղերու, պտոյտներու եւ այլ զբօսանքային տարբեր ծրագիրներու կազմակերպումը:



Վարչութիւնը Շաբաթ, 8 Ապրիլ 2023-ի առաւօտեան, պատրաստած էր զատկուան հակթախաղի հաւաքը, որուն ընթացքին տօնուեցաւ նաեւ Յունուար-Փետրուար-Մարտ ամիսներուն ծնած փոքրիկներուն ծննդեան տարեդարձները: Յատկանշական էր Վեհափառ Հայրապետին անակնկալ այցելութիւնը հակթախաղին եւ փոքրիկներուն հետ հաճելի մթնոլորտի մէջ Ս. Յարութեան տօնը նշելը:

**ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ**

**ՎԵՅՎՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
Ռ.Ա.Կ.Ի ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ԱՏԵՆԱՊԵՏԸ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ ՍՕՏ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ**

Շաբաթ, 4 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Ռամկավար Ազատական Կուսակցության Գերագոյն Խորհուրդի Ատենապետ՝ Դոկտ. Հրաչ Գույումճեանը: Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր ակնարկ մը նետելու Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը յուզող այժմեական հարցերու վրայ, ինչպէս նաեւ շեշտուեցաւ մեր ազգին ոյժերը համախմբելու կարելորութիւնը եւ այս գծով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերը՝ յատկապէս Սփիւռքի մէջ:

Նոյն օրը, Նորին Սրբութիւնը ընդունեց Վատիկանի մօտ Լիբանանի Հանրապետութեան Դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէնը: Քննարկումները կեդրոնացան Լիբանանի նախագահական ընտրութեան շուրջ:

**ՎԱՆԱԲՆԱԿ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ,  
ՊԱՇՏՏԵՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴՊՐԵՎԱՆՔԸ  
ՇՆՈՐՀԱՄՈՐԵՑԻՆ  
ՎԵՅՎՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՏԱՐԵՂԱՐՁԸ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական գահակալութեան 28 տարիները եղան ոչ միայն հայ կեանքէն ներս բազմազան ու այլազան տագնապներով լեցուն շրջան մը, այլ նաեւ ու մանաւանդ այդ տագնապները հա-

ւատքով, իմաստութեամբ ու քաջութեամբ դիմագրաւելու շրջան մը՝ առաջնորդութեամբ ու գլխաւորութեամբ Նորին Սրբութեան: Այս կը վկայէ անցնող աւելի քան քառորդ դարու մեր ազգին պատմութիւնը: Նորին Ս. Օծութեան կատարած իրագործումներուն ու ծառայութիւններուն արժեւորումը կը թողունք պատմութեան: Փաստօրէն, մեր եկեղեցւոյ ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքին ու առաքելութեան մէջ ոսկի էջ մը բացաւ Սրբազնագոյն Հայրապետը:

Արդարեւ, Չորեքշաբթի, 8 Մարտ 2023-ին, Կաթողիկոսարանի Վեհարանի դահլիճին մէջ, վանաբնակ միաբան հայրերը, դպրեվանեցիները, պաշտօնէութիւնն ու Դպրեվանքի տիկնաց յանձնախումբը, որպէս մէկ ընտանիքի զաւակներ, համախմբուեցան իրենց Հոգեւոր Հօր՝ Վեհափառ Հայրապետին շուրջ եւ աւանդական կարկանդակի հատումով ու բարեմաղթութիւններով՝ շնորհաւորեցին Հայրապետին ծննդեան տարեդարձը: Յանուն Կիլիկեան Ուխտի Միաբանութեան սրտի խօսք արտասանեց Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, յանուն պաշտօնէութեան՝ Դիւանապետ Խաչիկ Տէտէան եւ Դպրեվանքի մեծ ընտանիքին անունով՝ Բարշ. Սերժ Սրկ. Քիւշէրեան:

Այս առիթով, միաբանութիւն, պաշտօնէութիւն եւ Դպրեվանքի մեծ ընտանիք կու գանք մեր որդիական երախ-

տագիտությունն ու բարեմաղթությունը յայտնելու Նորին Ս. Օծուխեան: Կաղոթենք, որ բարձրեալն Աստուած առողջ ու արեւշատ օրեր պարգեւէ Հայրապետին, իր Հայրապետական ասան մնայ միշտ ծաղկեալ եւ մեր ժողովուրդի զաւակները հովուէ ու հասցնէ դէպի խաղաղ նաւահանգիստ:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՓԻՌՔԻ ՀԱՐՑԵՐՈՒ  
ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԶԱՐԵՅ ՍԻՆԱՆԵԱՆԸ**

Ուրբաթ, 10 Մարտ 2023-ին, հանդիպում մը տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Հարցերու Յանձնակատար Ջարեհ Սինանեանի միջեւ:

Սինանեան ընդհանուր գիծերով ներկայացուց վերջին շրջանին զանազան գաղութներ իր կատարած այցելութիւնները եւ անոնց արժեւորումը կատարելով՝ շեշտեց Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը առաւել սերտացնելու կարելորդութիւնը:

Նորին Սրբութիւնը, իր կարգին, լայնօրէն անդրադարձաւ մեր ժողովուրդը յուզող ներկայ տագնապներուն ու մարտահրաւերներուն՝ Արցախի ինքնորոշման իրաւունքէն սկսեալ հասնելով մինչեւ Հայաստան-Ազրպէյճան բանակցութիւնները, ներ-հայաստանեան իրավիճակը եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց առնչուած շարք մը երեւոյթներ: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ մեր ազգը, Հայաստանն ու Արցախը շրջապատուած ըլլալով ահաւոր տագնապներով, համազգային համախմբումը անյետաձգելի հրամայական է: Համազգային հրամայական մը՝ գոր կարելի է իրագործել փոխադարձ վստահութեան վե-

րականգնումով եւ Հայաստանին ու Արցախին փրկութիւնը նկատելով գերիվեր բոլոր նկատումներէ ու խնդիրներէ, ըսաւ Նորին Ս. Օծութիւնը:

Հանդիպման աւարտին, Վեհափառ Հայրապետը իր տեսակետները, մտահոգութիւններն ու առաջարկները արտայայտող գրաւոր յուշագիր մը յանձնեց Ջարեհ Սինանեանին:

**ԸՈՒՆԵՑԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ  
ՀԱՅՈՑ ԹԵՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄՕՏ**

Չորեքշաբթի, 22 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Քուլէթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Ազգ. Իշխանութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխավորութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Սանուէլեանի:

Այցելութեան հիմնական նպատակըն էր Վեհափառ Հայրապետը հրաւիրել 9-13 Մայիս 2023-ին, հովուապետական այցելութիւն տալու Քուլէթի եւ Շրջակայից Հայոց Թեմին: Հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու ընդհանրապէս Քուլէթի եւ յատկապէս Թեմի ու շրջակայ երկիրներու մեր համայնքային կեանքին առնչուած հարցերուն ու աշխատանքներուն շուրջ:

Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց Կաթողիկոսական Փոխանորդ Հայր Սուրբին ու պատուիրակութեան շրջանէն ներս մեր ժողովուրդին ուղղուած իրենց նուիրեալ ծառայութեան համար:

Յայտնենք, որ նոյն օրը Կաթողիկոսական Փոխանորդ Հայր Սուրբին գլխավորութեամբ, պատուիրակութիւնը այցելեց Լիբանանի մօտ Քուլէթի դեսպանին:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ**

Անթիլիասի Մայրավանքին մեջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց հետեւեալ այցելութիւնները.-

• Երկուշաբթի, 27 Մարտ 2023-ի առաւօտուն, Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Վահագն Աթաբեկեան այցելեց Նորին Ս. Օծութեան: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Հայաստանի ներքին կացութեան, Հայաստան-Սփիւռք յարաբերութեան, Լիբանանի այժմու կացութեան, յատկապէս նախագահական ընտրութեան առընչուած հարցերու:

• Կիրակի, 26 Մարտ 2023-ին, Հայրապետը ընդունեց եւ իր օրհնութիւնը փոխանցեց Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Լիբանան ժամանած Ֆրեզնոյի բժշկական առաքելութեան բժիշկներու պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Ֆրեզնոյի Հայաստանի Պատուոյ Հիւպատոս Պերճ Աբգարեանի: Բժիշկները յառաջիկայ երկու շաբաթներու ընթացքին զանազան շրջաններու մէջ օգտակար պիտի հանդիսանան բժշկական խնամքի կարօտ մեր հայորդիներուն:

**«ՓՐՕՃԷԶԹ ՈՒԹԱՆ» ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱՂԻՐ ԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ ԿԵՀԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՍՕՏ**

Հինգշաբթի, 30 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը «Փրօճէթ Ութան» ծրագրի գործադիր վարչութեան: Լիբանանեան քաղաքական այս նոր նախաձեռնութեան մաս կը կազմեն Երեսփոխան Նաամաթ

Աֆրամ, նախկին Արտաքին Գործոց Նախարար Շարլ Մալէքի զուակը՝ Դոկտ. Հապիպ Մալէք, Խորհրդարանի նախկին Նախագահ Հուսէյն Ալ-Հուսէյնի զուակը՝ Հասան Ալ-Հուսէյնի, Պէրրութի Ամերիկեան համալսարանի Դասախօս Դոկտ. Ասատ Էիտ, Հայ Կաթողիկէ համայնքի պատասխանատուներէն՝ Անթուան Գալայճեան, Փաստաբան Մէթր Էտի Խալաֆ եւ Սէն ժոզէֆ համալսարանի Դասախօս Թանիա Թապէթ: Նախաձեռնութեան նպատակն է Լիբանանի վերականգնումը՝ զանազան բնագաւառներու առընչուած ծրագիրներու եւ գործընթացքներու իրագործումով:

Ներկաները ընդհանուր գիծերով ներկայացուցին իրենց առաջադրած ծրագիրը եւ անոր իրականացման հանգրուանները: Վեհափառ Հայրապետը ողջունելով Լիբանանի գոյակցութեան պահպանումը եւ միասնականութեան ամրապնդումը նպատակադրող որեւէ ծրագիր, շէշտեց, որ անհրաժեշտ է ըլլալ իրատես եւ առաջնահերթութիւնները ճշդել ներկայ պայմաններու լոյսին տակ: Նորին Ս. Օծութիւնը յիշեցուց, որ երկրին նախագահի ընտրութիւնը եւ ընկերատնտեսական կեանքի վերականգնումը անյետաձըգելի հրամայականներ են, որոնց նկատմամբ էական է, որ բոլոր պատասխանատուները առաջնահերթ կարեւորութիւն ընծայեն:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԳԱԳՆԵՐՈՒ ՍՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆ՝ ԴՈԿՏ. ՍԻՄՈՆ ԶԱՐԱՍԸ**

Ուրբաթ, 31 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Միացեալ Նահանգներու մօտ Լիբանանի

նախկին Դեսպան՝ Դոկտ. Միմոն Քարամի:

Հանդիպումը առիթ հանդիսացավ անդրադարձ կատարելու Լիբանանը դիմագրաւող ներկայ դժուարութիւններուն ու յատկապէս հանրապետութեան նախագահի ընտրութեան առընչուած աշխատանքներուն:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԴԻՄԱՆԱԳԵՏ  
ՆՇԱՆԱԿԵՑ ՏԱՃԱՏ ՎՐԴ. ԱՇԸԳԵԱՆԸ**

Վեհափառ Հայրապետը յատուկ պաշտօնագրով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան հայրերէն Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշըգեանը նշանակեց Կաթողիկոսարանի Դիւանապետ:

Հոգեշնորհ Հայր Սուրբը նախապէս վարած է վանական պաշտօններ, ծառայած է իբրեւ Հոգեւոր Հովիւ Ֆրեզնոյի մէջ եւ վերջին տարիներուն եղած է Տնօրէն Ժըպէյլի «Թոչնոց Բոյն»ին:

Յայտնենք, որ Կաթողիկոսարանի նախկին Դիւանապետ՝ Խաչիկ Տէտեան, շուրջ 25 տարի ծառայելէ ետք մեկնեցաւ Թորոնթօ միանալու իր ընտանիքին:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱԳԵՏԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ  
ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Երեքշաբթի, 4 Ապրիլ 2023-ին, Ն.Ս. Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.), Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) ներկայացուցիչները: Հանդիպման գլխաւոր նիւթը Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման նախապատրաստական աշխատանքներու առնչութեամբ Նորին Սրբութեան հետ խորհրդակցիլն էր:

Որոշուեցաւ այս տարի Ցեղասպանութեան 108-ամեակը Անթիլիասի Մայրավանքին մէջ ոգեկոչել երկու հիմնական ձեռնարկներու ընդմէջէն՝ 23 Ապրիլի երեկոյեան ժողովրդային հաւաքով մը՝ կազմակերպութեամբ երեք կուսակցութիւններուն, եւ 24 Ապրիլի առաւօտեան Ս. եւ Անմահ Պատարագով եւ Սրբոց Նահատակաց յուշարձան-մատրան առջեւ Բարեխօսական կարգով:



## ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 5 ՄԱՐՏ 2023: ԺԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Գ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՆԱՌԱԿԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:*

ԿԻՐԱԿԻ, 12 ՄԱՐՏ 2023: ԻԱ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Դ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ՏՆՏԵՍԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Վարդան Մ. Վրդ. Թաշճեան եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան:*

ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՐՏ 2023: ԻԸ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Ե. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԴԱՏԱԻՈՐԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրաէքեան:*

ՇԱԲԱԹ, 25 ՄԱՐՏ 2023: ԼԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: ՏՕՆ Է ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐԶԻՆ ՄԵՐՈՅ ՍՈՍԿԱԼԻ ՉԱՐՉԱՐԱՆԱՅՆ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅՆ Ի ՎԻՐԱՊԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:*

ԿԻՐԱԿԻ, 26 ՄԱՐՏ 2023: ԼԵ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Զ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԳԱԼՍՏԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:*

ԿԻՐԱԿԻ, 2 ԱՊՐԻԼ 2023: ԾԱՂԿԱԶԱՐԴ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան եւ Հայրապետական իր Պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:*

ԱԽԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 6 ԱՊՐԻԼ 2023: ՅԻՇԱՏԱԿ ԸՆԹՐԵԱՅ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան:*

ԱԽԱԳ ՇԱԲԱԹ, 8 ԱՊՐԻԼ 2023: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:*

ԿԻՐԱԿԻ, 9 ԱՊՐԻԼ 2023: Ա. ԶԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ իր Հայրապետական Պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ԱՊՐԻԼ 2023: Բ. ՕՐ ԶԱՏԻԿ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:*

ԿԻՐԱԿԻ, 16 ԱՊՐԻԼ 2023: Ը. ՕՐ ԶԱՏԻԿ: ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ):

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Արտաւազգ Վրդ. Շառոյեան:*

ԿԻՐԱԿԻ, 23 ԱՊՐԻԼ 2023: ԺԵ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՒՐԱԿԷ):

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէճեան:*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2023: ԺԶ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ՀԱԻԱՏՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:*

ԿԻՐԱԿԻ, 30 ԱՊՐԻԼ 2023: ԻԲ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԿԱՐՄԻՐ ԿԻՒՐԱԿԷ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Հրանգ Ծ. Վրդ. Թահանեան:*